

ԱՐԴՅՈՒՆՎԱՐԱԿԱՆ
ՀԱՐՄԱՆ ԱԾՎԱՅԻ

Ա. Եկատերինայ. Ա. Վահագիոյ. Ա. Վահագիոյ.
և Ա. Մերժիկոյ.

Առարտեսաւ պի-ըստաւնիւր. ավետիկաց որ 'ի-
նսուս' պէտք, պէտք, պէտք, պէտք-
առանսուի, պի-պալուրտանի, պիրտես,
և այլն:

Աշխատանիբաւթեք Գևերտպատիւ ՏԵ ՏԵ
Սուհամանասի Պահապահ Ազգանց Աջակարի և
Աշքայէ պարագանեթե ՏԵ Միսիթարաց
Անձի Աշքայէ :

Համիլոն 1801. կառավարության ուժում.

Մ Ա Ս Ի Զ Ա Ր Ե Ր Ա Ր Գ
Ը Ա Ր Ե Ր Ա Ր Ա Ր Ա



Դ Ա Ե Ւ Ե Տ Ի Կ
ԴԱՎՈՅԻՆ ՌԵՋ ՂԱՐԱՐՄ :

Առ Հերծանօղ մատէնիս :


Ղ

նդհանուր աշխարհագրութիւն խոստացելն առ' ի մէնջ ի լրումն փափաքանաց մերազնեայ ուսումնասիրաց վաղու ևս կատարեցաւ ըս գըլխաւոր մասանց նորին . մնաց միայն ինչ ինչ քննելի առ' ի զանստոյգս հաւաստիտեղեկութեամբ ստուգել . գոլով գործատարժանելի բազմաց քննութեց կարօտ . զոր մասամբ իմն կատարեցաք յառաջադոյն : Իւայց ապա զանտզան հարկեցուցիչ կարեոր գործառնութիւնը ըս մէջ անկեալ , նահանջ արկին մեզ անընդհատաշխատասիրութ զթերին լրացուցանել : Խսկ այժմ ըսյաջողելն , սուղ ինչ պարապ գտեալ , ի գետ վարկաք զայս մասն աշխարհի . որ ըստ կարգի այլոց մասանց չորրորդ դասի , որ և ըս տանելոյ պայմանի աշխարհագրութե քննեալ և ստուգեալ է , ընծայել ուսումնասիրաց՝ առայժմ սովու ընուլ զփափաք իւրեանց գալով ՚ի ծանօթութիւնը այսր անծանօթաշխարհի . մինչև ո՞ն օգն սկանութը և այլ մասունք հետ զհետէ ՚ի տիպ արձանասցին անընդհատ յաջրդութե :

Այսչափինչ վոյ յառաջատիպ հատորիս . խսկ զայլ բազմութիւն գիտելիս ճագրական զուարժալի կարեոր և կենցաղօգուտ

մակացութենս , ունիմք լիով աւանդել
յընդհանուր յառաջաբանութեն համօ-
րէն գործոյս յառաջնում հատորի , 'ի
սկիզբն հասարակախօսութեն : Յայսմ
վայրի զայս ևեթ' ազդ առնեմք , զի ոնդ
յայլ մասունս աշխարհի , նոյնպէս և աստ
փոյթ կալաք զանուանս աշխարհաց՝ գա-
ւառաց՝ քաղաքաց , և . որչափ ինչ հնար
է ըստ հնչման իւրաքանչիւր ազգաց
նշանակել . այլքանզի են՝ որոց գրուածք
այլազդ հնչին յայլոց ազգաց ք զոր բը-
նիկ ազգայինք , մանաւանդ գաղղիացիք
և անգղիացիք . որով ոչ սակաւ դժուա-
րութիս կրեն , որք անտեղեակ են այնց
լեզուաց՝ 'ի գաանել զանուանս քաղա-
քաց յաշխարհացոյց պատկերս , նորին այ-
զագաւ կարեսոր վարկաք զերկոսին ևս
նշանակել . նախ ըստ բնիկ հնչման , և ա-
պա հանդէպ նը փակագծիւ ըստ գրուած-
ծոյն . ոնդ տեսցի յընթացս մատենիս :
Յորմէ ակնունիմք մտաւոր և անձանձիր
ընթերցանութեն մերոց բանասիրաց բա-
զում շահաւետ արդիւնս բարեաց գան-
ձել , որ է վախճան առաջադիր գործոցս :





ՄԱՍՆ ԶԱՐՅԱՐԴ ԸՄԵԲԻԿԱՆ

Հ. ԱՆՈՒՆ:

ԱՅՍ ՄԱՍՆ ԱՃԽԱՐԴԻ
կոչեցաւ ՎՀԵՐԵՒՄ . որ 'ի մեզ
տառադարձեալ, բերի ՎՀԵՐԵՒ-
Մ . յանուն ամերիքոսի Վէս-
բուշիոսի որ էր 'ի ֆիօրէնցա
քաղաքէն իդալիոյ . իբր ոչ եթէ զի նա եզեւ առա-
ջն գտիչ նր, քղի իբր վեց կմ եօմն ամօք յառաջ
քան զնա՝ եհաս անդր գերահուշակն քրիստափոլս
քոլոմզոս . այլ զի նա ինքն ամերիքոս նախ տպագ-
րութ հրատարակեաց զպատմուն գիւտի այսր նո-
րոյ աշխարհի . ուր եհաս յամի փրկչին 1497. որպէս
ստորե ունիմք ասել : կոչի և ՎՀԵՐԵՄՔԵԱՆ հնդկաստան -
'ի զանազանութեն հնդկաց աշխարհի, որ է յարևել-
եան կողմն մերումս կիսադնտոյ ՚իյասիա :
իսկ 'ի ռամկաց կոչի և ՍՄԱՐՏԻՆ կմ ՆԵՐԵՒՄ ա՛խարհ .
իբր զի գոլով 'ի հակակայ կողմն հողագնտոյս՝ պատ-
րանօք երևակայուն կարծեն լինել 'ի ներքոյ կմ 'ի
ստորին կողմն մեր . բայց այս գունտ կամ ոլորտ
երկրի՝ գոլով յամ կողմանց շըշապատեալ յերկնից,
կմ լաւ ևս ասելով 'ի ծոց նր պարփակեալ, չու-
նի ստորին, և վերին տեղի . այլ ամ կողմանիք նր
հաւասար են : Սովորաբար անուշանեալ կոչի ՚Ն-

6 Կերպարվելի Աղերին :
աշխարհ . տնկ . իւնի գիւնչայ . քղի չե ևս են 300
ամբ յորմէ հետէ ծանուցաւ բնակչաց այսր մերումն
կիսագնաոյ :

Է . Դիւտ , և Տարածութ ամերին :

Մերիկա է մի 'ի մեծագոյն ցամաքային մասանց
Հողագնաոյս 'ի հակակայ կողմն հնոյ Շին . ձգել
'ի հիւսիսային բեեռէ Շ հարաւ 133 աստիճանօք .
կմ փոքր մի աւելի , այսինքն մզոնս իբրեւ 8000 . իսկ
յարեմտից յարեւելս 45 աստիճանօք . այսինքն մզոնս
իբրեւ 2700 . ուստի և յայտ է թէ մեծ է ք զա-
սիա : Դիւրը նը կարի յարմարաւոր է և յաջողակ
նաւարկուե և վաճառականուե՝ ք զայլ ամ մասն
Շի . զի յամ կողմանց ըրջապատեալ է 'ի ծովաւ .
ունի և բդմ ծոցս մեծամեծս և պարոյրս , որք ը մոտ
նեն 'ի ներքս 'ի ցամաքն . այլ անհմը նաւահան-
գիսաս պատուականս , և գետս մեծամեծս և նա-
ւարկելիս , որք կարի դիւրացուցանեն զհաղորդակ-
ցուե Շ համօրէն մերս կիսագնաոյ .

Է . Բնակչւ ամերին :

Ուէ զեարդ սկիզբն եղե բնակուե մարդկան 'ի
նոր Շի անդ , է խնդիր դժուարին և բազ-
մամանուած . մւնդ թէ ամենեին անյայտ և անըս-
տոյդ . զոր թէպէտ բազումք բազմօրինակ բանիւք
գուն գործեցին լուծանել , և յայտնի առնել , այլ
չեղե հնար . քղի չիք գտանել առ ամերիկացին ա-
ւանդուե հիմնական , բաց 'ի վեր 'ի վերոյ աւանդու-
թէ ինչ մէքսկիքացուց . թող թէ դրուած վն ծադ-
ման իւրեանց . վոյ բանիք այնց մատենագրաց և հաս-
տառութէք բոլանդակք 'են լոկ կարծիք և դուշա-
կուեք մարդկային ճարտարմուե . թող զայնոսիկ ,
որք յայտնի առասպելք 'են ինքնաստեղծք . մւնդ
թէ և մոլորական . սակայն առ 'ի լըտմն փափաքա-
նաց ընթերցասիրաց 'ոչինչ դանդաղիմք համառօ-
տել աստանօր զանազան կարծիս մատենագրաց 'ի
վը այսր խնդրոյ :

Արդ ոմանիք 'ի կարծեցել բնազնին փիլիսոփայից
աեսեալ զի ժղվերդ նորոյ Շի ունի զպատահական
յատկութիւն ինչ ստարա 'ի բնակչաց այսր մերումն
կիսագնաոյ . զոր օրինակ զի արքն անմազ 'են և լերկ
բոլորովին , բաց 'ի գլւայ . և կազմուած մարմնոյ նց
մւնդ

մշնդ գիւմաց՝ այլազան, և եղանակ կենաց և յօժարուիք և ախորժակէք հոգւոյ տարբեր, յանդգնեցան հաստատել, թէ չեն նք 'ի սերնդոց նորին հասարակաց հօր մարդկան ազդի, չը ադամայ. այլ օտարասեռ իմն զարմ մարդկան. մասնաւոր պատահական տարբերութք զանազանեալ 'ի մշնջ:

Վշյ ոչ աատի անդր փոխադրեալ, այլ անդ գոյացեալ և աձեցեալ, և պահեալ կենդանի 'ի համայնացինց ջուրցն հեղեղէ որ եղեւ առ նոյիւ. կմ ամցն եթէ ենթադրեսցի թէ ոչ եհաս անդ ջրհեղեղն, և կմ գէթ ոմանց՝ 'ի վր բարձրաբերձ լերանց, եթէ դիցի թէ եղեւ և անդ ջրհեղեղ. այլ ոչ եհաս 'ի գըլուխ բարձրադագամին լերանց: Արդ՝ այս կարծեցեալ իմաստակը ք թէ իմաստասէլք թունի թէ զհետ երթան կարծեաց այնոցիկ, որք յետսամիտ խորհրդով մշնդ թէ ամբարշտութ՝ անհնարին համարին և գրեթէ հակասական, բարձրանալ ջուրց 15 կանդնաւ. 'ի վեր ք զբարձրադացյն լերինս Շի. և այնակս ծածկել զհամօրէն ոլորտս երկրի. ընդդէմ յայտնաբարբառ վկայուե թք գրոց. այլեւ արտաքին հնագիր պատմուեց: Ապա թողել 'ի բաց զայսպիսի ամբարիշտ կարծիս՝ զորս և զօրւոր փառտիւք 'ի բաց մերժեցին երեւելի ողջախոհ փիլիսոփայք, բերցուք 'ի մշնջ զայլոցն:

Ոմանք համարին, թէ սկիզբն բնակութե գէթ մասին ինչ ամերիկոյ՝ եղեւ 'ի նախնի կարկեդոնացւոց որք են թունուսք. հիմնեալք 'ի բանն արիստոտելի, որ 'ի գիրս հրաշեց (թէ արդարե նորա իցեն այն գիրք.) ասէ, թէ 'ի ծովու արտաքոյ հերակլեան արձանաց, կարկեդոնացիք գտին կղզին անմարդի. բայց առատացեալ այլ ամ իրօք, որք կարեւօր են կենաց մարդկան. ուր այնուհեաւ ըստէպ նաւարկէին. և ոմանք գաղթականք սկսան սակս վայելուե և արդասաւորութե երկրին անդ հաստատել զբնակութիւն իւրեանց. բայց ատեանն կարկեդոնի արդել ը պատժով գլխապարտութե, զի մի ևս իշխեցի ոք բնաւ նաւել անդր. երկուց եալ թէ գուցէ գատարկացի 'ի բնակչաց՝ կարկէ. դոն մայրաբազաք իւրեանց: Ոմանք ևս առզաստանեալ 'ի նախնի առանդուիս ինչ, ասեն թէ 'ի բանացւոց՝ 'ի ժմկս յեսուայ, և յերայեցւոց՝ առ ժմկք գերուեց, այլեւ 'ի ընաց, գաղթականք վարեալ տեղափոխեցան յամերիկայ:

Այլ այն ամ պատմուիք և առանդուիք անստոյդ
Ա 4 են

են ամեննեին . այն զի ոող գեղեցիկ տրամարանէ ոռ
պէրդսօն , անմարթ իսկ է կարծել բնակչաց նորոյ
Թի՝ յայսպիտի քաղաքական քաջակիրթ և հրահան
գեալ ժաղովրդոց սկիզբն ունել . ապա թէ ոչ հարկ
էր մնալ առ նոսա գէթ դոյզն ինչ հետոց քաղա-
քականութեն . և այնց հորկ արհեստից կարեւորաց
մարդկային կենաց , որք գրեթէ Ժմկակից են վիճաւ
կի ընկերութեն մարդկան՝ յայլ մասունս երկրի :
Քանզի թէպէտ ’ի մէջ բազմապատիկ սասանութենց
և թշուառուեց , և փոփոխութեց կենցաղոյս , հնար
է մարդկան առ սակաւ սակաւ մերկանալ զբաղա-
քականութեն , այլ ոչ իսպառ վոյրենանալ . նոյնպէս
մարթ է նուրբ և բարձրագոյն արհեստից , որք ’ի
շարդ են և ’ի վայելչութի՝ աղաւաղիլ այլեւ իսպառ
կորնչել , բայց կարեւոր արհեստիք կենաց , զնի օրի-
նակ գործիք երկրագործութեն , և ոստայնանկութեն ,
սուր , փուռն , ևն , մուծելք առ անգամ մի ’ի մէջ
ժողովքդեան իրիք , ոչ երբէք իսպառ անհետ լի-
նին . ոող եղեւ առ ամերիկացիս , առ որս իրբե հա-
սին զաւածինն եւրոպացիք , ոչինչ յայսպիսեաց ա-
տի տեսսին : Եւ ևս զինչե իցէ աղդ կթժ ժողովուրդ՝
միանգամ զփորձ առեալ պիտանութեն և հարկաւո-
րութեն ընտանի անասնոց ’ի կերակուր , և ’ի գործ
աշխատուեն , զնի օրինակ արջառոյ , ձիոյ , խաշանց ,
ևն , անկարելի երեխ այնչափ անփոյթ լինել , մին-
չև թողուլ իսպառ սոլուռ կորնչել այնպիսի պի-
տանի անասնոց . սակայն մինչեւ էին տարեալ անդ
եւրոպացիք , ’ի բովանդակ ամերիկայ ոչ գոյր ոչ
արջառ , ոչ ձի , և ոչ այլ ինչ տեսակ ընտանի ա-
նասնոց մերոց . յայն սակս իրբեւ կոմեցան սպա-
նիացիք հաստատել անդ գաղթականս . փոյթ կա-
լան փոխադրել անդը յեւրոպիոյ զնոմ տեսակս այն-
պիսի անասնոց , որք այժմ բազմոցեալ են և անդ ,
ոող առ մեզ :

Յայոմ թմէ՝ քաջայայտ երեխ թէ առաջին նախա-
հարք բնակչաց նորոյ Թի՝ չեն ’ի կրթական և ’ի
հրահանդել ազգաց , այլ ’ի բիրտ և ’ի վայրենի ժո-
ղովրդոց . բայց չէ յայտ թէ յորմէ Թէ . և յորոց
աղքաց էին նք : Կրոցիս առ լուգովիկոսի մով-
րերայ հմրի , թէ բնակիչք հիւսիսային ամերիկոյ
էն յասիական թաթարաց . յորոց գուցէ հատուածք
ինչ թափառեալ ընդ համատարած վայր սիպերիոյ ,
(ոող սովորութեն է նց մինչեւ ցայսօր թափառական
կեանս վարել .) և խաղացեալ ը արևելս , հասեալ
իցեն

իցեն յամերիկայ։ Զի բղմք համարին, թէ 'ինախն նումն ամերիկա միաւորեալ էր ը մերումն ցամաքի։ և յետոյ՝ ի բուռն սասանուէ երկրի խրամատեալ։ Եւ յայնմանէ կարծեն թէ երեեցան այն գոտի բազմապատիկ կղզեաց 'ի նեղուցն որ ը մէջ ամերիկոյ և ասիոյ։ զորս 'ի վերջին ֆլկս դտին մոսկովք՝ որդ և ասեն թէ յամսին 'ի նո՛ 'ի մեծամեծս և 'ի փոքունս, դտանին հրաբուղիք։ ոնդ և 'ի ցամաքն քամչեադքայ։ յորոց ոմանք գրեթէ միշտ վառեալ բորբոքին։ յորմէ առաւել հաւաստի այս կարծիք։ Քանզի յայտ է թէ 'ի տեղիս, ուր յաճախ են ստորերկրեայ հրայրեցութիք, մեծամեծ սլատառմունք լինին։ և բղմ այլայլուիս և փոփոխութիս գործեն երկրի։ իսկ եթէ ենթադրեացուք, թէ 'ի սկզբանէ անջատել են 'ի միմեանց այս երկու մասունք հողագնտոյս, սակայն և այնպ չէր ինչ դժուարին անցանել նց յամերիկայ։ Մի զի նեղուցն որ ընդ մէջ ամերիկոյ և ասիոյ՝ չէ այնցափ ինչ լայն։ Եւ երկրորդ՝ զի ոնդ ասացաք՝ բղմ կղզեք գոտանին անդ։ վայ ըստ ուսպէրդսօնի կարեին նք ը թերակատար ծանօթութեց՝ զոր ունեին զնաւարկութ, անձեւ և ուրունական նաւակօք իւրեանց տեղափոխիլ նախ՝ յաւաւել մօտաւոր կղզիս, և անտի յայլս յաջորդաբար՝ մինչև ժամանել 'ի ցամաքն ամերիկոյ։ և լինել սկզբնահարք ամերիկացւոց։ Եւ այս ըստ նորին կրոցիսսի յայսմանէ ևս առաւել հաւանական թունի։ զի բարբառ հիւսիսային ամերիկացւոց բաղում մերձաւորուի ունի ը լեզունի թարացաւոց։

թարաց։

Բայց յարեմուեան կողմն հիւսիսային ամերիկոյ՝ գըտանի մասնաւոր ժողովուրդ կոչեցեալ էսֆինշի։ որ 'ի բղմ նշանաց, զոր օրինակ 'ի կերպարանաց, 'ի զգեստուց, յեղանակէ կենաց՝ երկի ունել զծագումն 'ի կրէնլանտացւոց։ ոնդ և լեզու նց կարի մերձաւոր է, և գրեթէ նոյն ը բարբառոյ կրէնլանտացւոց։ զոր և փորձիւ ստուգեաց քարոզեչ ոնմ ըստերական հմուտ լեզունի կրէնլանտացւոց։ որոյ գնացեալ յան եսքիմացւոց, եգիտ զի խօսէին նք 'ի բուն բարբառ կրէնլանտացւոց։ և յամի բերէին զնանուին նց։ մէնդ թէ էին իբրե նոյն ազգ։ որք և յայն սակս բղմ մարդասիրութ ընկալան ըզքարովիչն զայն՝ իբրե ազգակից, և եղբայր իւրեանց։ ըստ մեծամուկս զարմացաւ նա։ Այս ամէ է հաւաստի նշան, և թէ 'ի կրէնլանտացւոց անտի

Են նք. իսկ կրէնլանտացիք յայտ է թէ են 'ի նոր վէկիացւոց :

Քանզի նորվէկիացիք ըստ ուսպէրդառնի յամին 830. իսկ ըստ պիշխնկայ՝ 'ի 981. հասին 'ի կրէնլանտիտ կղզի. և անդ հիմնեցին բնակուի մարդկան. բայց յետոյ ըստ հարուստ մի ժմկ ըստ հատաւ երթեւեկ նորվէկիացւոց 'ի կրէնլանտիտ. իսկ 'ի վերջնի ժմկ վերստին սկսան նորվէկիացիք նաւել 'ի կողմանու յայնասիկ : Առդ՝ ըստ նորին ուսպէրդառնի, եթէ յայնալիսում իմդժական դարու, յօրում գեռ և ոչ ոչ դուղնաքեայ իմն նշոյլ գիառուե և քաղաքականութե երեւեր 'ի հիւսիսային կողմանս եւրոպիոյ, նորվէկիացիք ունեին այնչափ ծանօթուի նաւարելուե, մինչեւ նաւել 'ի կրէնլանտիտ. քաջայացտ է թէ և նախնիք նոցա դլսավին անձնատուք 'ի նաւարկուիս ըստ, ոնդ թավթարք 'ի թափառիլ ընդցամաք, կարեին 'ի նորվէկիոյ նաւել մինչեւ ցամերիկայ. թէ ոչ անմիջապէս և ուղղուկի, (որ դըժուարին երեսի սակս երկարուե ծովային Ճնողհի .) գէթ առ սակու սակաւ յառաջ խաղալով 'ի կըզենաց 'ի կղզիս. քը նախ 'ի շեղլանտեսն կղզիս. ապա 'ի ֆարոսեանս. անտի յիսլանտիտ. յետոյ 'ի կրէնլանտիտ. որ գոլով անձուկ նեղուցիւ անջըրովետեալ յամերիկայ, մարթ է դիւրաւ աստի անդանցանել: Վայ կարողացան մարդիկ առանց այնրմեծի դժուարուե, զոր ոմանք անյաղթելի կարծեցին, անցանել 'ի ցամաքէ աստի մերմէ յամերիկայ. ըստ երկու հիւսիսային ծագս. ի՞ր ըստ արեւելեանն միջնորդութ կղզեաց որ 'ի նեղուցին ասիոյ և ամերիկայ, և ըստ արեւմտեանն միջնորդութե կրէնլանտիոյ: Եւ ևս ըստ կրոցիոսի մարթացան անցանել և 'ի հարաւային ցամաքէն ըստ նեղուցին մակելաննեան. որոյ լայնուին չէ ինչ առաւել քը զերկու կմը զերիս փարսախս. նոյնող և այլ զանազան ճանապարհօք: Սակայն թէնդ և այս ամ չլիներ, միթէ չէր մարթ թէ յետ այսչափ դարուց յօլովակի պատահէլ իցէ այն, որ պատահէցաւ ալփոնսոսի սանքէղեան. որ 'ի սաստիկ իմն ալէկոծուէ յափրիկոյ վարեցաւ յամերիկա: Այսմ բղմ օրինակս ասէ կրոցիոս մարթէ էր 'ի մէջ մատուցանել:

Ապա յայտ է թէ բնակիչք նորոյ Ծե զծագումն իւրեանց ունեին յասիացւոց, և յեւրոպացւոց. բայց առաւել հաւաստի երեսի թէ միայն յասիացւոց. զի թողեալ զեսքինացիս, որք են մասնաւոր ժողովուրդ:

վուրդ ամ իրօք օտար յայլոց ամերիկացւոց, յայլ նամազգս և ժողովուրդգս առ հնրկ երեխ զարմանաւլի իմն նմանութիւն՝ ոչ միայն՝ ի տեսիլ երեսաց՝ ի զիրս՝ և ՚ի կազմակերպութ մարմնոց, այլև յախորժակս հոգւոց. ոնկ թէ անքն ՚ի նոյն զարմէ էին. ունին նմանութ և ը բիրտ և վայրենի ժողովրդոց. որք են ՚ի տիեւոս հիւսիսային կողմանց ասիոյ բայց գրեթէ ոչ ոք ՚ի նոցանէ ը ազգաց բնակելց ՚ի հիւսիսային ծագս եւրոպիոյ. յորմէ յայտնի երեխ թէ յասիացւոց իջանեն նք: Հաւմաձայն է այս տսէ ռոպէրդսոն և աւանդունց մեքսիքացւոց՝ որ վուժագման իւրեանց եկին ՚ի հիւսիսոր Շաց ՚ի հիւսիսոյ արեւլից մեքսիքոնի. ցուցանեն և զանազան կայանս, յորս զառաջինն զտեղի կալան. և յորոց յառաջ խաղացին ՚ի խորին գաւառու:

Հաւանական երեխ թէ ՚ի նոյն հիւսիսական կողմանց ասիոյ անցին յամերիկայ և զանազան տեսա՛ք վայրենի ըրբուանեաց և թոշոց՝ որք լինին ՚ի ցըրտային դաւառոս. կամ ցամաքաւ, (եթէ ենթագրեսցի, թէ ՚ի հնումն միացեալ էր ամերիկայ ընդմերումն ցամաքի.) և կմ ը լող, որ չէ ինչ ըդէմ. մի՝ զի անասունք թէպէտ մեծամեծք, և յազմանդամք, սակայն առաւել յաջողակ են ՚ի լեզ քան զմարդիկ. որպէս տեսանեմք ՚ի մեծամեծ արթառոս, յերիվարս, ևն: Եւ երկդ՝ զի նեղուցն որ անջըրպէտէ զասխտ յամերիկոյ չէ այնափ ինչ լայն. այն զի դտանին անդ և կղզիք յօլովք. որք առաւել գիւրացուցանեն զանցս նց, զի մարթ էր նոցա ՚ի միունք անցանել յայլ. մինչև հասանիլ յամերիկայ. և այս (լուքալմէայ ՚ի մեկն նք գրոց. գլ. ը.) կմ ՚ի խնդիր կերակրոյ, կմ փախուցեալ յերեսաց որսորդաց, և կամ այլ ինչ դեպուածով: Խսկ վու այլոց անասոնց, որք ՚ի ջերմային դաւառոս լինին՝ մարթէ ասել թէ ՚ի մարդկանէ տարան անդր պէսպէս դիպուածովք: ՚ի յամերիկա ոչ դտանէին նախ քան զհասանելն անդ եւրոպացւոց պիտանացու ընտանի անասունք. ոնկ արջառ, երիվար, ոչսար, ևն. յորմէ երեխ թէ առաջին նախահարք ամերիկացւոց՝ չէին առեալ զիտրձ պիտանութեն այնց անասոնց. նմին իրի չեղեւ նց փոյթ տանիլ ը ինքեանց յանառնոց անասի. և ընդ հակասակն դտանին անդ անասունք ինչ ըրբուանիք և թուշունք՝ տեսակաւ տարբերք յանասնոց մերումն կիսադնտոյ. յորմէ չէ պարտ

՚ի մտի գնել թէ չեն նոքա յաէ աստի մերմէ, այլ
անդ գոյացեալ, վս զի այն տարբերութի ոչ թունի լի
նել գոյացական, այլ պատահական և եթ . պատճառ
եալ ՚ի դրից երկրին, ՚ի հանգամանաց օդոյն, և
՚ի սննդենէ . զոր յայտնի ճշմարտէ և փորձն . զի ա
հա արջառք՝ երխվարք՝ ոչխարք՝ և շունք, ևն, զորս
տանին անդ եւրոպացիք, յերկրորդ ծննդեան այն
չափ փոփոխին ոչ միայն ըստ արտաքին տեսլեան, (լի
նելով փոքր վախտ և գծուծ .) այլև ըստերքին որա
կուց . մինչև երևել այլտաեսակ ՚ի մերոց աստի .
և այս փոփոխութի առաւելադիս երևի ՚ի շունս,
որք յառաջնոււր ծննդեան անդ խոպառ համբա
նան . ոող և ՚ի կուխնէա . որով թունին այլ աեսակ
անասնոյ :

ԱՆԺԼ վս այսոր մթին և անհյայտ խնդրոյ՝ այսչափ
ինչ շատ համարեալ, վս այժմեան բնափաց ասելի
է, թէ առ համեմատութ ըարձակ տարածուել իւ
րոյ, բնակիչք նորա սակաւ են . զորս յերիս դասս
քաժանէ պիշինկ . ֆր ՚ի բուն ամերիկացիս . ՚ի խափ
շիկս . կմ՞ ՚ի սեաւ ափրիկեցիս՝ անդ փոխադրեալս
յափրիկոյ . և յեւրոպացիս . ընդ որոց դասին և
ծնեալքն յեւրոպացւոց, և յամերիկացւոյ, կմ՞ յափ
րիկեցւոյ : Բուն ամերիկացիք թէպէտ և յառաջա
գոյն խսկ չէին այնչափ յոգնաթիւ . բայց զինի տի
տելոյ եւրոպացւոց դանազան կողմանց ամերիկոյ .
և առաւել նուազեցան . կէս մի ՚ի աբովզմց ընդ մի
մեանս և ըստ եւրոպացիս, և կէս մի ՚ի ծանրակիր
գործառնուեց և ՚ի դժնդակ աշխատուեց, յոր ծա
ռայեցուցանէին զնո՞ եւրոպացիք : Վայ վրիպին
մատենադիրք, որք տսրապայման բազմացւցանեն
զնո՞ . քղի 44 ազդք և ժողովուրդք բարակվայայ,
դուգումանայ, և ուրակվայայ, որք են առաւել
բազմամարդ նահանգք ամերիկոյ՝ հազիւ հասսնեն
՚ի թիւ 300 հազարաց . Եթէ նոյնչափ դիցուք և ՚ի
որասիլիտ, ՚ի քիլի, ՚ի բէրու, ՚ի կոյանա, ՚ի ցա
նոքն, և յերկիրն մակելանեան, որ յայտ է թէ
չէ բազմամարդ . Թիւ համօրէն բնիկ ամերիկացւոց
՚ի հարաւային ամերիկայ հազիւ հասանէ ցմլիսն
մի և կէս . և փոքր մի աւելի : Դիցուք թէ նոյն
չափ իցեն և ՚ի հիւսիսային մասին . զի ոչ թունի լի
նել առաւել բազմամարդ ք զհարաւայինն . բոլոր
թիւ բնիկ ամերիկացւոց լինի երեք միլիոն . և փո

քը մի աւելի :

Խոկ խափչիք՝ կմ՞ սեաւ ափրիկեցիք՝ զորս սկսան
առաջ

տանիլ անդր եւրոպացիք , յորժամնուազեցանըը
նիկ ամերիկացիք 'ի մշակել զերկեր , և 'ի դործել
'ի մետաղս , 'ի սկզբան ոնկ և յաւարտ անցեալ դա-
րուն՝ առաւել բազմաթիւ էին . զի ըստ հաւա-
նական հաջունի ոմանց՝ յանցեալ գարու մինչև ցայժմ
երեսի հաւանական՝ թէ տարան անդր յափրիկոյ իր-
ըւ վեց միլիոն խափշեկք . սյլ այժմ գուցէ հազիւ-
կիսով չափ գաանին . քզի գոլով եզկելեացն գրաւ-
եալ 'ի խիստ աշխատանս , և ոչ կարելով ամուս-
նանալ , օր ը օրէ նուազին . և սպառեալ էին արդ-
եօք մինչև ցայժմ , եթէ ոչ լնուին գտեղի պակա-
սելոց , անդադար նորս տանելով յափրիկոյ . Ուս-
տի այժմ ը պիշինկայ գտանին անդ իբրև 3 միլիոն ,
և 450 հազար խափշեկք . իսկ եւրոպացիք (թուել
ը նս և զծնեալս 'ի խառն սերնդոց՝) առաւել են .
զի ը նորին պիշինկայ թիւ նց հասանէ ց6414678 :
Արդ՝ միացուցեալ զգումար երից ազգացս . թիւ
համօրէն բնակչաց նորոյ Ծի՝ լինի ը այսմ աղիւ-
սակի պիշինկայ :

Եւրոպացիք , և խառնեալք .	6414678 :
Աֆրիկեցիք	3450000 :
Բնիկ ամերիկացիք	3577000 :

Գ.մը բոլորեցուն 13441678 :

Յայտնանէ՝ ը ասից պիշինկայ մարթ է տեսանել ,
թէ որքափ հեռի է 'ի ճշմարտուե սուլմիշ , 'ի դը-
նէլն 150 միլիոն բնակիչս յամերիկայ . սակայն 'ի
վերջին ամայասոսիկ բղմք յոյժ 'ի մերս կիսագնտոյ ,
և մնդ յեւրոպիոյ անցին յամերիկայ . որով յայտ
է թէ այժմուս առաւելեալ են անդ յոյժ յոյժ բը-
նակիչք , ք 20 կմ 30 ամօք յառաջ :

Պ . Գւիտառը Լէբնիւ , Գէպէ , և Լէմա ամբիկոյ :

Լու նորադիւտ Ծ բարձր է և լեռնային . ուր ը
ասից ռոպէրդսոնի՝ երեխ թէ բնուլին առա-
ւել լիաձեռն դործեաց , ք 'ի մերումս կիսադնտի :
Գլխաւոր լերինք ամերիկոյ են այսորիկ :
ՀՀ-աւտեռն նէրին : որք կոչին և ՀՀ-աւտեռն այլիւ
կողուոտի չէրին : Են գոտիք մեծամեծ լերանց 'ի
հիւսիսային մասին ամերիկոյ . յարեմաւան կողմն
ժկ նահանգաց միացելոց :
Քուրդիւն լէրին բարձրաբերձք 'ի հարաւային մա-
սին ամերիկոյ , որք 'ի հարաւոյ երկայնեալ ձգին ը
հիւ .

Հիւսիս՝ մինչև 'ի մէքսիբոն :

Աղջերիկան լերին: Են գօտիք մէծամեծ լերանց 'ի հարաւային ամերիկայ՝ մօտ 'ի հասարակածն ը ըստ շակեզ շողով արեգական . սակայն դլուխք նց միշտ ձիւնալից են և սառնապատ՝ վայ երկնաշափ վերամբարձուե . որոյ բարձրագոյն կետն կոչեցեալ Շին պօրաց , կմ Քիմպօրաց՝ որ անկանի 'ի դվիդոննահան գի բէրուայ՝ է իբրև 22 հիշր ստնաշափ բարձր , կմ ը այլ չափու 3220 ձողաշափ , որ առնէ առամել ք զօրս մզոն . և է բարձրագոյնն 'ի մէշ չափեալ լերանց թի : Բայց ճշգրտիւ չէ յայտ բարձր լինելն լերանց ամերիկոյ՝ քան զլերինս մերում կի սագնակի . զի բարձրաբերձ լերինք ասիոյ՝ զնը օրինակ է մասիս լեաւն , լերինք տօրոսի , լերինք կովկասու , լերինք թաթարաց , լերինք գիպէդայ , ճեափոնի , ևն . չեն չափեալ , ող չափեցին բնագետք զլերինս ամերիկոյ :

Յայսց՝ և յայլոց անհամար լերանց ամերիկոյ բըշիւնն բազում գետք մէծամեծք և մանունք . յորոց գլխաւորքն են այսօքիկ :

ՍԵ լորենափիս: Է գետ մեծ 'ի հիւսիսային արևելեան կողմն ամերիկոյ 'ի նոր գաղղիա , կմ 'ի քանատա , յարմէ հոսեալ ը հիւսիս և ը արևելս , գնայ անկանի 'ի ծովին ը բերան լոյն իբրև 60 մզոն :

Միւսիւնի: Է նոյնապէս 'ի հիւսիսային կողմն ամերիկոյ . որ հոսեալ ը հարաւ մզոնս իբրև 2000. մը տանէ 'ի ծովին մէքսիբոնի :

Մարախնոն , կմ Գէտ Աղջապանեաց : Է 'ի հարաւային ամերիկայ . որ յարեմուից ընթացեալ յարևելս , և զայլ անհմը գետս յինքն ընկալեալ , գնայ մատնէ 'ի ծովին ը հասարակածիւ :

Ետիս . որ կոչի և Բահաւան յանուն ցեղապետի ուրուք վայրենի ժողովրդեան , որ յաւածագոյն առսովին գետով բնակեր . և է գետ մեծ 'ի վիրճինիա . որ հոսեալ 'ի հիւսիսոյ արևելցոց՝ ը արևեմուեան հարաւ , գնայ անկանի յովկիանոս անդր՝ ընդ բերան եօթն փարսախ լոյնութք : Մարթ է ը այս գետ նաւել մէծամեծ նաւուց մինչև 150 մզոնաւ 'ի ներքո 'ի ցամաքն . և անդր ևս հնար էր յոցել . եթէ չէին խափան բարձրաբերձ սահանք հոսեալք ընդ մէծամեծ ժայռս , որք ցանեալ ցրուեալ կան 'ի ձոր գետոյն իբրև 6. 7. մզոնաւ տարածութք :

Պրակ . Քուշտագու : Երկու գետք երևելիք 'ի նոր մէքսիբոն :

Ուրսուիոյա . կամ Գետ ոք Քըանլիսիոն : Ե՞ 'ի պրասիւլիա . որ 'ի հարաւոյ ընթացեալ լը հիւսիս՝ դառնայ յարևելս . և հարուստ մի տարածութե հոսեալ լը այն՝ գնայ անկանի 'ի ծովը :

Բատա : Ե՞ նոյնպէս գետ մեծ 'ի հարաւայինն ամերիկա . որ բզիսեալ 'ի բէրու , և հոսեալ 'ի հիւսոյ ընդ հարաւ՝ դառնայ յարևելս . և մտանէ 'ի ծով լը բերանն 'որոյ լայնութեան առաւել է քան 240 մղոն :

Այս ամբ գետք են 'ի թիւս մեծագոյն գետոց նի . որք և բզմ մղոնաւ հեռի 'ի ծովէ՝ այնչափ և այնպէս ըարձակեալ ծաւալին , մինչև այնուհետեւ ոչ գետք , այլ մի բազուկք կիմ ծոցք ծովու երեխն . զորս հօիսագոյն ևս ունիմք ստորագրել 'ի մասնաւոր ստորագրութիւն գաւառաց՝ լը որս անցանեն : Բաց 'ի յետմն հրաշալի գետոց տստի , են այլքս անհամար գետք յամերիկա մեծամեծք և մանունք .

զորս յիւրաքանչիւր տեղիս ունիմք նշանակել :

Լիճք մեծամեծք նոյնպէս բզմ են յամերիկայ . մանաւանդ 'ի հիւսիսային կողմանս . որոց գլխաւորքն են ոք : Լիճք վէրին . որ մեծ է քան զայլս . զի տարածութիւնը առաւել է քան 500 փարսախ : Հուրօլիճք . Միւսիան . Օնտարիօ . Երիօ . լիճք Ուլիւսիւնայ . լիճք Միւսիւնիւնիպաց . լիճք ՀՀապաւաց . լիճք Բիւսիւնիւնայոց : Այս ամ լիճք կիմ ծովակք են 'ի հիւսիսակողմն . Նոյնպէս նշանաւոր են լիճքն Միւսիւնի . և լիճքն կոչեցեալ Քետալայ . Եմիւսիւնայ . Մարտայոց . Բարինայ . Գերայէն . Դիւրիտա . 'ի բէրու . և Միւսիւնայ . Ծորդ դայլս որք չեն այնչափ ինչ մեծ :

Ե . Ծառվ . Երևելի Սեղաց . և Հրամանդանք ամերինու :

Ամատարած ծովք որք աստի և անտի պատեն զամերիկայ՝ լը հանրապէս կոչին ծով հիւսիսային , և ծով հարաւային . կմ խաղաղական : Հիւսիսայինն , որ անջրպետէ զեւրոպիա և զափրիկէ յամերիկայ , առ ափրիկէիւ անունանեալ կոչք ծովք կմ Ուլիւնս Ալդանդէան . յադլանդեան լերանց անտի՝ որք են յափրիկէ . իսկ առ ամերիկայիւ զանազան անունանց վիճակի . ըստ անունանց ցամաքաց և կղզեաց առ որովք պատէ . ուղ լը մէջ կրէնլանտիոյ և երկրի հիւսիսային բենուի՝ Պարոյ (որ է լուր)

իբր ծոց անկատար) Պահճինայ, 'ի մէջ երկրին լատրատորայ, և արեւելեան ցամաքի՝ պարոյը Հռոդոսին՝ Ընդ մէջ երկուց ցամաք կղզեաց. Մու իւրադանայ, և ֆլորիտայի, և առ ցամաքաւ նոր մէքսիքոնի՝ ծոյ ՄՇԵԿԱՒՆԻՆԻ: Իսկ այն մասն որ պատէ զանդիլշան կղզեօք՝ կոչի ԱՂՋԵԼԱԳԱԳՈՅ ԱՂՆԴԻԼԵԱՆ: Առ պրասիլիաիւ, մինչև 'ի բերան բլադայ գետոյն՝ ծով Պրասիլիոյ: Եւ անտի մինչև 'ի նեղուցն՝ որ բաժանէ զամերիկայ յերկրէ հրոյ՝ ծով ՄՄԱԿԵԼԱՆԵԱՆ: Իսկ անտի և անդր՝ ծով Հակաբային, կմբ Հարաւային բւեռի. ուր նաւք չեւս զօրեցին յուջ խաղալ անդր քզօ, և 70 աստիճան լայնուեն. արգելեալք 'ի մշտատե թանձրաման բքոց, և յանլուծանելի սառուցից. թէպէտ 'ի կողմն հիւսիսային բեւեռի խաղացին մինչ 'ի 77, և 80, աստիճան, զորմէ տեսոցես 'ի առ հապոր:

Իսկ ծովն հարաւային կմբ խաղաղական ձգել տարածի ը մէջ ասիոյ և ամերիկոյ, առ որով նոյնպէս զնկն անունանս ըռունի 'ի գլխաւոր գաւառաց. զոր օրինակ ծով Քիլայ. կմբ Քիլայ. և Բէրուայ, առ քիլի և բերու նահանգօք: Առ պարանոցաւն բանամոյ՝ ծով Բանամայ. յարեւմաեան կողմն քալի ֆօրնիայ՝ ծոյ Քաւելքօքնիայ: Իսկ ծոցն, որ է ը մէջ քալի ֆօրնիայ, և հին և նոր մէքսիքոնի, կոչի ծով Կաբերէ. զի ունի զնմաննութենին ը կարմիր ծովուն. կմբ մւնդ ը ադրիական ծովու: Այս ծով հարաւային՝ առաւել ըարձակ է ք զհիւսիւսայինն. և 'ի զանազան աեղիս սփռեալ կան 'ի նմա կղզիք մեծամեծք և մանունք. մւնդ մօտ յերկոսին սրեւադարձս: Իսկ առ շրջանակաւ արջային կմբ հիւսիսային բեւեռի՝ աւարտի 'ի նեղուցն, որ բաժանէ զամերիկայ յասիոյ. ոու 'ի վերջին ժմկս ճշգրտեցաւ. ը որ հռչակաւորն քուդ գուն գործեաց առնել Ճնկհ յեւրոպիա՝ այլ ոչ կարաց արգելեալ 'ի սառուցից՝ որք ձգեալ երեխն մինչև 'ի բեւեռն: 'Եղուցք ամերիկոյ են այսոքիկ. ԱՆՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱԿԵԼԱՆԵԱՆ: յայս անուն անունանեալ 'ի մակելանոսէ նաւապետէ փօրդուքալացւոյ՝ որ յուջ ք զնման շրջապատեաց զբոլոր գունտ երկրի ծովագնաց Ճնկհորդուը. անցեալ ը այս նեղուց՝ որ բաժանէ զհարաւային ծայր ամերիկոյ 'ի բղմ մեծամեծ կղզեաց. որք միանդամայն կոչին երկիր հրոյ: Չեք 'ի բովանդակ Ճի նեղուց այնչափ երկայն և այնչափ վտանգաւոր՝ որչափ այս. զի երկայնուեն նը է իբր 380 մլոն. Ի՞նչ

լի են 'ի նմա ժայռք , և կղզիք . և ընթացք ջուրց
նր պէսպէս և անկանոն : Բերան նր 'ի հրուանդա
նէն կուտանաց , մինչ 'ի հրուանդանն քարլոդայ՝ է
իբրև 30 մղն . այլ յետոյ գնայ անձկանալով՝ այն
պէս՝ զի 'ի տեղիս տեղիս հազիւ շ մղնացափ լայնուի
ունի : Զայս նեղուց ունիմք ը արձակագոյն ստորա
գրել 'ի ճառս մակելանեան երկրի :

Նեղու Մայրա : Ենեղ անցք ը մէջ կղզեաց զնշն
իշխանութեց՝ և երկրին հրոյ՝ մօտ առ նեղուցն
մակելանեան . և ունի զանուն յառաջնոյ գտողէ
իւրմէ : Իսկ այլ երեւլի նեղուցք՝ են 'ի հիւսիսա
կողմն . ողջ նեղու գրեցին կոչեայ . որ անջրապետէ
զկղզի նոր երկրի , յերկրէն լապրատորայ . նեղու
Տաւիսայ , որ է ը մէջ կրէնլանախոյ , և եամես
կղզւոյն :

Նեղու Պաքքինայ . որ զնոյն եամես կղզի բաժանէ
'ի քումպէռալանատայ , որ է ը մէջ լապրատորայ և
բարեբախտ կղզեաց : Բայց առաւել հռչակաւոր է
նեղու Պէհրինայ , կմ Աղնիանէան . և կմ Հիւսիսային .
անջրապետ ը մէջ ասիոյ և ամերիկոյ . որոյ գիրք 'ի
նորումն հշդրատեցաւ 'ի ձեռն Շնորհորդուե նորոգ
նաւարկողաց՝ մնւնդ քուգայ . յորում գատանին բազ
մուի կղզեաց :

Հրուանդանդանք ամերիկոյ են այսգիկ . Հրուանդան
Հրուանի , 'ի հարաւային ծագ ամերիկոյ , իբր առ 56
աստիճանաւ հարաւային լայնուե . յայս անունն կո-
չեցաւ 'ինաւապետէ , որ նախ էանց առ նովաւ .
հրուանդան Սբ Հոռոտուի , յարեւելեան ծագ պրասիլիոյ .
հրուանի' Գարդուայ , 'ի ցամօքակղզին իւքադանայ .
հրուանի' Սբ Աղնառնի , և Խառնի 'ի քուտիա կղզին .
հրուանի' Սբ Քրիստոսայ , 'ի Ֆլորիտա . հրուանդ' Պէտրուի .
'ի թղթական կղզին . Հրուանդանք Ռազայ , Ռայայ,
և կրադայ . են երեք հրուանի' ի մեծ կղզին նոր
երկրի . հրուանի' Վալսկինիամայ . և կը Եղնաբէնի 'ի պա-
րոյրն հուտառնեան . կը Քառվւլայ 'ի կրէնլանատիս :
Սբ են առաւել նշանաւոր ծովեղերեայ հրուան-
դանք 'ի կողմն հիւսիսային ծովու :

Խոկ 'ի խաղաղական ծովու երեւելի հրուանդանք
են այսոքիկ : Կը Աղնառնայ . յարեւմտեան կողմն
Շին ամաղունեաց : Կը Քորիենդայ . Կը Սբ Ղուկայ
'ի քալի ֆօրնիս : Եւ 'ի հիւսիսակողմն քալի ֆօրնի-
ց . Կը Յւնե . Կը Մշնաչինայ , Կը Աղիդակ . և ն :
Չորս վերսակն յիշատակեացուք 'ի տեղիս իւր-
եանց :

Հ. ՕՌ ԱՂՋԵՒՄ :

() Դ կմբ բաժինն ամերիկոյ առ համեմատութել
երից մասանց մերումն կիսագնտոյ ը ամ տե-
ղիս առաւելցուրտ է ք առ մեզ : Նոր երկիրն և
մասն ինչ նոր սբոցիոյ՝ և քանատայի՝ են 'ի նմին
լայնուել ը օֆին գաղղիոյ . սակայն այնչափ սաստիկ
է անդ ցուրան 'ի ձմեռան , մինչ դրեթէ ամ աղջք
թոշնոց 'ի բաց մեկնին յայլ գաւառս , առ չոռկա
լոյ անհնարին ստոնամանեաց . նոյնպէս գաւառն
եպիմացւոց , որ է մասն լսովրատորայ . և գաւառք
անկեալք 'ի հարաւակողմն պարուրին հուտառնի .
թէպէտ զնոյն լսյնուի ունին , կմբ նոյնչափ հեռի
են 'ի հիւսիսային բեկոէ . որչափ մեծն բրիաա-
նիա , ք ինկիլդէռուա 'ի յեւրոպիա , սոկայն առ
սաստկաւառոյց սառնմանեաց , և ոչ իսկ եւրոպաց
ւոցն ճարտարութիւն կարողացաւ մաւծանել անդր
զմշտկութիւն , ուր ահա դաշտք ինկիլդէռուայի բաջ
մշտկեալ են : Եւ զի միանգամայն ասացից՝ ը ամ
տեղիս նորոյ օֆի համեմտութե մերոց նաց միշտ
տուաւել է ցրտութիւն . ահա և ը այրեցած գոտ-
եաւ , ուր 'ի մերումն կիսագնտի բոցակէզ շող
արեգական և զհող երկրի տոցորէ , ամերիկա գրե .
թէ միշտ անուար ամորով հովանաւորեալ . որ խափա-
նէ զուղղաձիգ բերումն ճաւագայթից արեգական՝
չնչէ օդ քաղցր և բարեխառն :

Խսկ պատճառ այսր անհաւասարութեա առաջին կա-
րեմք գնել զսակաւուից ցամսութին ամերիկոյ , ք զլե-
րին կիսագնտոյն . զի զամերիկային շրջապատեալ
կայ խորին անդունդ լայնածաւալ ովկիանոսի , և
բազմուի լնից և մեծամեծ գետոց յորդել 'ի նմ .
արդ 'ի ջուրն ոչ կարելով ուժդին անդրագաւու-
նալ ճուղյթից արեգական՝ ոոկ 'ի ցամսքն , նուշաղ
տապացուցանէ զօդն 'ի նմ , ք թէ զօդն ցամսքի .
զորմէ հոխագոյն աեսցես 'ի ա . հա : Եկիդ՝ բարձ-
րուի յերանց նր . որք ը ամն ողջոյն ձիւնալից են և
սասնապատ : Երրդ՝ յանսիրութիւն անտառաց նր .
որք ոչ սակաւ նպաստեն 'ի զովացումն օդոց . զի
խափանեն զշառաւիլս արեգական ներդործել յեր-
կիր , և անդրագարձութե ջեւուցանել զօդ :

Յայն սակս զօդ բարեխառն գոտեաց ամերիկայի ,
ոոկ և զոյցրեցած գոտւոյն ցրտացուցանէ հողմն ար-
ևլեան . որ թէպէտ գայ 'ի աօթադին գաւառաց
ափիր .

ափրիկոյ, բայց անցեալ ը լայնածաւալ ծովս ադ-
լանդեան՝ առ սակաւ սակաւ ցրտանայ. և հասեալ
՚ի ծովեզերս կույանայ և պրասիլիոյ՝ որք են ա-
ռաւել տօթագին նահանդք ամերիկոյ, զովացու-
ցանէ և բարեխառն գործէ զնո՞՝ առ համեմատսւթ
հանդիպակակաց նահանդաց ափրիկոյ, անտի յառաջ
խաղացեալ հողմոյն խօտորնակի՝ ը ցամաքն ամերի-
կոյ, անցանէ ը անտառու մեծամեծս, և ը լիճս և
ծահիճս բջմս, և ը ծովանման գետու. և հուսկ յե-
տոյ ը բարձրակատար ձիւնապատ անտեան լերինս.
որք ՚ի հիւսիսոյ միւգափակաց գինն ը հարու՝ և ես ցրտա-
նայ. ուստի և զովացուցանէ զառապ գոււառացն,
որք են յայնկոյս այնց լերանց ՚ի ներքոյ այրե-
ցած գոտուոյ:

Ալրդ սակս այսպիսի յանախուե անտառաց, լճից,
և գիշին տեղեաց պատճառելոց ՚ի զեղմանէ ջուրց
գետոց, այլև առ խոպանուե երկրին. օդ նորոյ Շի
գրեթէ յամ գաւառս առաւել խոնաւ էր յասաջա-
գոյն, թանձր եգանդաղամած՝ լի նեխեալ գոլորշ-
եօք. ուստի և վնասակար կենաց, մենդ օտարաց.
վայ սպանիացիք, որք ՚ի սկզբանն գնացին անդ,
անկան ՚ի զանազան ախաս մահաբերս. ոով և նա
ինքն մեծն քոլումնոս, յորմէ բզմք մեռան: Խակ որք
դարձան յեւրոպիս, էին ծիւրեալ և ծնդեալ իբր
յերկար հիւանդուէ զերծեալ. բայց յետ բազմա-
նալոյ անդ եւրոպացոց, և յետ մշակելոյ զերկիք
նր՝ ՚ի բջմ տեղիս, յորս յառաջագոյն յոռի էր օդն,
այժմ բարի է. որով և այն տեղիք, մենդ ծովե-
զերեայք՝ եղեն յարմար բնակարան և օտարաց:

Է. «Ե ախնի և այժմէան հանգաման + էրիքն ամերիկոյ, և
բեր : նը:

Լարկերն ամերիկոյ կմ նորոյ Շի ըհանրապէս
խօսելով՝ ը բնուե իւրում պարարտ է և յուր-
թի. սակայն մինչդե էին մտեալ անդ եւրոպացիք,
անմասն գոլով ՚ի ժրաջան մշակութէ ձեռին մար-
գոյ, կայր մնայր անգործ և անգարման. ուստի
և բովանդակ անտառացեալ և խոպանացեալ՝ լցել
զեղել աւելորդօք, և զուրկ ՚ի հարկաւորաց ընկե-
րուե քաղովական կենաց: Գետք նր զեղեալ ար-
տաքս ՚ի ձորոց իւրեանց, հեղեղեալ ծածկենե
զեղմ լայնարձակ արդաւանդ գաշտավայրս, և ճա-

հիմ ժահահոսա գործէին 'ի նս . յորոց և օդն
ապականէր , և չէր ոք որ խորհէր դարմանս ինչ
դտանել այնում . և զի միտնդամոյն ասացից՝ բո
վանդակ նոր Շն էր անապատ անշէն , ախրատե
սիլ և ահարկու իբր բնաւին անմարդի : Եւ չեն
ինչ զարմանք . քղի թէպէտ ունէր բնակիչս , այլ
բիրա էին նոքա և վայրագ . անգործ և վայրենի
կեանս /վարէին զօրէն անասնոց + շատացեալ այն
ունիկ , զոր երկիրն ինքնին մատակարարէր նց 'ի
դարման կենաց . որք էին փոքր ինչ մայիզ , որ է
տեսակ ինչ մարացորենոյ . գադառվ . զնշն ար
մատք , և պէսապէս վայրենի պտուղք . սյլե ձուկն :
Ու գոյր անդ՝ ոնկ 'ի վերոյ ասացաք + ոչ արջառ , ոչ
երիվար , ոչ էշ , ոչ ոշնար , ոչ խող , և ոչ ընտանի
հաւ կմ սագ , և ոչ այլ ինչ տեսակ պիտանացու
անասնոց , ոնկ և ոչ խսկ շուն . խսկ վայրենի գա
ղանք թէպէտ դտանէին անդ , զոր օրինակ վագր ,
վարազ , արջ , գայլ , աղուէս , եղջերու , և այլ
մասնաւոր տեսակք ինչ վայրենի անասնոց , զորս
կոչեն փումայ , յակուար , թափիւր , բուերուք
և այլն : Բայց առ համեմատութ անբաւ անտառաց
նը , և լերանց , և մեծամեծ անշէն անապատից ,
յորս անարգել կարէին բազմանալ յանբաւս ,
գերծ գոլով 'ի զինուց որսորդաց սակաւ էին յոյժ .
և քանակաւ մարմնոյ փոքր , անզօր , և երկշոտ .
պղերգ և սակաւածին . ք զհամատեսակս որք տռ
մեզ են :

Պատճառ այսորիկ՝ լուսութէրդսոնի թունի լինել
յուռուն օդոյն , և տկարութի բուսոց . և այլեւս
պտնձոք գաղտնիք , որք և այժմ ներդործեն յամ
աշխատ ընտանի անասնոց , զորս տանին անդ եւրո
պացեք . զի 'ի ծնունդս իւրեանց մեծապէս այլ
այլին . իբր զի ոչ ևս աճեն 'ի նոյնչափ մեծունի ոնկ
առ մեղ , և հազիւ երբեք պարարտանան . և միս
նց չէ այնպէս հիւթեղ , և փափկահամ . և մինչեւ
ցայժմ չեղե հնար սերունդ առնուլ անդ ուղառոց :
Չեսոյն էր տեսանել և 'ի մարդիկ . զի տկար էին
մարմնով , և սակաւածին յոյժ . յայն սակս յետ
այնչափ դարուց ոչ բազմացան : Եւ լը հկոկն նոյն
պտնձոք , ք խոնաւուն օդոյն ևն , որք երեւէին խա
փանիք աճման և սննդեան և զօրուե մարդկան և
չորքոտանի անասնոց , նպաստաւորէին 'ի բազմա
նաւ վնասակար հրաշալի և ստուարամարմին զեռ
նոց . և ժժմակաց . զոր օրինակ են օձ , իժ , դորան ,
միւ

մողէս և աշդի ազգի ճանձ, մըջիւն, և ցլջեկն ևն.
որք առաւել յաճախեալ են յամերիկայ ք յոյլ
մասունս Շի : Ունէր, ող ունի և այժմ ազդի աղ-
դի թռչունս . յորս են որք գեղեցիկ են , խոյտա-
ճամուկ և երփերանդ , բայց անձայն . և են որք
անզարդ են և տիրագոյն , այլ քաղցրաձայն : Սոյն
տրամաբաշխուն ծրից բնուե երեխ և 'ի զնին տե-
սակս ծաղկանց ոչ միայն յամերիկայ , այլև առ մեզ
զի են որոց գեղեցկուն հիացուցանէ զմարդ , այլ
զուրկ են յանուշահոտուէ . և են՝ որք թէպէտ չեն
այնչափ գեղազէշ , բայց անուշահոտ յոյժ . որք և
յայտնաբարբառ զարարցն իւրեանց զկատարելու-
թին քարոզեն . յայտ արարել թէ լրումն համօրէն
կատարելունց 'ի նա միայն գտանի , որոց հաղորդս
տունէ և զարարածս իւր . զոմանա յաւէտ , և զո-
մանս նուազ : 'ի մէջ թռչուոց առաւել յաճախեալ
են յամերիկա թռութակք . և այն թռչունք՝ որք 'ի
յարդի են սակս գեղեցկուն փետրոց :

Այլ առաւել պատուական բերք ամերիկոյ էին
պէսպէս ազնիւ փայտք պիտանացուք 'ի զնին տր-
հեստակերաս և 'ի ներկս . այլև գագառվ , վանի-
լիս , որդան կարմիր , և առաւել ք զամոսկի , և
արծաթ , որք և եղեն պտճռք շարժիցք եւրոպաց-
ւոց գունդագունդ դիմելոյ յայն նոր ։ այլ այս
ամպեալ կայր , և իբր 'ի խորս երկրի թաղեալ .
զի յարդ նց և պիտանուն անծանօթ էր բնակչաց
նր , մինչը էին հասեալ անդր եւրոպացիք : **Ա**յս
յայտիսի վիճակի էր երկիր նորոյ Շի , յորժամ
հասին անդր եւրոպացիք :

Իսկ այժմ կարի իմն փոփոխեալ է զառաջին ախրա-
դին աեսիլ իւր , որքափ ինչ կարէ փոխել մարդ-
կային մշակուն . թէպէտ ոչ բովանդակ ը ամ տե-
զիս : Քանզի մեծ մասն նր՝ մւնդ 'ի խորին կող-
մանս՝ գեռ լքեալ կայ անգործ . և գրեթէ 'ի նախ-
նի պայմանի իւրում . այլ 'ի ծովեզերեաց կողմանս ,
և 'ի ներքս ևս 'ի ցամաքն ցոր վայր հասին ոտք եւ-
րոպացւոց , գտանին բզմքազարք , աւանք , և գեոլք .
և ըարձակ անդաստոնք քաջ մշակեալք , և ծառա-
տունկք պտղաբեր ծառոց , և պարտէլք . որք բե-
րեն գրեթէ զամ բերս մերոց Շաց . թող զնա-
խայիշատակեալ սեփական բերս նր . որք այժմ լաւ
ևս պտղաբերեն 'ի ձեռն ժրախան և ձարտար մշա-
կութեն եւրոպացւոց . յորոց անբաւ գանձս շահին
նոքա : Քանզի բարձեալ բերեն նոքա անտի յեւրո-
պիա

պիա որդան կարմիր մեծագին . զնկն տեսակս պատճական փայտից 'ի պէտս ներկարարաց' և հիւսանց . որբ շինեն յայնցանէ պէտպէս ձարտարագործ կերտութածս . շաքար բաղում . վանիլիա՝ այնչափ յաճախիշերուպիա . ազգի ազգի պատուական արմատս , և համեմա , և բոյսս 'ի պէտս դեղորէից . թող զոսկի , և զարծաթ , և զայլ զանազան իրս . զորոց վերստին ունիմ խօսիլ ստորե 'ի ստորադրութիս գաւառացն՝ յորս լինին : Այլ կամեցեալ համառօտիւ առաջի առնել զբովանդակութի գանձուց , զոր եւրոպացիք՝ որբ տիրեն յամերիկայ հտնեն անտի , 'իդէպ համարիմ կարդել ասաանօր զաղիւսակ պիշինկոյ :

Գրանիտ զըր հանէն սպանիացիք 'ի շնառզան գաւառաց հիւսային և հարաւային ամերիկայ՝ յորս գիրն ։

'ի գաւառաց մեքսիկոնիի ,

ընւանգիսան հշմբար խացի .

Դակէիան

ոսկի 315135 .

արծաթ 8589930 .

ոսկի 1094284 .

արծաթ 2486874 .

'ի կուայրայ , 'ի բարակ վայայ , 'ի դուգումանայ , և 'ի քիլեայ ը բարեօդ կոշցեալ գաւառն .

ոսկի 214262 .

արծաթ 1032609 .

'ի ցամաքէն ը կարթագինէ . ոսկի 1004518 .

արծաթ 1702174 .

'ի հոնտուրասայ . ոսկի 3725 .

արծաթ 67744 .

'ի քուպաէ , և 'ի մեքսիկո .

նէ ը հաւանայ . ոսկի 65606 .

արծաթ 263940 .

'ի քարաքքայ , որ է 'ի ցմքն . ոսկի 5203 .

արծաթ 27600 .

'ի սը գոմինիկոսէ , և 'ի

հարուստ նւանգստէ . ոսկի 52 .

արծաթ 31752 .

'ի քամբէշայ , 'ի քումանոյ ,

և 'ի մարտքայպայ . 9056 .

Բովանդակութ 16914464 .

Յայս գումար յաւելուլ պարա է և զայն մամ, զոր
իրը գաղտնի և փախուցաննելով բերեն անտի . ո
րով նախընթաց գումարն ամի ամի հասանէ ց 18
միլիոն գահեկան : Իսկ եթէ 'ի հաշիւ արկյօռք,
ող և արժան իսկ է՝ զգին պատուական իրաց, զոր
'ի սպանիականն ամերիկոյ բարձեալ բերեն յեւրո
պիս, հաւանական է՝ ասէ պիշինիկ, թէ բոլոր
գումարն հասանէ գրեթէ ցհարիւր միլիոն գահե
կան : Իսկ այլ ազգք եւրոպացիք թէպէտ ոչ հանեն
նոյնչափ, բայց և նոցայն բնշմ է յոյժ . զի լոկ ո
դուտն, կամ շահն, 'ի բաց հանեալ զամ ծախս՝ է
ը առաջիկայ հաշուի :

Քրանի :

Դրանիք	3500000.
Հոլանտացիք	12000000.
Անգլիացիք 'ի կղզեաց իւրեանց .	33000000.
Դաղլիացիք	12000000.

Բովանդակութ 60500000,

Ռիւրակութ :

Պրասիլիա .	ոսկի	9000000.
	ակունս	4000000.
Հիւսիսային ամերիկա .		6400000.

Բովանդակութ . 19400000.

Ահա ը հաշուին պիշինիկայ զոր 'ի ստուգագիր մաւ
անից եհան, ամի ամի այսչափ և առաւել ար
դիւնս մատակարարէ եւրոպիոյ ամերիկա . վայ ասէ
պիշինիկ եթէ եւրոպիա կորուստնէր զբովս ոռկ
ոյ և արծաթոյ բէրուայ, պրասիլիոյ, և մեքսի
քոնի, 'ի սուլ ֆակի 'ի մեծ քրաւորութ անկանէր
առաւել հարստագոյն ազդ նր : Այս գար գեւանս
հեռի է . բայց ը ընթացից մարդկույին իրաց՝ ու
կարէ չհանգիպիլ . որում ահա 13 նհնկք ետուն
օրինակ անգղիոյ :

Ե. Բարեւ և սովորութիւն բնիկ աների խացւոյ . ըստ այն
Հիմայիկ՝ յորում գրին զն եւրոպացիւ :

Յորժամ հասին եւրոպացիք յամերիկայ՝ ուղ եր
կիրն բովանդակ իսուպան էր և անգործ, նոյնպա
և բնակիչք նր կորդ՝ և վայրագ, և իրը 'ի տղայական
վե

մինակի մրդեկալին քղքական կենաց , և 'ի սկզբնական միամտուեն , և ազատուեն : Անկախ էին և ինքնադրութիւ . առ որս հազիւ երեւեր նունազ նշանագանք ինչ կմ սկզբնաւորութիւ քղքական միուեն , և կանոնաւոր ընկերուեն . բաց յերկուց ազգաց՝ որք 'ի մէքսիքոն , և 'ի բերու , որք առ փոքր մի զարգացեալ էին 'ի քղքական կեսնս , և ունէին զթագաւորութիւ , և քղքական կառավարութիւ : Յայսմվայրի ունիմք ստորագրել զհանդամանս ամերիկացւոց ընդհանրապս և առ հարկ . և ոչ ըստ մասնաւոր յատկաւեց և գործոց իւրաքանչիւր ժողովրդոց և ազգաց :

Առջառաջնում նուագի իրեւ տեսին եւրոպացիք զբնակիչս այնը նորոյ Շի՝ լցոն հիացմամբ . մինչեւ ոմանց 'ի կարծիս անկանիլ . թէ այլինչ զարմ մարդկան իցեն նք , օտար ՚ի մարդկանէ հնոյ աշխարհի : Գոյն մարմնոյ նց էր թուխ գեղնախառն , կմ մթին պղնձագոյն . բայց ոչ միապս յամսին . այլ յաւէտ և նունազ , ըստ յաւէտ և նունազ բարձրուեն , և ցածութեն վայրաց , յորս բնակէին . զի բնակիչք բարձրագոյն նահանգաց առաւել գեղեցիկ էին , ք զբնակիչ ծովեզերեայ ցածուն և գիշին տեղեաց . երեսք նց բոլորակ , և տեսիլ դիմույն հերցոհամբոյր . միանդամայն և կորդ և ապուշ . ճակատն նեղ . ծայրք ականջաց հեռի 'ի ծնօտից . շրթունքն թանձր . ունչք նուրբ և 'ի կախ . և ումանց ևս ստոփարակ . աչքն սեաւ . կմ 'ի գոյն շադանակի , և փոքրիկ , այլ հեռաատես . վարոք գլխոց ամենեին սեաւ թանձր և ձաղկ և կնծռեալ . իսկ այլ թմ մասունք մարմնոյ բոլորովին անմազ և լերկ . զի և մօրուս իսկ ոչ ունին . այլ միայն յորժամ ծերանան սակաւ ինչ ազունամազ բուսանի 'ի ծնօտ . բայց ոչ երբէք 'ի կզակն . ոտք նց փոքր են . և ամ անդամք մարմնոյն բարեկազմ . և բոլոր մարմնն բարելքափ և վայելքադիր . զոր կամեցեալ գեղեցկացուցանել՝ յիմարաբար պէսովէս դունովք առաւել տգեղացուցանեն . զի զբոլոր մարմինն նայտաճամուկ ներկեն :

Ծստ ուժոյ մարմնոյ՝ տկար էին յոյժ . մինչեւ ընդդուզնաքեայ աշխատանքք վզվզկե ձնշիլ և իսպամ լուծանիլ . ոնդ փորձիւ տեսաւ 'ի սկզբան անդ 'ի տկարելն զնա սպանիացւոց 'ի գործ . բայց այս տկարուի նց ոչ է միօրինակ ըստմ տեղիս . քղի բւր երկիրն ինքնին մատակարարեր զարպէն կենաց :

եսոյ, անդ առաւել տկար էին և թոյլ՝ իսկ ուր ձկնորսութ հայթհայթէին զգարման կենաց, առաւել ուժեղ էին և զօրաւոր յորմէ յայտ է թէ պահա տկարուե նց ոչ էր լոկ յուռի օդոյն՝ և հանգա մանք երկրին, այլև հնդզորդ գատարկուին. յորմէ թուլանան և տկարանան չիլք մարմնոյ. ոող բնկեկն՝ աշխատութ հաստատին և պնդին, և ներքին ոդիքն զարթնուն և կորովանան: Ամանք զայտ տկարուի տան և ներքին խառնուածոց նց. որոյ բայց նշան է առեն՝ լերկութ մարմնոյ, պահճնեալ ՚ի պակասութ այրական կորովուե. ևս և անզօր և անհամեմ կերակրոց նց, որք և զաղ իսկ ոչ ճառ նացեն. բայց ռոպերտան զոյս ոչ ընդունի. զի տհա առէ ՚ի մերս կիսագունատ գտանին ժողովուրդք վայրենիք, որք ըս նոցին օրինակի սրարդ և անհամեմ կերակրովք սնանին. տակայն թաւ են մարդուն, և ուժեղ. այլ թէպէտ այսցափ անզօր և ակար էին նորդ, բայց թեթև էին և արագըն թաց:

Ապրի տակաւակեր էին. զի ոող պատմեն սողանիացիք, համարնական ժուժկալուի նց բազմօք գերազանցէր ք զհնդզորդեան ծոսն խտակրօն անսպատառուորաց. ը որ սքանչանային սպանիացիք. ոող ը հկեկն՝ և ամերիկացիք հիանային ը տնյագ որկորըստուի սպանիոցւոց. աեսեալ զի միոյ աւուր կերպուուր միոյ սպանիացւոց բաւական էր տառն կը երկուասան ամերիկացւոց ցյագ. ուստի և երկնչեին թէ դուցէ յետ զդվզկի սպառելոյ զբերս երկրի իւրեանց, այնուհետեւ ձեռն արկցեն ու ուել և զինքեանս: Հայս նունազ յօժարուէ նց տոկերակուր, բղմք՝ ՚ի մսաենադրաց հաստատեցին. թէ նք ունին զբնական ինչ ակարուի ՚ի ներքին խոռնուած մարմնոյ իւրեանց. յոր ցաւելու պարտ է և զանդործ կեանս և զգատարկուի. վս զի յայանի աեսաւ, զի ՚ի նահանդս՝ յորս պտրաւանդել էին ՚ի խստ աշխատուիս, ախորժակ նց առ կերակուր՝ չէր ինչ ըհատ յախորժակաց եւրոպացւոց: Այլ առաւել զարմացման որժանի այն է, զի կիրք ցանկուե և սիրոյ ամենեին անզօր թոյլ և իբր չիջեալ երկեր ՚ի նո. վոյ և անզգայ էին առ հրադոյրս դեղոյ և սիրոյ, ոչ երեկք երեկը ՚ի նո բորբոք սիրոյ առ ապրասերս. այլ արհամարհանօք հայէին ՚ի նո, իբր յայլստեսակ անասուն. այն զի և երիտասարդք, յորս առաւել ապարատն է այս

կերք , 'ի բղմ առիթու հրապուրից 'ի ցանկութիւն , ցուրտ և անկիր երեւցուցանէին զանձինս . մինչև նոցին խոկ սրբակրոն և առաքինասէր քարողաց եւրոպացւոց զարմանալ ըլ այնչափ ժուժկալութիւնց . զոր նոյնողա բզմիք 'ի բնադինին իմաստասիրաց ընծայեն անզօր և տկար խառնուածոցնց , թշունառ կենաց , անզօր և սակաւ կերակրոց . յոր 'ի գէպ է յարեւ և զբակասութիւն բարոյական պատճեց . զի չունէին օրինակս հրապուրից . առ որս և տարասերք ոչ գիտեին զիսենեց պչըանս 'ի աղատրեւ զերիտաստրդու :

Ոչ գոյր առ ամերիկացիս տգեղ , կմ խեղ , և կմ զուրկ 'ի զդայրնաց ինչ . այլ գրեթէ ամենեքեն բարեկազմ էին և վայելըադիր մարմնով , ոող և 'ի վերոյ ասացաք . անթէրի ունելով զամ մասունս մարմնոյ : Եւ զար մանալին այն է , զի տեսիլ գիմաց նց՝ և գոյն և ձեւ մարմնոյ առ հարկ այնչափ նման էին , մինչև 'ի տեսանելուրուք զմի յամերիկացւոց անտի , կարեր ասեւ թէ ետես զնունն . թէ ողա և դաւառաւ և աշխարհաւ հեռի էին 'ի միմեանց . և ազդաւ զիզն : Յորժամքունուոս և այլք զինի նը հասին 'ի գաւառս ամերիկոյ , որք են ըլ այրեցած գօտեաւ , կարծէին տեսանել անդ սեամորթ ազինս , ոող յափրիկէ ընովին գծիւ . բայց տեսին , զի գոյն բնակչաց և այնց տօթագին կողմանց հազիւ զանազանէր ըլ մթուե 'ի գունոյ բնակչաց բարեխառն կողմանց . դայս նմանութիւն ամերիկացւոց ոչ մի 'կմ երկու ոմանք աննշանք վկայեն , այլ բղմ արք երեւելիք և արժանահաւատք . որք ըերկար ժմէկս եղեն անդ , և յածեւը շըլքեցան 'ի զանազան նահանգոս հեռաւորս . և բազմախոյլ հետազօտութ նկատեցին զամ հանգամանս բնակչաց նց : Ամանք 'ի մատենադրաց քննելով զպանու այնը բարեկազմուե և կատարելուե մարմնոյ ամերիկացւոց , ասեն թէ ծնողք նց գոլով ընկճեւ և ձնչեւ 'ի խիստ և 'ի տաժանակիր կենուց , որդիքն առողջ ծնանին , և քաջ կաղմակերպեալ : Եւ ևս թէ մարմին մարդկային մերկ և արձակ անդստին յառաջին տիոց , լաւ ևս պահէ զբնական ձև իւր . և բոլոր անդամք նը ստանան զպատշաճագոյն գիրս և չափակցութիւն . ք յորժամք խանձարրապատ պարապետին . ոյք խափանէն զամումն և խանգարեն զբնական ձև նը : Ասկայն ոմանք , ըլ որս և ուսպէրդգսոն թէ ողա հաւանին ըլ այս պանու , բայց ոչ համարին բաւական առ այսպիսի յայտնի կատարելուի , որ հսրկ է ամ

ամերիկեան աղանց . այլ ասեն՝ թէ են և այլ թագուն պահպաք . ունին և կարծիս , թէ ամերիկաց վարելով վայրենի և թափառական կեանս , գժուարին է նց , մւնդ թէ անհնարին՝ ինամ տանիւ նորածին տղայոց ուղ արժան է . վայ որք ունին զյոռի տրամադրուի ինչ , ոչ կարեն տոկալ այն պիսի տառապանաց , ուստի և մեռանին . Երբեմն ևս ծնօղքն իսկ սպանանեն , կմ անխնամ լքանեն , յորժամ տեսանեն զի տկար են , կմ խեղ կմ պակասաւոր . անարժան համարելով այնշափ աշխատութ սնուցանել զայնպիսի անպիտանս . որով միոյն քաջառողջքն մնան կենդանի . և զայս կարծիս իւրեանց անտի հաստատեն , զի 'ի գւռա ուր գտանին եւրոպացիք , կմ որք են ընդ մրութ նց , յորս առնեն նք զիանոնաւոր զգուշուն 'ի վը կենաց բնակչաց , և լը ստոտիկ պատժով արգելեալ են ամերիկացւոց զմիել ձեռս 'ի զաւակս իւրեանց , գտանին բկմ տգեղք , գաճաճք , հաշմք , խուլք են . բայց զայս մարթ է ընծայել և անկարդուե կենաց նց . որք խառնակելով ը այլոց աղդաց , լցան զանազան մնլութիւք : Յառաջագոյն պէտպէս առասպելք յածէին 'ի մերում թիվ քնակցաց ամերիկոյ հկուկ նախասացել չափակցուե մարմոյ նց , և նմանուե միմեանց . զի համբաւէին , թէ բնակիչք գւռաց սմանց են թզուելք Յ ունացափ բարձրութ . այլոց շհկուկն հսկայք յաղթանդամք . և թէ գտանի սնդ . աղդ մի միականի . և այլ աղդ մի անգլուի . որոց ացք և բերան են 'ի լտնջա նց . և այսմ միամուռթ հաւասարյն գիւրահաւանք . բայց այժմ այն նմ հրեշք և ճիշաղք քացան , և 'ի մասացօնս անկան . յորժամ դրուածք արժանահաւատ ճանապարհորդաց վասն սմերիկացւոց 'ի լոյս եկին :

Ամերիկացիք թէ ուղտ այսպիս տկար էին մարմնով , այլ խորշոմել գէմք նց առ խորին զառամաւթել ցուցանելը լինել նց երկայնակեաց . բայց չզիւ հնարջութ գիտել զթիւ ամաց կենաց նց . զի ոչ գետէին նք թուել զամս . նոյնողս մամուրեք երեւեին լինել զերծ 'ի բազմատեսակ հիւանդուեց , որք յանախել են 'ի մէջ քղքայնոց . որոց և անուանք անծանօթ էին առ նց : Եւ այս թուի լինել 'ի պարզ և անխառն կերակրոց նց , յորոց թէ փոքր մի գետէին կանոնաւորել զանձինս , ապաքէն առաւելքառողջ լինեին . բայց քզի ամենակին անասնօրէն

գնան և ոչ դիտեն յառաջատես լինել վշ ապագային , երբեմն առ 'ի զդոցէ կերակրոյ՝ անսունաղութ տունայտին . և երբեմն 'ի դտանել զառատութ անյագ որ կորսառութ վասնդին . որով բզմիք և այժմ 'ի ծաղ կել հաստիկի բառնին 'ի կենաց : Գլխաւոր ախոք և հիւանդութ ամերիկացւոց՝ են թղթացաւութ, շնչար զելութ և կշացաւութ պտճնել 'ի տարժանաւոր եղանակէ կենաց , եյանբարեխառնութ ցրտոյ և տօ թոյցորոց ոչ դիտեն պաշտպանել զանձինս : Ասի թէ ախոն ելափանդական , այն է՝ Քունչի ույալը յամերիկացւոց ծաւալեցաւ յեւրոպիա . վոյ երեկ թէ և այն ախտ գտանէր առ նո՞ :

Կերակուր վայրենի ամերիկացւոց՝ որք 'ի գաշտա վայրս և 'ի գետեզերս բնակէին , էին արմատք զորս երկիրն ինքնին բերէ . վայրի պտուղք , հատք , և ունղք . ոյլե մողէս , գորտն , և այլ աղդի աղդի զեռունղք , և ժժմակք . և 'ի ժմկո ինչ ձուկն . քղի ասի թէ 'ի մասնաւոր Ճմկո ինչ այնչափ առատանան զննեն տեսակք ձկանց 'ի գետս , 'ի ճահիճս , և 'ի լիճս հարաւային ամերիկոյ , զի առանց ինչ արհեստի կմ գործեաց մարթ է և ձեռօք ըմբռնել : իսկ որք ցրուեալ կային 'ի մեծամեծ անտառս , նք առօ ւել տարժանէին 'ի խնդիր կերակրոյ . զի սովորական կերակուր նց՝ բաց 'ի վայրենի ստղոց , և որս վայրի . զորս որսոցին նետիւք . առ որ պիտի աշխատութ , քաշութ սրտի , աշալընութ , ոյլե արամաքանութ 'ի գտանել զանազան հնարս . վոյ հարկ քաղցուն զայս ամի հատարելութ վաղու ևս սկսաւ ուստիցանել նզ , որով և ոչ սակաւ սթափեցան յառաջին ապշութ . որոց ապա տեսնալ , զի լոկ որսորդութին վայրենի երէոց և ձկանց՝ չեր բաւական 'ի գարման կենաց , ձեռնարկին 'ի մշակէլ զերկիր : 'ի հարաւայինն ամերիկայ 'ի բարեխառն տեղիս մշակեին մայիզ , որ է աեսակ մի մնրացորենոյ . և զմանիօք , որ ամէ 'ի մեծութ թփոյ . և բերէ արմատս նման դաշարի՝ թ հաւութի . զըր չորացուցեալ լոսեն 'ի փոշի . և գործեն անտինկանակ . որ թէ իդտ անհամէ քմաց , այլ ոււտի փխոկ հացի . ա մնն թէ հիւթ այնը արմատոյ՝ է թոյն վնասակար . յայն սակս բղմ զդուշութ մզենզիւթ նը . և քաջ չորացուցանեն . զի մի մնասցէ ինչ խոնաւութի ՚ի նմ . գտանի անդ և այլ տեսակ մի մանիօքի անմասն 'ի թիւնաւոր հիւթոյ . զոր առանց լոսելը . խորսվեալ 'ի մէջ չերմ մոխրոյ՝ ուտեն : իսկ 'ի կղզիս՝

իղիս՝ ուր սակաւ էին չըրքոտանի տնասունք, գարման բնակչաց նց ը ժմկս ինչ էին թռչունք վայրենիք. յայլ ժմկս մոդէս, գորան, և այլ ողէս պէս զալբալի սողունք, իսկ 'ի մասնաւոր եղանակս ինչ կրիայ, խաչափառ, և այլ խեցեմորթք. այլեւ ձուկն, և մանեթօք, զոր և նք մշակէին, ոող բնակիչք ցամուքին ամերիկոյ : Ահա այսոքիկ էին գլխաւոր գարմանիք կենաց նց. բայց քան զի չէր հնար միշտ դտանեւ զայնո ըստականին, նմին իրի սով սաստիկ ստէպ վտանգէր զնո՞ւ. զի երկրագործուն կերակրիչ համօրէն աղցի մարդկան անծանօթ էր նց. բաց 'ի տեղեաց ինչ յորս դազդս ինչ բուսոց գարմանէին. զոր երկիրն ինքնին բերէր: Ամն զի թէպտ և ծանուցեալ էր, սակայն չունելով նոցա լնտանի անսասունս, և ոչ երկաթի գործիս, առանց որոց գֆուարին է, և գրեթէ անհնարին մշակուն անդաստանաց. ուր և նոքօք իսկ բազում աշխատուեց, և քրտանց ոկտաք են 'ի մաքրել և 'ի կակղել զկորդ և զխոպանացեալ երկիր. և զի ոող աստցաք, և ունիմք ասել՝ ամերիկացիք անհնարինս խորշէին յաշխատուել. նորին վո չեն ինչ զարմանք, զի և առաւել կիրթեն 'ի նցէ այնշափ սակաւ. յառաջազդէմ լեալ էին յերկրագործուն:

Իսկ սովորական ըմպելի նց՝ էր ջուր. բայց ունեն և զրմպելի ինչ արբեցուցիչ կազմել 'ի զանազան արմատոց. զոր յորժմ գտանէին անյագաբար ըմպէին. զի կարի անձնատուր էին յարբեցութին. յոյր սակս գտին և այլ զանազան հնարս առ 'ի արբենալ. զի 'ի տեղիս տեղիս զծուխծնախոտոց մասնաւոր իմն գործեաւ ձգէին ը ըւնդունս. որ ելեալ 'ի գլուխն ցնորէր զմիտսն. յայլ տեղիս զսելումանիտ անծանօթ տնկոց ինչ խառն ը ծովային խեցեաց լուեալ 'ի փոշի, ձգէին 'ի վեր ը ըւնդունս. որ այնչափ զօրեղ է և ազդու, մինչեւ ոպատճառել զիսելագարուի. և զայս ամ առնեն և այժմ:

Սոյն այս վայրենի ազինք ամերիկոյ՝ որք 'ի բարեխառն և 'ի չերմ գւուս բնակէին, բնաւին մերկ շրջէին. և փխկ զգեստուց ստէպ օծանէին զբոլոր մարմին իւրեանց հարողով անասնոց. յոր խառնէին և մածուցիկ խէժս. որ և քաջ պատարարէր զմորմին նց 'ի գէճ խոնաւուէ, և 'ի տապոյ տօժոյն. այլեւ 'ի հարուածոց թիւնաւոր սողնոց յանախելոց յամերիկայ. զի սողունքն զբնական հակակրութիւննին առ հոտ այնը խիժոյ. ուստի և ոչ մերձենան

՚ի նոր և երբեմն պէս սլէս ներկո խառնեալ ՚ի խէժն ,
պիսակաւորէին զբոլոր մարմին իւրեանց :
Արդ՝ թէպան ամենեւին մերկ էին ՚ի զգեստուց ,
բայց ոչ նոյնոպէս ՚ի զարդուց . զի բաղմադիմի յօրի
նէին զվարաս . և փետրովք թռնոց զարդարէին .
իսկ զականջաց , զըռնդաց , երբեմն ևս զշրթանց՝
հախէին կոտորակս ոսկւոյ , և ծովային իւցիս , և
շոլցողիւն քարինս . բայց այսու ոչ շատացեալ , կա
մելով առաւել վայելուց կմ մէնդ ահարկու երևիլ ,
խանգարէին զբնական ձեւ գլխոյ իւրեանց . զի ՚ի
ծնանիլ մանկանց՝ մինչդեռ փափուկ և դիւրակոր
էր ոսկր գլխոց նց , ոմանք սեղմելով տափարա-
կէին զգագաթն նց . այլք ըստ հիւկն՝ ջանային կո-
կոնաձև կմ սրածայր գործել . իսկ կէսք քառա-
կուսի . օրովք մանգամ վասնդէին զիեանս եվիե-
լի տղայոց՝ ՚ի ջանալն այնովիսի տարադէով տարա-
զու ձեւացուցանել զդլուխ նց :

Այլ ոնդ ՚ի զգեստուց , նոյնոնդս և ՚ի տանց զուրկ
էին . զի չունէին ուրեք զհաստատուն բնակարան .
այլ ՚ի տունջեան խոյս տային ըստ հովանեաւ վար-
ուուր ծառոց ՚ի տօթագին շողոյ արեգական . իսկ
՚ի գիշերի կազմէին հիւզոյուսուց ծառոց , և անդ-
ագանէին . յանձրեային ժմկո մտանէին ՚ի խորշս
և ՚ի փապարս լերանց , և ՚ի փորբք ծառոց , և
շառք ևս կաղէին խուրձ եղեգան . և բացեալ զի
ծայր խրճոյն , անցուցանէին զայն ՚ի գլուխս ձա-
գարաձև . որով իբր ըստ ապահովանեալ լի-
նէին յանձրեոյ . բայց էին և այլ բզմազդք և ժո-
ղովուրդք ոչ միայն ՚ի ցրտային կողմանս , այլև ՚ի
բարեխառն տեղիս , որք գոլով առ փոքր մի հրա-
հանդեալ ՚ի քաղաքական կեանս՝ զդեցեալ շրջէին .
ունէին բնակարան թէպան աղքատակերաս . ուր
հանդերձ ընտանեօք իւրեանց բնակէին : իսկ կահք
տանց նց սակաւ էր յոյժ և յոսի . ոմանք դտեալ
էին զարհեստ կազմելոյ իւցեղէին անօթս . զոր չո-
րացուցանէին յարեւու . և ուրեք փորէին զհատորս
կարծր փայտից ՚ի ձեւ տանի . և լցեալ ՚ի նմ ջուր
եռացուցանէին՝ արկեալ ՚ի նմ քարինս արտաշիկաց
եալս : իսկ անկողին նց էր մերկ գետին , կամ
մորթ անասնոց , զորս որսային . այլև խոշորանիւթ
ցփսի , կմ չուխայ : Զէնք նց էին մահակք ՚ի կափծր
փայտից . տէդք ՚ի փայտէ , որք ՚ի ծայրս ունէին
ագուցեալ սրածայր ոսկր անասնոց՝ կմ վէմ դայ-
լախազ . աղեղն . և նետ . և պարսատիկ : Ունէին
և բիբու

և բիրտ և անձեւ նաւակս, զօրս քանօդ կոչեն. և շնէին զայն 'ի բնոյ ծառոց. այլ ամսօրեայ ժմկու ծախէին 'ի հատանել ղծառ քարեղէն գործեօք. և զամս քանի մի 'ի փորել զայն կոճզ, և 'ի ձեւացուցանել նաւակ. ուստի և բղմանդամ սկսանէր փափէ փայտն, մինչ չեր յաւարա հասուցեալ նց զնաւակն:

Աշա ը մասին մարմնոյ՝ կերակրոյ՝ և զգեստուց՝ և տանց՝ այսպիսի էին վայրենի ամերիկացիք. իսկ ը կարողուեց հոգւոց՝ մէնդ ը մտաց՝ և ը բանական բաղձանաց, տարտամէին, ասլուշ, և թմրել. և բոլորովին յարտաքին զգայուիս մատնեալ ըստ տպայոց, կմ' անասնոց. վայ բղմ աղքք էին յամերիկայ՝ ողկ և ոյժմ են, որք 'ի բարբառ իւրեանց չունին բառս 'ի նշանակել զայլ ինչ, բայց միայն զայն զոր աեսանեն. ուստի բառքո՞ ժմկ, տարի, ամիս, միջոց, ևն. որք սովորական են և առ ամենեին խուժագուժ աղինս մերոց հաց, առ նու անձանօժէ էին, ողկ և պարզ թունական անուշանք. զի բղմ ցեղք են անգ՝ ողկ եամեսացիք, սրբատիլիացիք՝ ողք 'ի թունելն ոչ կարեն յուջել առաւել ք զերիս. իսկ այլք հասանեն ցտասն, կմ' գքսան և եթ. և յոր ժամ կամէին բացատրել զառաւել ինչ թիւ, զհերս գշխոյ ցուցանէին: Պրասիլիացւոց լեզու մինչեցայժմ՝ ի թունելն առաւել ք զերիս, 'ի կիր առնուղ թունական անուշանս լեզուն փօրդուկալաց: Եւ ոչ միայն ամերիկացիք, այլ որ առաւել զարմանալին է՝ եւ բոստացիք զօրս կոչեն քրէօլս, յթ ծնելքն յամերիկայեւրոպացի ծնողաց՝ լիհանրասկ խօսելով լինին ակար, ապուշ, զանցառու, անյարմանը յուսումն. մէնդ 'ի դ. և 'ի եւ աղքի. վակ մինչեւ ցայժմ ոչ ոք ծաղկեցաւ գիտութ 'ի համալսարանս ամերիկոյ. ոչ ոք գտաւ հեղինակ գրոց ինչ 'ի ձեմարանի անդ նըն մարկոսի 'ի լիսա, որ երևելին է ք զայլս. ոչ ոք 'ի նցնէ գրեաց զբնական պատմուէ երկրին՝ զկենդանեաց, զանկոց, զհանքաց, և զօդոյ ամերէկոյ. այլ գրօղք այսոցիկ՝ են բնաբանք՝ ծնելք յեւրոպիա. յորժամ կօտին կարգեցաւ դասատու աստղաբաշխութ 'ի բէրու, զօչ ոք եղիտ անդ յարմար յօւնկնդրութ բանից իւրոց. լարձակ խօսի վայսը հեղինակն գրոց՝ որոյ խօրագիր է. քննութիւ փիլիսոփայական յղիք ամերիկացւոց. հա. ք. թղթ. 182. և 'ի հետեւեալս: Բայց անդ բէն դարձուցեալ զբանս մեր 'ի բնիկ ամերիկացիս՝ մէնդ առ նախ

զնոն իրրե սարուկս ։ վոյ և աներկել քաջուք դի-
մամարտէին վճռոց նը :

Մինչդեռ յուզիւլիոն այս խնդիր, և ակնունէր
տակուին անգղիա 'ի հնազանդուի նուշանել զնս,
ձեռն էարկ 'ի փորձ տռ 'ի գործ գնել զվճիռ իւր ։
Բայց ժմկք էին, զի հրաժարէին նք առնուլ դէյ՝
չ չայ, յընկերուէ վչուկնց անգղիոյ արևելեան հնդ-
կաց ։

կաց . իբր զի և չայն էր մի յերաց անտի , յորոյ վր
եղեալ էր մաքս երեք փող իբր առ 150 տիրէւմ .
ուստի 2300 արկեզս չայի առաքեցին 'ի նոր ինկիլ-
դէռառա . որոյ բնակիչք մոլել էին 'ի սէր նորուն՝ և
անխնայ 'ի գործ ածէին . իբրեւ հասին նաւքն 'ի նա-
ւահանգիստն պոստընայ՝ որ է գլխաւոր քաղաք
մէարշիւսէդ նահանգին , բնակիչք նը զայրացել՝ ոչ
թողին հանել 'ի ցամաք . զի ըդէմ բողոքման իւր-
եանց առաքեաց ինկիլդէռա զայն վաճառ 'ի նա-
ւահանգիստ իւրեանց . և թէովէտ կուսակալ իշխանն
անգվիացւոց ամ հնարինք գուն գործեաց զիջուցա-
նել զնն , այլ վայրապար . քանզի մինչ ակնունէր նա
փոքր միւս ևս խաղաղացուցանել զնն , և 'ի հնա-
զանգութն նուածել , ուստի և խորհէր տալ հանել
'ի ցամաք դայն , ահա բնակիչք քաղաքին խումբ կալ-
մել գիմեցին 'ի նաւու , և 342 արկեղս չայի ընկեցին
'ի ծով . այս գործ յանդգնական ծանր քրէական
յանցանք գատեցաւ 'ի բաւլամենդն լոնտուայի . վը
կամեցեալ արժանակիցիս պատուհաս դնել 'ի վր
պոստընայ , հրովարտակ եհան՝ որով բառնայր զամ
ազատուիս նը . հրամայէր ինոււլ զնաւահանգիստ
նը , և արգելոյր նմ առնել վճռկնութի :

իբրեւ եհաս յամերիկա հրովարտակն այն , բնակիչք
համօրէն նահանգացն միաբանել 'ի պաշտպանութի
պոստընացւոց , ձեռամբ գահձի հանդիսիւ ոյրե-
ցին զհրովարտակն , և փոխարէն՝ արգելին իւրեանց
ժողովրդն չառնել առեւտրութիս ը անգվիացւոց ,
մինչեւ ոչ ջնջեսցի 'ի միջոյ այն գատակնիք անիրաւ ,
և հակառակ իւրեանց ազատուե : 'ի քաղաքական
կառույց աստի ծագեցաւ պաղմ զինուց . զի կամե-
ցեալ անգվիոյ ահացուցանել զբնակից նահանգացս
սկսաւ տռաքել զօրս 'ի պոստըն . ուր 'ի սակաւ
ժմկի հասոյց 20000 զօրս և քանի մի նաւս պողմի .
այլ վրիպեցաւ 'ի յուսոյն . զի նորա փիսկ անձնատուր
լինելոյ 'ի հնազանդութի , զօրաժողով եղեն գունդ-
կազմեցին իբրեւ 30000 մարտկաց . որոց եկել բա-
նակեցան յանդիման պոստընայ . բայց ոչ միացան 'ի
մարտ , զի ոչ կամէին ինքեանք գրգռել զպղմ :

Այլ իբրեւ արշաւեցին անգվիացիք 'ի վր լէքսինկա-
գոն փոքրիկ քաղաքի՝ որ է 'ի մէարշիւսէդ նահան-
գի , ուր բնակիչք երկրին ժողովեալ պահէին համ-
բարս կերակրոց , յայնժամ հրեշտակք նահանգացն
գումարել 'ի ժողով ըհանրական 'ի ֆիլտատէլֆիա ,
որ է այժմ մայրաքաղաք համօրէն միաբանել հին ,
վճռեւ

վճռեցին յոյշանապէս տալ պաղպմը դէքէմ մեծին բրի-
տանիոյ քը անգլիոյ . և զայն վճիռ հանդիսապէս
հրատարակեցին . քանզի բուգնամ սպարապէտ զօ-
րաց նց հանել զբոլոր զօրն 'ի բրոսրէդդ կոչեցեալ
լեառն հանդէպ պոսդընայ , պարզեաց զգրօշ դա-
ւառացաւ . որոյ 'ի մի կողմն գրեալ կայր 'ի բարբառ
անգլիական : Ես յերկինս բողոքեմ * . իսկ 'ի միւսն՝
* Ար առաջնորդէ ինձ , նա պահեցէ զիս * . ընթեր-
ցաւ 'ի լուր ամենեցուն զվաճիռ ժողովոյն . և քա-
ջալերել խրախուսեաց զնն արխաբար մարտնչիլ 'ի
պաշտպանութի հառարակաց ազատուն . այնուհետեւ
սաստկացաւ պաղմ 'ի մէջ երկուց կողմանց . յորում
է զի՞ մի կողմն յաղթէր . և է զի՞ միւսն . բայց 'ի
վերջոյ ամերիկացիք յազմանակեցին :

Իսկ ժողովն հրեշտակաց ժիկ նահանգացն , տեսեալ
զի չկը այնուհետեւ հնար ամերիկ զժողովուրդն 'ի
հայառութի ը անգլիացւոց , 'ի 1776 . հանդիսական
վճռով հրատարակեցին զայս ժիկ նահանգս անկախ ,
և արձակել յամ կողնաց մեծին բրիտանիոյ . որում
միակամ հաւանեռութի ստորագրեցին համօրէն նա-
հանգք . որով և իսպառ բաժանեցան յանդվիոյ . ա-
պա հրեշտակս արձակեցին առ ամը թագաւորութիւ-
նու բուգիոյ ճանաչել զինքեանս անկախ . իսկ յամ
թագաւորութեց նախ առաջին գաղղիա կալաւ զիողմն
նց . որ և ծանր զօրք ել ընդդէմ անգլիացւոց 'ի
պաշտպանութի ազատուն ամերիկացւոց . իսկ 'ի
1779 . ել և սպանիա . բայց ոչ լոկ սակս պաշտպա-
նուն ամերիկացւոց . այլ զի չը ընկալել բաւական
հատուցումն զրկանաց և լիսասուց՝ զոր կրեաց ժո-
ղովուրդ իւր յամերիկայ 'ի սահմանակից անգլիաց-
ւոց . այլ և սակս անարդանաց՝ որով անգլիացիք
անարգեցին զարբայն սպանիոյ . որոյ կամեցել լի-
նել միջնորդ խազաղուն , հերքեցաւ յանդվիացւոց իրը
կողմնակալ գաղղիոյ . և ևս 'ի հանել զվեկժ
հին անիրաւունց , զոր կրել եր յանդվիացւոց յայ-
լում ձախողակ ուղղմի . հուսկ յետոյ միաբանեցաւ
ը սոսա և հոլանտա . յորմէ դժնդակ պարզմ գրգռե-
ցաւ 'ի մէջ չորից հզօր պետունց . այլ 'ի վախճանի
պարտել անգլիացւոց , կամաց ակամայ խօսեցան 'ի
հաշառութի ը երից թագաւորացն և ը ամերիկացւոց .
որ եղե 'ի վերսայլիէ . 'ի 1783 . և այնպէս յայնմէտեէ
ևմ թղթը ընկալան զժիկ նահանգսն իրը նոր հսրկու-
թի ազատ՝ անկախ՝ և ինքնագլուխ :

Է . Կառավարութեան և Արքու ծառ նահանգաց Դաշելոց :

Պաղաքական կառավարութեայ ժողովնահանգաց մինչև էին թօթափել զլուծ մեծին բրիտանիւն էր զնդն գրեթել յամ նահանգու : 'Ի նոր անգղիս, 'ի նոր եօրք, 'ի ճըրսի, 'ի քարոլինա, 'ի վիրաջնիսիա, և 'ի մորմիա էր ազնուապետական խառն ըստ ռամկառութեա . զի երկու գլխաւոր ժողովք էին 'ի նոր մի ստորին, զոր կացուցանէին պաշտօնեայք ընտրելը և կարգեալք 'ի ժողովրդենէ . և երկրորդ վերնագոյն, զոր կացուցանէին գլխաւորք նահանգին, ընտրել և հաստատեալ յարքային մեծին բրիտանիոյ . գլուխ սր էր կուսակալ իշխան ոմն անգղիսացի . նր էր դումարել զայս ժողով . և զնմանէ կախել կային ամ վՃիռք և սահմանադրութեք ժողովոյն . զորս յորժամ նա հաստատէր ընդունէին զըրութեօթինաց, մինչեւ էր արքայն անգղիոյ ասպախտ արարել առ որ առաքէին զնմ . զի 'ի վերջոյ ամ օրէնք ոց վթիրէն կախեալ կային . վթէ կառավարութեա սց կոչէթ թագաւորական : Խսկ կառավարութին մէրիլընաց և բէն սիլվանիոյ, ուղ և այլոց ոմանց նահանգաց 'ի սկըլքանն էր գրեթել բանականադրութեա . որ և կոչէթ կառավարութեառանձնական, կիմ սեփականեալ . զի 'ի սկզբան անդ յորժամ սկսան անգղիսացիք երթալ 'ի կողմանս յայնասիկ, և հաստատել անդ զընակութ, ումանք յարանցն արքունեաց անգղիոյ, որք առաւել ընդուքադզ և հնարխագէտ էին, հաւատարիմ ընծայեցուցել զանձիս, առանց ինչ ըդիմաւէ՝ դոյզն ծախ, իւք 'ի լայնածաւալ անտպատան յայնոսիկ ստանոյին զտիրագետութիւն անկողար, և զթագաւորականն վարէին զիշխանութի . քանի մի մորթա վայրի էրէոց տալով ամի ամի արքային անգղիոյ : Էին և նահանգ ինչ, որոց կառավարութին էր լոկ ռամկառութական, սրք և բզմ աղատութս ունէին . և էին գրեթե ինքնիշխան, զի քաղաքացիք ինքնին ընտրեին իմ իջուցանէին զսպաշանատարս իւրեանց . հաստէին օրէնու ըստ պիտոյից, որք ոչ կախէին զշաստութ արքային անգղիոյ և ոչ կարէր նա ապախտ առնել զայնասիկ :

Այլ այժմ այս ամ եղանակք կառավարութեա ոչ ևս ունին աեղի 'ի նոր զի այժմ ամ նահանգք են ինքնագլուխ և կառավարութեա նոր ռամկառութական . իւրաքանչիւր նահանգ ունի իւր սեփական ժողով կիմ

ատեան. որոյ ատենակալը ընտրին 'ի ժողովրդենէ. և իշխանութի նր է գերագոյն յիւրում նահանգի. կարօղ է հաստել նոր օրէնս. և զառաջինս նահրացուցանել. դնել հարկս, և դատել զամ դատաստանս գերագոյն իշխանութիւն: Եւ քղի այս ժի՞նահանգը միաբանել են, դաշնագիրը ը միմեանս մշտնչենաբար 'ի ոպաշտպանութիւն միմեանց, 'ի սպահողանութիւն իւրեանց ազատուեն, յօդուտ հսրկց և մասնաւորաց, պարտաւորելով զինքեանս փոփոխակի զինիւլ լեգէմ զինչ և իցէ բւնութե որ յառնիցէ կմ' 'ի վր ամենեցուն. և կմ' 'ի վր ոմանց 'ի նցէ. և միարան վանել զամ յարձակմունս թէ 'ի վր ամենեցուն. և թէ 'ի վր միոյ 'ի նցէ, ը պատրուճակաւ կրօնի, կմ' իշխանութե, կմ' վճռենութե, և կմ' վր այլ զինչ և իցէ պտճախ: Յայն սակա բաց 'ի մասնաւոր գւահան ժողովոց իւրաքանչեւրնահանգաց, ունինել ընդհանութիւն ժողով հսրկց. որ ը պիտելոյ գումարի 'ի ֆիլատել ֆիւ մոյրա քը համօրէն ժի՞նահանգաց. ուր իւրաքանչեւրնահանգաց առաջ սցէ ըհանրական կառավարութիւն իւրաքանչեւրնահանգացն. վոյ ոչ որ 'ի նցէ ինքնագլուխ կարօղ է առօքել, կմ' ընդունիլ գեսպանս առար թիգաց. առնել միաբանութիւն կմ' դաշինս կռել ը թիգի, ը իշխանի, կմ' ը զինչ և իցէ պետութե, առանց հաւանութե այսր ըհանութիւն ժողովոյ. նոյնողս և 'ի մէջ իւրեանց երկու կմ' աւելի նահանգը՝ ոչ կարեն միաբանիլ, կմ' առանձին գաշն ինչ կռել ը միմեանս առանց հաւանութե որ, և առանց ծզգիւ և որոշակի բացատրելոյ 'ի պիտակի անդ հաւանութե զվախճան և զաւողութիւն այնր միաբանութե: Եւ ևս ոչ որ 'ի նահանգաց կարօղ է դնել 'ի վր ժողովրդեան իւրոյ հարկս, կմ' կապալս, որ ուզզակի կմ' անուզզակի կարացէ վնաս ինչ հասուցանել պայմանաց դաշին, զոր առ յասլայն այս նահանգը արանցեն ը ոմանց թիգաց, իշխանաց, կմ' պետութեց: 'Նոյնպէս չեն կարօղ առանց որ հաւանութե առնել պատերազմ ը ումեկը բայց եթէ 'ի յանկարծական արշաւանս թշնամեաց յորժի՞ ոչ գոցի ժմկ ինդրելոյ դհաւանութիւն ժողովոյն: Եւ զի միանգամյն ասացից՝ որ միայնոյ է առնել պտզմ կմ' խաղաղութե. առաքել կմ' ընդունիլ զդեսպանս օտար թիգաց. առնել իրաւունս, յորժի՞ 'ի մէջ նահանգաց յառնէ ինչ երկպառակութիւն 'ի ոլտճաս սահմանաց, իրաւանց, կմ' այլոց իրաց. և ամենեքեան պարտապան են հնազանդիլ նմ' յայսմ ամի:

նմի . վեցայս ժողով է իրբ գերադոյն հրամանատար
յայսպիսի իրս 'ի վը համօրէն նահանգաց :
Իսկ ըստ կրօնից՝ ամենեքեան քրիստոնեայ են . այլ
ի զնդն կրօնս բաժանել . զի են անդ ուղղափառք,
լուտերականք, կալվինտկանք, քուաքերք, և այլ
աղանդաւորք . քզի չեթ անդ մասնաւոր ինչ կրօն,
կմ դեն հսրկց օրինօք ընկալել և հաստատել . այլ
թոյլ տունել է ամենեցուն զայն հաւատալ, և զայն
ըստնիլ, ըստ հածի իւրաքանչիւր ոք, միայն թէ
պտճառաւ կրօնի մի վրդովեսցէ զհսրկց կմ զմասնա
ւորաց խաղաղուն . և թէպէտ մեծ մասն նց լուտե
րական են և կալվինական, սակայն 'ի քզքական կա
ռավարուն ոող և յայլ իրս չունին առաւելուն ինչ
ք զսակաւաթիւ ուղղափառս . զի և նք կարօղ են
անխտիր մտանել յամ ողաշտօնատարունս ոող զնն :
Եւ թէպտ 'ի սկզբան անդ ոմանկք նահանգք խարուն
առնեխն 'ի մեջ այլ և այլ աղանդից, բայց տեսել
զի ոչ սակաւ խռովունք և վնասք ծագեն յայնմանէ,
բարձին 'ի միջոց զայն խափր . ազատուն տունել
ամենեցուն հաւատալ զոր ինչ և կամի . որով բար
ձան և խռովունք :

Ե . Բածանուն ծդ նահանգայ :

Աամեցել յառաջիկայդ ստորագրել զժդ նահանգս,
'ի դէպ վարկաք զհետ երթալ բաժանմանն , որ
արարաւ 'ի 1776 յընդհանուր ժողովն միաբանուն
և դաշնադրուն նց . սկսեալ 'ի հարաւոյ՝ անցցուք
'ի հիւսիս . զսյս օրինակ :

Թ . Ճիւրմիա .

Է . Ճըրմե .

Ծ . Քարունիա .

Ը . Նոր եօրտ .

Դ . Վերմիւնիա .

Ժ . Երեւան իղիւ .

Ե . Բէնախւանիա .

Ժա . Ռուս իսլանդ .

Զ . Երեւ ինսունիտ Տելու .

Ժը . Մեռլուսնէդ Պէտ .
Էրայ . Ժը . Նոր հէմշեր .

Այս նահանգք դաշ բաժանին յայլ և այլ կոմսուն ,
և վիճակս . զորս հանգերձ մայրաքաղաքօք իւրեանց
սկիզբն արասցուք յայսմ վայրի ստորագրել :

Կահանդ առ Շեղործիա :

Աբարբառ անդզիացւոց Ճիօքմէլ, յայս անուն անուանեցաւ 'ի պատիւ ճնորժեց այս է՝ գէոր գեայ անդզիացւոց արքայի՝ որ թագաւորէր 'ի 1733. յորժամ հիմն արկառ բնակուե գաղթականին 'ի սմին նահանգի . որ է 'ի հարաւակողմն այլոց նահանգաց միացելոց . ունի իւր սահման 'ի հարաւոյ և յարե մակց՝ զվիլօրիտա . 'ի հիւսիսոյ՝ զքարոլինա հարաւային, և զքիրակացիս . իսկ յարեւելից՝ զծովն հիւսիսային 'ի բերանոյ գետոյն սբյն յօվհաննու, մինչև 'ի բերանն ստւանահ գետոյն : Եւ է ը մէջ 30, և 34 աստիճանաց հիւսիսային լայնուել . երկայնուեն նը է իբրև 150 մղոն . իսկ լայնուենն պարփակել ը մէջ ալադամահ և սաւանահ գետոց, հազիւ հասանէ ց60 մղոն . և բովանդակ տարածուեն նը իբր 10000 քառակուսի մղոն աշխարհագրսկան : Օդ նը ջերմ է, բայց երկիրն ոչ այնչափ արդաւանդ : Իսկ գլխաւոր բերք նը են լեզակ, որիզ, սակաւ ինչ մետաքս, բամբակ, և վուշ սկսան անկել անդ և այդիս :

Բնակուե գաղթականաց սորին նահանգի 'նոր է քայլոց նահանգաց . զի 'ի սկիզբն անցել գարու գեռ բովանդակ նահանգն էր անապատ ամայի, համարել իբր սահման 'ի մէջ ֆլորիտայի որ էր սպանիացւոց, և քարոլինայ՝ ուր անդզիացիք բնակեն . իսկ սկզբնաւորուեն բնակուե նը եղե զայս օրինակ : Այս մի մեծատուն յոյժ յինկելդէռուա 'ի մեռանիլ իւրում եթող զամ ինչ իւր առ 'ի ազատել զպարտապանս անբաւականս 'ի վճարել, և զբանտարկելն 'ի պարտատեարց իւրեանց . իսկ արօւենն ինկելիզի որ 'ի վազ ժմկց խորհէր հիմնել բնակուե յանապատի տաս, որ համարել էր իբր մասն քարոլինայ, կալաւ բայս առիթ քաջադէսզ 'ի գործ գնել զիսորհուրդ իւր . փոխադրելով անդր զամ ողարտապանս տպատելն 'ի բանահից վճարմամբ պարտուց . և առ սկըզ բնաւորուեն այսր նորոգ բնակուե՝ բառլամէնդն սահմանեց տալ 20454 ոսկի վէնէտիկեան . յոր բզմ մեծատունք ինքնակամ յաւելին նոյնչափ, և առաւել ես . կարգեցաւ նց գլուխ և առաջնորդ՝ ոկլէթօրբ ոյր գործունեւոյ և խոհեմամիտ . որ 'ի 1733 'ի յունիւ

հասել անգր , կույաց զտեղին միորմիա յանուն
աբբային : Այս առաջին գաղթական էր հարխոր
անձանց նեթ . որք դտեղի առին տառն մղտիաւ
հեռի ի ծովէ ՚ի զուարձալի և արգաւանդ . դաշտի
առ ափին սաւանահ գետոյն . յորմէ կալաւ զանուն
և բնակուի նց . որ այժմ է մայրագալաք համօրէն
նահանգին : ՚ի նմին ամի թիւ նոր բնակչացս այսոցիկ
եհաս ՚ի 720 ոգիս . յորս էին 320 արք . 113 կանայք .
200 երիտասարդք . 83 աղջկունք . թող զայըս . զկնի
երկուց ամաց եհաս անդ և այլ գաղթական ՚ի լեռնա
կանացն սկզբախոյ . ՚ի նմին ամի հասին անդ և բղմ
լուաերականք աալխսպուրկացիք տարագրելք յաէ
լուրեանց ՚ի պահան կրօնի . և զկնի սց գաղթականք
զվեցցերեանց . որով ՚ի 1739 հարթաւստ մի բաղմացան
բնակիւն նահանգիս . այլ ՚ի սկզբան անդ փինկ և ևս
բաղմանալը , սկսան օր ըստ օրէ նուշազիլ ՚ի պատ
ճառս յուի կառավարուե . որ էր իբր եղանակ իմն
բանակալուե . զորոյ զմնամն տեսել ինկիլդէռայի ,
փոխեաց զայն յեղանակ կառավարուե քարովնայի .
որով ՚ի սուղ ֆմկի այնցափ ամեցան բնակիւն ՚ի ընդ
մինչև հասանիլ այժմ ց 30 հաշր ոգիս՝ և առաւել :
իսկ կառավարուի ՚ի ընդ թօթափիլոյ զլուծ անդ
զիոյ է ռամկապեաական . որ և է ՚ի ձեռս առենաւ
կալաց ընտրելոց ՚ի ռամիէն . որք դումարել ՚ի ժողով
գւակական , խորհուրդ ՚ի մէջ առնուն և ՚ի գործ
գնեն , զոր ինչ տեսանեն հարկաւոր ՚ի պէտ հսրէց
բարւոյ : Ասի թէ զծովեղերեայ մասն ինչ այսօ
նահանգի առին անդզեացիք . բայց երեսի թէ ոչ
ըւերկար ողահեսցեն զայն ը արուե իւրեանց : Իսկ
դլխաւոր տեղիք ՚ի են հետագայքդ :

Աւշաւ . այսպէս կոչեն անդզիացիք . զօր այլք ըն
թեռնուն Աստանան : Քաղաքամայր համօրէն նահան
գին առ համանուն գետով ՚ի հարաւակոլմն ՚ի ՚ի
տափարակ գաշտալայրի , ուր ՚ի բղմ տեղիս դտանին
հահինք ժահահոտք . վոյ օդ ՚ի ընդ չէ այնցափ ինչ ա
ռոլչարար . ունի բնակիւն իբրե 6000 . շնուշածք
՚ի ըստ մեծի մասին անշուք են . ուղ և դղետկ ՚ի
անկանոն , և անկատար : Աստ է նիստ գաւառական
ժողովոյն : Հիմնագիր ՚ի ՚ի եղեւ ոկլէթորք առաջնորդ
առաջին սակաւաթիւ գաղթականին անդզիայ , որք
նախ բնակեցան ՚ի նահանգիտ . յնջագոյն բնակէին
աստ տակաւ ումանք վայրենի ամերիկացիք անուանելք
Ետնագրաւտ . վոյ շրջակայ վիճակ քղբիս ՚ի նոցանէ
ունի զանուն :

ԱՀՐՅՈՒ: Եշամբոց իրը 16 մղոնաւ հեռի ՚ի քղբէ աստի առ ափն ունեց գետոյն ՚ի հիւսիսակողմն նր՝ մղոնօք ինչ ՚ի վերոյ ք զխառնումն գոնավաշջրոյն։ Տէրին։ (Տարին)։ Եշամակուն սկզբացւոց փոխադրելոց յեւրոսիայ ՚ի հիւսիսակողմն ալադամահ գետոյն։ Մերձյաց տեղի գտանի ամբոց կոչեցել զերգ արժայ։ որ կառուցաւ ՚ի պաշտպանութեահմանաց նահանգիո յերեսաց սպանիացւոց։ յուրում տիրելին ՚ի ֆլորիտա։

ԳԵԼԵՎԵՇԵՑ: Բնակուն սկզբացւոց ՚ի կղզին որյն սիմոնի՝ գործել յերկուց առաջից ալադամահ գետոյն։

ՍԷՐ ԱՆԴՐԵԱ: ՚ի բարբառ անգղ՝ Աւար ենոքու։ Եշամբոց ՚ի բումակէնլանտ կղզի։ ՚ի հարաւակողմն ֆրեակրիքի։

ԱՀՅՈՒ իւնիւլիսի։ ըստ անգղ՝ Գօրդ Շուլիմ։ Եշ ՚ի հարաւակողմն նախընթաց ամբոցի։ ՚ի հիւսիսային ծագ ամելիա կղզւոյն։

ՍԷՐ ԳԵՐԳԻ. ըստ անգղ՝ Աւար ճօրմանաւ գլուխ առ ստհմանօք ֆլորիտայի։ հանգետպ սբ պազոս կոչեցել ամբոցի։ ՚ի հանգիտական ծայրն բերանոյ գետոյն սբյն յովհաննու։ ՚ի փոքրիկ կղզւոյ։

ԲԻՇԵՎԱՅՐԻ. (Բառիսպառը)։ Գիւղ ՚ի հիւսիսային եղը սէվընը կմ սաւանահ գետոյն։ ունի տունս իրքի հարիւր։ չնել յըզդիցերեանց և անուանել յանուն բուրիայ գլխաւորի իւրեանց։

ԵԿՊԵԿԱՅՐ. (ԱՀՅԵՆԵՇԵՐ կմ ԵՀՅԵՆԵԿ)։ Բնակուն հիմնել ՚ի գերմանացի լուաերականաց տաբագրելոց ՚ի սալիստուրկայ։ Նոր էքենեպէր առաւել մօա և առ գետն հանգետպ բուրիստուրկայ։

ԱՀՅԵՆԵՐ: Գլխաւոր քղբ մասնաւոր իմն կոմսուել, բարեշէն և երկդ զինի սէվընը քղբի, առ սէմընը կմ սաւանահ գետով իրը 100 մղոնաւ հեռի ՚ի ծովէ յարեւմուեան կազմն։ Առաջին հիմնողիրք սօրին, եղեն արք ոմանք ելեալք ՚ի զանտգան գաղթականաց սօրին նահանգի, և ընկերակցելք ՚ի հաստատել զառեարուն մօրթոյ վայրի էրեաց, ըշերաշեանց կմ քերաբեանց՝ իւրեանց սահմանակից վայրենի ազանց, որով ՚ի սկզբան անդ բզմն շահեցան, մինչեւ էին ձեռնամուխ ՚ի մշակուն երկրի։ որ թէ ժրաշանութ գործեացի, առաւել շահարեր է ք զայն վնասականութ։ Ագումի գառակա քեշը կամ էստրանի ամերիկացւոց յարեւմեան կողմն ճեղքմիայ։

Ուստի : Գլխաւոր տեղի ստորին շերաշեանց , կմ
աբալպեանց ընդ մէջ գումէլո , և շունաքանսդի
գեաց : Այս նահանգ ունի ը իւրեւ և զանազան
կղղիս . որք կոչին Սբ սիմոն քոր . Սաբուլո իւթ . Սբ
Խափաբէնէ . Օստագառ . Վէլինիտօն . և Դիպի . առ բե-
րանով ուաւանահ գետոյն :

Կահանդ ը . Վարոլինստ :

Կյս նահանգ է մի յընդարձակագոյն , և յառաւել
արգաւանդ փարթամ և բազմամարդ նահան-
դաց հիւսիսային ամերիկոյ . որ ՚ի հարաւոյ՝ ունի
իւր սահման զմիորմիա . յորմէ ը մասին բաժանի
՚ի ձեռն սաւանահ գետոյն . ՚ի հիւսիսոյ՝ զվերմինիա .
յարևելցոց՝ զծովն հիւսիսային . իսկ յարևմտից՝
ոմանք ձգեն զահմանս նր մինչև ցմիուսիբի գետն .
որով և զրոլոր գաւառն շերաշեանց ՚ի նմապարփակեն .
իրը զի անգլիացիք ՚ի 1729 . ՚ի վէստմինստէր քաքե
ը իւրեանց տրութ առին զնա անունամբ , այլ ոչ
իրօք . վայ մեք լաւ ևս ը պիշնիկայ և ը այլոց՝
զարևմտեան սահման քարոլինայ ձգեմք մինչև յալ-
լիկանեան լերինս . թողել՝ ՚ի բաց զբուն շերաշեանց
զոր առանձին ունիթք ստորագրել ստորեւ : Տարա-
ծուի նր բովանդակ առել՝ ՚ի միասին և զհիւսիսային
քարոլինա , է իբրեւ 38000 քառակուսի մզոն Շա-
գրական : Բայց բնակիցք նր առ համեմատութ այս-
չափ ընդարձակուեն , սակաւ են . զի ըստ պիշնիկայ
համօրէն սպիտակք , որք են այժմ բուն բնակք երկ-
րին՝ չեն աւելի ք 525000 . թող զսեաւ գերիս .
բայց և նք չեն այնչափ ինչ բազմաթիւ :

Գլխաւոր գետք նր են Սանդի . և Բերդի : Սանդի
եւսնէ յարալսքեան լերանց առ սահմանօք նահան-
դին . և ՚ի սկզբան անդ կոչի Քանիաբէ . ապա Սանդի .
և գնայ անկանի ՚ի ծովն հիւսիսային ՚ի վերոյ քան
զհրուանդ՝ քարդէրէգայ : Իսկ Բէտի ելանէ ՚ի հիւ-
սիսային կողմանց այսր նահանդի , և հոսի ը հարաւ :
Օդ նր քաղցր է և բարեխառն , և լաւստոյն քան
զօդ ձիորմիային . բայց ուրեք ուրեք մւնդ ՚ի ծովե-
զերեայ տեղիս առ յահախուեւ լճային և ժահանսա-
տեղեաց՝ ծանր է և վեաստակար :

Իսկ երկիրն ը զանտզան կողմանց՝ զանազան է . ՚ի
ն

հարաւային կողմանս պարարտ է և արդաւանդահող շայլ դեռ քսաներդ մասն չե է մշակել առ նուազուե բնակչաց . 'ի ծովեղերեայ տեղիս՝ ը որս գետք նը հոսին 'ի ծովն , լճային է և ճախճախուտ . և ուրեք ուրեք աւազուտ և գլխովին անբեր . նոյնպէս և 'ի խորին կողմանս հիւսիսային մասին՝ բզմ վայրք ծածկել կան ոպիտակագոյն աւազով . որք այլ ինչ ոչ բերեն , բայց միայն վայրենի սոճի ծառս անպրատուզ . այլ մեծ մասն երկրին՝ մշնդ 'ի խորին կողմանս պարարտ է յոյժ և բերբի : Հարաւային մասն դրեթէ առ հսրկ դիւր է և հարթածաւալ . և դնալով ը արեւմուտա՝ առ ստիկաւ սակաւ բարձրանայ մինչե ցատորոտա արալաքեան , կմ ալլիկանեան լեռանց . իսկ յայնկոյս նց գնայ զառ . 'ի վայր ը արեւմուտս մինչե ցեղերս միսսիսիբի գետոյն : 'ի կողմանս յայսոսիկ՝ ուղ և 'ի հիւսիսային կողմն՝ ունի ը արձակ արօտս իտաւետս . յորս հազարաւոր արջառք արածին . որք ը աւաւօտն գնան յարօտ առանց հովուի , և ը երեկս ինքնին դառնան . 'ի բնակուիս . նոյնու և խոզք որք աւաւել բզմ են անդ , և մեծամեծք և պարարտք ք զեւրոպիոյ , ինքնին՝ աւանց արածոյի կերակրին յանտառս : Իսկ ը հակառակն՝ ովսաբք և այծք սակաւ են , և վտիտ . միս նց անհամ . և ասրն ձաղկ և անպիտան . յորմէ երեխ թէ օդ և բոյսք երկրին՝ չէ համապատշաճ ընուե նց - զի բզմ անգամ տարան անդր յեւրոպիոյ կմ յասիոյ որատուժական ոչնաբք . և յառաջին ծնունդով վզմվկի փոփոխեցան 'ի յոռուի :

Իսկ յարմասիս սորին նահանգի առաւել առատ և բոյմաշահ բնակչաց՝ որիզ . որ գիպուշածով մուծաւ մնդր . քզի նաւ մի բարձել որիզ բզմ՝ յարեւելեան հնդկաց նէ , վարեցաւ ալեկսանդրութ 'ի կողմանս յայսոսիկ , և ը հարել 'ի ծովեղերս նահանգիս խորտակեցաւ , և որիզն զեղաւ 'ի ծովն . զոր ալիք ծովուն տարել ընկեցին 'ի ցամաք . և անդ 'ի մերձակայ տեղիս գետոց ինքնին բուսան . և արարին ոլտուզ . զոր տեսել անգղիացի բնակչաց երկրին՝ հաւաքեցին զպտուղն . և սկսան այնուհետեւ և ինքեանք սերմանել , և բազմացուցանել . տեսել զառատաբեր արգիւնս . զոր և առաւել ևս առեցուցանին : Այլ անգղիա արդելս եղ նց ցտանիլ ոյլուր , բայց միայն յանգղիա . ուր ստիպէին վահաւել զայն այնչափ գիւրագին , զի և զծախս մշակուեն ոչ կարեին հանել . թնդթէ շահիլ ինչ . այս ար

գել ը բղմ Ֆմկս եկաց մնաց 'ի վր նց . այլ 'ի 1730 յետ
բզմ թախանձանաց բնակչացն բարձաւ . և այնու-
հետեւ օր ը օրէ բազմացուցին զարտորայս որիզոյ:
Բայց ցորեան բնաւ ոչ յառաջացաւ 'ի նահանգի
աստ . զի 'ի շրջակայ վայրս գետոց՝ և 'ի ծովեղերեայ
կողմանս՝ մառախուղն ապականէ զհասկս նր , և
անպառուղ առնէ . իսկ 'ի ներքին կողմանս յարդ բղմ
բերէ , և ցորեան սահաւ . զի առ պարարտուե երկ-
րին ուռնացել աճէ յոյժ ցօղունն . այլ հասկըն
փոքր են և արուգ 'ի ցորենոյ յայն սակս փիսկ ցորենոյ
առաւել փոյթ առնեն սերմաննել մորացորեն , որ
պոլով համարնական բոյս այնր բաժնի կմ կլիմայի՝
առատաղս պտղաբերէ : Ունի և լեղակ , զոր հա-
նեն 'ի մասնաւոր ինչ տնկոյ՝ որ լինի յարեելեան
հնդիկս . և 'ի վերջին Ֆմկս բերաւ և յանդիլեան
կղիս , և 'ի նոր սպանիա , և հուսկ յետոյ 'ի քարո-
ւինա . բայց մշակուե այնր տնկոյ շեւս է կատարե-
լադործել , ող արժան է . վիյ և լեղակին նահանգիս
կարի ստորին է . ք զարեելեան հնդկացն , կմ այլոց
տեղեաց :

Ունի և իւղ բեեկնւոյ , զոր հանեն 'ի բեեկնի ծառոյ ,
հերձոտեալ զբուն նր ը երկայն վերուստ 'ի վայր ,
ը որս հոսէ իւղ թանձրամած կմ խէժ , այլե գա-
զիխէժ . այն է խանրան . զոր 'ի նոյն բեեկնի ծառոյ
հանեն , և խէժ սոճւոյ . այնէ՝ լամ սոգէնը . և զանտղան
տեսակս պատուական վայտից . և ծխախոտ՝ այն է՝
լիւլիւն , և ոլուն . ևն : իսկ վաճառականուեն նր
ծաղկել է յոյժ ոչ միայն այժմ , այլե յառաջ մինչդեռ
կախեալ կայր զանգղիոյ . որոյ դլիսաւոր վաճառք են
նախայիշատակել բերք նր . զը ազդի ազգի խէժք ,
որիզ , մորացորեն , լեղակ , միս աղել եղին և խողի ,
մորթ ընտանի և վայրի անասնոց՝ գործել և անդործ ,
տախտակ , գերան , և այլ փայտ 'ի պէտա շնուռածոց ,
ևն . յօրոց ոչ սակաւ շահին :

Այս նահանգ եղեւ առաջին տեղի բնակուե անդ-
ղիացւոց յամերիկա . ուր 'ի 1585 եհաս վալտերոս
ուլէյկ . և զաւղի կալաւ 'ի հիւսիսային կողմն նր
'ի ծոցն ունոտգ . այլ այս առաջին հիմնարկուի փու-
թով կորեաւ 'ի պէսսպէս թշուառուեց . և մնացին
սակաւ ոմանք տառապեալք . որք թափառական շըր-
ջէին 'ի կողմանս յայնոտիկ . յօրս յետոյ յաւելան և
ոյլք ոմանք 'ի շրջակայ բնակչաց եւրոպացւոց . որք
և սկսան ժողովել իւղ բեեկնւոյ , և գտղիխէժ , և
խէժ սոճւոյ , և վաճառել մերձակայ բնակչաց . տակա
'ի

Կ 1633. ումանք 'ի մեծամեծաց անտօի անգղիացւոց .
զորս նք (ֆըր) կոչեն , որբ էին պէրքելէյ . քլարեն-
տոն . ալպէմարլէ . դրավէն . ամլէյ . և ասպետքն՝
քարդէրէդ . պէրքէլէյ և քոլլեդօն , ընկալեալ 'ի
ու կարողուսէ արքայէ անգղիոց զտիրապէտուն հարա-
ւային մասին այսր նահանգի , ուր չկ էին կոխեալ
ոռք եւրոպացւոց , բաժանեցին զայն 'ի մէջ իւր-
եանց . և հիմնեցին բնակութիւնս 'ի զանազան
աեղիս :

Իսկ զբեղքական կովարուն երկրին վարեին ըստ օրի-
նաց , զոր 'ի յանձնարարուն նց արար յովհաննէս լոք
երեւելի իմաստասէր . այն օրէնք ըստ մասին ինչ երեւէին
խոհեմոկան . այլ ըստ այլ մասանց ամեննեին յոռի և
վնասակար . վազի առ 'ի հաճոյանալ նախասացեալ
իշխանաց , ևտ նց գրեթէ զանկոպար իշխանուն ,
որ յետոյ փոխեցաւ 'ի յայտնի բռնակալուն . ոչ մի-
տյն առ եղկելի ամերիկացիս , զոր անխնոյաբար
կոտորեցին , այլև առ բուն ժողովուրդ իւրեանց .
որոց վաստակեալ յանտանելի Ծոյ սց , դիմեցին
յատեանն լոնտաւայի՝ որ և եբարձ զիշխանուն նց .
տունել նց փոխարէն 81818 ոսկի վենետիկեան . և
այնուհետեւ բոլոր հարաւային մասն քարոլինայի ան-
կաւ անմիջանու ըստ տրութ անգղիոյ , բաց 'ի քարդէ-
քէդայ մինչև 'ի վերջին Ֆմկո , յորում և սա ըստ այլոց
նահանգաց միացել . 'ի բաց ել 'ի տրուն անգղիոյ .
իսկ այժմեան կառավարուն նրէ ուամկապետական .
ըստ եղանակին՝ զոր 'ի ներածուն ժի՞ նահանգացու-
նակեցաք : Այս նահանգ ըստանակո բաժանուի
յերկու մասունս կիմ դւռս . յո՞ 'ի հարաւային , և 'ի
հիւսիսային . որբ կացուցանեն զերկու նահանգու-
նիքնիշխանս , անկախս 'ի միմեանց . և երկոքին ևս
բաժանին յայլ կայլ կոմսութիւն . զորս յառաջիկաց-
տառագրեսցուք :

Վարունիա հարաւային :

Վարունիա բաժանի 'ի չորս կոմսութիւն . որբ 'ի
սկզբնական տեարց իւրեանց կալել զանուն ,
կոչին Կրանվելլ . Բուլետն . Պէրտելլ . և Գրավէն , զորոց
զգլիսաւոր տեղիս յայսմ վայրի ստորագրեսցուք :
Զաւելլ . (Քարլէտուլ) . Քաղաքամայր համօրէն հարա-
ւային քարոլինայի 'ի կոմսուն պարքեայ կիմ պեր
քելեայ մերձ 'ի տեղին , ուր առէլլ , և քօբէր գետք

Խառնին ըլ միմեանս . և է քզք ամուր գեղեցիկ . և ըլ իւրում համեմատուե բազմամարդ . զի ունի բնակիչս իրբե 20 հզր . աստ է աթոռ գւռկան ժողովյն համօրէն հարաւային քարոլինայի : Այս քզք իվերջին պտղմի բղմ անգամ պաշարեցաւ . զի 'ի 1776 գլենդսն սպարապետ անդղիացւոց 3 . 4 . հզր զօրօք՝ և բազմութ պտղմական նաւուց՝ եկել պաշարեց զնա . և ըլ երկար ժմկս բազխեց զնա . այլ բնտկեց քզքին քաջութ դիմադրաւ լեալ նմ , կորագլուխ ՚ի բաց դարձուցին զնա . զհարիւրաւորս ՚ի զօրաց նր կոսորիել . և ՚ի նաւուց նր զոմանս հըր կեզ արարին . և զոմանս ՚ի ծովին ընկլուղին . այլ առաւել արժանի յիշատակի այն է , զի այն ոմբազ զէնք՝ ցր ու ու , որով բնակից նր հարին զզօրս անդ զիացւոց՝ էին այնոքիկ՝ զորո անդղիացիք ՚ի ժմկի խաղաղուե առին ՚ի նաւուց դազղիացւոց առ ծովելքը քարոլինային արքայն անդղիացւոց ետ զայ նոսիկ ՚ի պարդե քղբիս չարլգընայ . որք և եղեն որործիք բնակիցաց նր ՚ի խորատակել զբանակ նր . թերես ՚ի պատիժ անիրաւուեն , զի ՚ի ժմկի խաղաղուե զվրէժ պտղմի խնդրեցին : Յետոյ ՚ի 1779 այլ ոմն սպարապետ անդղիացի միւսանդամ պաշարեց զբղքս զայս ցամաքային զօրօք ևեթ . այլ բնակից քղբին և յայս նունագ արիաբար պաշտպանեցին անձանց . մինչեւ պարտատաել թշնամիոյն , ստիպեցաւ յետս դառնալ . առա ՚ի 1780 . ՚ի մայիսի 12 . նախայիշտկել քլինդոն սպարապետն էառ զղպքս . յորում ժմկի չե էր տակաւին անդղիա հաշտել ը ամերիկացւոց :

Ֆիւտերիգեան ամբազ: Է ՚ի կրանվելլէ կոմսութեն զոր անդղ՝ կոչեն Տէ տառնորի ու իւննւլ . կառուցեալ ՚ի կղզի ինչ ծովու , ուր բորգուեալ կոչեցիլ գեան մոտանէ :

Պէլֆորտ . (Պէլֆօրտէ): Ամրոց ՚ի նոյն վերոգրել կղզի :

Մուշէ: Նոր Վնասոր . ըլ անդղ՝ Ան ռոյնզը : Են բնակել տեղիք ՚ի կրենվիլ կոմսուե :

Աբ հւանէ . ըլ անդղ՝ Սնտ Հէնքնէ : Է կղզի երեւելի ՚ի սմին կոմսուե . որ ըլ այլոց կղզեաց ձեացուցանէ անձուկ նեղուց ծովու առ բերանով էտիսդոգետոյն :

Սի Բայել . Դրենիե . Տէլֆուսուի : Են կղզիք մօտ առ նախիրնթաց կղզին :

Ռեկտուր . (Ռետուր): Քաղաք ՚ի քուլէդըն (քուլէդնէ) կոմը

կոմսութե՛ն առ քոմպաշ դետաով . իրըն 40 մղոնաւ
հետի ՚ի չարդ դրնայ .

Եպիսկոպոսակերէն • (Եմոնքիսպառուշ) • Քաղաք ՚ի սմին
կումսուեն առ ասհերուվ գետով:

Ճէւսմարդի. (Եաժոնպարէ) : Քաղաք 'ի հարաւակող-
մըն է տիսդոն գեաոյ :

Եպիսկը . (Եպիսկը) : և Հարաւային եպիսկը : Են
երկու կղզիք գործել 'ի համանուն գետոյ . առաջնին մեծագոյն է . և ունի շուրջ զեւրեւ 'ի ծովակողմն
այլ բնիմ փափրիկ կղզիս :

Վաղաք՝ ի պարբելի. կմ պէրքէլէյ կոմսուն
առ ափն սահնդի գետոյն՝ ի ստորին կողմն նը:

ՏԵՐԱՎՈՐԻՒԹՅՈՒՆ : Վաղարք փոքր ՚ի սմին կումառուե ՚ի հեռ
սիսակովմն ասհլէց գետոյն :

Եղիշւը պըս-ք : Քաղաք կառուցել առ ձնդհաւ,
որ 'ի չարլէթնաց հանէ յաւկուսդաքաղաք . 'ի հիւ
սիսակսղմն էտիսդոնի :

Ո՞ւշտճն . (ՎՀԱՐԴՅՈՒ) : Քաղաք նոյնակա ՚ի պէսքէլէյ
կոմսուե առ էտիսդը գետով :

Մարտնութեան կամաց առաջին պատճեան է այս գործութեանը :

Օւհեանուք . (Ուրանականութիւն) . Եղիշե . (Աշխատա) : Են
բնակել տեղիք ՚ի պէրքէլէյ կօմսուե :

Լուսի այլակապ . (Լուսի ինլանդակապ) . Սառը լինեան . Պատու . և Արաք + ըն : Են մանր և աննշան կղզեք ՚ի ծովու մօտ ՚ի

յամաքն ը մէջ բերանց սանդի և քորէր գետոց և
Ճօրէ տառն . (Ճէրմէրուն) : Ա-յլովուրէ : (Վլկումա-
ռուրէ) : Քինու տառն . (Քինուման) : Են առ զա ՚ի

կոմսութեանն քրավէնայ. որ ըստ անդղ՝ կոչի Քանակ

•P. աբովյանա հետախառ, ի՞ն :

Վաս մասն քարողինայի բաժանի ՚ի հինգ գլխաւոր
կոմառութեան ու ու են Քւէընտը (Քւարէնդոն) . Պատ ,
Աշուարէն . Կրան Հաւան . և Աղնասն . զորոց զգլխաւոր
աեղիս յաջիկայդ նշանակեսցուք :

Եւր Պէտքն . (կմ Պէտքն) . Եվ - պէտքն : Որ է քղզամայր
համօքէն հիւսիսայինքարողինայի առ դրէնթ դետով,
մտ ՚ի նէվս գետն մեծ՝ որ է նաւարկելի մինչև
յոյլ քշք . որ թէպէտ չէ ինչ ամրութ՝ ոչ այնչափ
F 3 ինչ

ինչ մեծ՝ և ոչ մարդաշատ, բայց է միջակետ վաշ Ճառականուն այսր մասին նահանգիս. զի չունի վաճառատեղի, և ոչ նաւահանգիստ լաւագոյն ք զայս:

Պիշտիս. (Պիշտիսվետ). **Վիշինիտօն.** **Սօրուն:** Են փոք-
րիկ քղքք, և բնակել տեղիք ՚ի կոմսուն թեան քլա-
րէնատնի:

Բէկւամ. (Բէկւամ). **Օնութ.** Քա՛րտերէտ. և Քէւալս. (Քրավէն): Են փոքրիկ վիճակք ՚ի կոմսուն քլարէն տոնի, որ ը անդզ՝ Քա՛րտէտի օշիւնքնուն. սէփաւ կանելք զանազան տեարց:

Պարավէլ: **Ամրոց** առ նէվս գետով ՚ի հարաւա-
կողմն:

Պանդս. Քարէ Պանդս. և Սուն Լօգուր: Են կղզիք ՚ի
սմին կամսուն:

Պաթ: Գլխաւոր քղք հասմանուն կոմսուն կառուցել
առ բամդիքօէ գետով ՚ի հիւսիսակողմն նր. որ թէ
պէտ փոքր է, այլ բարեշն և և առ համեմատուք
իւրով բազմանարդ:

Քարէլին. Սահերուտ. Ունապինի. Սահունդէտ: Են
աւանք ը մէջ սուխֆդ և բամդիքօէ գետոց:

Մագանս. Քինի պլանտ: Են բնակել տեղիք ը մէջ
բամդիքօէ և ռուանգք գետոց ՚ի մասնաւոր վիճակու
Մադանուստէտ: Աւան և գլխաւոր տեղի հիյտէ վի-
ճակին առ ափն ծովու: ՚ի հիւսիսակողմն այսր վի-
ճակի՝ գտանի գաշտ ընդարձակ ամայի և լճային.
ը որ հոսին չորք փոքր գետակք:

Քիւնէտօնէտ, և **Միւժար:** Են երկու փոքր կղզիք ՚ի
հիւսիսակողմն սարին ագերայ:

Էտէնդօն: Քաղաք որ յառաջադոյն էր գլխաւոր
աեղի համօրէն հիւսիսային քարոլինայի. այլ այժմ
ոչ ես. կառուցել առ ալպէմորլէ կոչեցել նեղուցիւ
զոր գործէ ռուանօք գետն:

Պէրտին. Քուն. Բէգլինան. Բասդլունտ. Գառրօ-
ռուտ: Են զանազան վիճակք ՚ի հիւսիսակողմն ալպէ-
մարլէ նեղուցին: **Ալյո** նեղուց տիրապս խօսելով
է պարոյր, որոյ բերանն կոչեցել բերան ռուանոկայ
է գժուարամօւտ, և վատանգաւոր յոյժ ՚ի պատճառս
աւազակոյտ բլրոց և ժայռից, որք գտանին առ
նովաւ. վայ բզմ զգուշուն պէտք են անդ:

Քիւնէտաս: Աղզի երկելի հանդէպ ցամաքին. ը
որտւմ գործէ զնեղուցին կոչեցել քուրօդուք:
Սաւրա: Գեօղ ՚ի կոմսուն կրանվիլայ. ՚ի հարաւա-
կողմն Տօմ գետոյն. որ ելանէ յարարագ լեռնէ. և
յետոյ

յետոյ գործէ զլուռանօք գետն։ դասանի՝ ի սմբն կոմսուն
միւս ևս գետը համանուն յարեմտեան կողմն առաջ
նոյն՝ որ առաւել մօտ է լերին արարագայ։

Վագաս: Ե բնակել աեզի՝ ի կոմսուն անսոնայ մերձ
յակունս կարկալէս վտակին։ որ հոսի ը հարաւա-
կողմն արարագայ, և խառնի՝ ի բէտի գետն։

Քառարդ: Գետը գեղեցիկ՝ ի գեղազուարձ հովտի։
Ը որ հոսի եատգին վտակին, որ ելանէ՝ ի պրաւսհի
լեռնէ։ և գնայ խառնի՝ ի բէտի գետ։

Ջաւեյտէ: Ե բնակել աեզի յարեմտեան կողմն քօսար-
դայ, առ սահմանօք հիւսիսային քարոլինայի։ մերձ
առ քոնհավայ վտակին մեծ։ որ գնայ խառնի յօհիօ
գետ։

Ա աշանդ դ. Ա իրաշինիա։

Պստ անդղ. կոչի Վեճինիւ։ է մի՝ ի մեծագոյն նա-
հանգաց հիւսիսային ամերիկոյ։ որ ունի իւր
սահման՝ ի հիւսիսոյ՝ զմերիլանսա. յարեմտից՝ զգա-
ւառն օհիօ։ ՚ի հարաւոյ՝ զբարոլինա. խկ յարեմ-
լից՝ զովկիանոս։ Տարածուն նր է իրրե 21000 քա-
ռակուսի մզոն աշխարհագրական։ Բնակիչք նր
սպիտակք 650000 ոգիք։ և փաքը մի նուազ սեաւ-
դերիք։ ուստի և թիւ համերէն բնակչաց նր հա-
սանէ ցմի միլիոն։ որ առ համեմատուք ընդգարձա-
կուել իւրոյ սակաւ է։ բայց առ այլովք նահանդօք
ամերիկոյ՝ բազմամարդ։ Ունի բազմապատիկ ինքնա-
բուղին աղբիւրս, վտակս, և գետս մեծամեծս և
մանունս, յորոց գլխաւորքն են չորեքին այսոքիկ։

Ը որս հնար է նաւել։

Եամէս. որ կոչի և Բուշադան։ Ե գետ մեծ յոյժ,
զոր ստորագրեցաք յընդհանուր ներածուն անդ
ամերիկոյ։

Եօրէ. կմբ Գետ Էօրէայ։ Այս գետ իրրե 40 մղոնաց
չափ հոսի ը ձորոփորն ։ մզոն լայնուք։ առանց
խոտորելոյ յաջ կմյահեակ, ապա բաժանի յերկուս
առաջա։ յորոց մինն գնայ ը հիւսիս։ և կոչի Մար-
տաբօնի։ խկ միւսն ը հարաւ, որ անուանի Բա-
նունչ։ ողք են գետք մեծամեծք։ յորս մարթ է
նաւարկել և մեծամեծ նաւուց ց70։ կմ 80 մզոն
անդվիացւոց։

Ռաբբահանօթ : Գրետ մեծ բաղկացել յերից վտակաց . որք կաշին Ռաբբիք աննա . Դարներոն . և իշտձեման . ելելք 'ի պւշւ կմ պլառ . այն է՝ կապուտուսկ լերանց . որք հարուստ մի ՚ի վերոյ ք զֆետէրիքսպուրկ քղք միանան , և գործեն զռաբբահանօթ գետն . ը որ՝ ակսել 'ի պարուըրէն , զոր գործէ ՚ի զեղանիլ իւր ՚ի ծովն , հնար է նտւել և մեծամեծ նաւուց իբրեւ 100 մղոնաւ անդղիացւոց ՚ի ներքս . մարթ էր և ևս յառաջնել , եթէ չեին ը մէջ անկեալ ստհանիք մղոնաւ հեռի ՚ի ֆետէրիքսպուրկայ , որ խափանեն զգնացս նաւուց . բայց փոքրիկ նաւակք՝ և քանօդք երկրին՝

Կարեն անցանել ը այն :

Բարովակ : ՄԵ 'ի գեղեցիադոյն գետոց հիւսիսացին ամերիկոյ . որ ՚ի հիւսիսոյ արևմտից հոսել ընարեելս , գնայ անկմի ՚ի պարոյրն քէսաբաք ը բերոնն՝ որոյլայ նուեն է իբր 10 մղոն : Մարթ է և ը այս գետ նաւել մեծամեծ նաւուց մինչև 200 մղոն ՚ի ներքս . իսկ անտի և անդր սփուել կտն ՚ի նմ քարաժայրք , և քարավազք՝ այնէ՝ սահանիք որք խափանեն զրնթացս նաւուց , և նաւակաց : Կրէ զմակընթացուի և զտեղատուի ը ծովու մինչև ցառաջին քարավազն , և անդր ևս . զի և առ ազեքսանդրիա քղքաւ բարձրանայ ցերիս , կմ ցըորս ստնատափս : Այս ըորեքին գետք մեծամեծք բերեն զանազան տեսակս ձկանց մնիդ մէրսին տռատ :

Օդ սորին նահանգի ըհանրապս խօսելով՝ քազզը է և բարեխառն . զի և ՚ի ձմեռան հաղիւ երեկք պէտունին հրոյ ՚ի ջեռնոււլ . բայց փոփոխական է յոյժ ՚ի պտաճաւու անդադար սյլայլուն հողմաց . որք պտաճառուն ցուրտ , և տօթ . զի բզմ անդամ տօթագին տուններան՝ յաջորդէ գիւղք ուստակասառոցց , մինչև սառիլ և գետոց . որ և ոչ սակաւ վնասեառողջուն . յամառան յաճախեն յոյժ մրրիկք և փոթորիկք , հանդերձ փայլատուսկմամք և որոտմամք մնիդ ՚ի ծովեզերեւայ կողմանս :

Խսկ երկիր նր ըհանրապս բարի է և արգաւանդ . բայց հազիւ թէ տասներդ մասն նր մշակել է . սակայն և այն անդաբանն վայրք չեն անսիստան . զի ինքնին առանց մրդկային խնամոց բերեն անհամար աղքս պտղոց , ծառոց , բժշկական բռւսոց , և ծաղկանց : Անտառք նր բաց յայլոց հարկ ծառոց , բերեն մուրտս , մայրս , նոճս , եղեկինս բազմատեսակս , և վեց կմ եօթն ազգս կաղնեաց , կաղամախս ծաղկաբերս , ակակիա , և սասֆուս . ծառք պիտանիք ՚ի դե-

դեղորայս, ամոզէր ծաղիկ, յասմիկ, այն է՝ եաւէմի՝
աղջի աղջի կակացն և շուշանս. և այլ բեւրատեսակ
ծաղիկս. իսկ մշակել գաշտք նր բերեն ցորեան
առատ, և առաւել ք զայն մարացորեն. և ծխախոտ
բզմյոյժ. որ և է մի ՚ի գլխաւոր վաճառաց բնակչաց
նր: Ունի և բնդարձակ տրօստ արդաւանդս. և
ընտանի անասունս բզմո. դի արջառս, և ոչխարս
բայց առ հնրկ վտիտ են և յուի. զի թունի թէ օդ
երկրին չէ ինչ նպաստաւոր եղջերաւոր անասնոց
իսկ խոզք ը հկնկն՝ մեծամեծ են և պարարտյոյժ
նոյնպէս և երիվարք նր գեղեցիկ են և արագըն
թաց. վայ զի բնակիչք երկրին ամ չանիւք փոյժ
առնեն ՚ի կատարելադործել զսերունդս նց: իսկ
յանտառս նր լի են զանազան տեսակք վայրի երեսց
դր արջ, գայլ, աղունէս, սամոյր, աքիս, նապաստակ
թող զայլ պատառող գաղանս, ոնկ յովաս, վագր,
յուլ վայրի են. այլու անհամար աղգք թունոց գե
ղեցիկափետուրք, և պատուականք ՚ի կերակուր
գտանին անդ և անհամար տեսակք սողնոց. և
ձանձից մեծամեծաց. դր օձք թունաւորք, և ան
թոյնք, իժք, մողէսք, և գորաք. յորս երեւելի և
տեսակ մի գորտան վայ չափազանց մեծուե, և սաստ
կահայն կարկաչանաց. զոր ՚ի հեռաւոր տեղիս լոելի
առնէ. նոյնողս և անբաւ թիթուունք գունագեղք
ը օդս թուուցելք. և փոսուրայք. այն է՝ ալէւ պէս
մնչի. որքյամառնային գիշերս, յորժամուլուստորէ
լուսինն, առ անհաւարին յաճախուեն նք լուսաւորեն
զօդն. որք և առաւել մեծ են ք զայնս. որք առ
մեղ գտանին: Ունի վիրճինիս և բոլս երկաթայ,
և պղնձոյ, և կապարի. այլու ածուխ հանքային,
որ ՚ի վերջին ժմկս գտաւ: Ահա այսոքիկ են բերք
վիրճինիայի. որք և են գլխաւոր վաճառքնր. մշնդ
ծխախոտն, որ կարի շահաբեր է բնակչաց նր:
Սկիզբն բնակուե անդղիացւոց յայս նահանդ՝ եղեւ
՚ի 1606. յորում ամի հասին անդ արք հոօ. և զա
ռաջինն բնակուե իւրեանց հեմնեցին ՚ի տեղուջ ուր
այժմէ ե եամէսգովին քղք. յորժամ հասին անդր,
համարեցան հասել յերկիր արծաթաբուզիս. քզի
առու ինչ ականակիտ բղիսել՝ ՚ի փոքրիկ աւազակոյս
բլոյ, բարձել բերէր աւազ սպիտակ փայլուն. զոր
արծաթ կարծեցին. վայ անյադ բաղձանք սկսան
կուտել զայն աւազ. ՚ի նմին ժմի հասին անդր
յեւրոսպիոյ երկու նաւք բերել նց նպարակս. և
նք այնըստ սրաշարել էին և մոլորել, զի զայն և ա

Երկոսին նաւս լցին նովին աւազով. մինչև հաղիւ
թողուլ զսակաւ տեղի 'ի դնել անդ զմորթս վայրենի
երես, զորս փոխանակութ առին 'ի վայրենի ամերի
կացւոց: Եւ թէպէտ յետոյ ծանեան զմոլորուն
իւրեանց, բայց անագան. քանզի 'ի սկզբան անդ
գոլովնց բոլորովին պատաղել 'ի հաւաքումն այնը
աւագոյ, փոյթ ինչ ոչ արարին դործել զերկիր. և
պատրաստել ինքեանց կերակուր յանշէն անապատի
անդ. վոյ սով սաստիկ եհաս 'ի վը նց. որով 'ի 500
արանց անտի, հաղիւ արք 60 ալգրեցան: Մինչդեռ
և նոքա պատրաստէին ելանել անտի, և անցանել
'ի կզլին նոր երկրի՝ զի կերակուրն զոր ունեին
հաղիւ բաւական էր վը ժե աւուրց, ահա եհաս
անդ տէլավարէ. ունելով ը իւր երիս նաւս լցել
զինուք, և նուպարակօք. և գտել զերկիրն ամսյի 'ի
բնակչաց անտի, էարկ նորոգ հիմն բնակուե, զոր
և կառավարեաց և ծաղկեցոյց առ ժմկ մի. մինչև
և ինքն ստիգեցաւ դառնալ անդրէն յանզղիա. և
թէպէտ յետ մեկնելոյ նր անտի առ ժմկ մի նուռա-
զեցաւ յառաջադիմութ այնը նորոգ գաղթականին,
այլ յետոյ առ սակաւ ստկաւ սկսաւ անդրէն բար-
դաւաճիլ. և 'ի սուզ ժմկի բազմացան անդ բնա-
կիւք. և սկսան ը ամ տեղիս շինել շինուածս, և
գործել զերկիր, և առնել առևտրուն: մինչև
լնուլ բնակութ դրեթէ զբովանդակ վիրճինիա. զի
բաց 'ի քղթց յորոց մեծ մասն փոփր են յոյժ, զորս
և գեօս իսկ չէր արժան տաել, թող թէ քաղաքս,
այլ բնակութ ցրիւ են աստ և անդ շուրջ զգետովք:
Այս նահանդ 'ի սկզբանէ հիմնարկուե իւրոյ դաղ-
թականին՝ եկաց մնաց ը գերագոյն տրութ անդ-
պիացւոց մինչև ց 1776. յորում ամի հանդիսական
դաշնադրութ ը այլոց նահանդաց անջատեցաւ 'ի
տրութ նց. և է այնուհետեւ ինքնիշխան. և կառա-
վարութ նր ռամկապետական, ուղ ասացսկ 'ի ներա-
ծուե ժէ նահանդաց միացելոց. 'ի թիւն ը: Բնա-
կիւք նր գրեթէ բովանդակ սերել են յանզղիացւոց,
ուստի և լեզու և կրօն նց է անդզղիականն: Կարի
անձնատուր են 'ի զինուորութ. ուստի և ամ արք
գրեալ են 'ի զանազան դունդս վինուորուե. որք
միանգիյն են իբր 50000. և 'ի ժկ ամենից մինչև
ցվաթսներդ ամ կենաց, յամ հարկաւորուիս հարկց
ծուայեն 'ի գործ զինուորուե. սղքա յաւաջագոյն
գումարէին յամին միանդամ առ 'ի առնել զգինուորա-
կան կրթուիս. իսկ այժմ զինի բաժանելոյ 'ի տրութ
անդ.

անգղիացւոց՝ միշտ կազմ և սպառբաստ կան՝ ի պաշտապանութեան նահանգի իւրեանց յերեսաց թշնամեաց վը թէպէտ ըստնի վիրճինիա քաղաքու ամբապարիսպ, և բերդու քաջ սպառազինելս, սակայն հզօրագոյն է, և առաւել ապահով՝ ի յարձակմանց թշնամեաց՝ քան զայլ ամսնահանգու ամերիկոյ. սակս կորովուեն բնակչաց իւրոց, և բազմուեն զինուուրաց՝ որք նախանձախնդիր են յոյժ ազատուեն իւրեանց. ուստի և միշտ ակամայ կամօք կրէին զուծ անգղիացւոց համազգեաց իւրեանց. և սպասէին գիպող ժամուառ. ի բաց թօթափելոյ զայն. ուղ և ահա արարին Վիրճինիա բաժանի ՚ի 43 կոմսութիս, կմ վիճակս. որք առնուն զանուն ՚ի գլխաւոր տեղեաց իւրեանց կմ ՚ի գետոց՝ առ որովք ձգին. և կմ ՚ի տեարց իւրեանց: Գլխաւորքն ՚ի նցէ՝ են. Եամէ. Եօրէ. Կիւ ծէնդ. (Եէլ ծէնդ). Զարւ սիրէս. (Քարեւ վիրէս.) կոմսուն էնրէիսս. ըստ անգղ. Քանանդի օլ հէն նըրի. կուտլանդ. Լը լուլարւ. (ալպէմարէ). Լիւլ. (Սէն սէ). Օրէնձ. (օբանծ). Սիօրտսիւննիւ. կոմսուն կուլէն մասի արքային. անգղ՝ Քանանդի օլ ծէնդ սուլը. կոմսուն զագուհույն, անգղ՝ Քանանդի օլ պի սուլը. կուլուց. (կուլէնտէր). Ուաբբահունու. կոմսուն գէրգաց արքայի անգղ. Քանանդի օլ ծէնդ ճօրմ. Ստէտֆըն. (Ստա ֆօրտ). Քէնաքէն. (Քայսքուն). կոմսուն Քէնաքէնունի. Քըլքէնէց. (+սլքէնէրէր). Լիւնէնպըն. Պէտքըն. կուն տշանին երշարպայ, անգղ. Քանանդի օլ բընու նուց. Քը նպըննադ. (գումայերլանդ). Զէստընքէնս. Լիւնէն. (անէլին). Հէլլմէն. (հալլիման). Սէրէ (սուրէ). Պէրնուն. (պրանուն). Լիսէն. Սէնսէնմըն. (նանուն մօնդ). կոմսուն իւլանունուհույն աննայի, անգղ՝ Քանանդի օլ բընու նունը. Սօրթհէնտըն. (նօրթհամբուն). Լիւսէն. (առտօմագ). ևն. զորոց գլխաւոր տեղեաց յառաջիկայդ ստորագրեսցուք:

Վլլիամապուրէի: Մայրաքազաք համօրէն վիրճինիայի. և նիստ գաւառական ժողովյոն, որ թէպէտ փոքրէ, այլ գեղեցիկ. կառուցել իրեւ 50 անգղիական մղննաւ հեռոի ՚ի ստրէն կարոլոսի ըստ արևմուտու. ըստ երկուց բնական նաւահանգստից. յորոց մինն հաղորդի ըստ եօրք գետոյն, իսկ միւսն ըստ եամէսայ. որք իրեւ միով մղննաւ հեռոի են ՚ի քաղաքէն. որ և յայն սակս չէ այնչափ ինչ յարմարաւոր վաճառականուեն. զի ոչ կարեն նաւք գնալ մօտ ՚ի քաղաքն: Ունի տունս իրեւ 300. յորս երեւելի են ապարանք քաղաքավայրեամին շնուշ. ՚ի թըրծեալ աղիւայ:

բնակիչս իբր 2000 և եթ . մի եկեղեցի մեծ և խաչաձև . և առ նովաւ աշտարակ ութանիկւնի , որ է զինարան . և այլ շինուած զօր կունն քահերպալուն . որ տիրապս է մարտիոց փոքրիկ . զինել 10 . 12 ումբազինուք . այլեւ դպրոց մեծ հիմնեալ 'ի գուլիելմոսէ արքայէ . և 'ի մարիսամայ դշխոյէն հանդերձ առաա ուոնկօք . ուր կարդել կան մեց դասաւուք . որք ուսուցանեն զածաբանուի . զհամաբնաբանուի . զբարոյական . զբնաբանուի . զբափաբանուի . և զայլ ստպին ուսմունս . իսկ ուսունօղքն ըս սահմանելոյ հիմնադրաց՝ պարտին լինել հարիւր , որք ձրի ուսանին անդ : Փողոցք քաղաքիս կանոնակոր էն՝ ուղղող և քարայատակ . սակայն գրեթէ միշտ փոշելից էն . զի աւագուտ է երկիրն . ըս մէջ գլխաւոր փողոցին ունի հրապարակ մեծ և գեղեցիկ . եր կայնուեն նր իբր 600 գրկաշափ . իսկ լայնուին 100 տանաշափ : Ունի և կրտպակս վաճառականաց և զանազան արհեատաւորաց . և զայլ ամ՝ որ ինչ պէտք էն քաղաքի . ունի և զայս մասնաւոր առուտելուի իվր այլոց քաղաքաց այսր նահանգի . զի զերծ է 'ի մունոյ , 'ի պիծակէ , և յայլոց զանազան նեղացուցիւ հանձից յաճախելոց յայլ ամ քաղաքս վերահինիսյի :

Եամեսդուն : Գեօղ անշուք 'ի ցամաք կղզի ենչ 'ի հիւնիսակողմն եամէս , կմ բոնհաղօն գետոյն , իբր 42 մղոնաւ անգղիացւոց հեռի 'ի բերանոյ նր . և 8 մղոնաւ 'ի վիլիամսապուրիայ 'ի հիւնիսակողմն նր . հազիւ 70 տունս ունի . բայց և այնք չեն 'ի մի վայր հաւաքել . այլ ցրիւ աստ և անդ . բնակիւք նր գրեթէ առհնորկ վաճառականք և նաւալարք , որք առաւել 'ի ծովու բնակին քան 'ի ցամաքի . վայ և քաղաքն ամայի 'ի բնակչաց երեխ : Սա եր յաջոյն մայրաքաղաք համօրէն վիրձինիայի . և նիստ դւռական ժողովոյ նր . որ յետոյ փոխադրեցաւ 'ի վիլիամսապուրկ . որով և իսպառ անշքացաւ տեղիս այս . սակս չունելոյ ջուր բարի . զի ջուր գետոյ նր խոռնել է ըս ջրոյ ծովու . ուստի դառն է և աղի , և պատճառէ զտենդ . ոող փորձիւ տեսաւ :

Վալլիքօրտ . Վիլինիտօն . և Պրադոն : Են բնակել տեղիք կմ գեօղք 'ի կոմսուե եամէսայ :

Եօրէ : Գլխաւոր քաղաք համօնուն կոմսուե առ համօնուն գետով . իբրեւ 10 մղոնաւ հեռի 'ի վիլիամսապուրիայ յարեկլից . չունի ինչ արժանի յիշաաա կաց , բայց ծխախոտ պատուական . գերագոյն համա-

մարել քան զայլ ամառակս այս ազգ բռւսոյ . որ
լինի 'ի շրջակայ վիճակի նր . զոր կոչեն ծխախտ
քաղցը վիրճինիսոյի . որով բազմաշահ առևտրուիս
առնեն բնակիչք նր :

ՀԱՅՏԸՆ . (Հ' ամբէտօն) . Նոր բուռուն : Են բնակել
աեղիք 'ի նոյն ցամաք կղզի 'ի կոմուե եօքայ :
Ք' ըմպէրլընդ . (Քամպէրլանդ) : Գեօղ 'ի ձենակի , որ
հանե , 'ի վիլիամսուրկ , 'ի հարաւակողմն բամունքէյ
գետոյ . որ է ստորին վտակ եօրք գետոյն . և է
գլխաւոր տեղի կոմուեն նիւքէնդայ :

ՉԱՌՍ սիրիս . (Քարէս չիրիս) . այս է՝ Քաղաք
հարողոսի : Քաղաքադիւդ գլխաւոր համանուն կոմ
սուե մօտ 'ի գետն եամեսայ :

ՌԵՄԸՆԴ . (Ռէմինդնափ) : Խողովրդապետուն և գլխաւ
որ տեղի կոմուեն ենրիկոսի առ հիւսիսային
եզերքք գետոյն եամեսայ :

ՈՒԿԱՐԸ . (Վէստամ) : Գեօղ 'ի կոմուե կուգլանասոյ
առ եամես գետով 'ի հիւսիսակողմն առընթեր սահ
մանացն սիշմընտայ :

ՋՐԱՅ . (Քրէտ) . Ռուզ : Գիւղօրէք 'ի կոմուե էլպըմարլ
եայ . առաջինն առ հարավորէ գետով . իսկ երկուն
առ գաեաւ :

ՀԱՅՆՈՎԸՆ . (Հաննովէր) : Գեօղ և գլխաւոր տեղի հա
մանուն կոմուե :

ԵՎԱԻԼ . (Եվանդէիլ) : Գլխաւոր տեղի կոմուեն
լիւխայ , յարեւելքան կողմն ըիվաննայ գետոյն մօտ
ափալաքեան լերանց . որք կոչին և կապուտակ
լերինք :

ՈՒՇՎԸՆ . (Վալտէր) : Գլխաւոր տեղի կոմուեն օրան
ժայ 'ի հիւսիսակողմն էջնիլայ 'ի վր գեղեցիկ բլրոյ :
Բուրուսէւ . որ թարգմանի Ալշանի նասահանգիսփ :
Գլխաւոր տեղի սրօդսիլվէնիայ կոմուե 'ի հիւսի
սակողմն մադաբոնի գետոյն :

ԲԵԿԻՆԴԻ . (Բամունդի) : Գեօղ ուր բնակին մնաց
ուածք մասնաւոր ինչ ցեղի ամերիկացւոց . որք յա
ռաջագոյն բազում էին , այլ այժմ սակաւ յոյժ . և
յանուն գետոյն՝ որ ուոգանե զօահմանս նց , կոչին
բամունքացիք : Աք ունին զփոքրիկ վիճակ երկրի .
զոր և վճռոյ գաւառական ժողովոյն վիրճինիայի՝
ոչ ոք կարօղ է առնուլ 'ի ձեռաց իւրեանց . բայց
ինքեանք են իբր գերիք անդզիացւոց . որք և զգե
նուն լը սովորուե ստորին ժողովրդեան նց . յորոց
ոչինչ իւկը զնկնին , բայց միայն լեզուաւ :

ԱՆ գարտէլ . (Նոր գարտէլ) : Գլխաւոր աեղի
կոմ

Կոմսուն գուլիելմոսի արքայի . առ ափն համանուն գետոյ :

ՏԵԼՈՒՆԵՐ : (ՏԵԼՈՒՆԵՐ) : Գեօղ 'ի կոմսուն թագուհոյն ը մէջ երկուց վտակաց եօրք գետոյն . դ մադարոննայ , և բամենլնքեայ :

ԱԼԹՈՒԴԵՐ : (ԱԼԹՈՒԴԵՐ) : Քաղաք և գլխաւոր աեղի համանուն կոմսուն . կառուցել առ եօրք գետով 'ի հիւսիսակողմն մօտ 'ի բերան նց , և դրեթէ հանդէպ եօրք քղթի :

ՄԻԱԾՔՐԱ : (ՄԻԱԾՔՐԱ) : Առաջանգիստ պատուական 'ի ծովելերս կոմսուն կլոսդրայ , 'ի հարաւակողմն կվինս կզգոյ : Աւաբենանօք : Քաղաք և գլխաւոր տեղի համանուն կոմսուն առ համանուն գետով 'ի հիւսիսակողմն նր : Բնօրդ ԴՐԱԿՇՅՈ : Գեօղ երեւելի այսր կոմսուն առ նովին ռաբբահանք գետով :

ՅԱՍԱՊԻՖԻԿ : Կողմանս գտանի ընդարձակ ցամաք կղզի արգաւանդ և բազմամբդ . գործել 'ի ռաբբահանք և բօդ տվմաք մեծամեծ և շատաջուր գետոց . ուր են չորք փոքր կոմսունք . որք կոչին . ԱՀՆԻԵԿՇՅՈ : (ԱՀՆԻԵԿՇՅՈ) : Զգի 'ի հարաւային և յարեւելեան կողմն ցամաքակղզոյն մինչև ցկէտ ունիսմիլսայ :

ԱՐԿՄԵՆԴ : (ԱՐԿՄԵՆԴ) : Զգի 'ի հիւսիսակողմն նախ ընթացին առ ափամբ ռաբբահանք գետոյն :

ԱՅՐԵԼՆԱՐԱՄ : (ԱՅՐԵԼՆԱՐԱՄ) : Է ը մէջ ցամաքակղզուոյն ը վիմտմիլ կէտն և ը վկրոմօ գետ :

ԴԱՆԱԿՇՅՈՎՈՎՆ : (ԴԱՆԱԿՇՅՈՎՆ) : Զգի առ եղերք բօդ ովմաք գետոյն մինչ ցԱմիշնաւահանգիսան :

ԼՀՎԱ : (ԼՀՎԱ) : Է աւան և գլխաւոր տեղի այսր չորից կոմսունց . կառուցեալ առ կրծիւն ցամաքակղզոյն մերճ 'ի ռաբբահանք գեան :

ՋՐԵՐԵՐԱՊՈՆՐԻ : Քաղաք փոքր + այլ բարեշէն և բաղմավաճառ . և գլխաւոր տեղի կոմսուն գէորգգեայ արքայի առ ռաբբահանք գետով . իբրև միոնաւ միով հեռի 'ի սահանաց նր . շինել իբր ճօ ամօք յաւաաջ առ 'ի ծաղկեցուցանել զվաճառականուն բնակաց ներքին կողմանց նահանգին . փողոցք նր ուղարգի էն և վայելուց , ոտք և այլոց բաղմաց քաղաքաց վիրանիայի :

ՋԱԼՄԱՆ : Գիւղաքաղաք փոքրիկ . որ ունի իբրեքսան տունս և եթ . և այլ ասկաւ ընակունս և պարտէզս շուրջ գիւրե 'ի կամսուն գէորգեայ արքայի մօտ 'ի սահանս ռաբբահանքայ : Այս սահանք նաման էն սահանացն նեղոսի , և եամէսայ գետոյն . երկայնուն նց է իբրև մզան մի և կէս . իսկ լայնուն

նույնին իրքեւ 100 ձողացափ - ը մէջ գլտոյնէ կղզի 'ի ցափ հարիւր անդոց ծառալից , իսկ յերկուց կողմանց հաւատաբը հեռաւորութ , իբր 20 ձողացափ միշոցին են 6. 7. սահանք միացարք մի քը զմի բարձր . յորոց վերջինն և փոքրագոյնն՝ է մի ոտնացափ բարձր ուղեղ գծին :

Սէւեռառար: (Սէւեռառար) : Է մետաղ երկաթոյ առափն նորին ուարբահանօք գետոյ :

Ճէրմէյն: (Կէրմանա) : և Դիմուլ : (Դիմուլ) : Են երկու բնակել աւողիք 'ի կոմսուե դէորդեայ արբայի առ ուարիտ աննայ կոչեցել գետով :

Մօւըւպէւ: (Մօւըւպէւ) : Գլխաւոր աեղի կոմսուե սդէդ ֆըրաայ առ բոդովմաք գետով :

Տէ՛մին: Քաղաք փորք 'ի ամին կոմսուե նորոդ շինել 'ի խորամորի :

Գօւլցուր: (Գօւլցուր) : Քաղաք փոքր 'ի կոմսուե ֆէյսֆէքսայ հի հիւսիսակողմն զրոկնան վատակին . որ խառնի 'ի բոդովմաք . այս քղք նորոդ շինեցաւ 'ի դէւրացուցանել զվաճառառացահուե սորին կոմսուե :

Մօւէ Հէրնը: (Մօւէ Հէրն) : Կարուած հռչակաւոր զօրապետին ուաշինկդընայ (վասհինկդոնայ) . 12

անդղիական մզոնաւ հեռի 'ի քօլէստըրայ . ուր նախկն զօրապեան ուներ գեղեցկաշէն ապարանս 'ի վր բարձր բլորյ՝ առ բոդովմաք գետով 'ի գեղազումարձ վայրի : Մոյն այս ուաշինկդըն (վասհինկդոն), 'ի վերջին ողողմի ըգէմ անդղեացւոց եղեւ սովարապետ զօրաց սմէրիկացւոց 'ի պաշտպանուե աղատուե և անկախուե ժդ նահանգաց միացելոց , և մեռաւ 'ի 1799. 78 ամաց :

Վշէւսանդրիա: ը տնդզ' . Վշէւսանդրիա : Քաղաք բազմալաճառ և փարթամ'ի կոմսուե ֆէյսֆէքսայ . իրքեւ 10 մզոնաւ հեռի 'ի մոնդ վըրնինայ , 'ի միշոցի պարուրին գործելոյ 'ի բոդովմաք գետոյ . ուր մտանէ հընդինկ վատակն . ունի գործարան նաւուց . զի խորէ անդ գետն . ուր մարթ է և նաւա մեծամեծա արկանել 'ի ջուր :

Նիւէլ: (Նիւէլ Վւլլէ) . կմ Սար Նիւէլսայ : Գեօդ իրքեւ 34 մզոնաւ հեռի 'ի ֆէտէրիքսպուրկայ , 'ի ձնողի 'որ հանէ 'ի վինչէսդըր :

Ուասդ: (Վւասդ) : Գեօդ փոքր առ նովին ճնողհաւ : Միւշ սահանդ . անդզ' . Տէ իւէյտ գետեյտ : Միւ 'ի մեծամեծ սահանաց հիւսիսային ամերիկոյ 'ի բոդովմաք գետ . որ 'ի կողմանս աղեքսանդրիոյ արդէւէ յընթացից 'ի միացար ժայռից , բաժանի յերկու

կու առաջս . մին գնայ ը վիրճինիա . իսկ միւսն ը մշյրիլընտ . յերկոսին ևս են երեք սահանք միմեանց զկնի . բարձրուի առաջնոյն է 24 . 25 ոտնաշափ ուղղաձիգ . երկրորդին 20 . իսկ վերջնոյն 10 . յորս գահավէժ հասի ջուր գետոյն անհնարին խոխոջիւք :

Այս երկու առաջք հարուստ մի վազս առեալ , անդրէն միանան 'ի ձորագետն , ուր լայնուի ձորո փորոյն ' է 30 ձոլ . իսկ խորունն անդնդային , զոր չեղեւ հնար չափել . յորժամյորդեն ջուրք նր՝ այնչափ բարձրանայ , մինչև բոլորովին ծածկել զցրջակայ ժայռս . որոց բարձրուին է իբր 90 . 100 ոտնաշափ . և արկանել 'ի վր դադաթանց նց ծառս մեծամեծս .

ոլք մնան անդ 'ի նուռազիլ ջուրցն :

Ո՞ւնէնարը . (Վինեւունէր) : Գլխաւոր քղք կոմսուեն ֆրետերիքոսիյարգաւանդ և 'ի գեղազունարձվայրի . ունի տունս իբր 200 . բնակիչք նր սերեալեն 'ի գերմանացւոց , այն է՝ նեմցէ . որք վայելեն անդ յանդորրու և 'ի խորին խաղաղուեն . զերծ յնմ հարստահարուեց . գործեն զերկիր որ մատակարարէ նց առատապս զնմ' պէտս իւրեանց . մինչև զինել կարօտ իմիք . ունի բերդ ամուր , զոր կառոյց քաջ սպարապետն ուաշինկդըն 'ի բարձրաւանդակի . առ 'ի նահանջել զարշաւանս շրջակայ վայրենի ամերի կացւոց . ոլք յունգոյն ստէպ ասպատակէին 'ի կող մանս յայսոսիկ . և բզմ չարիս գործէին . ոյլ յորմէ հետէ շննեցաւ քղքս և բերդ նր , յորոյ շննուեն ծախեցան 18 հեր ոսկի , և զկնի տիրելոյ բնակաց բենսիլվանիոյ քունեսնէ ամրոցին , որ այժմ կոչի բիցպուրկ , ոչ ևս իշխեցին մերձենալ 'ի սահմանս սորին կոմսուեն . վոյ և բնակիչք նր կան այժմ 'ի մեծի խաղաղուեն : Իբր 40 մղսնաւ հեռի 'ի քղքէ աստի՝ գտանի սահանք ջուրց . ուր իջանէ ջուրն 'ի 15 ոտնաշափ բարձրուել . և իբր 20 մղսնաւ հեռի 'ի սահմանաց աստի գտանին երկու ինքնարուղին ջերմուկք . յորնց մինն ունի զհամ պաղեղի . իսկ երկու րորդն վառօդոյ . և յայլում վայրի փասկար մի մեծ , և աղբիւր բժշկական . զորմէ ասեն թէ է դեզ սուողջարար ելեփանդական ախտի . որ է ֆաէնկի . վաթսուն մղսնաւ հեռի 'ի ույնչնսդըրայ գտանի կամար բնական 'ի մշջ երկուց լերանց . ը որով անցանէ գետ : Գտանի և գետակ փոքր որ մատանէ 'ի խորագիւտ լերին , և անդէն անյայտ լինի . վոյ կոչեն զնա գետ կորուսել . գտանի և աղբիւր մի ծծմբային և բժշկական : Վեշտապան մղսնաւ հեռի

'ի

՚ ույնչնադըրայ լը արևմտեան հիւսիս ՚ի լայնա-
ծաւալ դաշտի գտանի վեհ . կմ խոռոչ բնական .
ուր ՚ի սահմանաւոր ժմկս մարթ է իջանել ՚ի խոր
իր 100 կանգուն . իսկ յայլ ժմկս այնչափ բարձրա-
նայ ՚ի նմ ջուրն , մինչև բունութ հեղուլ և արտաքրո-
զայս վեհ կոչեն Ջրհոր մակընթացուեն և աեղատուեն .
և աւաւել զարմանալի այն է՝ զի չունի բնաւ հա-
զորդուի ը լերին , կմ ը գետոյ . եթէ ոչ դացէ
ստորերկրեայ ինչ ճնպհաւ . ինն մղոնաւ հեռի ՚ի
տեղւոջէ աստի՝ գտանին և այլ եօթն , կմ ութն
այսպիսի ջրհորք :

Բնադիւն . (Բարեւոն) : Ե բնակել տեղի ՚ի սմին կոմ-
սուե առ սահմանօք վիրակինիայի և մշյրիլընաայ
առ հիւսիսային վտակաւ բոդումնաք դետոյն :
Պէտքը : Ե բնակել տեղի առ թուրնէդոն գետով :
Ե մայն . (Ետճանան) : Տեղի առ համանուն գետով
յարեւելեան կողմն նը :

Հերքի . (Հաբի) : Գեօղ ՚ի զուարձալի հովտի ՚ի
մէջ կապուտակ լերանց : Այս երեք տեղեք են ՚ի
կոմսուե քըլըէբէրայ :

Լիւնինապարի : Դլիսաւոր տեղի համանուն կոմսուե
մօտ յակունս մէ հէրին գետոյ՝ առ սահմանօք կոմսուե
հէլիֆէբաայ :

Պէտքը : Կոմսուե կմ վիճակ , որոյ բնակելք ցրիւ
բնակին տատ և անդ . ուստի չիք ՚ի նմա ոչ քղք և
ոչ գեօղ , որ ունիցի տունս ՚ի մի վայր հաւաքելս :
Նէւ . (Նաւ) : Դլիսաւոր տեղի կոմսուեն է տըրտաց
(էտվարտաց) . մօտ ՚ի պուժալո վտակ , որ մասնէ
յաբբումադօքս գետ :

Պէտինիմ . (Պատինիմայ) . առ սգադէ գետով : Կիգո-
ւու . Սներուն . առ եամէս գետով : Քչըւ . Քօհուր :
Այս ամ բնակել տեղեք կմ գեօղք են ՚ի կոմսուեն
քըլըգըրլընաայ :

Զէրտը . (Քէրտէր) : առ վարլիք գետով : Մանօգան-
դուն . առ եամէս գետով : Պէրմիտը , մօտ ՚ի բերան
արբումադօքս գետոյն : Այս երեք գեօղք են ՚ի
կոմսուե չէսդըրֆիլտայ :

Ուրդը . (Վարդոն) : Ե գեօղ ՚ի կոմսուե էմիլիըայ
(ամէլիայ) յարեւելեան կողմն պուսն առունին :

Ճէքը . (Եփերուն) : Գեօղ ՚ի կոմսուեն հէլի-
ֆէբսայ ը որ անցանէ ուսանօք գետ :
Անք . (Անքի) : Ե կոմսուե որոց բնակելք ցրիւ
բնակին . վայ չունի ոչ քղքս , և ոչ գեօղս ՚ի մի վայր
հաւաքելս :

ԲԵՐԵՎԱՐԴԻ, անգղ՝ ԲԵՐԵՎԱՐԴԻ : Եղիսաւոր տեղի
կոմսուն պրոնավիքայ առ աբբամագուս գետով :
ՊԵՆՔԻԾԻ : (Պահաժոր) : Գեօլ 'ի կոմսուն տին
վիտիայ առ աբբամագուս գետով :
ԲԵՐԵՎԱՐԴԻ : (Բապիամ) : Գեօլ 'ի կոմսուն էսէքսայ՝ մերձ
'ի ծոց գործել յեամէս գետոյն :
ՍԵՐՖԻԾԻ : Ուարի : (Վարչ) : Եին բնակել
տեղիք 'ի կոմսուն կղզւոյն ուայդ (վիկդ) :
ՍԵՐՖԻԾԻ : (Սարֆիօլ) : Եւենուինը : (Եւանուինը) :
Գլխաւոր տեղիք կոմսուն նէնսիմընտայ :
ԿԵՐՖԻԾԻ : (Կօրփօլ) : Գլխաւոր քղք կոմսուն ան
նայի դշխոյին առ ճննղրհաւ, որ յէտինդոնայ հանէ
առ ափն եամէս գետոյն . ը որ փոքր մի 'ի վերոյ
լինի անցանել 'ի գամբդօն քղք . զոր 'ի 1775 պա-
շարեցին անդղիացիք . այլ ոչ կարացին առնուլ :
ԲԵՐԵՎԱՐԴԻ : Գեօլ 'ի կոմսուն աննայի դշխոյին առ
գետովն եղիսաւըեթի :

ՋԵՐԵՐԸՆԻ : (Քերերծն) : Գլխաւոր տեղի կոմսուն
նօրթհէմդընի, առ նաւահանդսափին որ 'ի պարոյրն
քէսաբէտք :

ԿԵՆԴԻԼ : (Կանդանէ) : Եայլ իմն տեղի նման առաջ
նոյն . յարեելեան կողմն նախասացել սպարուրին :
ՍԵՐԻ : և ՋԵՐԵՐԸՆԻ : Են երկու կղզիք յարեելեան
կողմն սարաւանդակին չարլըսայ :

ԴԵՐԻ : (Դարիեն) . և ՄԵՐԵՐԸՆԻ : (Մարտանի) : Են
երկու կղզիք յովկիանոսի 'ի կոմսունն էքսմէքայ
(Աքսմաքայ) :

Կահանդ դ . ՄԵՐԵՐԸՆԻ :

(Մարիլանտ) :

Անի իւր սահման 'ի հիւսիսոյ՝ զբենսիլվանիա .
յարեելից՝ զկոմսուիս, որ առ տելավարէ գետով .
յարեմակից՝ զօհիս ը փոքրիկ ինչ մասին . իսկ ը
այլ մասին՝ ողեւ 'ի հարաւոյ՝ զմիրճինիա . յորմէ
անշատի 'ի ձեռն բոդովմաք մեծի գետոյն . որ է
սահման երկոցունց ևս 'ի ծովէ՝ մինչև 'ի լերինս :
Տարածուն նը օդաշտափուք է իրը հհոս քառակուսի
մղոն աշխարհագրական : իրեւ 'ի կեսն այսր դարու-
թիւ բնակչաց սր ը վեր 'ի վերոյ հաշուի հազիւ
հա-

հասաներ 'ի 40 հըլք սովիտակս , և 'ի 60 հըլք սեաւս .
Ճնդհօրդ ոք անդզիտացի յոյժք զվերջին պաղմ , ոչ
դնէ 'ի նմ աւելի քան 90 հըլք սովիտակս . և 32000
սեաւ գերիս . բայց 'ի վերջոյ ճշգիւ հանդէս արա-
րել բնակչաց նր , գտան 'ի նմ 320000 սովիտակք .
որք սերել են յեւրոպացւոց . յորմէ յայտ է թէ բաղ-
մամարդ է յոյժ նկատմամբ ամերիկոյ այս նահանդ ,
ուր գժուարին է գտանել նահանդ կմ ո , որ 'ի
սոյնցափ տարածուե այսչափ բնակիչո ունիցի . յայտ
հաշիւ ոչ մտանեն սեաւ գերիք , որք օր լը օրէ նու-
ազին . ոող սովիտակքն բազմանան :

Ունի բնշմ գետս և վտակս ականակիտա . յորոց գըլ-
խաւորն է բոդոլմաք գետն , որ հարուստ մի տա-
րածութք ոռոգանէ զերկիր նր . այլև ծոց մեծ
յափն ծովու . որ է նաւահանդիստ ընդարձակ ,
անքոյթ , և բաւտիան եմ տեսակաց նաւուց . զի
խորուն նր ը մմմ սեղմա է 7+9 , գրկացափ :

Օդ սորին նահանդի 'ի ծովեզերեայ տեղիս խո-
նաւ է և թանձր . այլ 'ի ներքս 'ի լեռնակողմանս մա-
քուր և առողջարար . 'ի ձմեռան սաստիկ է ցուր-
տըն . ոող և տօթն յամառան . խկ գտրնանային և
աշնանային եղտնակք քաղցր և բրեխառն . այլ անհը-
նարին յաճախուե պիծակաց , և այլոց աղդի աղդի
խայթոցաւոր և անխայթոց ճանձից՝ ոչ սակաւ վկա-
լն բնակչաց :

Երկիր նր պարարտէ և արգաւանդ . բերէ առատա-
պէս զնմ , որ ինչ հարկաւոր է մարդկային կենաց .
զր ցորեան , և մնրացորեն առատ , զոր և այլոց վա-
ճառուն . ունի և անտառու մեծամեծս , և զնզն տե-
սակս պատուական փայտից . յորոց զոմանս յիշատա-
կեցաք 'ի վիրճինիա . և վուշ և կանեփ և զանազան
տեսակս պաղոց և բժշկական բուսոց . այլև որթս
խաղաղոյ . զոր նորոգ սկսան դարմանել , փոքր ինչ
յառաջ քան զամ տն 1760 . և ընտանի անասունս ,
որք բազմանան յոյժ . գտանին անդ և աղդի աղդի
թուցունք ընտանիք և վայրենիք . և չորքուանի գա-
ղնիք վայրենիք : Ալյլ առաւել առատ և բազմա-
շան բերք նորա է ծխախոտ աղնիւ . թէսպէտ ոչ հա-
սանէ 'ի պատուականութիւն ծխախոտոյ վիրճինի
սյի , որ և է գլխաւոր վաճառք նր . յորմէ ոչ միայն
բնակիչք նր շահին , այլև անդզիտա՝ մինչև էին այս
ժդ նահանդք բաժանել 'ի նմէ . զի ըս ճիշտ հաշուէ
լոկ 'ի մաքուից ծխախոտոյ վիրճինիայի և մեյրիլըն
տայ , զոր աանեին յանդզիս , ամի ամի առնոյք
առաւ .

տուաւել ք զերիս միլիոնս արծաթի տուգաթս վենէտկեան . որ առնէ զըշ առաւել ք զվեց միլիոն , թող զայն՝ զոր յետոյ վաճառականք անդզիտցիք շահէին անտի . զի ինքեանիք դիւրագին առնուին 'ի բնակցոց ամերիկոյ , և մեծագին վաճառէին յեւրոպիա : Առևլ յետոյ յայս բազմաշահ վաճառ զոր կորուսին անդզիտցիք , վայելել սկսան գաղղիտցիք . և երեխ թէ վայելեսցեն ը հարուստ մի ժմկ , մինչեւ բնակիչք վիրձինիայի և մեյրիլընտայ բացցեն և այլ ձենդհս 'ի ծաւալել զայս վաճառ իւրեանց :

Սկիզբն բնակուե գաղթականին անդզիտցւոց յայսմնահանդի , եզեւ տու տրուք ակարուսի թղթին անդզիոյ . որոյ նորոգեալ զսիստ օրէնս ը ենրիկոսի ընդդէմ ուղղափառաց անդզիտցւոց չարաչար ձեշէր զնոն . վն այնորիկ պալգիմօր անուն սմն այր իշխանագուն՝ զոր նք լօրտ կոչեն , ուղղափառ հաւատով և ճշմարիտ ածալալու , խորհեցաւ խնդրել իւր ապաւէն անքոյթ 'ի վիրձինիա . բայց չգտեալ և անդհանդիստ , քանզի և վիրձինիացիք զաղանգ անդզիտական եկեղեցւոյն ունեին՝ ուստի և թշնամութք բերէին առ ուղղափառս , եդ 'ի մտի հաստատել զբնակութիւն իւր յանբնակ անապատին , որ է ը մեջ բողովմաք և բէնսիլվանիա գետոց : Առևլ ֆութով վախճանեալ զաղցաւոր կեանս իւր , որդին նր եդ 'ի գործ զխորհուրդ նր : Սա 'ի 1633 ելյանդզիոյ ը այլոց 200 ուղղափառաց որք առ հորկ էին 'ի քաղաքացւոց անտի . բարեմնունդք ազնունականք բարեպաշտք և երկիւզածք յայ . որոց հասել յամերիկայ , 'ի ձեւան քաղցը խաղաղական և արդարակորով գնացից իւրեանց այնչափ 'ի սէր իւրեանց յանկուցին զմերձակայ վայրենի ամերիկացիս , մինչեւ ինքնայօժար դիմել նց յօդնուի անդզիտցւոց՝ և սրտի մաքք և տամ հաւատարմութեամբ աշխատիլ 'ի գործ նց :

Առյս քաղցը իրաւասէր և իմաստուն ընթացք նց փութով բազմացոյց անդ բնակիս . քանզի բզմէք ոչ միայն յուղղափառաց , այլև յայլոց աղանդաւորաց հալածելոց 'ի պատճառս կրօնի իւրեանց , անդիբը 'ի խաղաղ նաւահանդիստ դիմէին . որով և 'ի սուղ ժմկի լցին զայն վայր ամայի . այլ ոչ եթող ը երկար վայելել նց յայնմ անդորր խաղաղուե քրոմ վելու բանակալ , պաշտօնան անդզիոյ անտանեալ . քանզի ընկէց զպալգիմօր յիշխանութէ , զոր վարէր մամիմաստուք 'ի վը նորատրւնկ ժողովրդեան իւրոյ .

բայց զինի մահուն քրոմվելոսի , ը կարողոս արքայ անդրէն դարձոյց զնա յառաջին իշխանութիւր . իսկ գեորգ արքայ , որ թղթքեաց փխկյակորայ արքայի , եթարձ զիշխանութիւր կառավարութեաց տոհմէն պալդի մորայ , բայց եթող ունել զմուտաս երկրին՝ որպէս ունէր և յառաջադրյն . ապա յորժամ սերունդք բարեպաշտին պալդիմորայ ու բացեալ զուղղափառ հաւատս , ընկալան զտղանդ անդպիական եկեղեցւոյն , անդրէն 'ի ձեռու բերին զառաջին իշխանութիւն իւրեանց . յոր վայելեցին մինչև ցդաշնադրութիւն նահանգաց . իսկ յայնժամ համօրէն նահանգն մշյրի ընտ միաբան հաւանութ եթարձ 'ի նցէ զիշխանութիւն զայն յաւեժաբար . մինչև ըստ ասից պիշտնկայ՝ չթողուլ նցէ և յոյս երթէք վայելելոյ յարդիւնս ուրացուն իւրեանց . և այնուհետեւ կառավարութիւն նահանգին փոխեցաւ 'ի ուրազ ռամկապետական . ոող և այլոց նահանգաց : Իսկ գլխաւոր կրօն նահանգիս 'ի ոկրտան անդ էր ճշմարիտ ռեզղափառուական , ապա զօրացաւ սղանդն անդպիական եկեղեցւոյն , իսկ այժմ իբրև ընկեցան յիշխանութ հաւատադրութ ու բունդք պալդիմորայ , անդրէն զօրացաւ ուղղափառութիւն . այլ գտանին անդ և այլ զանազան աղանդաւորք բայց սիրով գնան . ընդ միմեանս , վոյ և ոչ մի ինչ խոռովութիւն ծագի 'ի նո 'ի պատճառ կրօնի : իսկ 'ի բնիկ ամերիկացւոց այսր մասին սակաւաթիւ մնացին , որք բնակին յարևմտեան կողմն մշյրի ընտայ , և կան մնան 'ի նախնի անոտիապաշտութ իւրեանց :

Այս նահանգ բաժանի 'ի 13 կոմունութիւն . ոքք 'ի գլխաւոր տեղեաց , կմ տեարց իւրեանց ունին զանուն . և 'ի 50 ժողովրդապետութիւն : Անունակ կոմունեց են այսոքիկ : 1 Ազնաս Ազնասութէլ . ըստ անդ գումանութիւնն է ընդունէլ 2 Կամսութիւն էլեւ 3 Զարւս . (գարւս) : 4 ՍԲ Խորիս . անդ կամ ՍՅու Նյուի : 5 Քաւլէրդ : 6 Գրէտէրդ : 7 Պօւտէմօր . (պալդիմոր) : 8 Քէնդութէրդ . (գումակը բնակութիւն) : 9 Քէնդի : 10 Ազնաս Դշիոյ . անդ գումանութիւնն էլ գումանութիւն : 11 Դօրուտ . (դուռուտ) : 12 Ուտէր . (կուտէրէր) : 13 Սէնցըրտ . (սօմերսդ) : Եւ զի բնակիչք սց ըստ մեծի մասին ցրիւ բնակին իւրաքանչիւր 'ի կալուածի իւրում , յայն սակս սակաւ քղք և գիւղօրէք գտանին 'ի նո . և ոքք ենն փոքր են և սակաւամսորդ , յորոց զգլիաւորսն յաւաջիկայդ նշանակեսցուք .

համօրէն մէյրիլընտայ . կառուցել 'ի ցամաք կղզի՝ դործել 'ի սէվէլին գետայ . լոյնուի սորբին գետայ մօտ յայտ տեղի՝ է իբրև մղոն մի , որ զոյդ ը ծովուն կրէ զտեղատուն և դմակընթացուն մինչեւ ցայս քղք . ուր 'ի ժմկի մակընթացուն ցերկու ունաշացփ բարձրանայ ջուրն . և աղի ևս է . թէպէտ իբրև 200 մղոնաւ հեռի է 'ի ծովէն : Այս քղք փոքր է , զի ունի տունս իբր 150 ևեթ . յորոց ոմանք են 'ի թրծել աղիւտոյ . որք թէպէտ մօքուր են , այլ անշուք . փողոցք նր քարայատակ , այլ առասլար և անհարթ . չեք 'ի նմ երեւլի ինչ շնունդ . զի և եկեղեցի նր և ասպարանք իշխանին , որք են գլխաւոր շնունածք նր անշուք են և աղքատակերտ . նոյնազ և դղեակ նր անզօր , և վաճառաշոհութին նուազ . զի բնակիչք նր թ մեծի մասին վարեն զքղքուկան պաշանատարութիս , վեյ ոչինչ միտ դնեն առեւ արուե . հազիւ երբէք յամին զերկու կմ զերիս նաւու շնեն անդ :

Լընդը . (Լոնդոն) , կմ լընդը դառն . (Դաքս) : Աւանա դեող . կմ շէն 'ի հարաւակողմն աննաբոլիս քղքի : Քանին էս դառն : Ըէն առ Ճնողհաւ վերոդրելոյն : բայց քանի մի մղոնաւ առաւել ը հարաւ մօտ 'ի բադնէնդ գետն :

Պլիստու : Են բնակել տեղի 'ի կոմսուն շարլսոյ առ բոդովիմաք գետով 'ի հիւսիսակողմն նր : Բորտ դըպէտո : Բնակեալ տեղի 'ի հիւսիսակողմն առաջնոյն :

Սբ Մարիամ . անգղ՝ Սէնդ Նէրին : Յառաջագոյն էր դլխաւոր տեղի համօրէն մէյրիլընտայ . որ 'ի քղքէ աստի կալաւ զանուն . իսկ այժմ է տեղի աննշան մօտ 'ի ռաբբահանօք գետն :

Պլէնդընսպէրի . (Պլանդէնսպուրի) : Գլխաւոր տեղի կոմսուն ֆրէտէրիքայ յարեւլեան կողմն էոդէրն պրանք գետոյն :

Ուանդըն . (Վանդն) : Բնակել տեղի 'ի սմին կոմսուն առ ռաբբահանօք գետով 'ի հիւսիսակողմն նր :

Պուլիմոր . (Պուլիմոր) : Գլխաւոր տեղի համանուն կոմսուն 'ի վերին կողմն որոշք գետոյն . ոչ կարի ինչ հեռի 'ի քէստրէտք պարուրէն :

Սեն դառն . (Սենդան) : Բնակել տեղի 'ի սմին կոմսուն պուլիմօրայ առ բադաբսգօ գետառվ 'ի հիւսիսա կողմն նր :

Ճօբբէ : (Ճօբբա) : Բնակել տեղի 'ի սմին կոմսուն իբրև 10 մղոնաւ հեռի 'ի սլուդիմօրայ .

Բարելը ։ 'Եղնող յայսմ կոմառուե առ սուսդվէհան
գետով յարեմտեան կողմն նր՝ մերձ 'ի բերան՝ ը
որ մտանէ 'ի պարոյրն քէսարեաք :

Չէ՛ա՛բը . (Քէսդէր) : Տեղի 'ի կոմառուե քէնդայ 'ի
հիւսիսակողմն համանուն գետոյն :

Ճ՛ռմ դանան . (Դաշն) : Խթրե 10 մզոնաւ հեռի յա-
ռաջնոյն 'ի հիւսիսակողմն նր՝ 'ի նոյն Ճնակհի 'որ
հանէ 'ի նեվքասդլէ և 'ի ֆիլատելֆիա :

Չա՛լս դանան . (Քարլէս դոն) : Ըէն առ նախատացել
Ճնակհաւ 'ի մեջ սահմանաց սորին կոմառուե , և տէ-
լավարայ :

'Ե՛ռինիչը . (Կառինինին) : Տեղի 'ի սմին կոմառուե
յարեմտեան կողմն էլք գետոյն . 'ի բերան այսր
գետոյ 'ի 1777 հով սովարապետ անդղիացւոց հան-
գերձ զօրոք ել առ 'ի արշաւել 'ի բենոիլվանիա .
որ նախ էառ զքարլս դառն , ասդա զնէվքասդլէ
և զֆիլատելֆիա :

Օւքըր : Քղք փոքր , և գլխաւոր աեղի կոմառուե
աննայի գշխոյին առ քօրդանք գետով 'ի հիւսիսա-
կողմն նր :

Քույնս դանան . (Քույնսդոն) : Բնակելը աեղի ոչ կարի
ինչ հեռի 'ի քէսարեաք պարուրէն :

Սըմբուռտ . (Սոմբուռտ) : Քաղոք փոքր , և գլխաւոր
տեղի համանուն կամառուե առ բոդոմնքէ Լայնածոր
գետով յարեմտեան կողմն նր :

Եահանգ ե . Բակնսիլվեյնիլ .

(Բակնսիլվանիա) :

Յարեկից՝ ունի զնըրաի , և զնոր եօրք . յարեմալից՝
և 'ի հիւս' զքանատա , և զնն իրոքացւոց և
զօհիս . 'ի հարաւոյ՝ սահմանիք նր ուղիղ գծիւ որոշեալ
են 'ի մէյրիլընտայ : **Մեծադոյն երկոյնուի նր** և
լայնուի գրեթէ հաւասարացափ են ամենեին . որք
և հասանեն իբրե ՚ի 200 մլոն . իսկ բոլոր աարա-
ծուի երեսաց երկրի նր՝ է իբրե 24000 քառակուսի
մլոն . բայց բնակիչք նր առ համեմատութէ այսցափ
ըարձակ տարածուե սակաւ են . զի ասի թէ թիւ
նց հազիւ հասանէ ց 350000 . վոյ գեռ բղմ տեղիք
նր կան մնան անլնուկ և անգործ :

Ունի բզմ գետս մեծամեծս և մանուշնս ականակիտու :
առողջարարս , և ձկնաբերս . զի ըս մեծի մասին
հոսին ը ձորոփորս աւազուտս , կմ խճայինս . որոց
դլսաւոլքն են Տէլավար . Սուսվէհան . և Շուիլ-
քիլ . որք մեծ են և շատաջուր , ուստի և նաւար-
կելի :

Օդ նր քաղցր է , բարեխառն , և առողջ . իսկ
եղանակքն պէսովէս , գրեթէ ող առ մեզ . ձմեռն
սկսանի 'ի դեկտ' կմ 'ի սկիզբն յունվ' . և ձգի մինչեւ
'ի մարտ . յորում հաղին երբեք երեխ անդ մառա-
խուզ կմ ամս ; այլ գրեթէ միշտ պարզ է . ցրտունն
սովորաբար չափաւոր է , բայց երբեմն 'ի միում և եթ
դիշերի 'ի յանկարծական չնչելոյ հիւսիսային հողմոց
որք գան 'ի լերանց , և 'ի լճիցն քանատայ՝ լինի
սաստիկ յոյժ , մինչև սառիլ և մեծամեծ գետոց .
իսկ գարունն սկսանի յապրիլի . 'ի սկզբան անգ-
յանախեն քաղցր անձրեք . և օդն աստիճանաբար
ջերմանայ մինչև ցյունիս . ապա սկսանի տօմնն . զոր
հարաւային արեւմտեան հողմունք ոչ սակաւ բարե-
խառնեն . այլ միանգամայն պտնուեն և տարափա-
սաստիկս , որք մեծապս վնասեն արտորեից նց .

իսկ աշունն սովորաբար անձրեային է :

Երկիր նր ըհանրապէս իսոսելով՝ արդաւանդ է և
բերրի . զի ասի՞ թէ ը միոյ բերէ 25 . և 30 . վայ
բնակիչք նր ունին առաւանգս զամ՝ որ ինչ հար-
կաւոր է մրդեյին կենաց . գրեթէ զամ տեսակս
արմտեաց , և առաւելադոս հաճար և մսրացորեն .
և աղդի աղդի պտտունական բանջարս և պտուզս ,
վուշ և կանեփ առաւտ . ունի և մեծամեծ անտառս ,
և բազմատեակ փայտս պատունականս , և թռչունս ,
և չորբոտանի անասունո ընտանիս և վայրենիս .

այլեւ բովս երկաթոյ առաւաբերս :

Եւ 'իվր այսր ամի ծաղկել են 'ի սմին և զանազան
արհեստք , առաւել ք յայլ ամնահանդս . զի դոր-
ծեն անդ անբաւ սոնապանս պատունականս . յորոց
զոյդ մի 4 , 5 զոշի վաճառի . գլխարկս եւրոպացւոց .
այն է՝ շափղայ՝ լաւագոյնս ք զոր շինեն յեւրոպիա .
կտաւս պատունականս՝ զոր գործեն իռլանտացիք .
այլեւ տսունեղէն կերպասս և ցփոխս՝ բայց խոչըրա-
նիւթս . զի այս արհեստ չեւ ես է կատարելագոր-
ծել , և առասանո 'ի պէտոնաւուց . իւղ կտաւատի .
օոլայ , այն է՝ նիշատայ . ճրադս 'ի մոմոյ , և 'ի
ճարպոյ կէտ ձկան . որ է ֆալեանս . օճառ , յո-
սապմն . կաւեղէն անօթս . և ն :

Այս ժամարունեստակերտք, ըստ որս և բնական բերք
երկրին, զրերկաթ, կանեփ, վուշ, տախտակիք, և
մեծամեծ գերանիք՝ ի կայմն նաւուց՝ այլև մորթ
ընտանի և վայրենի անտանոց՝ են գլխաւոր վաճառք
նր: Վոյ վաճառականուն նր ծաղկել է յոյժ, և
ընդարձակ տարածեալ մշնդ այժմ զինի բաժանման
իւրոյ ՚ի տրուե անգղիոյ: զի բաց յառետրուեց
զոր առնել ը շրջակայ Ծո և նահանգո, անհամեմատ
առաւել է այն, զոր առնել ը եւրոպացիս ը հըն
գիկս և ը ափրիկեցիս: Յորժմ ը տրուե էր անգ
զիացւոց՝ առաքեր յանգղիա երկաթ, վուշ, կանեփ,
կաշի, իւղ կտաւատի, գերանս ՚ի պէտս կայմից
են. և փոխարեն ըուներ անտի կտաւո իւլանտիոց
և հնդկացինս, չայ, ապանի, ասր, ազգի ազգի
կերպասս պատուականս և բեհեղս և ոյլ այսպիսիս,
որք յաւետ ՚ի փափկուեն են և ՚ի խենեցուեն քան ՚ի
կարեռոր պէտս կենաց: Այս վաճառք զոր անգղիա
մատակարարեր սց, բազմօք առաւելոյր ք զոր նք
առաքեին անդ: որով բովանդակուել գրամք նհնդիս
յանգղիա սորէին: ՚ի 1723 անգղիա ոչ առաքելը
՚ի թէնսիլվանիա վաճառ առաւել ք 230000 գաղ
զիական լիրէի (որ այժմ առնել իւրե 23 փարայ):
խկ ՚ի վերջին ամս յնչ ք զվարանցել ոց ՚ի տրուե
նց, առաքեր 10 միլիոնի: զոր ծանր էր ոց չասացից
անհնարին վճարել, թէպէտ և մերկանոյին յամ
գրամոց, զոր բազմաշտհ առևտրուե ստանային
այլուստ: Այլ այժմ զերծեալք ՚ի բանուել, ոչ
սակաւ ծաղկեցուցին զվաճառականուեն իւրեանց. զի
թէ յոջ քան զբաժանումն վաճառք զոր առաքեին
արտաքս, ոչ հաշուեին աւելի ք 25000 տակառս,
այժմ կրկնապատկել են և եռապատկել. և թիւ
նաւուց օտարաց զոր ըուներ ը այն ժմկս հա
սանէր ց 400 ամի ամի: նոյնցափ էին և իւրին՝ զորս
առաքեր: խկ այժմ բշմօք առաւել են իւր նաւք
զորս առաքէ, ք զորս ըունի: զի ունելով առա
տանկս զամ որ ինչ հարկաւոր են ՚ի շինուեն նաւուց,
՚ի սուղ ժմկի հանել նաւս բղմա:

Բնակիչք նհնդիս առ հնրի խօսելով քաջասնունդ
են բարետեսիլ աժխոյժ և դործունեայ, չափաւոր
՚ի ծախս, բայց միանգամայն սիրեն զդիրդ և զփափ
կասուն կեանս: քզի և նք ողք օրըօրեսյ աշխա
տուե հոյթհայթեն զդարման կենաց, ունին միշտ
՚ի սեղանի իւրեանց հաց, միս, գարեջուր, զոր
պիռ կոչեն, և օղի առատանդս հանել ՚ի շաքարէ:

իսկ այլք՝ ոչ միտյն մեծատունք, այլև որք մեջասահման են ընդլիւք՝ ըմպեն դինի սպանիոյ և գաղթեց, և այլ պէսպէս ոգելից մեծագին ըմպելիս։ Ու դա աւսանել առ նմ մուրիկ աղքատս քչքշն և կիսամերկս, ող յայլ տեղիս։ զի որք ծննդեամբ կմ 'ի ձախող ինչ դիպուածոյ աղքատք իցեն, ող և որք և այրիք՝ 'ի հատարակաց գանձէ վայելանդս գար մանին, վայ ամքն բարեզդեստ ըլջին։ Հիւրընկալունին կարի 'ի յորդի է առ նմ։ ըունին զիւրս ոչ իբր օտարս, այլ իբր ընտանի բարեկամս առաւել տհամելով ը մեկնիլ նց, ք ը գալ և իշեանիլ առ նմ։ Հարկապտհանջուկք կմ առուրք չափազանցք ոչ նեղեն զնո և ոչ վրդումն զիսաղաղական կեանս նց, և վայ այսպիսի հանդիստ և անխոռով կենաց առաւել առնեն և բազմանան անդյաջորդական սերըն գեամբ, ք յայլ նամ տեղիս։ Կորալուր օրէնք իմն ասի լինիլ 'ի նշնդի աստ, որ զյափշտակուն տղնկան ը այլոց յանցանաց արգելու ը ծանր պատճովք։ բայց միանգին գնէ այնպիսի իմն պայման, որով բանայ ձննղրհ անպատիժ գործելոց զայն եղեան։ Քանդի երիտասարդ ոք հարել 'ի սէր աղջկան, և ծնողք նր ոչ կամիցին տալ զնա նմ, եթէ փախուսցէ զնա 'ի տանէ ծնողացն հեծել յերիսլար երկոցուն 'ի միասին՝ աղջիկն յառաջոյ ինքն յետկուսէ, և կացել առաջի գատառըրական տոենի, յայտնեսցէ աղջիկն թէ սիրականն իւր յափշտակել է զինքն, երիտասարդն արձակի անպատիժ, և կարէ օրինօք առ նուլ զնա յիւր կնուի։

Սկիզբն բնակուն գաղթականին անգվացւոց յայս նահանգ, եղեւ դայս օրինակ, գուլիելուս բենեան օրդի ծովակալ իշխանի միում անգվացւոյ ընկալել զաղանդ քունաքերեանց, ոչ ևս կարէր խաղաղութ մնալ յանգվիս։ կմ վարել զպաշտոն ինչ քղքական, քզի այն տղանդ գարշելի էր անգվիացւոց։ Վայ խորհեցաւ փոխադրիլ յամերիկայ։ և զի հոյր նր տունեալ էր 'ի փոխ երևելի գումար դրամոց տրուե անգվիոյ 'ի ժմլի հասարակաց ինչ հարկաւորուն, սա ինգրեաց փիսկ այնց տալ նմ զգաւառ մի յան բընակ վայրաց անտի հիւսիսային ամերիկոյ։ և ըն կալաւ հանգիստական մուրհակաւ արտենի մշտնջե նարար զայն մասն երկրի, որ 'ի տէլավարէ գետոյն ձգի ը արևմաւտս մինչև 'ի լերինս։ եղեալ 'ի մոխ բնակեցւցանել անդ զաղանգակիցս զբունաքեր եանս։ Եւ թէպէտ ամենեքին օրք էին 'ի նոյն աղան-

աղանդոյ՝ ինդրէին երթալ ը նմ, բայց նա չէտե
յանձն . կմ թէ ոչ կարաց զամենեսին տանիլ,
այլ զերկու հաղարս և եթ առել ը իւր, 'ի 1681 ել
յանդղեոյ . և յաջողութ հասեալ յամերիկայ 'ի գա-
ւառ իւր, չհամարեցաւ բաւական զիրաւունս տրուե
ընկալել յանդղեոյ առ 'ի օրինօք ժառանգել զայն եր-
կիր. քանզի քաջ գիտէր, թէ անդղեա ըունի ինչ տրուե
'ի վր նր . վայ կամեցել ը շաւիղ արդարուե գնալ,
զի եր բնութ արդարակորով և խաղաղասէր, ետ-
գինս վայրենի ամերիկացւոց բուն բնակչաց երկրին .
զի ը ամ իրաւանց՝ նք էին տեարք նր իրը և
առաջին ստացողք . և ստացաւ զերկիրն, 'ի վր ար-
դարուե հիմնել զտրուե իւր . որ առաւել հաստա-
տուն է և անվատանգ ք զբունուին . յորոյ վր հիմնե-
ցան գրեթէ այլ ամ բնակուիք գաղթականաց եւրո-
պացւոց յամերիկայ . և այնուհետեւ շրջակայ ամերի-
կացիք անքակ սիրով կապեցան ը նո . զոր և միշտ
պահեցին . որով և այս նորատունկ գաղթական 'ի
սուզ Ֆմիփ այնցափ աճեցաւ, մինչեւ զարմանալ ամ
աղանց : Եւ չեն ինչ զարմանիք . զի ամ իրօք 'ի խորին
խաղաղուե վայելէին, ըունելով ուստեք պազմ . զի
և կառավարուի նց քաղցր եր և խաղաղական . որ
գրեթէ միաողետական եր . զի տոհմն բենեան իրը
օրինաւոր ժոնդ երկրին տիրէր նմ . բայց ը իրաց
ինչ կախել զգերագոյն տրուե անդղեոյ . սակայն
միշտ եկաց մնաց ազատ յաբրունի հարկաց և 'ի կա-
պալաց մինչեւ 'ի վերջին պազմ . յորում բզմ դժուա-
րութ ստացաւ 'ի նմանէ անգլիա օգնուե գրամովք .
և զօրօք 'ի պաշտպանուի սահմանաց նահանգաց
ոյսոցիկ . սակայն առյապայ վա տրոց և հարկաց
եղեւ և սա մի յառաջնոց անտի որք թօթափեցին
զլուծ անդղեոյ, և եղեն ինքնատեարք . և այնուհետեւ
որ կառավարուի ևս փոխեցաւ 'ի ռամկապետուե .

ոնզ և այլոց նահանգաց :

Այս նահանգ չունի մասնաւոր ինչ կրօն հորկց
օրինօք ընկալել և հաստատել . այլ թողել 'ի խիզճ
մտաց ամենեցուն, հաւատալ՝ զոր ուղիղ և ճշմարիտ
համարի . վայ դտանին անդ ուղղափառք, լուտերա-
կանք, կալվնականք, և այլ պէտպէս աղանդաւորք .
որք միազս ունին իրաւունս 'ի քաղաքական կառա-
վարուե . քանզի շատ է առ այն լինել քրիստոնեայ .
հրէայք ևս գտանին անդ և են արտաքոյ իրաւանց,
և ատելի ամցն . բայց ոչինչ հալածանս կրեն . և
թէպէտ այսցափ աղանդք են 'ի սմին նահանգի,

սակայն մեծ մասն բնակչոց նր ունին զաղանդ քունաքերեանց . որք են արք պարզամիտք տգէտք և խաղաղառէրք : Գատանին անդ և այլ մասնաւոր հերետիկուք տումբլերեան անունելք , որք առաւ և պարզամիտ են , և տգէտ և հեղաբարոյք քան զքունաքերեանս . սք սակաւաւոր են . և ամքն 'ի մի քղք կմ 'ի գեօլ հաւաքել բնակին յանշեն անապատի . զատուցելյայլոց ազդաց և 'ի ժողովրդոց . և 'ի քղքի անդ՝ արք և կանայք 'ի զանազան թաղս բնակին մեկուսի 'ի ժիմեանց . և ոչ երբէք տեսանեն զմիմեանս , բայց միայն 'ի տաճարս . ուր ժողովին միայն սակս հսրկց իրողունց . զժմկ իւրեանց ծախեն յաշխատանս , յազօթս , և 'ի քուն . երկու անդամ 'ի ցերեկի , և նոյնջափ 'ի գիշերի՝ պարտապան են կանխելյազօթս . ամքն ըսքունաքերեանց ունին իշխանունց քարոզելոյ ժողովրդեան , յորժամ զգան յանձինս ազդումն ինչ ընկալել . և բանք նց ոսվորաբար են 'ի վր խոնարհուե , հեղուե , անյիշաշարուե , ժուժիկալուե , և այլոց առաքինունց : Բզմ զգուշունք սպահեն զօր շարաթու հրաժարել յամ մարմնուոր գործոց առաւել քան զհրէայս . ըստնին զդժոխս և զարքայուն . բայց ոչ զյաւիտենականուն պատճոց դատապարանելոց . նոյնզ և զսկզբնական մեզս ոչ ընդունին . զոր և լսել անդամ զարհուրին իրը 'ի հայհոյուե ըդէմ տնատահման ողորմուն ոյ . և զի միանդամայն ասացից , զնամմասունս հաւատոյ , որք ցուցանեն զարդարուն նայ՝ բացէ 'ի բաց հերքեն , իրը թշնամանադիրս այ , և աղմկիցս ներփին խողացուե իւրեանց . քզի երեկի թէ ոք զարդարուն ոչ համարին բարի և տռափինուն . վայ և անարժան այ . որով զած կիսամամնեայ իմն համարին , յո միայն ողորմած և բարերար , այլ ոչ նոյնզ և արդար , որ հատուցանե ըստ իւրաքանչեւր գործոց : Ոչ տան զմիրտուն մանկանց , այլ միայն 'ի ըափ հասելոց . և ոչ իսկ համարին զայն պարզապն հարկաւոր առփրկուն . քզի կարծեն թէ հոգիք քրիստոնէից 'ի հանդերձել ոչի աշխատին 'ի գարձուցանել զհոգիս այնոցիկ , որք յանհաւատուե մեռան . ոչ համարին օրինաւոր դատախազել բնաւ ըստմեք , կմ ցասնուու վս զինչ և իցէ պտնափ . վայ եթէ ոք կողըպաէ զնոյ յընչեց , կմ հարստահարէ և խարէ , կմ չարչարէ , բնաւ ոչ տրանջեն . և ոչ իսկ նշան ինչ ցասման ցուցանեն . այլ ամի հեղութ և խաղաղական կումօք տանին . զի անդորրուն սրտի իրը վերջին երջան կուէ

կուն համարել է առ նա . զոր ոչինչ իւկը կամին
վրդովել :

Օգեստ նց է երկայն պատմուման սպիտակ . 'ի
ձմեռան ասունեղէն , իսկ յամառան 'ի կտաւոյ . և
շապիկ խոշորանիւթ . և զանկապան . և կնդուղ 'ի
դլուխս . ահա այս են ամ հանդերձք և զարդք նց :
Իսկ կերակուր նց են լոկ բանջարք , և արմաթք և
պառուղք . այլ ոչմիս . ոչ իբր թէ արդելել համարին
զայն ածային պատուիրանաւ , այլ զի ասեն թէ միսն
ոչ է համաքնական կերակուր մարդոյ , այլ շաղլակեր
գաղանաց : Ոչ ամուսնանան ամենեքեան , այլ սմանիք
միայն . և որ ամուսնանայ՝ մեկնի 'ի խմբէ այլոց
հանդերձ կնաւն . և շինէ իւր տուն առանձինն
յանապատ վայրի . որում է հարկուն նց ձեռնոտու
լինի 'ի հիմնել իւր նոր տուն . ուր այր և կին 'ի
միասին բնակին մինչև 'ի մահ և դործեն . բայց
զուաւակս նց առնու հարկունին , և մնուցանէ 'ի
քղթի՝ 'ի հօրեց գանձէ . իսկ ինչք ամուսնացելոց
'ի մեռանիլ իւրեանց՝ գնան 'ի գանձանդր հասարա-
կուն : Արդ թէպէտ յայսափ բազմազան աղանդս
բաժանել են բնակիչք նահանգիս , սակայն 'ի վը¹
այսր ամի 'ի խորին խաղաղուն վայելեն . քզի սկրու-
դնան ը միմեանս . և ոչոք դատավետէ զընկեր իւր
'ի պատճուս հաւատոյ :

Այս նահանգ բաժանի յութն կոմմունս , որք 'ի
գլխաւոր տեղեաց , և 'ի տեարց իւրեանց՝ ունին
զանուն . և են այսոքիկ . ֆիւարէլքիտ . Ջէտէ .
(Քէստէր) . Լէնտէստէր . (Լանտաստէր) . Եօրտ . Պէրտ .
(Պէտէր) . Պէստ . (Պաստ) . Եօրնէնէնտէն . (Եօրնամբ-
ուն) . Ըստանօւն . զօրոց զգլխաւոր տեղիս յաջե-
կայդ նշանակեսցուք : Յորս յաւելցուք զկնի և
զդաւառն դուսքարորացւոց . և զերիս կոմմունս
տէլավարայ . որք կացուցանեն զառանձին իմն նա-
հանգ , բայց 'ի ներքոյ բէնսիլվանիոյ իբրև դաւառ
նորա :

Ֆիւարէլքիտ . անդղ՝ ֆայլքէլքիտ : Մայրաքղք հա-
մօրէն բէնսիլվանիոյ . առանց պարսպաց որպիսի
են և այլ ամ քաղաքք ամերիկոյ . աթոռ ըհանուր
ժողովոյն ժդ նահանգաց միացելոց . գեղեցիկ բա-
րելէն բազմանարդ և բազմավաճառ . կառուցել 'ի
լեզու ինչ հողոյ քանի ինչ մզնաւ հեռի 'ի տեղուոցէ .
ուր շուիլքիլլ վտակ խառնի 'ի տէլըուէր (տէլու-
վար) , որ ը մէջ քղթին անցանէ : Ունի առւնս իբր
3000 . և բնտիկչու աւելի ք 20000 . փողոցք նորա

ուղիղ են, մաքուր և վայելուչ. ունելով յերկուց
կողմանց մայթո. ֆ դալարը մաս սալայատակս վա
հետի դնացողաց. և 'ի միջի ձնաղի կառաց. 'ի գիշերա
լուսաւորին զամպարգք. և սպահանին 'ի գիշերա
պահ սպահակաց. որբ խմբովին շրջին 'ի նո առ 'ի
ապահովութիւնագրին: Զանազան տաճարք, և ժողո
վատեղիք են 'ի նմ, թ զանազան աղանդաւորաց.
զի հետևօղք անդղիական աղանդոյ ունին անդ երկու
տաճարս. քուաքերեանք երկու ժողովատեղիս.
երիցականք նոյնպէն երկու ժողովրդանոցս. երկնա
կնունք՝ մի. նոյնպէն և լուտերականք, և կալվինա
կանք անդղիացիք ունին սեփական ժողովատեղիս.
ող և շվետք. և հոլանտացի կալվինականք. այլ և
մորավիացիք. նաև սակաւաթիւ ուղղափառք ունին
անդ փոքրիկ եկեղեցի, կմ մատուռն վայելուչ
բայց շնունածք այնց տաճարաց փոքր են և անշուք:
Սակայն գտանին 'ի քաղաքի աստ և մեծաշեն և
վայելուչ շնունածք. յորս երեւելի են ապարանք
քաղաքին մեծ և երեւելի. ուր գումարի ը հանուր
ժողովն ժդնահանդացս. ող և գտւառտկան ժողով
այսր նահանդի. են 'ի նմ բզմ սենեակք մեծամեծք
և սրահք. և երկու գրատունք. մին է այսր նահան
դին, իսկ երկրորդն ձեմարանին հաստելոյ իբր 35
ամոք յնջ 'ի 60 ընկերաց. 'ի սին գրատան որ հիմ
նեցաւ 'ի 1742. բաց 'ի գրեանց՝ գտանին և զանա
զան նորանշան իրք. կը մորթ օձի 12 ուանասափ, զոր
սպան սուրբինամ 'ի կույանա. բզմ զգեստ 'ի մորթոյ
կենդանեաց սպանելոց 'ի հիւսիսային հնդկաց: Յա
պարանսն անդ գոյ միւս ևս գրատուն. յորտւմ են
թշմ ընաիր ընտիր գրեանք. բայց մեծ մասն են 'ի
բարբառս օտարս, անծանօթս բնակչոց քաղաքին.
ունի և գեղեցիկ անկելանոց վայ յիմարաց՝ և վա
հիւսնդաց. և գոյրոց մի մեծ. և մարտկոց վտուել
հրազնուք 'ի հարաւային ծագ քաղաքին, մօտ 'ի
գետ անդր: Տունք քաղաքիս թանկագին են. մինչե
տեղի ինչ 100 ոտք յերկայն. և 30 'ի լայն՝ թէ իցէ
'ի յարմար դիրս, վաճառի մինչեւ 2000 ուկւոյ և
Ունի և տպարան, և գործարանս զանազան ար
հետաւորաց. և կրպակս վաճառականաց. և վա
ճառականս թշմն. քանզի ծաղկել է յոյժ անդ վա
ճառականունին սակս քաջայարմար գրից նը. ուր
նաւք մեծամեծք ը գետն տէլուէր կարեն մասնել
'ի մէջ քաղաքին, և հասանիլ մինչեւ 'ի դրունս վա
ճառականաց անվտանգ յամ ժմի. բաց 'ի ժմի
ձմեռ.

ՃՐԿԱՆԱԴՐԻ ստուգից, որ տեսէ լը վեց, կմ՞ եօթն եօթնեակո . 'ի վլր այնը գետոյ՝ որոյ լայնութին հանդէպ քղբին առաւել է ք զմի մըն, ունի գործարանն նաւուց . ուր ամի ամի ստվրաբար շնթեն 25 նաւու՝ վոյ միշտ լի են նաւք 'ի գետ սնդր նր : 'ի 1777 նաւահանդէսն անդղիացոց, ունելով առաջնորդ զնով ստվրապետ անգղիացի՝ մտեալ 'ի ստրոյրն քէսարէաք, եհաս մինչև 'ի գետակն ելքահետ ելել զօրացն 'ի ցամաք, մտին 'ի քէնսիլվանիա, և առին զժիլատէլֆիա քաղաք անպարխութ . այլ յետոյ ստիգման մեկնիլ անաթի :

ՃՇՇՇՆ ԴԱՅԱՆ . (ՃՇՇՇՆ ԴԱՅԱՆ) : Քաղաք փոքր 'ի հիւսիսային արևմտեան կողմն ֆիլատէլֆեայ իբր 2 մղոնաւ հեռի 'ի նմե . ունի տունս իբր 500 . և բնակիչս բղմս առ համեմատուե մեծուե քաղաքին . որք գործեն զանազան ձեռակերտու 'ի վզոյ . և մենդ պատուական սոնատպանս . և այլ պէտէս գործած :

ՏԵՇԻ . (ՏԵՇԻ) : Քաղաք փոքր 'ի սմին կոմսուե՝ 'ի հարաւատկողմն ֆիլատէլֆեայ . առ ճնպհաւն, որ համե 'ի նելքասդլէ . ունի տունս իբրեւ 400 . և է բաղմամարդ ը իւրում համեմատուե, և բաղմագանա :

ՉԵՆԴՐ . (ՉԵՆԴՐ) : Գլխաւոր գիւղաքաղաք համանուն կոմսուե՝ 'ի հարաւակողմն տըրհեայ 'ի նոյն ճնպհի՝ մատ 'ի գետան տէլուեր :

ԳՈՒՆՑԵՐ : Գիւող 'ի սմին կոմսուե առ երի աահմանաց բէնսիլվանիոյ, և երից կամսուեց տէլուերայ :

ՆԵՐ ԴԱՅԱՆ . (ՆԵՐ ԴԱՅԱՆ) : Գիւղաքաղաք փոքր 'ի սմին կոմսուե մատ առ տէլոււեր գետան . ունի տունս իբր 30 . 40 և եթ :

ՊԵՇՄԵՐ . Գիւղաքաղաք բարեշէն սորին կոմսուե առ նովին գետով հանդէպ սուրատէնսդովն քաղաքի . որ է 'ի կոմսուեն ճրսի, կմ երսի . ունի տունս իբր 150 . և ազորիս բջմա :

ԼՀՆԻԵՆԴՐ . (ԼՀՆԻԵՆԴՐ) : Գլխաւոր քաղաք համանուն կոմսուե առ բոնեօդոկայ գետով յարեմըտեան կողմն նր . ունի տունս իբր 500 . և է մի 'ի լաւագոյն և ծաղկել քաղաքացն բէնսիլվանիոյ, զինի ֆիլատէլֆեայ քաղաքին :

ՌԵԿԵՐԻՆԻ . (ՌԵԿԵՐԻՆԻ) : Քաղաքագիւղ փոքր 'ի սմին կոմսուե առ շուիլքիլ գետով առ սահմանօք կոմսուե պըրբսայ . գիրք նր սուրատէական է, և ապահով 'ի թշնամեաց . վոյ լըհանուր ժողովն ժկ նահանդ:

Հանդաց աստ փոխադրեաց զաթոռ իւր, յորմ զօրք
անդիացւոց տիրեցին Փիլատէլֆեայ:

Ի՞՞գըտ . (Էսպարտէ): Քաղաքագիւղ տումբլեր-
եան ազանդաւորաց. որք մեկուսացելյայրաց ժո-
ղվադոց բնակին ՚իքաղաքի աստ առանձինն, իբր հօ-
մզնաւ հեռի ՚ի Փիլատէլֆեայ:

Ի՞՞ցի . (Եօրէ): Գլխաւոր գիւղաքաղաք համանուն
կոմսուն յարեւելեան կողմն կոտորաս գետոյն. իբր
16. կմ 18 մզնաւ հեռի ՚ի լենքեսդըրայ. ունի
տունս իբր 200. բայց չէ այնչափ ինչ բազմամարդ:
Ծիրակը: (Ծիրենապուրի): Է բնակել տեղի ՚ի
սմին կոմսութե ՚ի մէջ զուարձալի և արգաւանդ-
հովոի:

Լուգը . և Լիււտը . (Լիւտէտօն): Են երկու
ամրոցք սահմանագլուխիք այսր նահանգի, ըդէմ
արշաւանաց տրեմտեան վայրենի ամերիկացւոց:
Քարլայլ . (Քարլինչէ): Բնակել տեղի ՚ի կոմսուն
եօրքայ ՚ի հարաւակողմն քոնէտոկվանէդ գետոյն:
Ամրոց Հալլիքատայ. Հառնտէր. Վիլլամ. Հէնրի. և
Շահնիքին: Են գլխաւոր տեղիք կոմսուն պըքքայ:
Ռայդս . (Ռայդիթու). և Նորթ Նայ: Են գլխաւոր
տեղիք կոմսուն պըքքայ: Տէրը . (Տորիամ). փոքր
գեօղ՝ ՚ի նմին կոմսուն:

Բնելլէնէմ. անդզ' (Պէտէն): Գեօղ՝ ՚ի կոմսուն նօրին-
հէմդընայ առ արեւմտեան վտակաւ տուպքվէհան
գետոյն ՚ի հիւսիսային կողմն նը:

Ի՞՞ւլը . (Եսուտօն). Նախարէն. անդզ' (Նելլէն):
Տէնպուրէ. Ալեն. Նորթոն ևն: Են գեօղք
և ամրոցք, և բնակել տեղիք ՚ի կոմսուն նօրին-
հէմդընայ:

Պլատէօն . Պլուանտ դուն . Ուայխտոն . Եւագանն . Ու-
հանէդ . Վինդին: Են գլխաւոր շենք և գեօղք կոմ-
սուն շտանօհսայ:

Ալբրետ իրանլիւլը . Վանէստիս: Են երկու ամրոցք՝
՚ի սահմանս շաւանեցւոց. առաջինն առ հիւսիսային
սահմանաք երկրի նց. իսկ երկրորդն ըստ մէջ երկուց
վտակաց սուպքվէհան գետոյն:

Շատանէցի: Են ժղվադք խաղաղատէլքը ըստ կառա-
վարութ բէնսիլվանիոյ. որոց բնակունին ձգի ՚ի
հիւսիսակողմն կոմսուն եօրքայ ըստ մէջ արեւմտեան
և արեւելեան վտակաց սուպքվէհան գետոյն. ուր են
և այլ գետք մեծամեծք, յորս երևելի է իւնիադա
գետն, առ որով ՚ի հիւսիսակողմն ձգել տարածին
Լերինք մեծամեծք:

Պատմականութեաբորբացւոց :

Այս դւռ է 'ի հիւսիսային կողմն բէնսիլվանիոյ ։
Աև ձգել տարածի աստի և անտի սուսքվէհան
գետոյն 'ի կողմն ականց նը . ունի իւր սահման
յարեելից՝ զնոր եօրք . յորմէ բաժանի 'ի ձեռն լե-
րանց անսահման անուանելոց . 'ի հիւսիսոյ՝ զշաւառն
ոնոնտակացւոց . իսկ յարեմտից՝ և 'ի հարաւոյ՝
զգաւտուն շաւառնեցւոց : Բնակիչք նը դաշնադիր են
և հպատակ տրուե բէնսիլվանիոյ . ուստի և իբր
մասն նորին համարելք : Իսկ գլխաւոր տեղիք նք
են այսոքիկ :

Պատմաբորբացւոց : Ամրոց և շեն գլխաւոր այսր դաւառ ի
տու սուսքվէհան գետով 'ի ստորին կողմն նը :
Պահանանդապօն . Անեմէ . Ազգմէն . Օստամէն . Պատմ-
տօսօմիւ . Շահորամ . Ուշմի . Պահիտօն ևն : Են գեօղք,
և բնակուելք դուսքարորացւոց առ սուսքվէհան
գետով :

Ա,ահանգ գ. Արեք կոմսուիք. Տէլլու.

Երայ . (Տէլլալարայ) :

Անուանին սոքա Կեւ գէառ . (Ա,հանգարէն) . Քինչ ,
Աւ Սըսէտս . (Սասսուէտս) , կոչեցելք և ստորին
կոմսուիք , որք կացուցանեն նահանգ մի առանձինն .
ունելով իւր սահման յարեմտից՝ զմէյրիլընա . յորմէ
բաժանի ուղիղ գծիւ . որ յարեելից ելք գետոյն
քերելով առ չարլս դառնաւ . անցանէ մինչև յա-
կունս վիգունու գետոյն . և անտի այլով ուղիղ
գծիւ գնայ մինչև 'ի սարն սուտ . կմ ցֆէրմիք կողի .
որով 'ի հարաւոյ բաժանի 'ի մէյրիլընտայ : Բավան
գակ տարածուեն նը օդտափութ , է նուշազ քան
զ 1000 մզսն քառակուսի : Բնակիչք նը իբրև 25
հկր , ուզե են 'ի հաշիւ բնակչաց բէնսիլվանիոյ , զոր
եդաք 'ի վերոյ : Գլխաւոր գետ նը է Տէլլանէր , որ
հոսի ը արեելեան կողմն նը . և է մի 'ի մեծամէծ
գետոյն ամերիկոյ . լայնուեն թէրամնոյ նը առ որով
'ի միոյ կողմանէ է սարն մայեայ , իսկ 'ի միւսոյ սարն
հելորէնայ , է իբրև 10 մզրն . որ 'ի մերձենաւ 'ի

ծովն և ևս շարձակի . և ձեւացուցանէ պարոյր Շարձակյոյժ , կոչեցել պարոյր Տէլըուէրայ . բայց աստի և անտի գտանին 'ի նմ՝ մուազակոյտ խաղխաղք , որք վտանգեն զնաւս : Եթեկիրնը առ հնրկ գաշտային է . չիք 'ի նմ՝ բնաւ ոչ լեառն , և ոչ խեկ բլուր . այլ է տափարակ գաշտ միասստանի արդուանդ և քաջ մշակել . խեկ բերք նը նայն են , որ ինչ բենախլ վանիոյ , և մէրիլընտայ՝ իւրոց սահմանակից նահան գաց : Յառաջադոյն էր սա ը տրուք հոլանացւոց , այլ 'ի գաշնադրուեն պրէտայի՝ տունաւ անդղիացւոց . առա վաճառեցաւ գբսին եօրքայ . որ էր խշան և բէնսիլվանիոյ . և եղ 'ի նմ՝ եղանակ կառավարուե ամ իրօք նման կառավարուեն բէնսիլվանիոյ : Սա կայն երեք կոմսուելքն միշտ կացուցին զառանձին իմն իշխանուեն . և թէպիտ նոյն բգեշիւ իշխէր երկու ցունց , բայց իւրաքանչիւրն ունէր իւր սեփական գւռկան ժողով , ատեան գատաստանի , և ատե նակալս . խեկ այժմ յետ բաժանելց և այսց երից կոմսուեց յանգիսիոյ , ը իրաց ինչ փոփոխեցաւ կառավարուեն նց . զի մերժեցին զբգեշին , և փիսկ նը կացուցին զգաւառական ժողով իւրեանց , որոյ ժողովականք ընտրին 'ի ժողովզենէ . վոյ այժմ կառավարուեն նց է ռամկապետական , ոող և այլոց նահանգաց . խեկ գլխաւոր տեղիք երից կոմսուեց են հետագա քդ :

ՆԵՐԴԱՆԼ. ('Եկէսաստէ') : Գլխաւոր քազաք համօրէն գաւառին առ տէլըուէր գետով , փոքր և անշուք . ունի տունս իբր 100 և եթ . և բնակիչն համեմատ շափոյ նը . չիք 'ի նմ՝ երեւելի ինչ շինուած . զի և ե կեղեցին անդղիացւոց , և ժողովատեղիք երիցական և քունաքերեան հերետիկոսաց՝ փոքր են և աղքա տակերտ . ոող և ապարանք քաղաքին , ուր գումարի գաւառական ժողովն . և վաճառանցն . զսրս և յիշատակել խեկ անդամ չէ արժան :

ՈՒՅԼԲՆԻԴԸՆ. ('Վէլբնիդծն') . ՍԷ գէ-րգ . անդզ' (Սէ ճօրմ . 'Ե՛ՌԴԱՆԼ ԴԱՌ-Ն . ('ԵՌԴԱՆԼ ԴԱՌ-Ն) : Են գեօլք 'ի կոմսուեն նիւքեասլոյ :

Տօ՛ՀԸ. ('Տօ՛ՀԸ') : Քաղաքագեօլ գլխաւոր կոմսուեն քէնդայ առ եօննէս գետով :

ԱՌԱՊԵՒԻ. ('Առվապուրի') : Գեօլ 'ի սմին կոմսուեն : Բացյերկուց աստի չիք այլ ինչ նշանաւոր գեօլ 'ի սմին կոմսուեն . զի բնակիչք նը ը մէծի մասին ցրիւ քնակին յագարակս . իւրաքանչիւրոք 'ի կալուածս իւր :

Լիւհու . (Լիւհո) : Գլխաւոր գիւղաքաղաք կոմսութեան սըսէքսայ կառուցել առ պարուբիւ տէլքուէքսայ . յարևմտեան կողմն բերանոյ պրօատ գետոյն՝ մօտ 'ի սարն հիլոբէն :

Կահանդ Է . Շըրսի . (Լըրսէյ) :

Լ ըարձակ ցամաք կղզի շրջապատել ը մասին՝ ի ծովէ . և ը այլոց մասանց 'ի տէլքուէր և 'ի հուտսոն գետոց . սահմանք նր չմ ևս են որոշեալ ճշդիւ . 'ի հարաւակողմն սկսանի 'ի սարէն մայի . որ է առ սպարուբիւ տէլքուէքսայ . բայց 'ի վը հիւսիսային սահմանաց՝ դեռ վէճ է 'ի մէջ բնակչաց նր , և նոր եօրքայ . ստկայն լայնաքար խօսելով՝ ունի իւր սահման յարեւմտից՝ զրէնսիլվանիա . 'ի հարաւոյ , և մասամբ իմն յարեւելից՝ զծովն , և մասամբ իմն զնոր եօրք . իսկ 'ի հիւսիսոյ՝ նոյն զնոր եօրք . երկայնուեն նր 'ի բաց թողիւ զայն մասն յորոց վը է ինդիր 'ի մէջ բնակչաց երկուց նահանգաց՝ է իրը 180 մղոն ուղիղ գծիւ . իսկ լայնուին 60 և եթ . և բոլոր ապրանուին իբր 5000 քառակուսի մղոն աշխարհադրական : Ծիւ բնակչաց նր ը վեր ջին հաշունին որ արարաւ 'ի 1766 հրամանաւ ըհանուր ժողովոյն , եհաս ց 130000 . բայց այժմ առաւել են . և օրշօրէ առաւելուն . մւնդ զկնի բաժանման նր 'ի տրուէն անդզիացւոց :

Գլխաւոր գետք նր են Տելքեր . և Հոռորոն , որը հոսին աստի և անտի առ սահմանօք նր . բաց 'ի սոցանէ ունի և 'ի ներքին կողմանս իւր զանազան գետո մեծամեծս և մանունս . յորս երեւելի են Մասրիտիս . Բարիշոն . յորում գատանի տահանք կմ քարավաղ երեւելի 'ի 15 . կմ 16 ունացափ բարձ ուռէ հոսել . իբր 9 մղոնաւ 'ի վերոյ ք զգրաւնսվիք գիւղաքլք : Բառայիդ . սա ևս ունի երկու քարավազս . յորոց մինն , որ իբր 20 մղոնաւ հեռի է 'ի նեվարք քարաքէ 'ի հիւսիսակողմն , նշանաւոր է 'ի քարավալտզս ամերիկոյ . զի ջուրն ելեւ 'ի իսոր ան գընդոց կմ 'ի յորձանուտէ , որ ուրեք ուրեք լայնանաց 2 ունացափ , և ուրեք ուրեք 12 ունացափ , անհնարին բոնուրք միազանդուած իջանէ 'ի 70 ունացափ բարձրուէ . և ցնցուղք նր գործեն կրկնին ծխածանս

դեղեցիկս . և զմայլեցուցիս . պատմի թէ 'ի դեանա
շարժուէ ինչ 'ի գոյ ել այս յորձանուտ : Երևելի է
և ԱՀ ապա դետ նր :

Բարեխասունուէ օգոյ նր գրեթէ նոյնպս է , ող
բէնսիլվանիոյ . իսկ երկիրն պարարտ և բարեբեր .
ունի ցորեան , և այլ արմոիս առատ . և տռաւել
ք զամ մարացորեն . և զնկն պտուզս և բանջարս .
վուշ և կանեփ . արօտս խոտաւեատ . և անասունս
բզմ ընտանիս և վայրենիս . այլեւ բովս երկաթոյ :
Սակայն 'ի վը այսր ամի աղքատ է 'ի դրամոց . քով
վաճառականուի նր 'ի սկզբանէ անտի հիմնարկուէ
ոչ երբէք ծաղկեցաւ . և ոչ ձգեցաւ արտաքոյ ամե-
րիկոյ . բայց այժմ զինի զերծանելոյ նր 'ի լծոյ
անգղիացւոց , հնար է նմ ըարձակել զառևտրուէ
իւր և ը օտար ազդս . զի և գիրք տեղւոյ նր քա-
ջայարմար է . այն զի՝ ունի զանազան պատուական
և անքոյթ նաւահանգիստ , և փոյտ բզմ 'ի պէտա
շնուռ նաւուց . և զայլ նմ , որ ինչ հարկաւոր է
առ հանգերձանս նաւուց :

Բնակիչք նր իբր ՚ի բնմա են բարերարոյք հաւա-
տարիմք առատասիրտք հիւրասէրք առաւել ևս ք
զուահմանակիցս իւրեանց զբէնսիլվանիացիս . ցրին
բնակին իւրաքանչիւր յագարակի իւրում բացատ 'ի
միմեանց , և ժրաջան են 'ի մշակուի երկրի իւրեանց-
տակայն և այնպէս ը այժմու հանգամանաց , չէ
մարթ ասել զի՞նդուզ զայս ծաղկել և բարդաւաճ-
թէովէտ և մարդաշատ իցէ և բարւոք մշակել . վա-
ղի ող 'ի վերոյ նշնկեցաք , վաճառականուի նր չէ
դեռ ևս տարածել արտաքոյ ամերիկոյ , վայ չէ այն-
շափ ինչ ֆարթամ . և միշտ կարօտ իւրոց սահմանակ-
ցաց . բայց առատուի արգասեաց իւրօց ը մասին
լցուցանէ զայն կարօտուի : 'Ի վերջին պտղմի յոր-
ժամ անջաւաեցաւ յանդղեոյ , ոչ սակաւ ծախս արար
ողահելով յոտին գունդ մի հեր զի՞նուորաց սպառա-
զինելոց ը բոլոր ժմին պտղմին , ը առաջնորդուը
շիւլերայ քոջ սպարապետի . որ եղեւ պարծանք
իւրոց հայրենեաց վայ հայրենասէր նախանձուն՝ և
իմաստուն կառավարուել յընթացս բոլոր պտղմին :
Արհեստք և դպրուիք չես են ծաղկել ող արժան
է 'ի սմին նէնգի . և թէպէտ դաշնի անդ հսրկց
ուսումնարան 'ի դաստիարակուի պատանեկաց , այլ
մինչեւ ցարդ ոչ երեցոյց երեւլի պտուղ ինչ , սա-
կայն հնար է թէ յետ այսորիկ ծաղկեսցի , ող և
արդէն սկսեալ է :

Առաջին հիմնադիրը բնակուել եւրոպացւոց յայս նահանգ եղեն շլէտք 'ի 1639. այլ չունելով ինչ օգնութեած իւրեանց 'ի պահել և յաճեցուցանել զայն նոր գաղթական, ոտխեցան ինքնակամանձնատուր լինել հոլանտացւոց որք միացուցին և զայս նահանգ ըստ նոր խելքիոյ : Իսկ դուքսն եօքայ իբրև էառ զտրուեն երկուց նահանգաց, բաժանեաց զնո՞ւ 'ի միմեանց . և զնոր ճրսի (երսէյ) ետ երկուց սիրելեաց իւրոց քարդերեթոյ, և պէրքէլայայ. սոքա առել զնահանգն, վաճառեցին ունաց վաճառականաց ըստ գնոյ մեծամեծ կալուածս . զորո նք դարձեալ մասն մասն արարել վաճառել ցին այլոց :

Առ արուբն յաջորդաց երկուց նախայիշատակեալ իւնանաց, բնակիչք նահանգիս առ փոքր փոքր անեցան . զի 'ի նախնի շլէտս և հոլանտացիս յաւելան քուաքերեանք . և սակաւ ոմանք յանդղիական եկեղեցւոյն . և բազմաթիւ երիցական հերետիկոսք . բայց անկարգ կառավարուեն երկրին ըստ հարուստ մի ժմկ նահանջ էարկ աճման այսր նորատունկ գաղթականին . զի 'ի սկիզբն այսր դարու՝ հազիւ 16 հազար բնակիչք գտանեեին 'ի համօրէն նահանգին : Իսկ 'ի 1702 յորժամ երկու նախասացել տոհմք արկին զնահանգս զայս ըստ գերագոյն արուբ անդղիացւոց՝ 'ի համօրէն 17 հազար բնակիչք գտանեեին 'ի համօրէն նահանգին : Իսկ 'ի 1766, թիւ համօրէն բնակչաց նր եհաս ց 130000. ուղ և 'ի վերոյ նշանակեցաք . որք և կացին մնացին ըստ գերագոյն անդղիոյ, մինչեւ ց 1776 . յորժամ տմի միաբանել ըստ այլոց նահանգաց, հանդիսական վճառվ բաժանեցան 'ի արուել նց : Եւ 'ի վերջին պաղմի զօրք անդղիացւոց, ըստ առաջնորդուբ հով սպարապետի, առել զնոր եօքք, մտին և 'ի սահմանս սորին նահանգի . ուր ըստ ամ մի ողջոյն ետուն մարտ պաղմի ըստ բնակչաց նր . մինչեւ 'ի 1777 հասել ուստինեկդընայ (վասհինկդոնի) քաջ սպարապետի ամերիկացւոց, եհան զնոս անաի . սակայն և յետ այնորիկ ոչ սակաւ վիշտս կրեաց 'ի զօրաց անդղիացւոց . որք 'ի նոր եօքայ սահմանադուեին 'ի սահմանս նր . բայց բնակիչք նր միշտ քաջութ վանեցին զնոս : Իսկ այժմ չունի ինչ երկիւզ 'ի զօրաց անտի անդղիացւոց . որք էին 'ի նոր եօքք . քանդի ասի թէ 'ի 1780 մեծ մասն նց էանց 'ի հարաւային

կողմն, յու 'ի սահմանս ձէորձիոյ . ուր էր մասն ինչ զօրաց նց 'ի սաւանահ քաղաքի . բայց երեխ, թէ դք կան անդէն առաւել 'ի պաշտպանութ կզգեաց անդլիացւոց՝ քան յուսով միւսանդամ 'ի ձեռս բերե-

լոյ զցամաքային նահանգս տմերիկոյ :

Խսկ կառավարութ սորին նահանգի յուջագոյն էր ը իրաց ինչ իրեւ միապետական . խսկ այժմ պարզ ռամկապետական : Ըստ մասին կրօնի, բնակիչք նր 'ի զանազան գենս բաժանել են, ոտք ասացաք վոր բնակչացն բէնսիլվանիոյ, բայց անդղիական եկեղեցին, որ գուն գործէ ը ամ տեղիս իւրոյ տրուեցաղանդ իւր ծաւալել և հաստատել, հաստատել էր յանդղիա զմիաբանութ իմն 'ի ծաւալումն աղանդոյ իւրոյ . յորոց յուջքան զբաժանումն նահանդիս 'ի տրութէ նց, առաքեաց վեց քարոզիչու և աստ 'ի քարոզել զաղանդ իւր :

Այս նահանգ յառաջ ք զամն 1702. էր բաժանել յերկու գաւառո . յոր յարեմուեան, և յարեելեան . այլ զկնի անկանելոյ ը տրուք անդղիոյ, անդրէն միացուցաւ . վոյ այժմ համօրէն նէնդն բաժանի 'ի ժա կոմսութիս, որոց գլխաւորքն են այսոքիկ . Պէ՛րէնէ րըն . (Պարլնէտօն) . Սէլէմ . (Սալէմ) . Քէմպալէնսութ . (Քուննաբէլլանփ) . Սար մայի . անդղ' Քէրէ օլ մէյ . Մէնէմբ . (Մանման) . Մէկալսէնս . Էսէնս . Պէրճըն . (Պէրճէն) . զորոց զլիսաւոր աեղիս յառաջիկայդ նշանակեսցուք :

Պէ՛րէնէ րըն . (Պարլնէտօն) : Քաղաք փոքր, ոյլ բարեշէն 'ի համանուն կոմսութ յսնդիման պրիխագըլ քղքի որ 'ի բէնսիլվանիա . ունի տունս իրեւ 200 . և բնակիչտ համեմատ շափոյ մեծութ նր . յառաջադոյն էր գլխաւոր քղք արեւմուեան ճըրսիայ . ոտք և այժմ է նիստ գաւառական ժողովոյն, 'ի միասին ը ամպոյ քղքին . զի միանդամ աստ գումարի . և միւսանդամ անդ : Առաջին հիմնարկութ նր եզե 'ի 1688 . ունի շնուռածս վայելուց յորս երեելի են ապարանք քաղաքին . ուր գումարի գաւառական ժողովին . և երկու կամուրջք 'ի վր գետոյն . յորոց մինն կոչի կամուրջ լոնտրայի . խսկ միւսն եօրքայ : Պէ՛րէնէ րըն . (Պարլնէտօն) : Քաղաք փոքր կառուցեալ առ Ճնողհաւ, որ 'ի ֆիլատէլֆիոյ հանէ յամոյ քաղաք . 'ի վր տէլըուէր գետոյն յարեելեան կողմն նր . ունի տունս իրը 100 . և երիս տաճարս . մի անդղիական եկեղեցւոյ . մի քուաքերերեանց . և միւս երիցականաց . և բնակարան մի մեծ 300 զինուօրաց :

Բարինս դառնեն . (Բարինչերով) : Գիւղաքաղաք փոքր . բարեշեն . ուր երիցական հերետիկուք ունին գորոց մեծ բաւական 70 ուսանողաց առ . 'ի բնակիլ անդ , որ և կօչի Կյանաս հալլ :

Բինիս դառնեն . (Բինիսով) : Աւան հանդէսլ առաջ նցն , անջրապէտ 'ի միջի ունելով զվարակ բարիդոն գետոյն . և երկոքին են 'ի ձնաղհին 'որ 'ի ֆիլատէլ ֆիոյ հանէ յամուոյ քաղաք :

Պըրտըն դառնեն . (Պըրտինուով) : Ալլէնս դառնեն : Են երկու աւանք 'ի կոմսուե պըրլինդընոյ : Իւնին ընըն ակտիրըն . (Ունիօն) . առ բարիդոնաւ . Չեյնան-երթը . (Բանձելաքին), և Օտոքըք : Են գեօլք յարեմտեանն ճըրսի :

Մառնի հօլի . (Մառնի օլլ) . և Լյուսօն . (Ալյոսի) : Աւանք առ անքուս գետով :

Սէլլ . (Սալլ) : Գլխաւոր քաղաք համանուն կոմսուե առ սէլհամ գետով յորմէ առնու զանուն , մօս 'ի տէլըուէր : Ունի իրը 120 ազգատոհմ . և վշ յարմարաւոր դրից նր և ծաղկել վաճառականուեն՝ և վո վայելուե շինուածոց՝ համարել է իրը զմ 'ի լաւագյն քաղաքաց տրեմտեան ճըրսիայ :

Ուդուէրի . (Վուդուէրի) : Գեօլ 'ի սմին կոմսուե առ վտակաւ , որ մօտ յայս տեղի խառնէ 'ի տէլըուէր : Սէայւըն . (Սէայւըն) . և Կյառըք . (Կյառէտէր) : Երկու աւանք 'ի սմին կոմսուե յարեւելեան եղերս տէլըուէր գետոյն հանդէպ ֆիլատէլ ֆիոյ քաղաքին և շրջակայ վիճակի նր :

Կրէնիլ . (Կրէնիլ) : Գլխաւոր գիւղաքաղաք կոմսուե քըմնպըրլընտայ , փոքր՝ այլ բարեշեն՝ առ քոհանցի գետակաւ , որ է իսր և նաւարկելի . և գործէ զնաւահանդիսոն պումպոյայ 'ի սկաբոյին տէլըուէր :

Ջերքէլս . (Ջայրքէլս) : Աւան 'ի սմին կոմսուե առ հարաւային եղերքը նախասացել գոհանցի գետոյն : Յայս երկու աւանն մօտաւորս միմեանց գտանին իրքե 100 ազգատոհմք կիմ գերդաստանք : Քօտուէլ . (Քօտուէլ) : Գլխաւոր տեղի փոքրիկ կոմսուեն , որ կոչի քօքս , յանուն հիմնադրի իւրոյ . և է 'ի կոմսուեն սարին մայեայ , յորում շիք բնաւ ոչ շեն , և ոչ գեօլ . զի մեծ մասն նր անապատ է , և բնակիսըն ցրիւ բնակին :

Տօնժեսդը : Բնակուե առ բերանուզ գետոյն մաւրի ախոսի . որ գործէ ըարձակ ծոց 'ի պարոյրն տէլըուէր , և է 'ի կոմսուե սարին մայեայ :

ՄՐԿՎԸՆ · (ՄՐԿՎԸՆԴՅՈՒՆ) : Գլխաւոր գիւղաքաղաք
կոմսուե մընմընթայ մօտ 'ի ծովն՝ յորում բնակին 100
գերդաստանք :

ՍԵՆԹԻԿԱՆ · (ՍԱՆԹԻԿԱՆ) : որ թարգմանի կարեւ աւազոց :
Ես սար կմ լեզու հողոյ յայս անուն տնունանեալ
սակս ձեռյն . զի բերէ զնմանուն կարթի . 'ի միոց
կողմանէ ունի 'ի պաշտպանուն իւր մեծ խողիսաղ
աւազակոյտ, և 'ի միջի նեղուց 6 գրկաշափ լայնուք .
նոյնողս և 'ի հիւսիսակողմն ունի այլ խաղիսաղ մեծա
գոյն քան զառաջնին . որ կոչի խաղիսաղ արևելքան .
և է եռանկիւնի, տարածել 'ի մէջ նեղուցին, որ
է ը մէջ երկայն կղզւոյն՝ և ցամաքին ճըրսիայ .
թողել յերկուց կողմանց երկու պատունական նե-
զուցս . ուր միշտ գտանի ջուր իւր 6 գրկաշափ խո-
րուք . վոյ է քաջայարմար տեղի նաւուց, առ 'ի
ելանել անտի 'ի ցամաք . ող և արարին բգիմանգամ
զօրք անգղիացւոց 'ի վերջին պաղմին :

ԵՆԴԱՅ · կմ ԲԵՐՄԱՆԴԱՅ · (ԵՆԴԱՅ) : Գիւղաքա-
ղաք, զոր մարթ է ասել գլխաւոր տեղի ոչ միայն
կոմսուե միտլսէքսայ, այլև համօրէն ճըրսիայ .
այսողս սնունանել յանուն յակովըայ տրումոնտայ
կոմսին բերթալ, միոյ 'ի նախնի իշխանաց տեղուցս .
և 'ի սարէն է զոյայ . առ որով կառուցել կայ 'ի
քաջայարմար վայրի . վոյ զի նաւք կարեն մտանել
մինչև 'ի հրապարակ անդր նր . սակայն 'ի վր այսր
ժմի չէ մարթ կոչել զնա բաղմավաճառ և ծաղկել
'ի պատճառս մեծադոյն քաղաքաց բէնս իլվանիոյ, և
նոր եօրքայ . որք զամ աւետրուիս յինքենիս ճգեն :
Ունի առւնս իրը 100 . և բնակարան պատունական
վոյ 300 զինունորաց . աստ նստէր սովորաբար կու-
սակտլ իշխանն, յորժմ անգղիացիք ակրէին նա-
հանգիս . ող և այժմ աստ գումարի գաւառական
ժողովն համօրէն նահանգին, բայց փոփոխ ընդ
պըրլինկդընայ, ող ասացաք անդ :

ՊՐԵՆԴԱՅ · (ՊՐԵՆԴԱՅ) : Գիւղաքաղաք փոքր 'ի
կոմսուե միտլսէքսայ 'ի ճանապարհի՝ որ յամոցոյայ
հանէ 'ի ֆիլատէլֆիա . առ ստորին գետեզերը բա-
րիդօն գետոյ . 8. 9 մղոնաւ հեռի 'ի բըրինս գառւնայ,
ունի տունս իրը 100 ևեթ . և բնակիչս չափաւորս
ը իւրում համեմատուե . և բնակարան կմ ձմե-
րանոց 300 զինունորաց : Այօտ 'ի քղթն գտանի բավք
պղնձոյ առատաբեր . որ է առհմին դրէնքայ . անուն
նի է տեղիս այս 'ի պատճառս պտղմց, որք եղեն տո-
նովաւ 'ի 1777 'ի մէջ ամերիկացւոց և անգղիացւոց :

Աւ' Տըրուել. (Ա-մէրսէր): Աւան 'ի սմին կոմսուեն ոչ
այնշափ ինչ հեռի 'ի նախընթաց գիւղաքաղաքէ առ
նովին եղերբ բարեդօն գետոյն . այլ առաւել ը
արևմուտս :

Ո-պորին. (Վօպորիփան): Գիւղաքաղաք փոքր 'ի
սմին կոմսուեն առ վտակաւն որ մտանէ 'ի նեղուցն
ճըրսիայ . ունի գերդաստանս իբր 120 :

Եւլուսբէլ. անդզ" Եւլուսբէլ դառան . կի՞ (Եւլուսբէլ
դ.ն.): Գլխաւոր գիւղաքաղաք կոմսուեն էսէքսայ .
կառուցել Յ մղննաւ հեռի 'ի ծովէ , առ ձորակաւ
որ մտանէ 'ի պարոյրն նէլվարք : Ունի տունս իբր
300 բարեշէնս . և իբր 250 գերդաստանս . զուրկ է
գիւղաքաղաքս յամամբուեց , ոոկ են և այլ գիւղա
քաղաքք ճըրսիայ :

'Ե-Հրտ. ('Ե-Հրտ): Գ.իւղաքաղաք 'ի սմին կոմսուեն .
յորում գտանին իբր 150 գերդաստանք . բայց տունք
Ն-Ջ ցրիւ են առո և անդ 'ի միջոցի իբր 2 մղննացափ
երկայնուեն . ունի և եկեղեցի շննել ը ձեռյ նախնի
գթաց . և առ նովաւ աշտարակ , կմ զանգակատուն .
որ հազիւ ուրեք տեսանի 'ի հիւսիսային ամերիկու .
այլև հորից շննուածս ինչ , բայց անշուքս : Գտանին
'ի մերձակայ վայրի և պարոյր յայս անուն . որ ունի

զհաղորդուի ը պարուրին նոր եօրքայ :

Պլ' Հըն. (Պլ' Հըն): Պ.լիսաւոր քաղաք համանուն
կոմսուեն առ արևմտեան եղերբք հուտսոն գետոյն .
այս քաղաք է մի յառաջին բնակուեց ճըրսիայ :
Հակինչու. (Հակինչու): Գ.իւղաքաղաք փոքր 'ի
սմին կոմսուեն առ համանուն գետով . որ մտանէ
'ի պարոյրն նէլվարք :

Դակինչու. (Դակինչու): Գ.իւղաքաղաք առ արևմտեան
եղերբք հուտսոն գետոյն հանդէպ քինկապրիճ գիւ-
ղաքաղաքի , որ 'ի նոր եօրք :

‘Եահանգ ը . ‘Եոր Լարք . ըստ անդու

‘Եւ իօրք :

Անի իւր սահմանյարեելից՝ զնոր ինկիլթէուռա . յա-
րեմտից՝ ը մասին զճըրսի , և ը մասին զքանա-
տա . 'ի հարաւոյ՝ զծովն . իսկ 'ի հիւսիսոյ՝ զաշնարհն
զանազան ցեղից վայրենի ամերիկացւոց . և է ը մէջ
40 .

40. և 44. աստիճաննաց հիւսիսոյին լայնութեա : Եթէ կոյնութեանը նր է իբր 200 մլրն . իսկ լայնութեան իբր 60. և բոլոր տարածութեան օգաղափութե 120000 քառակուսի մլրն հագրական . իսկ թիւ բնակչաց նր 250000 :

Ունի բզմ գետա մեծամեծու և մանունս . որոց գլխու լորն է Հոռոպետն . մի 'ի մեծադաշտին գետոց հիւսիսային ամերիկոյ . ըստ մարթ է փաքր նաւուց նաւել 'ի ներքո 'ի ցամաքն 150 մլրն միջն ցաղպանի դիւզա քաղաք . մերձ 'ի յաղպանի իբրու 10 մլրն , ջուր գետոյս գործէ սահան 60 ստուաշափ բարձրութե . և 'ի բուռն հուանաց նր , բարձրանայ յերկրէ ամեկ իմն ջրաշոգի , ուր և տեսանի ըստ աղջոտ ծիանան գեղեցիկ , որ փոխէ զգիրս ըստ մերձենալոյ և հեռանալոյ տեսանողին . առաղպանի գիւղաք քղբաւ , հուտսոն գետ հաղորդի ըստ այլոց գետոց մեծամեծաց . որպիսի է մոհավես գետն , որ անցանէ ըստ աշխարհ 6 ազգաց ամերիկացոց . ըստ այս գետ սակաւ ինչ փոխադրութ ըստ ցամաք՝ լինի նաւել միջն միջն լի լիճն օնդարօ . և 'ի միւռ կողմանէ 'ի լիճն շամփլայն , որ ուղիղ հանէ 'ի գետն նըյն լորենախոսի : Գետք նահանդիս բերեն զանազան տեսակս ձկանց առատ . մանաւանդ Ադարէն այն է մէրախն ձուկն , որ գտանի բազում յոյժ 'ի հուտսոն գետ . բերեն և պէսալէս աղբս չըսյին խեցեմորթաց բարձր յոյժ . մինչեւ ձկնորսաց եօրքայ շահիլ ամի ամի 20000 ոսկի :

Օդ նր բարեխառն է . բայց առաւել ցուրտ , քթէ ջերմ . իսկ երկիրն պարաբրու և բազմաթեղուն . և թէպէտ մեծ մասն նր գեռ կայ մնայ անդործ , սակայն մշակել մասն նր այնչափ առատաբեր է , զի ոչ միայն բնակիչք նր ունին զամ պէտո իւրեանց լիով , այլև անբաւու վաճառեն և այլոց : Ասդ գլխաւոր բերք նր են դրեթէ ամ աղբք արմաւաց տարելք յեւրոպիոյ . և առաւել ք զամ մարացորեն . աղբի աղբի պտուղք բանջարք և արմատք , և բոյսք բժշկականք ծանօթք և անծանօթք մեզ . փայտք հասարակք և սակաւագիւտք 'ի պէտո շինուածոց և մասնաւոր ձեռակերտաց . վուշ և կունեփ բզմ : Ունի և հաւս . և ցորքուտանի անասունս ընտանիս և վայրենիս բազմաւեսակս . և ընդարձակ արօտա խոտաւետոս . և անտառս մեծամեծս . և բովս երկաթոյ առատաբերս :

Վեյ և վաճառականունի նր ծաղկել է յոյժ . և տարածել ցհեռաւոր տեղիս . իսկ գլխաւոր վաճառք նր

Նր Են ցորեանն աշխեր մանաւանդ մսրացորենոյ, և
հաճարի չափ աշեր որ ամի ամի կարէ հասանել՝ ի
80000 տակտուս իսողենի ապիստել մորթք ընտանի
և վայրի անտանոց մեղք տախտակ երիվարք, և
ոչխարք պանիր կողի զորս տանին ի կղզիս ծո-
ցոյն մեքսիքոնի, և վաճառեն սպանիտցւոց այլ
և սերմն կառւատի, որ է մի ի շահաբեր վաճառաց
նր զի 1755 ի մեջ երից ամսոց առաքեաց յիռ-
լանտա 12528 փոքրիկ տակտուս սերման կտաւատի :

Արդ՝ թէպէտ այոշափ ծաղկել եր վաճառաշահուն
նր, սակայն ի վր այսր ամի չքառոր էր յոյժ ի
դրամոց քզի զոր շահէր յոյշլոց ազգաց, զբովան
դուկն անդղիս գրաւէր ոչ միայն զուկի և զար-
ծաթ, այլև զբանազան պատուական իրա՝ որբյայ-
լոց տեղեաց գային աստ ուղ զբամբակ սըյն թով-
մայի, և սուրբնամայ զպատուական փայտս նիդա-
րակնայ զելակ և զայլ զանազան բերս զի ը-
հիշտ հաշոնեի ոմանց առաւել ք 200000 ոսկի գա-
հեկան ամի ամի վճարէին անդղիացւոց ի դին պէս
պէս արհեստակերտ իրաց, որոց պէտս ունեին
յայսմանէ սախապել բնակչաց երկրին սկսան և ինք
եանք դործել զանազան արհեստակերտս՝ որոց
առաւել պէտս ունեին զի ասուեղէն կերպասս թէպէտ
խոշորանիւթս առակի և երկաթի գոր-
ծիս զի երկաթ բզմ ունին գլխարկս եւրոպաց-
ւոց այն է շափղայ և այլ իրս և թէպէտ անդ-
ղիացիք ամ իրօք շանահնար լինէին խափանել զնն բայց ոչ կարացին խակ յետ բաժանելոյ ի տրուե-
նց մուծին և զայլ կարեռը արհեստս զորս և օր-
ը օրէ կատարելագործեն այլ տու ի վճարել ըզ-
պարտս իւրեանց որ էր իբր 600000 ոսկի և դին
տուրս և հարկս :

Բնակիչք այսր նահանդի ը բնածին հանդամա-
նաց գրեթէ նման Են բէնսիլլանիացւոց ժուժ-
կալք զդուշաւորք ի ծախս ժրաժանք և աշխա-
տասերք բայց գոլով հաւաքումն ի շանազան աղ-
գաց լեզուաց և յաղանդոց չէ մարթ նշոնակել
զընդհանրական իմն ծանօթուել զընաւոր հանդա-
մանաց նց Արհեստք և գպրութիք դեռ ի խո-
կուե են յայտն նահանդի և թէպէտ բացաւ անդ-
գորոց կմ ուսումնարան լու ասրազու ուսումնա-
րանի ճըրսեայ և հաստատեցաւ նոր ընկերուե ի
կաղմել հասարակաց գրատուն սակայն ոչ երկե-
ցաւ մինչեւ ցայժմ երեսելի ինչ բարգաւաճումն բայց
հնար

Հիար է թէ յետ այսորիկ առ ստկաւ ստկաւ պայ
ծառասցի . գոլով այժմ նահանգս ինքնիշխան ազատ
'ի խիստ լծոյ օտարաց :

Այս նահանգ նախ առաջին 'ի 1605 դժաւ յենրիկո
սէ հուտսոնէ ծննդեամբ անդղիացւոյ , այն է ինկի-
լիլ . որ յետ բազմաշխատ ճգամբ 'ի խնդիր լինելոյ
դժանել 'ի հիւսիսակողմն ամերիկոյ անցայանկոյս՝
'ի ծովն արևմտեան , վրիպել 'ի յուսոյ դարձ արար
ընդ հարաւ՝ քերելով առ ցամաքաւ . ակնկալուք
դժանելոյ երկիր շահօքեր ընկերուե վահառակա-
նաց հոլանտացւոց արևելեան հնդկաց՝ յորմէ ա-
ռաքել իսկ էր , 'ի փոխարինուե ծախուց նց վոյ այսր
անօդուտ ճանապարհորդուե իւրոյ . և հասեալ 'ի
կողմանս յայսոսիկ , եմուտ 'ի ներքս ը գետն մեծ .
որ այժմ յանուն նր կոչի գետ հուտսոնի . և զննել
զհանդամանս երկրին , դարձաւ յամսդրտամ , և
ծանոյց հնրկապետուե նց զարդաւանդուե երկրին .
ապա 'ի 1610 առաքեցին 'ի կողմանս յայնոսիկ դադ-
թակսն ժողովրդեան հիմնել անդ բնակուե . երգ-
տեղին կոչեցին 'ի պէլա : Խոկ անդղիացիք դժկա-
մակեալ ը այն , գուն գործեցին ամ հնարինք առ-
նուլ զայն 'ի ձեռաց հոլանտացւոց . այսակորոս թղթ
անդղիացւոց՝ պետէր ունել իրաւունս 'ի վր տեղ-
ւոյն . իբր զի հուտսոն գափի նր անդղիացի էր .
այլ հոլանտացիք ոչ մատուցին ունին բանից նր ,
առ ոչինչ գրելով զայն ծիծաղական պատճառ :
իսկ 'ի 1664 . ը կարողոս ձեռնամուխ եղե բռնութթ
զինուց առնուլ զերկիրն , յորոյ վր ոչ ինքն , և ոչ
հոլանտացիք ը իրաւանց՝ կարէին ունել զարուե :
Արդ սա տռանց ծանուցանելոյ հոլանտացւոց զիւր
պատղմ ը նո , հրաման ետ իւրոյ նաւուց հարկանել
զնաւս , և զուեղիս հոլանտացւոց յամ կողմանս թի ,
ուր և դացին . և յանկարծակի նաւահանգէսն անդ-
զիացւոց 3000 արամբք եմուտ 'ի նոր պէլկա . և ե-
տու զնա առանց պատղմ . այս անիրաւ յափշտակուե
անդղիացւոց հաստատեցաւ 'ի դաշնադրութե անդ
պրէտայի . իսկ 'ի 1664 գուքսն եօրքայ ընկալել
զերկիրն 'ի պարգև յեզրօրէ իւրմէ անդղիացւոց ար-
քայէ , կոչեաց զնա 'ի ուր . յանուն գաւառին
եօրքայ որ յանդղիա : **Ա**պա 'ի 1673 դարձեալ տիրե-
ցին նմ հոլանտացիք . այլ 'ի հետևել դաշնադրութե
սախալեց ան անգրէն դարձուցանել անդղիացւոց՝ ը
որոց թրուք եկաց մնաց մինչև ցոյս վերջին անջա-
տումն :

Կառավարութիւն սորբին նահանգի ՚ի սկզբան անդ՝ յոր ժամ էանց ՚ի ձեռս գքսին եօրքայ, էր իբր միապետական . մանաւանդ թէ բռնաւորական . քզի ետիւրոց փոխանորդաց զանկողար իշխանութեն՝ ՚ի վը ժողովրդեան . յորոց տաղտկացել նց, որք էին հունանտացիք և յայլ զանազան ազդաց եկեղք անդը ՚ի ստհմանակից նոր ինկիլզ-էռաւայէ, այն ինչ յապրտամբութիւն մտաքերէին, եկին եհաս առ նն պատգամ յանդվլոյ ՚ի 1683 . որ տայր նց զաղատութիւն անդղիական ժողովրդեան . և իշխանութիւն ընտրել յինքեանց առենակալու ՚ի կարգաւորել զիառավարութիւն երկրին: Զետ այնորիկ եղեն և այլ պէսողէս փոխիսութեն՝ ՚ի կառավարութեն մինչեւ ց 1691 . յորում սահմանեցաւ, նոր եղանակ կառավարութեն . որ եկաց մնաց մինչեւ ցվերջեն քաժանումն նոր եօրքայ ՚ի տրուեն անդղիոյ . և թէպէտ ՚ի 1776 գլխաւոր քզք նը առաւ ՚ի զօրաց անդղիացւոց, սակայն համօրէն ժողովուրդն մնացեալ մասին նահանդիս միշտ քաջութեատսապարեաց զանկախութիւն իւր և զինքնիշխանութիւն . որոյ կառավարութիւն յետ այնորիկ փոխեցաւ ՚ի ռամէ կապետական :

Խսկ կրօն սօրին նահանգի զանազան է . ոնդ աստ ցար և վէտ այլոց նահանգաց . զի ՚ի ժողովրդենէ նը ոմանք ունին զաղանդ անդղիական . ոմանք են երկ ցականք . ոմանք քուտաքերեանք . այլք յայլոց աղանդոց . գատնին անդ և ճշմարիտ ուղղափառք՝ թէպէտ սակաւք . և ամքն ունին եկեղեցիս, և ժողովականիս :

Այս նահանգ բաժանի ՚ի տասն կոմսութիւն . յորոց գլխաւորքն են ոյսոքիկ . Նիւ հօրէ, որ է՛ Շամ, եօրտ . Ռինչնուտ . (Ռինչնուտ) . Ռ-է-ու դասնա . (Վէստ ժեռտէր). Օ՛րէնձ դասնա . (Օրսնձ). Լւստէք . (Աւադէր). Է՛լունի . (Ալունինի). Քինիս . զորոց զգլխաւոր տեղիս յառաջիկայդ նշանակեացուք . յաւելեալ զինի և զատորագրութիւն երկայն կզզւոյն, և գլխաւոր տեղեաց նը :

Կոր էօրէ . անդղ՝ Նիւ հօրէ : Գլխաւոր քաղաք համօրէն նահանգին . և նիստ գաւառական ժողովոյ նը . պարսպապատ . որ հազիւ ուրեք տեսանի ՚ի հիւսիսային ամերիկայ . գեղեցիկ, և ը իւրում համեմատուեն բազմամարդ . կառուցեալ ՚ի վը կղզւոյ, որ կոչի Մանեն . կմ Մանկալուն . որոյ երկայնութիւն է իբր 10 մլոն . գործեալ ՚ի ջուրց հուտսոնի : Ունի բունս իբրեւ 3000 . և բնակիչս աւելի ք 17000 . երկ

կայնուի քաղաքին է առաւել ք զմշոն մի . և լոյնուին կէս մզոն . փողոցք նր քարտյատակ են և մաքուր , այլ ը մեծի մասին նեղ . բաց յերից կմ 'ի չորից . յորոց գլխաւորն կոչի պրօտվայ . ուր հանդէպ ատանց աստի և անտի տնկել կան ծառք միա ջարք . որք յամառան հովանի առևեն առանց , և զուարձալի գործեն զփողոցն . այլ օդ նր յոռի է . և չունի ջուր բարի . զոր 'ի հեռուստ բռնադատին բերել . զանազան եկեղեցիք կմ աղօթատեղիք են 'ի նմ , ը զանազան ազանդաւորաց . զի աղանդաւորք անդղիական եկեղեցւոյն ունին երկու քարաշէն մեծամեծ եկեղեցիս . յորոց մին կոչի Սբ Երրորդուհ . իսկ երկրորդն՝ որ է նորաշէն՝ Սբ Գևորգ . հոլանտացի կալվինականք՝ երկու . իսկ գաղղիացի կալվինականք , դերմանացի լուտերատիկանք , երիցականք , քուաքերեանք , կրկնակնունք , և մորավիացիք , ունին անդիւրաքանչիւրք մի մի եկեղեցի . նոյնպէս և հըրեայք մի սինակոկայ : Ե՛ 'ի նմ և դպրոց երեելի՝ կոչեցել դպրոց արքայի . և երեք մեծամեծ անկելանոցք . մի 'ի ներքս 'ի քաղաքն սահմանել 'ի գարման 60 աղքատաց . և երկու արտաքոյ . յորոց մին է վանաւավարաց հիւանդաց , կմ վիրաւորելոց .

իսկ միւմն վանըրանելոց 'ի ժանտախտէ :

Այս ամ հսրից շնուածք երեելի են , ող և ձմերոցն զինունորաց ընդարձակ և մեծաշէն . և բանտն հսրից . և գործարանն , ուր արգելել պահին ստահակք . և ծառայեցուցանին 'ի գործ հսրից . և ապարանք քաղաքապետին որ է ը մեջքաղաքին . անդէ և մարտկոց բաւական 94 հրազնուց . և առ նովու բնտիարան զօրաց վանըրկուց դնդից . բաց 'ի մարտկոցէ աստի , ունի և այլ ամրոց քառակուսի պատուական՝ բաւական 60 հրազնուց : Այս քաղաք 'ի 1776 առաւ յանդղիացւոց . և բզմ վնասա կրեաց 'ի հրկիզուէն :

Ուժընք . (Միւնանդ) : Գլխաւոր քաղաք համանուն կոմսուե , փոքր՝ այլ բարեշէն . բնակիչք նր են հոլանտացիք և գաղղիացիք . այս կոմսուե 'ի մի կղզի բօվանդակիւոր կոչի Սբառն իւշնաք . յանկան թրուն : Երկայնութիւն է իբրև 18 մզոն . իսկ լայնուին 'ի միջական աեղւոջ իբր 7 . որ ըհանրապէս խօսելով լեռնային է և առապար . բայց 'ի հարաւակողմանին հարուստ մի տարածուի երկրի գաշտային և

արգաւանդ :

Ունադ դառն . (Վէստ Քառեր) : Գլխաւոր քաղաք հա-

լոց . և եւրոպացիք 'ի նցէ զնեսցեն :

Կղզին նօր երկրի գոտու 'ի 1497 'ի քաղոդայ . ոս
ծննդեամբ էր վենետիկեցի . այլ յետոյ եղեւ նաւու
պետ առ անգղիացիս . բայց նա ոչ հիմնեաց անգ
րնակուն ինչ . առա ըս ժմկս ժմկս գնացին անդր
և ոյլք 'ի զննել զուղին , եթէ հնար էր օգուտ
ինչ հանել անտի . և տեսել զառատուն մէրլուցցո
ձկան , և զյաճախ դործածութ . նը յեւրոպիստ , անգ
լիացիք յուջքան զայլս հիմնեցին անդ բնակուն 'ի
1608 . յետ այնորիկ 'ի սակաւ ժմկի բազմացան անդ
և այլք . այնպէս զի չեին անցել 40 ամք զկնի
առաջին հիմնարկութէ , և ահա յարեւեան ծովե
զերս կղզւոյն սկսել 'ի պարուրէ յղուե մինչեւ 'ի
սարն ռազմէ՝ էին անդ բնակեալ առաւել ք 4000
ձկնորսք եւրոպացիք . որք այժմ բաժանեալ են 'ի
զանսղան գեօղս . ոչ ինչ կարի բացադոյն 'ի մի
մեանց , սակս հանգամանաց երկրին . և սակս ա
ռանձնական գործոյ իւրեանց . և առ 'ի ունել հա
զորդուն ըս միմեանս , բացին Ճնկըրհ ըս ծառախիտ
անտառս : Իսկ գլխաւոր տեղի ամցն նց ոող և հա
մօրէն կղզւոյն՝ է աւանն որ զինի :

Մէ յունաննէն : Աւան 'ի հարաւային ծովեղերս կրզ
ւոյն . ուր գտանի նւհնդիատ գերազանց բացեալ
ըս մէջ երկուց լերանց անջատելոց 'ի միմեանց իբր
քառա

քարընկեց մի տարակայութեան է երկերիւը նաւուց . յայս նւհնդիստ յաճախեն եւրոպացիք . որք բարձել տանին անդ զամ ինչ , որոց ովետա ունին ձկնորսք բնակիչք կղզւոյն . և փոխարեն առնուն 'ի նցէ մէրլուցցո ձուկն շօրացուցել : Փշէշն : Աւան հիմնել 'ի գաղղիացւոց առ համանուն ուարուրիւ 'ի վր ցամաք կղզւոյ 'ի քաջազեալ տեղով՝ վա որոյ մէրլուցցո ձկան : Հանդէպ նրե նաւուկայան ըարձակ իբր 5 մղոն բայց չէ անքոյթ 'ի գառնաշունց հիւսիսային արեւմտեան հողմաց . և մուտ նր այնցափ նեղ է 'ի սրատձառս ժայռից , զի առ մի նուշագ չէ հնար աւելի , ք միոյ նաւու մտանել . զոր հարկ է նաւակօք ձգել 'ի ներքս : 'ի ծայրին պարուրին վլէզանսայ 'որոյ երկայնութեն է իբր 54 մղոն , դոյ նւհնդիստ մեծ և տղահով բաւական 150 նաւուց . առ որով մօտ 'ի մուտս գաղղիացիք 'ի 1687 շինեցին ամիոց փոքրիկ . կացուցեալ 50 զօրականու 'ի պահպանութի . այլ 'ի գաշնագրութեալ անդ ուգրէքայ 'աւանն , և ամրոցն տուշաւ անգղիացւոց , յորոց 'ի ձեռու է մինչև ցայժմ : Երրորդուն : Ե աւան շինել առ պատկանաւոր նաւուհանդստիւ 'ի հիւսիսակողմն համանուն պարուրին : Միւելու . կիմ Միւլու . և կիմ ուղ կոչեն գաղղիացիք Միւլուն : Ե կղզե 'որ ձգի 'ի հիւսիսոյ ըհարաւ առ բերանով պարուրին բախտի . երկայնութեն նր է իբր 22 մղոն . իսկ լոյնութեն 3 . 4 . թիւ բնակչաց նր որք պարապին յօրս մէրլուցցո ձկան 'իբր 100 : 'ի հարաւոյ արեւմտից կղզւոյս գտանի մեծ խաղխաղ 'անուանել խաղխաղ այրւոյ . քանի մի ամօք յառաջ առին անգղիացիք զայս կղզի 'ի ձեռուց գաղղիացւոց . ը նմին եղորս մէրլուցցո ձկան : Մի պէտրուն : Կղզեակ փոքրիկ 'ի հրւոյ արևելից մի քէլօնայ . 'ի հրւկողմն ունի խաղխաղ կոչեցել սբ պէտրոս . որ գրաւել ունի գրեթէ զայն տարածութեն ովկիանոսի , որ է ը մէջ թիւրկն կղզւոյն 'և մեծի խաղխաղին նոր երկրի : Այս կղզի թէպէտ փոքր է ք զիկէլոն , այլ բղնիարդ ք զնա . զի ունի բնակիչք իբր 800 . չք 'ի նմ փայտ . այլ տանին 'ի մօտակայ փոքր միքէլոն կղզւոյն 'լի անտառօք . ուր գտանի մի տուն գտղիացւոց : իսկ պիտանութ կղզւոյն սբ յն պէտրոսօի 'է նւհնդիստ նր և ծովն . ուր 'ի 1768 կալան 24390 քունեթալ մէրլուցցո ձկան : Զսա առին անգղ 'ի սկզբի որ գրգռեցաւ 'ի մէջ բրիտանիոյ և գաղղիս . վա գալին գաղղիացւոց ը ժդ նհնդու :

Ա. Ը. Խ. Ը. Բ. Հ. Գ.

ՊԱՐՈՅՏ ՀՈՒՏՍՈՒՆԻ.



շխարհագիրք ը անուշամբ Պարսուին հաւա-
սանի՝ առնուն զայն բովանդակ տա-
րածուի երկրի, որ ձգի ՚ի հիւսիսաւ-
կողմն բանատայ առ նովին պարուրիւ. մինչև յան-
ծանօթ վայրս արջային շրջանակի. և մինչև ցնե-
ղուցն տաւիսայ. որով ցամաքն հիւսիսային ամե-
րիկոյ՝ բաժանի յարևմտեան կրենլանտիոյ. վոյ-
պարունակէ և զընդարձակ ցամաք կղզին, որ է
յարևմտեան կողմն պարուրին հուտսոնի. և կոչի-
Երիւր լապրատրայ. այլև ՚որ հիւսիսայի. թէպէտ ակ-
րանդս խօսելով՝ ըունին անդ բրիսանացիք հիմնա-
կան իշխանութի. կմ երևելի բնակուի. ոող և ոչ
այլ ազգք եւրոպացւոց. այլ միայն էսքիմացիք բնիկ
ժղով երկրին գաանին անդ. ը որս մարթ է դա-
սել և զմիոդասինացիս. բայց և նք առ համեմա-
տութ ըարձակուե երկրին՝ կարի սակաւ են անդ.
ոող և ՚ի բովանդակ Շն պարուրին հուտսոնի:

Այս ըարձակ հանկանի ը մեջ 50. և 60 ասահճա-
նաց հիւսիսային լայնութեն, ՚ի նոյն դիրս յորս են
մոսկովք, գանիք, շվետք, և երեւելի մասն գերմա-
նիոյ. վոյ մեծանդս վրիսի ոայնալտ յասելն՝ թէ
առ պարուրիւ հուտսոնի ը ամիս 6 յարաժամ տիւ-
է. միշտ ՚ի վերոյ ք զեզերտս ՚որ պատելով արեգա-
կան. և ը ՚ոյնչափ ամիսս գիշեր մշտակայ. վոյ զի
այն վեցամսեան տիւ և գիշեր կմ խաւար՝ սկսանի
յայնկոյս արջային շրջանակի. այն զի՝ և անդ, ոող
առ պաֆինաւ՝ մշտակայ խաւարն ոչ ձգի ը ամիսս
վեց. քզի արլաշոյսք առ աւօտեան և երեկոյեան՝
ըերկար լուսաւորեն զերկիր. մինչև հազիւ զերիս
ամիսս անել խաւարին. իսկ առ պարուրիւ հուտ-
սոնի երկայնութի տունջեան և գիշերոյ՝ կմ լուսոյ
և խաւարի՝ այնչափ է, որըսփ ՚ի մոսկովս, ՚ի դա-
նիս, ՚ի շվետս. դու առաւել երկայն տիւն է ժամ
19. 20. և մինչև ց21 ՚ յաւաւել հիւսիսային կող-
մանս. ՚ի պարոյը հուտսոնի արեգակն, ՚ի ծագել
և ՚ի մատնել իւրում. գործէ շրջանակ մեծ լուսոյ.
որոյ ՚ի սպասին՝ յաջորդէ այլ լոյս՝ զոր կոչեն ար-

շոլոյս հիւսիսային . որոյ ճառագայթք այնչափ պայծառ են , զի և 'ի լրման լուսնոյ ոչ շատագունին . Զմեռն երկար է անդ . և սառնամանիցն անհնարին . յորմէ ոչ միայն ջուրք , այլև այլ ամ տեսակք ջերմէ ողելից հեղանիւթոց՝ զի դինւոյ և ցքոյ սաւին այնչափ , մինչև խորտակել զանօթս յորս ենն , յինչ նիւթոյ և իցեն . այլև մեծամեծ հատորք վիմաց առ սաստկուե սառնամանեաց հատանին 'ի ժայռից լերանց : Այսպիսի գործք սովորական են 'ի նահանգի աստ ը ձմեռն ողջոյն . այլ առաւելին զգալի և յաճախ ը քաջ դիտողուե ոմանց 'ի ծննդեան և 'ի լրման լուսնոյ . որոյ ազդեցուին ասի լինիլ սաստիկ յայսմ նահանգի , թէպէտ և որտուան անյայտ : 'Ի գարնան և յանան գրեթէ հանապաշ լրատել է օդն թանձրամած միգաւ . իսկ 'ի ձմեռան լի սառուցեալ մասնկամբք : Ջերմութեան ամսուան համառօտ է յոյժ . զի հազիւ ը վեց եօթնեակս , կմ երկու ամիսս ձգի . բայց ը բաւականին ջեռուցանէ զոդն . սակս ըերկար մնալոյ արեգական զեղերախւք նր . սակայն հազիւ երբէք լինի անդ որոտումն , և փայլտկ , կմ կայծակն . քզի ծծմբային շոդիք սփուին հաւասարապս ը ամ տեղիս . և երբեմն լուցել սպառին 'ի հիւսիսային արշալուսոյ անտի . կիզուն զկեղևս ծառոց , անվնաս թովել զփայտն : Սակս այսպիսի գժնդակ ցրտուե և մշտակայ խոնաւուե օդոյն՝ երկիր այսր նահանգի ամսուլ է ամեննեին և անբեր . զի բաց 'ի ծովեղերեայ տեղեաց՝ որք ը մեծի մասին լճային են և դիմին . յորս ուրեք ուրեք գտանին սակաւ ինչ արօտք , և փոքրիկ ծառք ինչ վայրենիք և մորչք , մնացեալն բովանդակ այլ ինչ ոչ բերէ . բայց եթէ անպիտան մամուռ թանձր . և սակաւ թուփս ցրիւ աստ և անդ . և թէպէտ բշմ անդամ սերմանեցին անդ եւրոպացիք ազգի ազգի արմտիւ 'ի զանազան ժմկս , բայց վաղահաս ցրտուին ըունայնացոյց զամ չանս նց . սառուցանելով զսերմանիս : Արդ՝ թէպէտ այսպահ սաստիկ է անդ ցուրտն . սակայն դտան բովք երկաթոյ և կապտրի . այլև հանք ինչ նման հանքային ածիոյ . և մարմարիոն քար . բայց կան մնան անդործ . զի և չէ իսկ հնար գործել առ սաստ կուե սառնամանեաց :

Իսկ զլիաւոր և մի միայն շահաւոր բերք ոլարուրին հուտասոնի՝ են ողէսպէտ տեսակք վայրի երես . որք դրեթէ առհարկ սպիտակ են . նաև այն տեսակք՝

ուր յայլ տեղիս են յայլեայլ . դոյնս . և մորթ նց տղին . զի թաւ են յոյժ , մենդ 'ի ձմեռան . զի 'ի չերմանալ օդոյն՝ ը նմին և նք ոկսանին թօթափել զար իւրեանց . յորս գոյ և այլ ինչ արժանի նկատելոյ . իբր զի ոտք նց և ձետ և ականջք՝ և այլ նմ մասունք մարմնոյ , որք հեռի են 'ի սրտէ , յորս շրջան արեան չէ այնցափ ինչ ազդու , ը մեծի մասին կարճ են և փոքր ք զնամատեսակաց՝ որք յայլ հս դատանին . իսկ եթէ ոմանց փոքր մի երկայն են , ը նմին թաւ են յոյժ . զոր հոգացաւ նց բնուին , զի մի 'ի սաստկութէ ցրառե վնասեսցին , հեռի գոլով 'ի կենսական չերմուէ սրտի :

Եւ թէպէտ անբեր է և ցրաասառոյց այս ։ սակայն 'ի վը այսր ամի ոչ է դլխովին անմարդի . քզի դատանին անդ բնակիչք , թէպէտ սակաւաթիւք . որք ը հանրական անուամբ իստիմաշիտ կոցին յեւրու սպացւոց . ոչ նք միայն՝ որք յերկրին լապրատորայ բնակին , այլէ որք առ սպարուրին հուտսոնի . և բաժաննել են 'ի զանաղան ցեղս և 'ի ժղվիդս : Սք առհսրկ կարճ են հասակաւ . զի բարձրուի նց ոչ է աւելի ք զչորս ստնաչափ . գլուխ նց ը նմանուե մանկանց՝ մեծ է առ համեմատուի այլոց մասանց մարմնոյ . ոտք և թաթք ձեռաց՝ փոքր . ունչք տափարակ . բերանն բոլորաձև . ստորին մասն շրթանց թանձր և առկախեալ . ուստաի և գէմքն տգեղ և խորշումել . որք բերեն զնմանուի ծերոյնաւ 'ի բուն երիտասարդական հասակի . և ամ մասունք մարմնոյ անմազ և լերկ բաց 'ի գլխոյ . իսկ գոյն նց թուխ գեղնախառն , և ոչ ամենեւին սեաւ . ողպ ու մանք ասացին : Բնակարան նց՝ ուր սպատապարին 'ի ձմեռան , է խրձիթ շնել 'ի քարանց սասամբ ը միմեանս մածուցելոց . ուր չունին այլ հուր , բայց միայն լապտեր մի մշտավառ ը մեջ խրձիթին . սակայն չերմուի շնչոյ նց և արեան՝ միացել ը դոյզն բոցոյ լապտերին , այնակէս չերմացուցանեն զիսրձիթ նց , մինչև լինել իբր բաղանիք 'ի բուն ձմեռնամիջի անդ . կերակուր նց է ձուկին . և մենդ շուն ծովային . զոր եփեն դոյզն բոցով լապտերին . իսկ սովորական ըմպելին է իւղ կէտ ձկան . որ սաստիկ չերմացուցանէ զսամնքո նց և զարիւն . և ովահպանէ յանհնարին սառնամանեաց երկրին . բայց ոչ շիջուցանէ զծարաւ , այլ առաւել սաստկոցուցանէ . զի չերմ է յոյժ . վոյ յարաժամ սպապակին 'ի ծարաւոյ : Եւ զի սնունդ նց բովանդակ է 'ի ձկանց :

յայն տակս բոլոր մարմին նց դժնդակ հոռ ձկան արձակէ . նոյննզս և քիրտն նց թանձր է , պարարտ ձիւթային , և ժահահոտ . որ և բջմանդամ կեղեանս կապէ զմորթով մարմնոյ նց ոոկ զբոր :

Արդ թէպէտ այսափ յոռի է սնունդ նց , և եղանակ կենաց դառն և թշուառ , սակայն 'ի վր սյոր մօմի անպատմելի է արիուն նց և քաջասրտութե . որով զարհուրելի վտանգաց դիմադրաւ լինին աներկիւղ , առ 'ի յագեցուցանել զբոնացեալ քաղցն դոր կրեն միշտ . զի չնչին նաւակօք՝ զոր շինեն յոռ կերաց կէտ ձկանց և պատեն մորթով , մոտանեն յանդնդախոր ծովն յորս կէտ ձկանց , ոչինչ զանդիտել յամեհի ալեաց ծովուն՝ և 'ի զարհուրելի ատանց կիտոց . և 'ի չար ժանեաց ծովային շանց . այլ համարձակ 'ի վր դիմեն , և սպանանեն զնն . զի քաջավարք են յայնմ արհեստի : Հանդերձ նց է մորթ վայրենի ինչ կենդանւոյ . որ հազիւ ծածկէ զնան ինչ մարմնոյ նց . իսկ մնացեալն բովանդակ մերկ է : Երկու գլխաւոր ախտք տագնապեն զնն . մին է ցաւ աչաց . պատհասել յանդրադարձ ցոլ մանէ հառագայթից արեգական 'ի սպիտակափայլ մշտնջենաւոր սառուցից և 'ի ձեանց յորմէ փութով իսպառ կորուսանէին զտեսանելիս , եթէ ոչ միշտ պաշտպանէին զալս ակնոցաւ , զոր շինեն յերկուց փոքրիկ և նուրբ տախտակաց . առնելուլ 'ի միջի փշով ձկան՝ ծակ փոքրիկ . և կտպեն՝ 'ի վր աչաց . առ 'ի իսպանել զյորդ դիմեցունն ճառագոյթեց արեգական : Երկրորդ գլխաւոր և առաւել առպականագործ ախտ նց է այն՝ զոր Աւորուն կոչեն . որ թանձրացուցանէ զարիւն , և նեխեցուցանէ , և ուտէ և մաշէ զմարմինն . ոյս ախտ զօրացեալ է յօյժ առ նո . վէ զի օդն՝ զոր չնչեն . և սնունդն՝ որով մնանին . և բովանդակ եղանակ կենաց նց , նպաստաւորէ նո՞ւ և անեցուցանէ , ուստի և կարի փոխադրական է առ նո . և անհնարին հորունածո գործէ : Եւ թէպէտ յայսափ թշուառութեն միջն պաշարել կան նք 'ի ցրտասառոյց յանընակելի վայրի անդ , սակայն կարծեմթէ հազիւ գտանի յնի ժողովուրդ՝ որ այնչափ յարել իցէ 'ի սէր հայրեն . եաց իւրոց , սո՞ւ էսքիմացիք . զորս ոչինչ հանդիսաւ և դիւրութե կարօղ է խախտել 'ի տեղւոջէ իւրեանց . զի առաւել սիրեն նք զիստուն օդոյ նի իւրեանց , զսառնապատ գաղանային խշախիս , զժաւ հահոտ միս շան ծովայնոյ , և զմորթն զոր արկանեն

դանձամբ, քը այլ քղթական ժողովուրդ, զոդ քաղցրախառն, տունս բարեշնս, կերակուրա պատուականս, և հանգերծս փափուկս: Ահա այսցափ է զօրուի սովորուեն: որ զնմ խստուիս մեղմէ: և զշառնուիս քաղցրացուցանէ: յոյն սակս իրաւամբ երկրորդ բնութիւն կոչեցաւ յիմաստասիրաց:

Գրտանին յթի աստ և սակտւ ոմանք անգղիացիք, բնակել՝ ի չորս փոքրիկ և անպիտան ամրոցս, որք առնեն անդ առևերութիւն ը շրջակայ ամերիկացւոց փոխանակութ իրաց: զի առնուն ինցէ մորթս պէս պէս վայրի երեսոց, և փոխարէն տան նց զանազան արհեստակերտու: զորոց զգործածութիւն ինքեանք մուծին առ ամերիկացիս: և թէպէտ մորթք նիս ընտրելագոյն են յազգս իւրեանց, քը զոյն՝ որք գտանին յայլ տեղիս, սակայն անգղիացիք դիւրագին առնուն ի պարզամիտ ամերիկացւոց: որք ը սահմանելոյ նոցին անգղիացւոց, պարտաւորին տալ տասն բէշկ մշկոյ վոյ միոյ հրահանից: յո չախմախի: երկու՝ վոյ մի կշռոյ վառօթոյ: մի՝ վոյ երկու կշռոյ կապարի: երկու՝ վոյ մի կշռոյ ուլունից: մի՝ վոյ վեց փոքրիկ անպիտան գանակաց: վեց՝ վոյ խոչորանիւթ ձնձոյ: յո քէպէի, զոր արկանեն զանձամբք: մի՝ վոյ մի կշռոյ ծխախտոյ: նոյնպէս և վոյ փոքրիկ հայելեաց՝ կոթսայից՝ շքոյ՝ և սյլոց իրաց: պահանջեն մորթս յաւէտ և նուազ, ը առաւելուեն և նուազուեն իրացն: Եւ զի բէշկ մշկոյն է ազնուագոյն, և հըրկ չափ փխկուեց, վոյ ը նորին համեմատուեն որոշեալ է և սակ մորթոց: յո փխկ միոյ մորթոց բէշկի մշկոյ՝ չըրշռն: կի՞ չ կղնաքիս:

Յայսմ առևետրուեն ը առելոյ ոմանց՝ անգղիացիք կրկնակի դաւաճանեն զեզկելի ամերիկացիս: մի՝ ի սակաւ գին մորթոց: և երկրորդ՝ ի կշռու իրացն, և ի յուլի հանգամանս նց: զի կշռու նց միշտ պակաս է և իրքն յուլի: վոյ ինքեանք առաւել քան զապին շահին ի մորթոց անախ: որ յայտ անտի է, զի գլուխ դրամոց ընկերուեն այսր վաճառաշահութեն: ի սկզբան անդ էր 483000 վէնէտկեան լիրէ: որ յաջորդաբար եհաս ց 4761000 լիրէ: և սովաւ ամի ամի ի ձեռս բէրէ իրը 50000 պատուական և մեծագին մորթս: յորոց երեք մասն վաճառի ի մեծն բրիտանիա, իսկ մնացեալն անցանէ ի դերմանիա: յորմէ բղմա շահին:

Զայս նահանդ զառաջինն եդիտ ենրիկոս հուտսոն ի 1610: յորմէ և պարոյրն յանուն նը կոչեցաւ: սոյն

սոյն այս քաջ նաւազետ 'ի խնդրելն 'ի հիւսիսային արեւելս անցա առ հանդիպակայ ծովն հարաւային կմ խաղաղական , եղիտ նեղուց՝ լը որ ակնուներ լով բանալ եւրոպիոյ Ճնաղհ յասիա ըստ ամերիկայ , եմուտ 'ի նմ քայց կամեցել այլեւս յառաջ խաղալ , նաւավարք իւր տաղտկացել յերկար Ճնաղհորդուէ , կմ թերեւս երկուցել 'ի սառուցից սառնապատ ծովու՝ կալան զնա , և զայլ եօթն հաւատարիմ ընկերս նր , և եղին 'ի մակոյկ փոքրիկ առանց զինուց՝ և առանց այլ ինչ պատրաստուէ . և մատնեցին ամենի ալեաց ծովու : Ապա զառաջինն անդզիացիք հիմնեցին բնակուլ 'ի նահանդին պարուրին հուտսոնի՝ թելադրուք և առաջնորդուք կրոսելլերայ և ռատիսոնի երկուց գաղզկացւոց քանատայ . որք գժկամակս ինչ կրել 'ի համազգեաց իւրեանց թշնամուք բերեին առ նոր . իիստ թունեցաւ գաղզիոյ , ունել անդզիացւոց բնակութիւն 'ի հիւսիսակողմն քանատայ . քաջ նախատես գոլով եթէ յափշտակեն նք 'ի ձեռաց իւրեանց զառմետրուէ լաւագոյն մորթոց . քզի յառաջ իսկ ասպատակաւոր գաղզիացիք քանատայ գտել եին զնահանդ պարուրին հուտսոնի . և ըրբիցս և աւելի՝ հասեալ յեղերս նորին պարուրի , և հաստատել ամրուէ ինչ 'ի նմ 'ի 1656 . քաջ գիտէին եթէ 'ի կողմանց անտի ելանեն լաւագոյն , և ազնուագոյն մորթք վայրի երէոց : Վայ 'ի 1682 որսացել զսիրտ կրոսելլերայ և ռատիսոնի , առաքեցին զնո՞ւ 'ի գուեպէրայ և նաւուք սակաւաթիւն արամիք և անբաւական պատրաստուք 'ի քանդել զամրոց անդզիացւոց՝ որոյ շինուն աւարտել եր . և վանել զնո՞ւ անտի . բայց ոչնչ կարտացին վնասել նց : Ապա տեսեն գաղզիացւոց զի շեն բաւական առ ժամն 'ի գլուխ հանել զոր խնդրեն , խորհեցան և ինքեանք հիմնել սմրոց մոտ առ անդզիացիս . զոր և արարին 'ի 1686 . և այնուհեան յարաժամ պատզմէր 'ի մէջ երկուց ազգաց յայնմ անշէն . և անքնակելի նոի , մինչւ 'ի դաշնադրութեադրութեադրայ՝ յորում անդզիացիք հաստատեցան 'ի ժամանդունի երկու յոդուածս ստորադրեսցուք :

Յօդ ա . Յամաք պարուբին Հուտսոնի :

Այս ցամաք ուղ 'ի վերանդը նշանակեցաք՝ ձգի 'ի հիւսիսակողմն քանատայ մինչև ցանծանօթ վայրս . ուր բաց 'ի բուն բնակչաց՝ զորս 'ի վերոյ թոռագրեցաք , գատնին և սակաւաթիւն անգիտացիք . որք ունին քանի մի փոքրիկ և անզօր ամրոցս կմ վճռաւեղիս , զորս յնչիկայդ նշանակեցուք :

Եօդ . կմ Աջրոց եօրայ : Յուռաջագոյն կոչէր Պուտն . կմ Աջրոց պրոդուայ . զի 'ի գաղղիացւոց շնեցաւ . ոյլ յետոյ էանց 'ի ձեռս անգղիացւոց . և է այժմ գլխաւոր տեղի նց 'ի կողմանս յայսուիկ կառուցել 'ի կղզի փոքրիկ . մօտ 'ի բերան նէլուն գեաոյն , որ մաանէ 'ի պարոյրն հուտանի :

Աջրոց իշխանին իւլէսի : Ամրոց կմ վաճառատեղի , կառուցել 'ի ծոց պատուական 'ի բերանի քուրդիլ գետոյն 'ի հիւսիսոյ արեմտից եօրքայ :

Եօդ սէվէսու : Ամրոց և վաճառատեղի 'ի հարաւա կողմն եօրքայ , առ բերանով գետոյն՝ որ մաանէ 'ի պարոյրն հուտանի :

Աջանի : Ամրոց և վաճառատեղի առ ափն պարուբին եամէսայ , որ ձեացուցանէ զհարաւային ծոց պարուբին հուտանի , մօտ 'ի բերան համանուն գետոյն , որ ելանէ 'ի լնէ սրբյն աննայի , անոնա նելոյ և գուտիթէքալուն :

Հէնէ : Իշ փոքրիկ բնակուն , կմ վաճառատեղի առ նովին ալտանի գետով 'ի հարաւային կողմն նը . ոչ կարի ինչ հեռի 'ի լնէ սրբյն աննայի . յօրմէ ելանէ գետն : 'ի հարաւային ծայր պարուբին եամէսայ էին և այլ երկու ամրոցք անոնանելք Աջրոց Հուպեր պան . և Մէնսիտի . որք այժմ 'ի բաց լքել կան :

Մասէ : Ամրոց և վաճառատեղի կառուցել 'ի կղզի գործել 'ի մուսէ գետոյն , որ ելանէ յապիդիողիս կոչեցել լնէն . առ որով յարեւելեան կողմն կառուցին և գաղղիացիք ամրոց համանուն : 'ի մուսէ գետն մաանեն երկու վատկք մեծամեծք . յօրոց մին կոչի Մէնսիտի , ելել 'ի միադօտի բարձրաբերձ լերանց . որք բաժանեն զբանատա 'ի սահմանաց պարուբին հուտանի . իսկ երկդ վտակն կոչի Բերայէ , որ ելել յալիմբիկոն լնէն հոսի յարեւմտից յարեւլս .

և գ՞եց խառնի 'ի մուտե՛ . որ այնուհետեւ ըարձակի յոյժ :

ՍԵ պէտքա: Ամրոց շինել 'ի գաղղիացւոց առ լՃիւ . որ կոչի Լիճ անջրեայ . կմ Ծեւտամի կուշինե 'ի սահմանա սիուսացւոց :

ՍԵ կարուս: Ամրոց շինեալ նոյնեղս 'ի գաղղիացւոց՝ առ լՃիւ անտառաց յարեւմտեան կողմն նըր . որ ունի զհաղորդուի ը լՃին օվինիբինիկոնայ :

Մաւրէտա: Ամրոց առ արեւելեան եղերբ օվինիբիկոն լՃին , որ հոսի 'ի լիճն պորպոնայ :

ՀՀ բաց պորպոնայ: Հիմնեալ 'ի գաղղիացւոց 'ի հիւսիսակողմն համանուն լՃի . յորմէ ելանէ գետն պորպոնն , որ ըստուգագոյն աշխարհացոյց պատկերաց մտանէ 'ի լիճն աւիստվակամոն . և անտի ելեալ հոսի 'ըստուգ ը արեւելեան հիւսիս . իսկ ըստ այլոց՝ ը արեւելեան հարաւ մինչեւ 'ի լիճն ամրոցաց . յորմէ ելանէ նէլսոն գետն . որ մտանէ 'ի պարոյրն հուտսոնի առ եօթքաւ գլխաւոր ամրոցաւ անգղիացւոց 'ի կողմանս յայսոսիկ :

Բիժնադ . կմ Բիժնադ : Եւ ամրոց կառուցել առ պարուիւ եամեսայ յարեւելեան կողմն նըր յերկրին լապրատորայ :

Յօդ եւ Կղզիք պարուրին Հուտսոնի :

Իշմ կղզիք գտանին 'ի պարոյրն Հուտսոնի մեծամեծք և մանունք . այլ սակաւ տեղեկութառնիմք զնոցանէ . յայն սակս զանունանո և թ և զդիրս նց յառաջիկայդ նշանակեսցուք :

Պարբէն : Կղզի մեծ երկայնաձեւ , որ ձգել տարածի 'ի հարաւոյ ը հիւսիս . սկսել 'ի սարէն սութհ համթոն մինչեւ 'ի նեղուցն ֆրողէն առ պարուրիւ Բիժնալս :

Մաւսթէլու . Տիւ . Նորտինիամ . Աւանդուրի . և Միւլ: Են փոքրագոյն կղզիք յարեւելեան կողմն պարրէնայ : Բարեբանադ : Կղզի մեծ և ըարձակ յոյժ . որոյ արեւմտեան և հիւսիսային ծովեղերք գեռ անծանթ են . թէպէտ բղմ հացոյք ամբողջ ձեւացուցանեն զնա , որ և ձգել տարածի ը մէջ նեղուցին Հուտսոնի . և մեծի պարուրին քումարէռլանտայ . զորմէ ասեն ունել զհաղորդուի ը մեծի պարուրին պաֆինայ . բայց հորկ ձնուհ մաանելոյ 'ի պարոյրն պաֆին է նկ .

Նեղուցն տառիսայ . ը մեջ կրէնլանտիոյ և Լամէս
կղըլոյն :

Եամէս : Կղզի մեծ յոյժ 'ի պարոյրն սլաֆինայ յայն
կոյս արջային շրջանակի ը 70 աստիճանաւ հիւսիւ
սային լայնուել . բայց հիւսիսային և արևմտեան
եղերք նր չմես են լիով ծանուցել :

Պարոյր պագինայ : Ձգի լայնատարած յայնկոյս ար-
ջային շրջանակի առ սահմանօք ցամաքի հիւսիսային
ըսեռի . գտել 'ի 1662 'ի գերահուշակ նաւապետեն
սլաֆինայ . յորմէ և կալաւ զանուն . լի են 'ի նմ
կէտք մեծամեծք , մենդ 'ի հիւսիսային կողմանս
մօտ 'ի բեկոն . ցւնի սա բնաւ հազորդուի ը հա-
րաւային կմ խաղաղական ովկիանոսի , ոնց առ հնրկ
հաստատեն գրուածք համօրէն նաւասանեաց . որք
ը ժմկո ժմկո դիմեցին 'ի կողմանս յայնոսիկ 'ի
գտանել անաի անցս 'ի ծովին հարաւային , առ 'ի
բանալ եւրոպիոյ Ճնդի առ արևելեան հնդկաստան
առաւել համասօտ , քը զոր է Ճնդի հրուանդանին
բարեյուսոյ . բայց միշտ 'ի դերեւ ելին ամ ջանք նց .
զի յամ կողմանց գտին զնա շրջապատել ցամպքաւ :
Նշնակէս և ոչ պարոյրն հուտսոնի ունի հազորդուել
ը արևմտեսն կմ խաղաղական ովկիանոսի . թէ-
պէտ ռայնալտ 'ի բնական և 'ի քղքական պատմուել
երկուց հնդկաց՝ ջանայ բշմ պտմաօք զհկուկն ցու-
ցանել . սակայն այնչափ փորձք՝ զոր բշմք բշմք ան-
դամ արարին գրեթէ ը գարս երկուս , յայտնանդո
ունայնացուցանեն զպմառս նր . զորս ինքն իբր
ապացուցականս համարի : Բայց ենթագրեալ և օ
թէ գոյր սյն կարծեցել նեղուցն ռայնալտայ 'ի
հիւսիսային արևմտեան կողմն պարուրին հուտսոնի ,
սակայն եթէ ոչ հանապազ , գէթ ը մեծ մասն
տարւոյն լիներ սառուցել . վեյ և անօդուտ և վտան
գաւոր . քզի հաստատուն փորձիւ տեսաւ , զի
յամերիկայ սաստիւել ցրտուե առաւելու իբր 12
սատիճանաւ . ք զգրտուի հնոյ աշխարհի . դրյամերի
կայ ը 50 աստիճանաւ լինի այնչափ սաստիւե
ցրտուե , որչափ ը 60 և 62 աստիճանօք 'ի մերումն
կիսագնատի . ոնց ահա 'ի ծոցն պոլմնեան և ֆինլանա-
եան յօթի շվետաց , թէպէտ սաստիկ է ցուրան ,
բայց տանելի է . և ոչ երբէք երևեցան 'ի նու լեռնա-
ցել սառոյցք . ուր 'ի պարոյրն հուտսոնի որ յոյժ
առաւել հարաւային է՝ լի են հնդզ . և ցուրտն
այնչափ սաստիկ , մինչև հազիւ մնալ կենդանի մրդկն
և անամնոց :

ԱՅ ԽՈՐԴՆԵՒԹՅՈՒՆ

Հայութան կմ Լուսիանա և կմ Լուսիմբանա որ յոշտ
դոյն կողէր Փլութոս . և աշխարհ ը-
արձակ . որ 'ի հիւսիսոյ' ունի իւր ասհ-
ման զքանառառա . յարեւմտից՝ զմէքսի-
քոն . յարեւելից՝ զժդ նահանգս միացելս . իսկ 'ի
հարաւոյ' զծովն կմ զծոցն մէքսիքոնի : Տարածուն
նր լայնաբար խօսելով՝ և իբր անսահման . այլ
բնակիչք նր սակաւ են . և է ը մէջ 30 և 45 աստի-
ճանաց հիւսիսային լայնուն : Ունի բազմապատիկ
գետս մեծամեծս և մանունս . յորոց գլխաւորքն
են հետագայքդ :

ՄՐԻՒԻՔԻ . կմ Մրիւիպակի : Եւ մի 'ի մեծագոյն գետոց
ոչ միայն ամերիկոյ՝ այլև բոլոր աշխարհի , որ ելանէ
յարեւմտեան կողմանց հիւսիսային ամերիկոյ . այլ
ակն նր չեւս է գտեալ . քզի քաջագոյն Ճնողրհորդք
եւրոպեանց ոչ յառաջեցին աւելի ք 100 փարսա-
խաւ 'ի վերոյ ք զքարավազ սըյն անտոնի , որ է ը
44 աստիճ' լայնուն . այս գետ ը մէջ հատանելով
զլուխիս հոսել 'ի հիւսիսոյ 'ի հրւ մղոնս իբր 1200 .
Ը զանազան բերանս մտանէ 'ի ծոցն մէքսիքոնի .
ձորոփոր նր լայն է յոյժ , այլ ոչ այնշափ ինչ խոր . և
ընթացքն գանդաղ . և ջուրն պղտոր և տղմալից .
որ և բարձել բերէ տիզմն բզմ և տերես եղեգանց
և ոստո ծառոց և ամբողջ ծառս , և բնիկենու 'ի
ծով . ոյլ ալիք ծովուն անդրէն 'ի ցամաքն վարեն
զայնոսիկ . որով օր ը օրէ ըարձակի ցամաքն 'ի ծո-
վակողմն . և գիծ գետոյն երկայնի . շլք քար բնաւ
'ի ձորոփոր նր , ող և ոչ 'ի գաշտս ը որս հոսի .
որ է յայտնի նշան , թէ այն ակղիք չեն կարի զառ
'ի վայր . զոր և գանդաղ ընթացք նր ցուցանեն :
Ամ ը ամէ սկսել 'ի մարտի , յորում սկսանին լու-
ծանիլ հիւսիսային ձիւնք և սառոյցք , յորգել աձնն
յոյժ ջուրք նր . և զեղել արտաքս 60 փարսախաւ
հեռի 'ի ծովէն յարեւելից՝ և 100 յարեւմտից՝ ծածկեն
զքաջակայ ցածուն և տղմասիդ տեղիս . կմ զնոր
ցամաքն գործեալ 'ի տղմոյ գետոյն . ուր բուսեալ
կան շամբք եղեգանց . յորս տիզմն և եղեգունք և
ծառք

Ճառք զորս գետան նորոգ բարձել բերէ՝ արգելալ գիղանին . և առ սակաւ սակաւ բարձրանան յերկուց կողմանց գետոյ . վեց ջուրն զեղել արտաքս 'ի գետոյն՝ ոչ ևս կարելով գառնալ անդրէն 'ի գետն . 'ի զեղանիլ նը լը մասին գործէ լիճս և ձահիճս . և լը մասին բացել իւր ճնազհ ը աւազաւտս՝ հոսի 'ի ծովին :

Բերանք նը ը որ զեղանի 'ի ծովին՝ բերմէն . որք և անդադար փոփոխեն զդիրս . և ըստ մեծի մասին ծանծաղ են և սակաւաջուր . յայն սակս գժունարին է յոյժ նաւուց 'ի ծովէ մտանել 'ի գետ անդր . նոյնպս և ը բովանդակ գետն՝ որ թէպէտ մեծ է և շատաջուր , սակայն վահնդաւոր է նաւարկել . սակս մեծամեծ կոճեղաց և ծառոց՝ զոր բարձեալ բերէ մենդ 'ի յորդիլ իւրում : Յինքն ըունի մեծամեծ վտակս , որք են Միառարդն . որոյ ելել 'ի հիւսիսոյ արևմտից , և հոսել ը հարաւ և ը արևելս , դնայ խառնի 'ի միսիսիբի . այլ ակն նը գեռ անծունոթ է :

Մոյինինատ . և Աշտանատ : Են երկու վտակք մեծամեծք որք նոյնպս յարեմտից խառնին 'ի միսիսիբի : Խսկ յարեելից՝ բաց 'ի Քերտէնէ և օհիօ երկուց մեծամեծ վտակաց՝ և ոյլ բերմ փոքրագոյնք խառնին 'ի միսիսիբի . դր իւլինէնէ . Ովաստուսին . Հահառնապէպս :

Վրաէ սի խաչ . Վրաէ գեղեցին . ևն :

Օդ այսր ըարձակ ճի՝ ոլէսողէս է ըստ պէտպէտ հեռաձիգ կողմանց իւրոց . բայց ը հանրանկս խօսելով՝ մաքուր և առողջարար . սակայն առ համեմատութեած մերոց աշխարհաց , ցուրտ է յոյժ . զի ահա ստորինն լուխիսա է 'ի նմին լայնուեն՝ յորում ճն բարբարոսաց յափրիկէ . սակայն օդ նը չէ առաւել չերմ և բարեխառն , ք 'ի հարաւային գւուս դաղղիոյ . և 'ի տեղիս՝ որք են ը 30 և 36 աստիճ՝ ջերմուի և ցրտուի չեն ինչ ը հատ 'ի հարաւային գւուցն գերմանիոյ . պատճառ այսր երևելի զանազանուեն , ովք բերմ անդամ ասացաք՝ է բարձրուեն երկրին ամերիկոյ . և յաճախուի բարձրաբերձ լերանց , և մեծամեծ անտառաց , որք խափանեն զճառադայթս արեգական ներգործել յերկիր . և անդրադարձութ իւրեանց ջերմացուցանել զօդն . նաև հողմունք՝ որք յաճախ շնչեն 'ի հիւսիսային սառնապստ լերանց , մեծապէտ այլայլեն զբարեխառնուի օդոյն :

Երկինք ըստ մեծի մասին պարզ են . և ոչ ընինի անդամք . բայց միայն յորժամ շնչէ յանկարծական ինչ ժամ

մըրբիկ

մրրիկ 'ի ծովէ . այլ առատազեղ ցողն գիշերային՝
ըստ զպակասուի ահճրեոյ : Բնակիչք նր քաջառողջ
են և ուժեղ . և զերծ 'ի բազմաց ախտից , որք յայլ
աեղիս յաճախել են : Նընդու և երկիր նր պարարտ
է և բազմաբեղուն . զի ինքնին անդարման 'ի մարդ-
կանէ՝ բերէ ազգի ազգի պտուղս վայրենիս , այլ
համեցս . և զանազան բանջարս և արմատս պատուա-
կանս . և անհամար ազգս մեծամեծ ծառոց . մինչեւ
ասել ոմանց՝ թէ ոչ ուրեք 'ի բոլոր հի դտանին ծառք
այնչափ այլատեսակք , և այնչափ բարձունք և
ստուարք , ոնդ 'ի լուխախա : Ունի և ըլ արձակ մարդու
խոտաւէտս պարարտարօտս , յորս արածին անթիւ
ոյծեմունք և եղինք վայրենիք . նոյնդոս և յանտառս
նր լի են բիւրազգի թռչունք վայրենիք՝ և չորքո-
տանիք : Եւ 'ի մտանել անդ՝ յետ բղմ փորձոյ՝ զոր
արարին յայլւայլ աեղիս , գտին զերկիրն քաջայար-
մար առ բղմ տեսակս արգասեաց :

Բուն բնակիչք այսոր ըարձակ հի բաժանել են 'ի
զանազան ցեղս , կի՞ ազգս փոքունս . որք յուջադոյն
առաւել բազմաթիւ էին , այլ այժմ ոչ նոյնդոս . զի
կէս մի 'ի միմեանց կոտորել նուազեցան . քզի ան-
հաջտ թշնամի գոլով միմեանց՝ յարաժամ մարտ ան-
նունէր միկն ըլ միմեանս . թէպէտ հեռի են 'ի մի
մեանց , անապատս ըարձակս անջրապետ 'ի միջի
ունելով . և կէս մի 'ի գաղղիացւոց սպառեցան .
իսկ մնացելքն այժմ ցանել ցրոնել կան առ մի-
սիսիրի գետով . և առ այլովք : Բնակարանք նց են
հիւղք հիւսետլք յսառոց ծառոց . իսկ կերակուրին
որոք վայրենիք . և ձուկն . և ոլտուղք երկրին .
այլ մարացորեն . քզի նք վաղու ևս սկսան գործել
զերկիր , և սերմանել մնրացորեն , որ է սեփական
բերք ամերիկոյ : Են ցեղք՝ որք բոլորովին մերկ շրջին .
իսկ այլք՝ մորթս վայրի երես տրկանեն զանձամբք .
հազեւ զիկս մարթեոյն ծածկելով : Մինչեւ էին
հասնել անդր եւրոպացիք . գրեթէ ամ ցեղք պաշ-
տեին զարեդակն . և կառավարուի նց բովանդակ
էր 'ի ձեռու քրամապետին՝ որ կոչէր մեծ արեգակն .
և պարծէր զանձնէ իջել յարեգակնէ անտի . յայն
ոտկս զպատկեր արեգական կրէր 'ի վր լանջաց .
կին նր ևս զնոյն իշխանուի ունէր , զոր այրն . յոր-
ժամ այրն կի՞ կինն մեռանէր . բղմք 'ի թիկնապա-
հաց և 'ի սպասաւորաց նր՝ անձամբ զանձինս սպա-
հանէին առ 'ի ուղեկից լինել տն իւրեանց 'ի հան-
գերձիւ հի . այլ այժմ զինի մտանելոյ առ նո եւրո-
ժք

պացւոց, թունի թէ սղացաօն քրիմապետին՝ ողջ և արեգական՝ խափանեցաւ։ Գլխաւորքն յազգաց և՝ իցեղից որպէս կան դեռևս, թէսպէտ նուազելը՝ են հետագոյքդ։

Աւարձեցիւ։ կմ Ավարձեցիւ։ Աք բնակին յարեւ մտեան կողմն միսիսիրի գետոյն։ որք 'ի 1729 յան կարծակի իւվը համել գազգիացւոց, որք 'ի գաւառի իւրեանց բնակէին, զամենեսին կոտորեցին։ ողջ

ստորեւ ունիմք յիշատակել։

Ագանսէցիւ։ Բնակին յափն ադանսաս վտակին, մինչեւ ցաեղին՝ ուր այս վտակ խառնի ՚ի միսիսիրի գետն։ Մէնդայիւ։ և Քադոդակչէցիւ։ Բնակին առ ափն կարմիր գետոյ 'ի հիւսիսակողմն նոտդքեցւոց։

Օսակէցիւ։ Բնակին 'ի ներքին կողմն լուսիսիայ, յարեւմտից միսիսիրեայ առ օսակէ և միսուրի վտակօք 'ի պատուական և յարգաւանդ վայրի։ Զայս ազգ կամեցել սպանիացւոց ջնջել 'ի միջոյ, և տիրել երկրի նց, ելել 'ի նոր մեքսիքոնէ, մտին 'ի լուիսիա։ այլ վրիպել 'ի ճնճիհի, փինկ գիմելոյ առ այլ ցեղս անհաշտելի թշնամիս օսակեցւոց, ը որս կամէին միտքանիլ, և յարձակիլ 'ի վը օսակեցւոց, գնացել ուղիղ անկան 'ի մէջ նոցին օսակեցւոց։ և զի ոչ ճանաչեին զնոս, յայտնեցին նց զիսորհուրդ իւրեանց։ իսկ նք ծածկել զազգ իւրեանց, առերեսս բղմ մարդասիրուն ցուցին նց։ ապա ժողովել բազմուն սպառազինելոց, 'ի գիշերի միում մինչդեռ 'ի քուն էին սպանիացիք, յարեան 'ի վը, և իսպառ սպուռ կոտորեցին զնոս։ խնայելով միայն 'ի քհնյն նց սակս այլատարազ զգեստուց։

Բապունէցիւ։ Բնակին յեզր սահմանաց տրեւմուեան լուսիսիայ առ սահմանօք նոր մէքսիքոնի, յարեւմտեան կողմն օսակեցւոց։

Գանսէցիւ։ Բնակին 'ի մէջ բանեցւոց և օսակեցւոց առ նովին միսիսիրի գետով։

Բանէցիւ։ կմ Բանիւ։ Բնակին առ միսուրի վտակաւ։ աք առաւել բազմաթիւ են, ք զայլ ազգս արեւմտեանն լուսիսիայ։

Քադացիւ։ և Գրէնէցիւ։ Են երկու ազգք մեծամեծք, որք բնակին յարեւելեան կողմն ստորին լուսիսիայ։ և բաժաննեալ են 'ի զանազան ցեղս, որք կոչին իւսուացիւ։ Քադանացիւ։ ԱՀԵՊԱՆԱՑԻՒ։ ՇԽԱԴԻՇՈՒ։ և նու որք այժմ շ մեծի մասին բարձել են 'ի միջոյ։ կմ նուազել յոյժ։

Զայս Շ զառաջնն գտին սպանիացիք։ արտա 'ի 1673

1673 գաղղիացիք քանատայ տեվեկացել՝ 'ի վայրենի տմէ որիկացւոց՝ բնակչաց հարաւային կողմանց քանատայ , եթէ 'ի հարաւային արևմուտոս ընթանայ գետ մի մեծ , զորմե՛ 'ի կարծիս անկան , թէ գուցէ մտանէ 'ի ծոցն մէքսիքոնի , կմ 'ի ծովին խաղաղական , վայ անյապաղ ելին 'ի խնդիր այնր գետոյ , ակնունելով ը այն գետ բանալ Ճնպրհ 'ի ծովին խաղաղական . և անտի ուղիղ յարևելեան հնդիկս . այս ըու յանձնարարաւ եօլիկտ անուն ումն մն , որ էր բնակիչ գուշակէքայ . որում տուաւ ընկեր հայրն մարքուէտ յնեան , որ հմուտ էր յամ՝ լեզուս հիւսիսային ամերիկոյ . սք նաւեալ ը լիճն միքիկանայ , հասին 'ի գետն աղունեսուց . ը որ փոքրիկ նաւակօք նաւել հասին մինչև ցակն նը . թէպէտ բդմ գժուարուք , սակս գտհավէժ սրավար ընթացից նը : **Ասկա ելել** 'ի ցամաք , յետ աւուրց ինչ մտին յովիսքոնսինկ գետն . և նաւել միշտ ը արևմուտոս , հասին 'ի միսիսիբի . և ը այն նաւել 'ի հարար , հասին մինչև ցագանսաս վտակն առ . Յ աստիհանաւ հիւսիսային լսյնուեն , ուր բնակին ագանսեցիք . անտի առ պակասուե պաշարի՝ դարձան յետո , և մտին 'ի վտակն ելլինեցւոց . որք են ժողովուրդ մեծ և բաղմաթիւ . և գտին զնո՞ս պատրաստական 'ի միաբանիլ ը ինքեանս : Յետ այսորիկ այլ ոմն գաղցիացի 'ի քանատայ կուցեցել սալէ , 'ի 1682 եմուտ 'ի միսիսիբի , և նաւել եհաս մինչև 'ի բերան նը , որ հանէր 'ի ծոցն մէքսիքոնի , ողջ իսկ կարծէին : 'ի յաջողակ ելից աստի քաջալերել թագաւորուեն գաղցիոյ . շնորհնց սալեայ յամին որ զկնի՝ չորս նաւս զանազանս ը մեծուեն . և արս 150 . իսկ նը ելել 'ի Ճնպհ , ուղղաց զընթացս ը արևմուտոս . և վրիպել յընթացսն , Էանց կարի ը արևմուտոս . և փինկ հասանելոյ 'ի բերան միսիսիբեայ , եհաս 'ի 1685 'ի սարն և 'ի ծոցն սըյն բեռնարդոսի . իբրև Յ 00 մղոնաւ հեռի 'ի միսիսիբեայ . և հաստատուք դնելով 'ի մտի , թէ գետն սըյն բեռնարդոսի՝ է մի 'ի վտակաց միսիսիբեայ՝ զօր խնդրէր , յամառել արնդէր ելանել 'ի խնդիր հռչակաւոր և առաստվելական բովուց սըյն վառվառեայ . այլ յայնմ Ճնպհորդուե խռովուն մեծ անկաւ 'ի մէջ արանց իւրոց սակս զրախնդիր վնելոյ մտացածին բովուց . յորոց ումանկք ըդէմ նը յարուցել սպանին զնա . նոյնապս և զրզմ 'ի մեանց կոտորեցին . իսկ մնացելքն ցանել ցրուեցան 'ի մէջ վայրենի ազգաց երկրին . եօթն անձինք և

Եթ ուր ուրեմն գտեալ զմիսիսիբի գետն, փոքրիկ
նաւակաւ մաել՝ ինա, յաջողութ դարձան անդրէն
'ի քանատա:

Այս ձախողակ ելք սալեսայ՝ ետ դաղղիացւոց մոռա-
նալ զլուիսիա ը ամս իբր 14. ապա 'ի 1699 վերա-
տին զարթեաւ տրուին դաղղիոյ հիմնել բնակուի 'ի
լուիսիա. վեց առաքեցաւ 'ի լոքէֆօրտայ իպէրվել
այր ազնուական քանատացի երկու նաւուք. որ
եմուտ նորոք 'ի միտիսիբի. և նաւել հարուստ մի
ը հարաւ, հիմնեաց անդ փոքրիկ բնակուի գաղ-
ղիացւոց 'ի գլուխն նադքեցւոց. յոր զինի երկուց
ամացյաւելաւ միւս ևս: **Ա**յս երկու փոքրիկ գաղ-
թականք գաղղիացւոց կացին մնացին անդ 'ի բաղ-
մադիմի տառապանս ը ամս իբրեւ 16. ապա 'ի 1717
կացուցաւ հռաշկաւոր ընկերուին վաճառականուե
լուիսիայ ը առաջարկուել լաւայ ուրումն. և այնու-
հետեւ սկսան առաւել յաճախել անդ գաղղիացիք.
և փոխադարձ բարեկամութ միացել ը բնիկ աղդաց
երկրին, սկսան առնել ը նո առեւտուրս մորթոց
վայրի երեսոց: **Ա**յլ յետոյ ոչ շատացել գաղղիաց-
ւոց սովին առեւտրութ, ձեռնամուխ եղեն հանել
վտարել զբնիկ տեարս երկրին 'ի մշակել վայրաց
իւրեանց, և յինքեանս դրաւել զկալուածս նց. այս
բռնուի վզվզկի օտարացոյց զսիրտ ամերիկացւոց 'ի
գաղղիացւոց. և այնցափ զայրացոյց զնն, մինչև աշգք
որք մշունչենաբար թշնամիք էին միմեանց, միտ-
բանիլ 'ի վրէժինդրուի ըդէմ գտղղիացւոց, և 'ի
կորուստ նց. քզի 'ի 1729 համօրէն ազգք և ժողո-
վուրդք՝ որք գտանէին 'ի լուիսիա, դաշնադիր եղեն
ը միմեանս, ամբն միանգամայն 'ի միում աւուր յար-
ձակիլ յանկարծակի յամ կողմանց 'ի վր գաղղիաց-
ւոց, և իսպառ սպուռ ջնջել զնո՞ 'ի միջոյ. և զի
տունէին նք սովորուի գրոյ, յայն սակս սահմանեցին
իւրաքանչիւր ցեղի ունել այսցափ թունզ դաւա-
զանս 'ի կուատունս իւրեանց. և յիւրաքանչիւր
աւուր մի մի այրել 'ի գաւազանաց անտի. որոց 'ի
սպառիլն՝ ամցն առհորկ գիմել 'ի վր գաղղիացւոց
'ի կոտորել զնն:

Զայս դաշնադրուի խմացել կնոջ քրմասկետին նադ-
քեցւոց յորդւոյ իւրմէ, զոր ստացել էր 'ի գաղ-
ղիացւոյ միոյ, ազդ արար երիցս կմ չորիցս իշխանին
գաղղիացւոց, որ իշխէր 'ի մերձակայ կողմանս յայ-
նոսիկ զդուշանալ անձին, և ժողովրդեան իւրոյ.
այլ նա առ ոչինչ համարել զաղցաբարուի կնոջն
յան.

յանհոգս կայր . սակայն կինն ոչ կասեցաւ 'ի նպառ-
աելոյ գաղղիացւոց առ 'ի ապրեցուցանել զնո՞ 'ի
մօտալուտ հարուճածոց . վայ մոտել 'ի կռատունն
նադքեցւոց , (զե գոլով նր կին մեծի արեգական՝
երբ և կամէր կարօղ եր մտանել անդ) , գողացաւ-
անտի քանի մի գաւաղանս . իսկ նադքեցիք յորժամ-
տեսին , զի սպառել էին գաւաղանքն , յանկարծակի
իմն յարեան 'ի վր գաղղիացւոց՝ որք էին 'ի միջի
իւրեանց , և առ հարկ կոտորեցին զնո՞ : Յայնժամ
այլոց գաղղիացւոց , որք էին յայլ կողմանս՝ իբր 'ի
խորին քնոյ զարթուցել , պատրաստեցան վառեցան
զինու . և զոմանս 'ի ցեղեց անտի ահացուցմամբ և
բունութ միացուցին ը ինքեանս . և նոքօք հանդերձ
յարձակել 'ի վր նադքեցւոց՝ հարին կոտորեցին ,
և գրեթէ իսպառ ջնջեցին զազգն զայն բազմաթիւ .
յորոց սակաւ ոմանք ապրեցան փախուցել 'ի գւռն
քիկակացւոց . ուր թէսպէտ երկիցս զհնտ պնդե-
ցան նշ գաղղիացիք , բայց ինչ ոչ կարացին ստոնանել
նշ . զի յերկու նուագսն ևս հարան և յետս վանե-
ցան 'ի բնակչաց երկրին : Ահա այսպէս 'ի ձեռն
մանկան միոյ ըունայնացաւ այնչափ գաղտնածա-
ծուկ գալնադրութ ամերիկացւոց :

Եւտ այսորիկ թէսպէտ անդրէն սկսան գաղղիացիք
առնել զսովորական առևտուրս իւրեանց ը բնակ-
չաց երկրին , բայց յետոյ տեսեալ ընկերուել վաճա-
ռականութեն լուիսիայ՝ որ յետոյ կոչեցաւ միսիսի-
բեսյ , զի բազմօք առաւելուին ծափին ք զօդուտն
զոր շահէր անտի , յետ զնամ հնարս հնարելայ 'ի
ծաղկեցուցանել զայս վաճառ , 'ի 1731 ետ իբր շ
հէր քսակս դուշ . և ընկալաւ հրաման հրաժա-
րելոյ յիրաւանց այսր գաւառի . և այնուհետեւ առ
սակաւ սակաւ իսպառ լքին գաղղիացիք զլուիսիա -
զոր հուսկ յետոյ թագաւորուին գաղղիոյ ինքնակամ-
եթող սպանիացւոց . որք մինչեւ ցայսօր տիրեն նմ .
'ի բուն ծաղկել ժմիկ՝ յորտւմ տիրէին գաղղիացիք
'ի լուիսիա , ոչ երբէք գոտան անդ աւելի ք 5000
սպիտակք . այս սակաւաթիւ ժողովուրդ սփուեալ
կայր առ եզերքք միտիսիբի գետոյն իբր 500 փար-
սախ տարածութ . և ունէին զերկու կմ զերիս
փոքրիկ և անզօր ամրոցս . 'ի մէջ ոյց էին 1200 արք
զօրաւորք և ուժեղք եկելք 'ի քանատայ , որք վա-
րէին զպաշտօն զինուճորական . որոց թագաւորուին
գաղցիոյ տայր ոչ միայն ըարձակ կալուճածս երկրի
անդ 'ի լուիսիա , և զկարեւոր սերմանիս , այլև մի

հրազեն յի թիւ ֆէնկ . մի սակը . մի բրիչ . մի կով
լ որթու իւրում . մի աքաղաղ . վեց հաւս . և պա-
րէնս կերակրոյ վն երից ամսոց : Ամանիք 'ի պաշտօ-
նատարաց կմ վաճառականաց ծաղկեցուցեալ էին
դշակուե երկրի յոյժ , ունելով լ ձեռամբ իւրեանց
մինչեւ 6000 գերիս , որք գործէին զերկիր . սակայն
պառւղ աշխատանաց նց սակաւ էր . զի բովանդակ
բերք՝ պա որիզ , տախտակ , մարացորեն , բամբակ ,
լեղակ , թիւթիւն , և մորթք վայրի երեոց , որք ամի
ամի ելանէին 'ի լուիսիայ , ոչ անցանէին ք 2000
ուիալի . որ առ համեմատուե անքաւ ծախուցն սա-
կաւ ինչ էր . յայն սակս իրաւամբ 'ի բաց լքին գաղ-
ղեացիք :

Այս նահանգ բաժանի յերկու մեծամեծ մասունս
յի յարեւելեան և յարեւմուեան . ունելով անջրապետ
'ի միջի զմիսիսիբի գետն , որ 'ի հիւսիսոյ հոսի լ
հարաւ : **Ա**րեւելեաննէ 'ի ձեռաս անդղիացւոց . զոր
յերկու մասունս բաժանեն . յի 'ի հիւսիսոյին և 'ի
հարաւային : Զհիւսիսայինն՝ կոչեն հատուած , կմ
գւու օհիովայ . 'ի վտակէն օհիո , որ լ մշջ նր հոսել ,
խառնի յայլ վտակս . և ասլանոք հանդերձ մտանէ
'ի միսիսիբի . զայս գաւառ յիշատակեցաք 'ի ճառա
ստորագրուե ժկնահանգաց միացելոց : Խակ զհարա-
ւային մտան՝ կոչեն ֆլորիաս արեւմանան . զորմէ
ունիմք խօսիլ 'ի ճառաս ստորագրուե ֆլորիայի :
Նոյնպա և արեւմտեան մտան՝ որ այժմ տիրանդս կոչի
լուիսիա , և է 'ի ձեռաս սալանիացւոց . բաժանի յեր-
կու մասունս . յի 'ի վերին և 'ի ստորին . զորո յայսմ
վայրի սառորագրեսցուք յերկուս յօդունածս :

Յօդ ա . Վերին լուիսիա սալանիացւոց :

Գաւառ . լարձակ յոյժ . որ յարեւմախց՝ ունի իւր
սահման զնոր մեքսիքոն միջնորդուք լայնար-
ձակ անծանօթ անապատից . 'ի հարաւոյ՝ զսորին
սպանիսականն լուիսիա . յարեւելից՝ զդւան օհիովայ ,
որ կոչի և վերին լուիսիա անդղիացւոց . և մտամբ
ինչ զքանատա . խակ հիւսիսային սահմանին անորոշ
են . որք լ պիշնիայ՝ կախել կան զկամաց և զիա-
րողուէ սալանիացւոց . որք կարեն յառաջադէմ
լինել յայն անսահման վայրս սահմանակիցս նոր

Ազքսիբոնի 'ի հիւսիս' մինչև ցոր վայր հնար է մար
գոյ ընակիլ:

Այս դաւառ ունի լերինա բղջմա . յորս երեելի են
միտշար բարձրաբերձ լերինք՝ որք յարեելից ձգին
յարեմուտս , ոկսել 'ի միսիսիբի դետոյն . և բա-
ժանել զակունս օսակայ և ագանսայ վտակաց՝ ը-
նմին բաժանեն և զստորին լուփսիա 'ի վերնոյն . և
թուն թէ ձգել տարածին մինչև ցակունս միսուրի
վտակին , որ չէ ինչ փոքր ք զմիսիսիբի . յորոց բղմ
գետք ելանեն՝ հստելը հիւսիս , և ը հարաւ : Օդ-
նր բարեխառն է . և երկիրն արգաւանդ . ուր բղմ
հանք գտանին 'ի կողմանս միսիսիբի գետոյն . յորս
անունանի են հանքն մարամեկ , որը սրճառս ետուն
գաղղիացւոց 'ի 1719 հաստատելոյ ընկերուն վաճա-
ռականուն միսիսիբեայ . յոյր սակս և յարեելեան
եղերս նորին գետոյ հիմնեցին երկու ամրոցս՝
կոչեցել Շաբաթ . և Դաշնարծ . այլ յետոյ 'ի գերե-
ելել 'ի յուսոյ խրեանց , 'ի բաց լքին զամրոցս , ը-
նոսին և զբովանդակ լուփսիա . ոոկ 'ի վերոյ նշանա-
կեցաք :

Ըստ մեծի մասին անբնակ է և անմարդի . որոյ
բնակիչք ան նք , զորս 'ի վեր անդր նշանակեցաք .
յթ բանեցիք . գանզեցիք . բատուքեցիք . օսակեցիք .
միսուրեցիք . յորս մարթ է յաւելուլ զդինդ ոնացիս
զգնակելս առ լճիւն՝ որ յանուն նց կոչե , յորմէ ելանէ
գետն սրին պետրոսի : Այս ամ ցեղք կարի սա-
կաւաթիւն են և փոքր . յորոց ումանք թափառական
կեանս վարեն , և ոմանք ունին հաստատուն բնա-
կուիս 'ի մասնաւոր տեղիս . իսկ եւրոպացիք դեռևս
չունին 'ի մէջ սց հիմնական բնակուի , և ոչ իսկ
դիւրաւ կարացեն ունել . բայց 'ի ձեռն ժրաշան
քարոզաց դարձուցել զնո՞ 'ի քո՞ , միացուսցեն ը-
ինքեանս . ոոկ յայլ տեղիս արարին սպանիացիք :
Յայսմ գաւառի գտանեին յառաջագոյն քանի մի
ամրոցք , շինելք 'ի գաղղիացւոց . և այլ բնակեալ
տեղիք՝ որք թէպէտ այժմ աւերել են , սակայն չէ
ինչ անդէսլ յիշատակել զնո՞ . ը որում կան նշանակ
եալ յաշխարհացոյց պատկերս :

Օրէան . կմ Բերդ օրէանայ : Եր ամրոց շինել 'ի
գաղղիացւոց առ հիւսիսային եղերք միսուրի վտա-
կին 'ի մէջ Մեծ և Վազուս անունել ջուրց . այլ
այժմ աւերակ է . յորմէ իբր 200 մզլ հեռի 'միսուրի
խառնի 'ի միսիսիբի :

Մէսուրի : Ե գլխաւոր տեղի միսուրացւոց հան-
M 4

գէպ բերդին օրլէանայ յայնկոյս միառւրի վտակին .
ուր կոտորեցան սպանիացիք եկեղ.ք 'ի նոր մէքսի-
քոնէ 'ի ջնջել զօսակեցիս , և զիսուրեցիս : 'ի հիւ-
սիսակողմն միսսուրիսայ՝ գտանի և այլ գեօղ ան-
ուանել գեօղ փոքր օսակեցւոց : Խսկ ը մէջ միախիբի
և մոյինկոնայ գետոց 'ի հիւսիսակողմն այսց գիւղո-
րէից՝ գտանին լայնատարած գաշտավլայրք . յորս լի
են բորողոնք , կմ վայրենի գոմեշք :

Մատարէու: Ե անուն գետոյ , և բովուց կապարի 'ի
լերինս , առ որովք հոսի գետն : Իբր 20 մզոնաւ
հեւի 'ի տեղուոնէ աստի 'ի հիւսիսակողմն՝ գտանի 'ի
միսիսիբի գետն Դիւսիէ կոչեցել կղզեակ , ուր գաղ-
ղեցիք անցել ը գետն , գտին Ճնպհ մտանել 'ի
գւռս արևմտեան բնակչաց երկրին :

Աւ սիւ: Ե ամրոց շինել 'ի գաղղիացւոց առ արև-
մտեան եղերք միսիսիբի գետոյն , մերձ 'ի տեղին
ուր վտակն անտառաց իտառնի 'ի նմ . այլ այժմ 'ի
հիմանց քանդեալ է :

Հիւյնէր: Եր ամրոց նոյնպս շինել 'ի գաղղիացւոց
առ կանաչ գետով . այլ այժմ և սա աւերակ է : 'ի
հիւսիսակողմն նոր գտանին բովք հանքային ածխոյ-
թանիասս : Են չորք գեօղք 'ի գւռի բանեցւոց :

Վլուխէր : Ե գեօղ ցեղին մահաւոց :

ՕՌՈՇԱՐԻ: Գեօղ օքդօդադացւոց 'ի գաւառին դանձ-
գեցւոց . յորոց են և օքդօդադացիք :

Յօդ ը : Այտորին լուխիա

սպանիացւոց :

Անի իւր սահման յարեւելից և 'ի հիւսիսոյ՝ զֆլ-
րիաա արևմտեան . կմ զստորին անգղիսականն
լուխիա . յարևմտից՝ զմեքսիքոն . խսկ 'ի հարաւոյ՝
զծոցն մէքսիքոնի . ծովեզերք նոր առ հորկ ծածկ-
եալ են մանր չոր և ձիւնանման սպիտակ տւազով .
և զի յածուն է անդ երկիրն , վնյ յաճախ ողոզք
'ի ջուրց ծովու : Ոչ երբէք խորհեցան սպանիացիք
փանգնել անդ ամրոցս 'ի պաշտպանութերին . քզիք
անդ բնաւ ծոց , կմ նւհնգիստ , ը որ հնար
իցէ նաւուց թշնամեաց մերձենալ 'ի ցումաքն . ուս-
տի

ալ յայնմ կողմանէ ամ իրօք ասպահով է Երկիրն . և թէսլէտ առ բերանով միսիսիբի գետոյն գոնքմա պատիկ մուռզք , այլ ոմանք սակաւաջուր են , ըստ փոքրիկ նաւակք և թէ կարեն անցանել . իսկ այլք անդադար փոփոխեն զդիրս . և Երբեմն իսպառ ցամաքին . և մի միայն գոյ հաստատուն , ըստ գրեթէ միշտ հնար է նաւուց մտանել 'ի գետ անդր . բայց կառուցեալ կայ անդ ամրոց Պալեստ անուննել . և 20 փարսախաւ 'ի վերոյ՝ են այլեւ երկու ամրոցք աստի և անտի միսիսիբի գետոյն . որք թէպէտ փոքր են և անզօր , սակայն բաւական են 'ի խափանել զանցս նաւուց թշնամեաց . վազի անցք որ ը մէջ նց՝ նեղ է յոյժ . ըստ չէ հնար անցանել Երկուց նաւուց միտնգտամայն , այլ մի առ միու խարիսխ արկանել . և ոչ կապել զնաւն ուրեք 'ի ցամաք : Բաց 'ի միսիսիբի գետոյն , ունի և այլ գետս բզմս մեծամեծս և մանուռնա . յորոց ոմանք խառնին 'ի միսիսիբի , և ոմանք գնան անկանին 'ի ծովն : Օդ նր բաղցը է և բարեխառն . և Երկիրն արգաւանդ . այլ բնակիչք առ համեմատութ ըարձակուել իւրոյ՝ սակագք . ուր բաց 'ի բնիկ ամերեկացւոց գտանին և Եւրոպացիք . որոց գլխաւոր տեղիք են հետագայքդ :

Նոր օրվեան : Գլխաւոր քղք համօրեն լուիսիայ իբը 30 փարսախաւ հեռի 'ի ծովէ՝ առ արեւելեան եզերք միսիսիբի գետոյն . հիմնել 'ի 1717 . և կատարելադործել 'ի 1722 . որով և եղեւ գլխաւոր տեղի նաւ հանդին . ձեւ նր գեղեցիկ է յոյժ . զի փողոցք նր բովանդակ լայն են , ուղիղ և հաւասարաշափ . և զուդահեռական գծիւ հատանեն զմիմեանս . որով և ձեւացուցանեն 65 կղղեակս . յորոց իւրսքանչիւրն է իբը 50 ձողաշափ . և բաժանին 'ի 12 թաղս : 'ի սկզբան անդ ամ տունք նր էին հիւղք և խրճիթք . այլ յետոյ 'ի տեղի նց՝ ը մէծի մասին շինեցան վայելու տունք 'ի թրծել աղիւսոյ . որք և ունին շուրջունակի խրամն կարեսրս 'ի ժմկի բարձրանալոյ շուրց . առ անլինս մնալոյ 'ի ջուրցն հեղեղէ : Դիմիք բազաքիս՝ կարի յաջողակ է և յարմարաւոր վաճառականուե . քզի և նաւք մեծամեծք կարեն մերձենալ 'ի քղքն . և տախտակաւ կմ գերանաւ կամուրջ արկեալ հանել զբեռինս 'ի քղք անդր . միայն 'ի ժմկս յորդուե ջուրցն ստիպին խոյս տալ և հեռանալ 'ի ցամաքէ . վազի բազմութ փայտից և ծառոց , զոր յայնժամ բարձել բերէ գետն և արկանէ յեղերս ,

Հատանէն և զստուարագոյն Շալբանս նաւուց . 'ի կողմանս յայսոսիկ գտանին բջմ ընակուելք ցրուելք առ եզերբք միտիսիբի գեաոյն : Եւ 'ի հարաւակողմն նոր օրլէանայ՝ ցամաքն գնայ առ սակաւ սակաւ անձկանալով մինչև 'ի ծովն հարուստ մի տարածութ ուստի և է իրը լեզու ինչ . ուր չիք այլ ինչ, բայց միայն աւազ սպիտակի . և լնակք շարժականք . առ որովք բոյնս դնեն դանազան աեսակք ջրային թուշնոց և պիծակք : Խակ 'ի հիւսիսակողմն քղթին 10 փարսախաւ հեռի՝ սկսանին անապատք անբնակք և անտառք . և ձգին մինչև 'ի տեղին կոչեցել կէտ հատեալ : Յարեւելեան կողմն քղթին դատանի լիճ, կմ ծովակ կոչեցել Փօնդ արդրէ : որ գնայ միանայ ը ծոցոյ սիրյն լուդովիկոսի :

Անդ Հագեալ : Աւան երևելի, որոյ բնակիչք են մշակք մրաջանք . որք մշակեն որիզ, մարացորեն . առնեն առևարութ փայտից 'ի պէտա շինուածոց : Այս տեղի կոչեցաւ կէտ հատել . վո զի ամանք 'ի գաղզկացւոց առաջին բնակչաց տեղւոյս՝ հատին տառ առու առ բլրով կմ բարձրացել երկրաւ՝ ը որ հոսէր ձորակ փաքրիկ . ապա և 'ի միտիսիբեայ գեաոյն բացին անցս առ այն առու, ը որ անհնարին բռնութ հոսել ջրոյն եհատ զիկտն երկրի . և հուսկ յեաոյ բոլոր գեաոյ միտիսիբեայ անգ փոխադրել, համառօտեցաւ Ճնողհ նաւորդաց 14 փարսախաւ . և հին ձորոփոր գեաոյն խսպառ ցամաքեցաւ . ուր 'ի սուղ Ժմկի բոււեալ անցան ծառք այնչափ մեծամեծք, մինչև յապուշ կըթիլ նոյ որք տեսին զնոտ անգստին 'ի բռւսանիլ իւրեանդ : Եւ այժմ 'ի նմին հին ձորոփորին միտիսիբեայ՝ հիմնեալ կայ այս նոր աւան :

Կարմր Բէրր : Եւ ամրոց շինեալ 'ի դաղզիացւոց առ կարմիր գեառով 'ի գաւառին նադքեցւոց, յուսով անցուցանելոյ 'ի լուիսիա ը սյս գեա՝ զոսկի և զարծաթ 'ի նոր մէքսիքոնէ . այլ թշուառուի բնակչաց նը, որք չունէին զհաղորդուի ը այլոց փարթամ գտւառաց՝ ունայնացոյց զակնիալուի նց . ուստի այժմ այս ամրոց եթէ սպանիացիք չիցեն նորոդել, գլխովին աւերակ է . և գաղզիացիք բնակիչք նը սպառել :

Ասրդէն : Եր ամրոց և բնակարան հիմնել յիպէր վիլեայ գաղզիացւոյ . օդ շրջակայ վիճակի նը քաղցր է և բարեխառն և առաջարար . և երկիրն բարձր . վայ և զերծ 'ի ջուրց ողողմանէ, և զուարժալի և ար-

արդաւանդ . յարմար առ ամ տեսակս արմատեաց , և գիրք նը յաջողակ՝ ունել զհաղորդութ լը այլոց տեղեաց , զօրս խորհեին գաղղիացիք հիմել ՚ի լուի սիա . և թէպէտ հեռի եր ՚ի ծովէ , սակայն կարէին նաւքն ը գետն հասանիլ մինչեւ ցանդ : Աստ կոտորեցան ՚ի նադքեցւոց 500 գաղղիացիք . ոտք ՚ի մերոյ նշանակեցաք . և թէպէտ յետոյ եկել այլոց ՚ի գաղղիացւոց անտի քանատայ , և միացել ը ումանց ցեղից երկրին՝ հարին և խոպառ սովուո ջնջեցին ՚ի գաւառէ անտի զնադքեցիս , այլ չեղեն բաւական նորոգել և հաստատել զնոր բնակուին զան . և յետ սակաւուց խոպառ լքին զտեղին . ուստի և ամբոցն կայ մնայ աւերակ :

Աշտանսաս : Ամբոց չինել ՚ի քանատացի գաղղիացւոց յարեւմտեան կողմն միսիսիբեայ առ ագանսայ վտակաւ , ՚ի գեղեցիկ յարդաւանդ և ՚ի բարեխառն վայրի , ՚ի գաւառի ադանսացւոց , ը որոց բղմ քաղցրուք և մտերմաւք վարէին . զի ՚ի բղմ հետէ կալովնց ՚ի մէջ ընիկ ամերիկացւոց , սովորեալ էին կենակցիլ ը նո . ուստի և աստ չունելով կին յաղդէ իւրեանց : առին ՚ի կնութիւնին բնիքեանց զգստերս ագանսացւոց , և այնուհետեւ մշտնջենաւոր խալար զութ թագաւորէ ՚ի մէջ երկուց տղգաց :

Դաստիա . Փանիւտ . Սուրբ : Եին ամբոցք յարեւմտեան կողմն միսիսիբեայ . այլ այժմ թունի թէ աւերակ են :

Գերմանացին : Են գաղթական գերմանացւոց : որք եկեալ կազան զբնակուի ՚ի հիւսիսային արեւմտեան կողմն նոր օրլէանայ՝ իբր 32 մզոնաւ հեռի ՚ի նմէ . և անխորնչ աշխատասիրուք իւրեանց շինեցին երկու գեօղս աղգի իւրեանց առ տրեւմտեան եղերք միսիսիբեայ . և սկսան բղմ ջանիւք մշակել զերիր . իիր . վայ բովանդակ երկիրն յարեւմտից միսիսիբ . եայ մինչեւ ցմերձակայ վայրս նոր օրլէանայ՝ քաջ մշակել և եղաշտապանել թմբովք և խրամօք ՚ի ջուրց միսիսիբեայ , որ սովորաբար ՚ի գարնանային ժմկա յորդել աճէ յոյժ :

Է. Ը. Խ. Բ. Բ. Հ. Օ. Տ. Փ. Լ. Օ. Բ. Ի. Տ. Ա.

ՅԱյս անուն անունանեաց յովիշաննէս բօնք
լիոնեան սպանիացի առաջն գախչ այսր նի .
որ թարգմանի ծաղկաւէտ . իւր զի կմ
'ի կիւրակէի ծաղկաղարդին եհաս անգը , կմ յրէս
գեղազունարէն և վայելու դրից երկրի նր : Բայց
յառաջն ժմկս սպանիացիք սովին անունամք ան-
ունանեին զայն բովանդակ տարածուի երկրի . որ
ձգէր առ եղերը ծոյզին 'ի սահմանոց մէքսիքոնի
մինչեւ 'ի ծովն հիւսիսային . վոյ և 'ի հին Շացոյց
ը այնմ գծագրեալ է . ուստի և սահմանք նր դլսո-
վին անորոշ են 'ի նու և փրիպական : Զի բուն ֆլո-
րիտա ը այժման քաջահմուտ Շագրաց ունի իւր
սահման յարեւմտից զլուիսիա սպանիացւոց . յոր
մէ բաժանի 'ի ձեռն միսխսիքի գետոյն . 'ի հիւսին
սոյ՝ զգաւառն օհիւվայ , կմ զվերին լուիսիա անգ-
վացւոց . յարեւելից՝ զովիսիանու , և մասամք ինն
զնիորմիա . իսկ 'ի հարաւոյ՝ զծոցն մէքսիքոնի .
Բնակիչը նր թէովէտ առ համեմատութ շարձակու-
թե իւրոյ սակաւ են , բայց առ այլովք հիւսիսային
գաւտոօք՝ սա առաւել բաղմանարդ է :

Ունի բղմ գետս մէծամեծս և մանունս . որոց
գլխաւորքն են սք . Ետասա . վտակ մեծ լայն և խոր-
որ զինի շերկար ընթացից գնայ խառնի 'ի միսխսի-
քի գետն : Գետ նորգորդութիւն . որ 'ի հիւսիսոյ հոս-
եալ ը հարաւ . մտանէ 'ի լիճն փոնշարդրէայ : Փեռ-
տակաւա . մտանէ 'ի ծոցն մէքսիքոնի հանդէպ Քօր-
նէ կոչեցել փոքրիկ կղզւոյն : Մասին : գետ մեծ ,
որ յինքն ընկալեալ զԱշտամա , կմ Քառաս , զգետն
քիքաքեցւոց , և զգեւան գումաց՝ մտանէ 'ի ծոց անգը
մէքսիքոնի . ուր և գործէ պարոյր շարձակ 'ի մէջ
կիսին կմ սարին մնապիլեայ , և տէլֆին կմ մաս-
սաբրո կղզւոյն : Աշտամակիուլա . գետ մեծ՝ որ ելանէ
յափալաքեան լերանց առ սահմանօք ձիորմիայ և
քարուինայ . և ը զանազան բերանս մտանէ 'ի ծոցն
մէքսիքոնի յայսկոյս և յայնկոյս սարին Եստու-
թայ . կմ Սէյն Վատայ . 'ի պարոյրն սրբյն յալսեփայ .

ԱՅ Հաղթես, կմ ՍԵ յունանես • որ յարեմտից հոսք-
յարելոյ յերկու առաջ բաժանելը • ապա միացել
գնայ անկանի յովկիանոս անդր : Բայց 'ի սոցունց
են անդ և այլ գետք փոքրագոյնք՝ բայց երեւելիք •
որք առ հնրկ զեղուն 'ի ծոցն մէքսիքոնի • ոյս գետք
կարի օգտակար են, ոչ միտյն սակա առատուե ձկանց
զոր մատակարարեն բնակչաց, այլև ոռոգել զեր-
կիրն՝ արգաւանդս և բազմաբեղունս գործեն :

Օդ այսր ծի քաղցր է և տռողջարար և բարեխառն •
առաւել ջերմ, ք թէ ցուրտ, զի չէ ինչ հեռի յարեա-
դարձէ խեցդետնի • սակայն սաստկուհ ամառնային
տօթոյն միշտ բարեխառնի 'ի հովմոց, որք շնչեն
յարալսքեան լերանց : Խսկ երկիր նը թէպէտ 'ի
ծովեզերեայս աւազուտ է և անբեր, բայց փոքր
մի հեռացել 'ի ծովէ 'ի ցամաքակողմն, պատուա-
կան է և արգաւանդահող, և յարմար 'ի բերել
զամազգո արմուեաց, եթէ սերմանեսցի • ուղ փոր-
ձիւ տեսին եւրոպացիք • գրեթէ ը բոլոր ֆլորե-
տայամին երկիցս հնանի զմսրացորեն կմ մայիզ-
ունի և մանեօք, յորմէ գործեն հաց • և այլ տե-
սակ մի ցորենոյ՝ որ նման է վարսակոյ • ք իւլա-
ֆոյ • որ և ինքնին բուսանի 'ի գիճին աեղիս, և
յեղերս գետոց ը նմանութեն կնիւնոյ • զոր իբրե-
հասանէ, բնակիչք երկրին ժողովեն և կապեն 'ի
խրձունս • և թօթմափեն 'ի մէջ քանոթից, կմ փոք-
րիկ նաւակաց իւրեանց • և այն որ անկանի 'ի
ջուրն, 'ի յետադայ ամի ինքնին բուսանի և անէ
անդարման 'ի մարդկանէ : Ունի և կանեփ, և վուշ,
և այլ բոյս մի՝ յորմէ հանեն թելս ոսկեգոյնս • և
գործեն նովաւ ոստայնս, նման այնմ՝ որ գայ առ
մէզ յարելեան հնդկաց • զոր և կոչեն կտաւ 'ի
խոտոյ • գտանի անդ և բոյսն՝ յորմէ գործեն լե-
զակ • և այլ զանազան բոյսք պիտանիք 'ի գեղորայս :
Ունի և լարձակ արօտս խոտաւէտս • և անտառու
մէծամեծս • և ծառս բազմատեսակս պտղաբերս և
անպտուլս • ուղ չորենի • որ բերէ պատուական
շոր • զոր ուտեն թարմ, այլև չորացուցանեն 'ի
ուշտս ձմեռան • վայրենի կեռասենի • տեսակ մի
արմաւենոյ • ազգ մի որթոյ խաղողոյ ինքնաբայս • ոք
բերէ ողկոյզս մեծամեծս • թթենի • փատղենի՝ բայց
անպտուղ • գարնի • ծառ վայրի շագանակի • մայք
փոյտ • նոճի • երենոս, այն է տպանօղ • կազնի •

հերձի՝ սպիտակի, և կարմիր :

Այլ առաւել պատուական և անուանի ծառ այսպ
նու

նահանդի՝ է ծառն անուշանեալ Առասքուս. զոր
ընիկ ֆլորիտացիք Փուլանա, կմ գունամա կոչեն. որ
հաղին աճէ 'ի շափ բարձրութե սոճւրյ. և բու-
սանի 'ի գաշտս և 'ի լերինս. բայց յայնպիսի աե-
ղիս, որք ոչ կարի խոնաւ են, և ոչ կարի չոր. յոր
ժամքանի մի ծառք 'ի ծառոց ապահի բուսեալ կան
տո. միմեամբք 'ի միում վայրի, սփունն շուրջանակի
հոտ անոյշ նման հոտոյ կինամոնոյ. դո առաջինի.
նաև ըմպելին զօր կազմեն անտի՝ է անուշահոտ և
ծաղկահամ. այս ծառ համարել է գեղ ազդողական
ըդէմ ցաւոյ ստամբաց. և ըհանրապէս ըդէմ ում
ախախց պատճառելոց 'ի ցրառուէ. այլու ըդէմ ելե-
փանթտկան ախախն. որ է՝ ֆռէնկի; Ունի և բազ-
մատեսակ վայրենի չորքոտանի անտառնս և թըռ-
չունս. պր երկու տեսակ առիւծոց, ընձառիւծ,
յովազ, ջրշուն, բէշկ մշկոյ, կվաքիս, աղուէս,
վայրենի կառու, գայլ, արջ, այծեամն, այծեմնիկ,
հաղպաստակ. Հաղար, և այլ չորքոտանիս, և բազէ,
որոր, արագիլ, կռունկն, արծունի, աղաւնի, տառ-
րակ, թութակ, սարեկ, սագ, և բագ վայրենի.
և այլ աղդի աղդի թուչունս Երփնագեզս և ոքան
չելիս. և այժմ գտանին անդ և ընտանի անտառնք
տարեալք յեւրոպիոյ, պր արջառ, ոչնար, ձի, կա-
տու, ևն. Ունի և ածուխ հանքային 'ի բդմ տե-
ղիս. Երկաթ. և մնտիկ մնկատար. կմ լաւ ևս
տաել աղդ մի հանքաց, յորմէ գործեն մնտիկ. զոր
բնակիչք Երկրին առ այլ պէտս ոչ առնուն 'ի կիր,
բայց միայն 'ի ներկել նովաւ զերեսո, և պրոլոր
մարմինս 'ի ժմկս սրազմի, և կմ յերեելի ինչ և 'ի
հանդիսաւոր ածնի:

Բաց յայսցանէ, գտանի անդ 'ի բդմ տեղիս և Սա-
դարակ, որ է աղդ ինչ հանքաց. և Ունչեւ, զոր
խալացիք օրփիմէնդ. կոչեն. որ է ոսկեգոյն թոյն
ինչ մաշողական: Խակ 'ի ծավեզերեայս' մասնաւորա-
պէս յորժմ' շնչէ հողմն հարաւային՝ գտանի աղդ 'ի
խիժոյ կմ կորոյ, զոր սպանխացիք Ք-իշա կոչեն.
որ է կարծր. այլ հարավով կակղացուցել, օծանեն
նովաւ զնաւո. որ լու ասելոյ սպանխացոց՝ լաւ ևս
է ք զբնիկ կուպր. վ՛ զի ոչ հալի 'ի ջերմային գա-
ւառս 'ի սպատիկ տօթոյ արեգական:

Բուն բնակիչք այսր նահանդի՝ առ համեմատուք
այլոց հիւսիսային գաւառաց բդմ են. ուկ և 'ի վե-
րոյ նշանակեցաք. որք առ հնրկ թուխ են, բայց
հարել 'ի սեագոյն կարմիք' առաւել ք զբանատա-
ցիս.

ցիս . զոր ասեն պտղաւել՝ 'ի մասնաւոր իւղոյ անտի .
որով օծանեն զմարմին իւրեանց . հերք նց սեաւ
են և երկայն ցրուել զգլխով . յորմ զարհուրել իմն
երկի տեսիլ դիմաց նց . իսկ հասակ մարմնոյ նց բա-
րեշտի . ուժեղ են և քաջասիրտ և վայրենաբարոյ .
այլ կենցաղելիք , եթէ մեզմով և քաղցրութ վարես-
ցի ոք ը նս , ող ը ամենի դիմակեր գաղանաց :
Մարդակեր են , կմ գեթ ոյնալիսի եին 'ի ոկզբան
անդ՝ յորժամ սուանիացիք հասին անդ . զի զորս
ըմբռնեին 'ի ստղմի , զարս զենուին 'ի պատիւ արե-
գական , զոր պաշտեն . և ուտեին զմու նց . իսկ
զիանայս և զմանկունս գերի առնէին ինքեանց :
Ամանք յառաջին ձնով որդաց առասպելելին , թէ 'ի
մշշ ֆլորիտացւոց գտանին բնշմ արունեգք , կմ եր-
կասելք . դր որք միանդամայն են այր և կին . որոց
բնաք 'ի մատենագրաց միամուռ հաւատացեալ ,
համարձտե աւանդեցին զայն 'ի գիրս իւրեանց ,
իօր ձնարիտո . այլ յետոյ տեսաւ յայտնալէս՝
եթէ ցնորք Երեակայուն էին , և մտացածին եղջեր-
ուաքաղք . զի այն առասպելել արունեգք ֆլորի-
տայ ոչ այլ ինչ էին , եթէ ոչ՝ արք կմ կանայք գեր-
եալք 'ի պտղոզմի . որք զօրէն քեսնաբարձ գրաւ-
տուց ծոյեին տեարց իւրեանց , կրելով զաղիսա-
մախս զկնի նց 'ի ժմկս պտղմի , և որսորդուն . յոր
դործ սովոր են նք ծոյեցուցանել և դրուն կա-
նայս իւրեանց :

Զգեստ նց է մորթ այծեման , կմ այլ ինչ անասնոյ՝
սլատել զմիջով . իսկ մնացել մասն մարմնոյն մերկ
է . բայց սովորուն ունին 'ի բազուկս և 'ի սրունս՝
նկարել պէսպէս ձես անջնջելիս : Իսկ կերակուր
նց են սակաւ մնրացորեն , կմ մայիզ , և մանեզ ,
և այլ տեսակ մի արմաեաց . զոր 'ի վեր անդր յի-
շտակեցաք . և պէսպէս արմատք , և պառղք , և
ձուկն սակաւ . զի չունելով ճահաւոր գործիս՝ սա-
կաւս որսան . և միս վայրի անասնոց , այլ առաւել
համեղաճաշակ կերակուր նց՝ է միս կոկորդիլոսի .
Վր յորժամ գտանեն , անյգբար ուտեն . բայց բնշմ
ոնդամ առ սաստիկ սովոր որով գրեթէ յարաժամ
ատագնապին . Ծ վկայելոյ ալվարոսի նէ կվէզեանքա-
պէքսյ տէվաքայ՝ ստիպին ուտել գորտունս , օձու ,
մողէստ , զձուս մրջմանց , և զայլ զազեր զեռաւնս ,
այլև զփուշս ձկանց , և ոմանց սողնոց . զոր չորացու-
ցել լուսեն 'ի փոշի , և այնպէս ուտեն . քզի թէպտ
երկիր նց պարարտ է և արգաւանդ , այլ չունելով
նց

թիսի, փութացոյց վցիղիկի կազմել զնաւո . և ըն-
կենուլ 'ի լիճ անդր մեքսիրոնի . և սկիզբն առնել
ոլողմին :

Առ բացայսյունի հետագայ պատմուես՝ կարեոր
է փոքր մի սասրագրել զդիրս, և զայլ հանգամանս
մեքսիրոն քաղաքի : Ասդ՝ մեքսիրոն քդք յոշադոյն
թէնունքիւնս անուննել, եր 'ի լայնարձակ գոշտաւ
վոյցի շրջապատելոյ բարձրտբերձ լերակիք . կա-
ռուցեալ 'ի կղզի մեծ առ ըարձակ լճիւ կմ ծովա-
կաւ, որոյ շրջապատ էր իրը 90 մղոն . ունելով յե-
զերս իւր շուրջանակի զանազան քաղաքս պսակաձե-
կառուցեալ . և 'ի մի ծայր իւր զմայրաքաղաքն : Ոչ
գոյր այլ Ճնղհ ցամաքաւ 'ի քաղաք անդր, բայց
միոյն ը երիս ամբարտակս գործեալս 'ի քարանց և
'ի հողոյ, որոց լայնուին էր իբր 30 ոտնացափ . իսկ
երկայնուն տէսպէս ը դրից տեղեացն . զի արե-
մտեանն՝ էր իբր մղոն մի և կէս . հիւսիսոյին արե-
մտեանն՝ 3 մղոն . իսկ հարաւայինն՝ 6 . որք 'ի քա-
ղաքաց կառուցելոց 'ի ծայրս նոյ առնուին զանուն .
զի արեմտեանն՝ կոչէր Ճնղհ թաքուպայ . հիւսի-
սոյինն՝ թէղէվքայի . և հարաւայինն՝ քույտանայ .
իսկ յարեւելոց՝ էր շրջապատեալ 'ի ջուրց լճին .
իւրաքանչիւրն ունէր 'ի տեղիս տեղիս հատուեածս
ը մէջ, ը որս ելանէին ջուրք . և 'ի վը կամուրջս
փայտակերտս ծածկեալս հողով . որով բովանդակ
Ճնղհ ամբարտակացն՝ էր միօրինակ շարունակել .
որք և էին իբր ամուր բերդք քաղաքին : իսկ քա-
զաքն մեծ էր և ըարձակ . թէսկէտ պիշինկ գնէ-
զըրջապատ նոյ 7 մղոն ևեթ, այլ զանազան պարա-
գայք պատմուեց սպանիացւոց ցուցանեն լեալ
ըարձակադոյն յօյժ . էին 'ի նմ ըզմ մեհեանք մե-
ծամեծք, և ապարանք ըարձակք, բայց շինուեածք
նոյ

Նց բիրտ և անարտուեստ և անշուք և միայարկ . իսկ բնակարանք հօրկ ժղվգեան էին կաւակերտ և փայ աակերտ ծածկեալ տերեոզք եղեգանց՝ ոչինչ ըհատ յաղքատակերտ հիւղից այլոց ամերիկացւոց . ուներ 'ի տեղիս տեղիս մեծամեծ հրապարակս , յթ մշյտանս . որոց մինն՝ որ էր գլխաւոր վաճառատեղի քաղաքին , ասի թէ տյնչափ ըարձակ էր , մինչև 40 . 50 հզր անձանց կալ 'ի նմ և տուրեւառիկ լինել : Իսկ զթիւ բնակչաց նր՝ ոմանք չափազանց բազմացուցանեն . այլ ը հաշուի տուաւել ստուգաքան սպամագրաց սպանիացւոց՝ է 60000 . բայց 'ի Ժմիթ պաշտրման սպանիացւոց , ասի թէ դատն 'ի նմ իբր երկերիւր հաղարք ժողովեալք 'ի շրջակայ գւոց և քաղաքաց 'ի պաշտոպանութիւն արքայանիստ մայրագաղաքի իւրեանց . գիտելով եթէ զնմէ կախալ կոյը վլճակ թէրուել իւրեանց : Այսչափ ինչ վե մեքսիքոն քաղաքի . արդ դարձցուք անդրէն 'ի կարդ պատմուես :

Իբրև ընկեցան նաւքն 'ի լիճ անդր , քորթէս բաժանեալ զՊօրս յերիս առաջս , կալաւ զերեսին ամբարտական . և տիրեալ 'ի ձեռն նաւուց իւրոց մեծի ընթիւ , ուր զանհամար քանիօթս մէքսիքացւոց ընկղմեաց 'ի ջուր ը բազմութիւն մարդկան , յուջ մղեսոց զգունդս յերից կողմանց քաղաքին . բոյց քզի կուաթիմոզին ինքնակալն զամ զօրութիւն մէքսիքեան կայսերուել՝ անդ հաւաքել ուներ , անպարակի քաջութիւն դիմագրաւ լիներ սպանիացւոց . յայն սակս ը ամիս մի ողջոյն երկարեցաւ պաշտրումն . յորում երկրպին կողմանք ը ջուր և ը ցանաք՝ մուլերին կատաղութիւն մաքառեին 'ի տունէ և 'ի գիշերի . և բջիք անկան 'ի սպանիացւոց . և շտաք և ս վիրաւորեցան . իսկ թիւ անկելոց 'ի մէքսիքացւոց անթիւ անհամար էին : Ապա տեսեալ քորթիսի զի զօրք իւր առ ըերկար տարժանաւոր տշխատութեց սկսանէին թուլանալ և լուծանիլ , զի մի իսպառ վհատեսցին , և ըհատցի պազմ . հրաման ետ զօրապետաց երկուց գնդից յուջ իւտղալ . և ինքն առել զառաջնորդուել երդին , երեքեան միանգամայն գրոհ տունեալ յարձակեցան 'ի վր քաղաքին . քանդեցին խորտակեցին զպատնեշտ մի զկնի միոյ . անցին ը խրամս և ը հատուածս ամբարտակաց . մտին կալան զմասն ինչ քաղաքին : Այս յայսմ մեծի շփոթուել ոչ մոռացաւ քորթէս յուջատես լինել , պատրաստել ճնշի փախտական , եթէ դէպ լիցի

Ըստ զօրաց իւրոց տկարանալ ըդէմ յոգնախուռն մարտկաց մէքսիքացւոց . վնյ հրաման ետ ալվարետայ զօրավարի՝ լնուլ զկտրօնս և զիրամս ամբարտակաց և ջսմիջաց . բայց նա անարդանս համարեալ անձին՝ զայն գործ կարեոր , անգոսնել զպատուեր նր՝ գիմեաց և ինքն 'ի մարտ :

իբրեւ ծանեաւ կուաթիմոզին զայն անհնարին վրիողակ սպանիացւոց , հրաման ետ զօրաց իւրոց յետս յետս գնալ , և տեղի տալ սպանիացւոց յնչ մզիլ . և ինքն 'ի նմին պահու արձակեաց զայլ խումբու ընտիրընտիր մարտկաց պէսպէս Ճնկհաւ ը ջուր և ը ցամաք 'ի մեծ հատուտծ անդր ամբարտակին՝ ունել զանցս Ճնկհին ըդէմ սպանիացւոց . ապա ետ նշան քրմաց մեծի մեհենին հարկանել զմեծ թրէ բուկն նունիրեալ չածոյն պտզմի . իբրեւ լուան մէքսիքացիք զայն ձայն սդալի և մահահուր առ հորկ վերջին մոլեգնութիւն յափստակեալ , խուռնընթաց գիմեցին 'ի վլր սպանիացւոց . և ոչ կարելով նց զդէմ ունիլ սյնպիսի բուռն յարձակման գաղանաց եալ ամբոխի , սկսան յետս յետս ընկրկիլ . զառա չինն հաստատուն ունելով զկարգ իւրեանց . այլ 'ի ստիպել թշնամոյն , և 'ի սաստկանալ արհաւրաց . անկաւ շփոթումն 'ի նո . և առ հապճէոլ տագնապի 'ի հասանիլ 'ի մեծ հատուտծ անդր ամբարտակին՝ գահավիժեցան 'ի նմ խառն 'ի խուռն սպանիացիք և գլասկալացիք , հեծեալք և ոտաննաւորք . իսկ մէքսիքացիք յամ կողմանց 'ի վլր հասել , հարին զնն չարաչար . անդ ըմբռնեցաւ և քորթէս , մինչդեռ տառապէր ասլրեցուցանել զոմանս 'ի զօրաց իւրոց , որք անկեալ էին 'ի ջուր . այլ ազատեցին զնա երկու ոմանք 'ի զօրավարաց իւրոց . բայց ինքանիք մեռան անդ , և քորթէս ընկալաւ վէրս վտանդաւորս :

Յայնմ ահաւոր մարտի՝ կորեան 'ի սպանիացւոց արք աւելի ք 60 . թող զքառասունս , որք կենդանւոյն ըմբռնեցան , և ածան յաղթանակաւ 'ի մեծ մեհեանն . ուր զկնի գմնդակ տանջանաց՝ զոհեցան չածոյն պտզմի . որոց աղէտալի գոցիւն ազակի 'ի ասանջանսն 'մօրմոքէր զսիրտս , և դելոյր զաղիս քորթիսի և ամ զօրաց նր . զի չէին իսկ հեռի 'ի մեծ տաճարէ անտի . այն զի՝ յայնպիսի դիրս կային , ուստի կարէին և աջօք տեսանել . ոնդ վկայէ զանձնէ տիազ , թէ ետես զամ ասանջանս ընկերաց իւրոց 'ի զոհելն զնն մէքսիքացւոց :

Յետ այսպիսի մէծի յաղթուեց տօն ցնծութե կա-
տարեին մէքսիքացիք . առաքեցին զգլուխս զոհե-
լոցն 'ի շրջակայ գւռս , քարողելով ը ամ տեղիս .
թէ տծն պաղմի հաշտեցաւ ը ինքեանս արեամբ
թշնամեաց , որք զոհեցան նց . և թէ լու 'ի լու-
ամցն յայտ արար , թէ յետ ութն աւուրց՝ բնաջնիջ
լինիցին սպանիացիք : Այս կանխասացուն գրդաւել
բորբոքեաց ըդէմ սպանիացւոց ոչ միայն զթշնա-
միս , այլև զգաշնակիցս . մինչեւ դրդուեցուցանել
և զգաշնակալացիս . քզիւնք զնոյն չածն սպաշտեին .
և համարեին զանձինս սպարտասպանս հնազանդիլ
հրամանաց նր . վլյ սակաւաթիւ հարուճածեալ
գունդ սպանիացւոց՝ գտաւ սպաշտեալ 'ի մէջ թշ-
նամեաց զուրկ յամ օգնուել . և թէպէտ բզմն աշ-
խատ եղեւ քորթէս 'ի վանել զնոտի երկիւլ 'ի
գաշնաւորաց իւրոց . այլ նք ոչ անսային նմ . ա-
սաւել հաւատալով քրմաց . ապա կամեցեալ քոր-
թիսի փորձիւ ցուցանել նց զստուն գուշակուեն .
ը այն ութն աւուրս ետ գուլ սպազմի . ունելով
զնաւս իւր առաջի իրր սպատնել , որք 'ի բացեայ
սպահէին զթշնամիս . ուստի և զօրք իւր կային յա-
պահովիք : Իրրեւ կաարեցաւ օրն սպայմանեալ , և
շար ինչ ոչ սպատահեցաւ սպանիացւոց , յայնժմ ոչ
միայն դլասկալացիք՝ այլև այլ զանազան ցեզք զա-
մօթի հարեւել սակա դիւրահաւանուե իւրեանց , և
գին 'ի միտս թէ տծքն խարեալ են զմէքսիքացիս .
և ոչ կամին երբէք սպաշտպանել նց . վլյ առ հնրէ
յարեցան 'ի սպանիացիս . և այնպէս յանկարծակի
գտաւ քորթէս 'ի գլուխ 150 հզր ամերիկացւոց .
որք աւուրր ինչ յուջ խորշէին 'ի նմէ իրր յատելուց
ածոյն իւրեանց :

(7. Ք. բ. մ. առանու լ սպա դրձլ խրախուսել քորթի-
պէտսիտն , և սկա սի դասաւորեաց զզօրս , և զայն
հօրէն դրուի :) ամ ամբոխ ը կարդի . և ել անդ-
րէն 'ի վր քաղաքին . ոչ յանդ զնա-
րար միջամաւի լինելով՝ ոնք յառաջն , այլ առ սա-
կաւ սակաւ և ամ զգուշուր յուջադէմ մզէր զզօրս .
և ամերիկացիք դաշնակիցք իւր՝ անդադար կարկա-
տէին զկնի նց զդատառուածս ամբարտակաց . իրրե-
տիրէին միոյ մասին քաղաքի , նոյն ժամանքն քան-
դէին զնամ չինուածս նր . և յաւերակսն անդ զտե-
զի առնուին . ապա դրձլ նովին զգուշուր յուջ խա-
զային . և որջատի նք քուջադէմն լինէին , նոյնչափ
ժե P

մէքսիքացիք յետս Շ կրունկն ընկրկէին . մինչեւ
բռնադատեցան հաւաքիլ ամփոփիլ յանձկագոյն կո-
պար . ուր յամ կողմանց պաշարեալ զնո՞ս սպանիաց,
ոոց , անխօնջ մարտնչէին արտաքուստ Շդէմ նց ,
և ոչ սակաւ հարուածու գործէին յայնչափ բազմու-
թէ միջի . Շ նմին և սովո՞ս 'ի ներքս սկսաւ կոտո-
րել զնո՞ս . յորմէ անկաւ 'ի նո՞ս և ախտ տարափոխիկ
և մահաբեր :

Խսկ կուաթիմոզին ինքնակացն թէպէտ տեսաներ
զքաղաք իւր յայս վերջին ազէտ թշուտուե հասել
սակայն 'ի վր այսր ամի մերժէր արհամարհանք
զպայմանս խաղաղութէն՝ զոր աւաջադրէր նմ քոր-
թէս . և կամէր մինչեւ ցյետին շունչ կենաց իւրոց
մարտնչիլ Շդէմ սպանիացւոց 'ի պաշտպանութէն
քաղաքին և թէրուե իւրոյ : Այլ մեծամեծք մէք
սիքացւոց կամեցեալ ապրեցուցանել զինքնակալ
իւրեանց , հաւաննեցուցին նմ խոյս տալ անտի .
Քզի սպանիացիք արդէն աիրէլ էին երից մասանց
քաղաքին , և մօտ էին առնուլ և զորբորդն զայն ,
ուր կայր ամբացեալ կուաթիմոզին , և ամ ժզիդ
իւր . և առ գտաննելոյ նր գիտողութէ փախատեան ,
չանային նք զբաղեցուցանել զքորթէս բանադնաց
լիննելով Շ նմ վո՞հ հաշտուե : Այլ քորթէս որ յամ
գործողունս իւր արթուն էր , առ քմբոննելոյ յոր-
սանս թշնամոյն՝ յանձնն արար զնաւոս սանտովա-
լայ քաջ զօրապետի իւրում , պատուիլելով նմ ամ-
զգուշուք զննել զարժմունու թշնամոյն . խսկ սան-
տովալայ աեսեալ 'ի լիճ անդր քանօթս ինչ նց
ստուարս բեանաւորեալս ամբոխին անհնարին արա-
գութ ընթանալ Շ լիճն , անդէն վզիլի ազգ ա-
րար զիետ ողնդիլ նց . և կարզիա հոլկուին հրտ-
մանատար թէ թէ ագոյն նաւու սպանիացւոց , նոյն
ժամայն եհաս 'ի վր նց . և այն ինչ պատրաստէր
հրացանս արձակել 'ի վր աւաջնոյն 'ի քանօթից
անտի , թիավարք նր 'ի բաց եդէլ զթիակո , և ամ
ամբոխն որ էր 'ի նմին ընկեցել զզէնս , ձայն բարձին
առ հնրկ . և արտասունալից աղերսանօք պաշէին
շառնել զայն չոր . քզի աստ է կայսրն ասէին : Զայն
լունել հոլկուինայ , աճասպարեաց եմուտ Շ ոմանց
սպանիացւոց 'ի քանօթ անդր . և կուաթիմոզին յա-
ռաջ մատուցել խոժոռ գիմք ասաց ցնոտ . * Ահա
+ ես կալանաւոր քո էմ . բայց աղաչեմ չառնել ինչ
+ թշնամոնս գշնոյին , և որդւոց նր : Խսկ հոլկուին
կալաւ զնա և էած առ քորթէս . որում իբրեւ յան-
դի .

դիման եղեւ, ասէ ցնա՝ * Ես արարի զայն, որ վայել
 + եր միապետի ։ ովաշտպանեցի ժողովրդեան խոյ
 + մինչև ՚ի վախճան ։ այսուհետեւ ոչ այլինչ մնայ
 + ինձ, բայց եթէ մեռանիլ զայս ասացել ձգեաց
 + զձեռն ՚իսուրն, զոր քորթէս ունէր ածել զմի.
 + ջով, առ ասէ զայս սուր և վարսեա՚ի սիրտ իմ.
 + և բարձ յինեն զիեանս, որ ոչ ես է ինձ պիտա
 + նացու * : Իբրև լու եղեւ ՚ի քղք անդր թէ ըմբռ
 նեցաւ ինքնակալն, առ ժամայն ամքն ՚ի բաց եզին
 զդէնս . և քորթէս եմուա էառ և զսյն մասն քա
 զափին, որ գեռ կայր մնայր անվթար : Եւ այսպս
 յետ 75 աւուրց սպահարման՝ մատնեցաւ բովանդակ
 քղքն ՚ի ձեռս սովանիացիք զմեծահամբաւ քղքն,
 տնյադ տենցանօք ընթացան յաւար . ակնունելով
 անբաւ հարստուիս դասնել ՚ի դանձն ինքնակալին
 և ՚ի մեհեանս կռոց, և ՚ի տունս մեծամեծաց .
 այլ վրիպեցան ՚ի յուսոյ . քանզի ըստ ասելոյ
 քորթիսի՝ բովանդակ ոսկին և արծաթն որ դաւաւ
 անդ՝ հաղին հասանէր ց 120000 մարչիլ . կտմ
 զուռուց, վասն զի ասի թէ կուաթիմոզին տեսեալ
 զմերձենալ վախճանի թագաւորութեն իւրոյ, հրա
 ման ետ ընկենուլ ՚ի լիձն զամ դանձս կուտելս ՚ի
 նտինեաց իւրոց : Վայ քրթմնջեւն մեծ ծագեցաւ ՚ի
 մեջ զօրաց սովանիացւոց . ոմանք տրանջին ըդէմ
 քորթիսի, և նր մաերիմ զօրապետաց . կասկածելով
 թէ նք ՚ի ծածուկ յափշտակել իցեն զառաւել մեծա
 դին իրս . այլք ըդէմ կուաթիմոզոյ, պնդելով թէ
 թագուցել ունի զգանձս իւր . ապա տեսել քոր
 թիսի թէ ոչ փաստք, ոչ աղացնք, և ոչ խոստմունք
 կարէին ցածուցանել զգացնացել սրտմտուի նց
 տռ կատաղի ցանկուն դանձուց, բռնադատեցաւ
 բերիլ ՚ի գործ անագորոյն : Քանզի զկնի բշմ հարց
 փորձքննուեց և բռնադատուեց, յորս կուաթիմոզին
 միշտ աներկիւղ համարձակութ խոստովան եղեւ, թէ
 չկը իւր թագուցել ինչ, հրաման ետ մերկ տարածել
 զնա ՚ի միասին ը միում հաւատտրիմ իշխանի նր ՚ի
 վր երկաթի հրացել կասկարայի . և այն ինչ սկսա
 նէին ձենձերիլ թիկունք նց, իշխանն ընկանշ ՚ի
 տաստկուէ ցաւոց դարձոյց զաց կողկողագին հոյեց
 մամբ առ տր իւր . իբր հրաման խնդրելով ՚ի նմէ
 յայտնել զայն, զոր ինքն գիտէր . իսկ քաջասիրտ
 ինքնակալն որ աննուածելի արիութ տանէր այնմ
 դմնդակ տանջանաց, հայեցել ՚ինա տխուզ դիմօք

ասէ . * Տեսանես զի չեմ ես ընկողմանեալ 'ի վր
+ ծաղկանց * : 'Իբանից աստի զամաթի հարելքոր-
թիսի , հրաման ետ բառնալ զնու ՚ի տանջանաց
անտի . իսկ եղկելի իշխանն պատկառել 'ի յանդի-
մանուել ան իւրոյ , լուռ եղեւ և հնազանդեցաւ նմ
մինչև 'ի յետին շունչ կենաց իւրոց : Ալրդ՝ թէ պէտ
ապրեցոյց քորթէս զտառապել ինքնակալն 'ի տան-
ջանաց աստի՝ կեղծել կմ (ը ասից ոլիշինկայ) սուռ
գթութ , բայց յետոյ ոչ ինչ ըհատ անագորոյն օր-
հառաւ զբաւեցոյց զնա 'ի կենաց . քզի զկնի երեց
ամաց 'ի տարածել նր զտրուի սպանիացւոց ը դա-
նազան գաւառս մէքսիքեան կայսերուել , 'ի թէ թէ ինչ
ինչ կասկածանաց սպանուս առել . իբր թէ կուաթի
մողին խորհելով թափի լ զլուծ սպանիացւոց , գրդուէ
զժղվգն զէն առնուլ ըդէմ նց , առանց հաւաստի
ցուցման՝ հրաման ետ կախել զնա զփայտէ՝ 'ի միտամին
ը քաղիքէից թէ զէվքայի և թաքուպայ : Եւ այսնզ
'ի վերջ հասել իսպառ չնշեցաւ 'ի միջոյ կայսերուեն
մէքսիքացւոց . ոչ այնափ առ քաջուել սպանիացւոց ,
ք թէ առ երկուպառակուել և առպատամբուել կուսա-
կալաց և ժղվդեան , սպանուելոյ 'ի բռնական կառա-
վարուել ինքնակալաց . որոց արուեն ուղ և 'ի վեր
անդր նշանակեցաք , էին ամք իբր 130 յորմէ հետէ
հաստատեցաւ . և նստան 11 ինքնակալք . յորոց մոն-
թէ զումա և կուաթիմողին բռնագոյնք ք զնմ նա-
խորդս իւրեանց՝ մահու խայտառակուել բարձան՝ 'ի
միջոյ ձեռամբ սպանիացւոց , և բովանդակ երկիր
արուել իւրեանց անկաւ 'ի ձեռս նց :

Ասրա կամեցեալ քորթիսի՝ անդ 'ի նախնի կայսե-
րական քաղաքի հաստատել զգլսաւոր աթուս նրու-
թէ սպանիացւոց , ձեռն էարկ շնուել անգրէն զքա-
զաքն . նշանակեաց զտեղիս վա եկեղեցեաց հրապա-
րակաց անկելանոցաց և վա այլոց հօրկաց շինուա-
ծոց . որոշեաց զբնակուիս սպանիացւոց 'ի բնակու-
թէ ամերիկացւոց 'ի ձեռն խրամնյ . և ևս խոստա-
ցաւ նմցն՝ որք կամիցին գալ բնակել 'ի նոր քաղաք
անդր , պարդեել կալուածո երկրի , և պէսպէս
ազատուիս . ազատեաց զսիթիսաքոս սպարապետ
ամերիկացի տունել նմթաղ կմ արուարձան ողջոյն .
և կացոյց զնա գլուխ համօրէն ամերիկացւոց բնա-
կելոց 'ի քաղաքի անդ . զայլ թաղ մի պարգևեաց
միոյ յորդւոց մոնթէ զումայի ինքնակալին . որոյ
ընկալել զքրիստոնէական հւատ , և մկրտել 'ի քո ,
անուանեցաւ պէտրոս : 'Սոյնպէս և այլոց մեծամե-

ծաց մէքսկիքացւոց ետ զանազան թաղս , առ որսաւլոյ՝ և ամրացուցանելոյ զտրութիւն սպանիացւոց յօտար երկրի անդ . իսկ զապարաննս կաւոյց 'ի վրձիմանց արքունի ապարանից ինքնակալաց մէքսիքացւոց . որով և վզիվզի սկսաւ քաղաքն անդրէն շինութիւն առնուլ . և առ սակաւ սակաւ այնպէս բարդաւաճեալ հոխացաւ բնակչօք , մեծակառոյց շինուածովք և հարստութը , մինչեւ գերազանցել այժմ զամքաղաքօք հիւսիսային և հարաւային աւմբրիկոյ . ողպ տեսցի'ի ստորագրուենք զոր ունիութեալ սառուե :

Յետ այսր ամի մինչդեռ քորթէս անխոնջ և անսպարանելի աշխատուք գուն գործէր օր ըստ օրէ և ևս ըարձակել զտրութիւն սպանիացւոց 'ի կողմանս յայսոսիկ , զբզմ գւնս մի զինի միոյ ըստ իւրեւ նունաշնելով , սկսեալ 'ի ընէն մէքսիքոնի 'մինչեւ ցծագծոցյն հօնտուրասայ , և ցիւրձն փանամայ , յաճախիեն զնմէ ամբաստանութիւն 'ի սպանիա . նա զառաջինն իւրով ամենարօնեստ հնարագիտութը՝ և ցուցմամբ բազմուպատիկ արդեանց իւրոց՝ ոչ միայն տրդարացաւ առաջի կարոլոսի կայսեր , որ թէդէրէր 'ի սպանիա , այլեւ կարգեցաւ 'ի նմէ հանրական բդեշի 'ի նորին սպանիա . սակայն յետոյ վերստին զօրացնալ սմբաստակը նը 'ի շարամիա յաշաղկոտաց , և ամվաստակը նը 'ի մոռացօնս անկետալք , ընկեցաւ յիշխանուել բդեշնուել . և մեռաւ 'ի սպանիա 'ի 1547 . 'ի դեկտ 2 . 'ի 62 ամի կենաց իւրոց :

Յետ այնորիկ սպանիացիք և ևս ըարձակեցին ըզսահմանս մէքսիքեան որուեն իւրեանց և ը հիւսիսակողմն . նունաշնելով զբզմ աղգս և զժղիգս , որք կային 'ի սփիւռս անսահման տարածուեն յայն կոյս արեւադարձին խեցդետնի . և հիմնեցին անդ զանազան նահանգս ըարձակս յոյժ . զը զնոր պիտքավեա , զնոր նաւառաւա , զքալի ֆօրնիա , և հուսկ յետոյ զնոր մէքսիքոն . զորս միացուցին ըստ մէքսիքոնի : Վզյ կամեցեալ զայժմեան ինքնակալութիւն մէքսիքոնի համեմատել ըստ առաջնոյն , յաւետ մարթէ ասել զայն նորոգ հիմնեալ , քը ստացեալ . քզի ըոկ այն մասն՝ որ ձգի ըստ հիւսիսակողմն յայնկոյտարեադարձին , երիցս անգամ մեծագոյն է քը զորունենին նախնի ինքնակալք մէքսիքոնի . սակայն բզմ վայրք ըարձակք 'ի նեղուին կողմանու երկրին՝ գնուանձանութ են սպանիացւոց . ուր զանազան ցեղք ընիկ ամերիկացւոց փախուցեալք 'ի սրոյ նց , կան

ամրացել յանտառս և 'ի ծոցս լերանց . և քաջութ
պաշտպանեն զանձինս :

Ե. Կառավարութ ՄԵԴԻՎԻՆԻ . Տարեկան մուս ԱՌԵՎԵ
սովոնիս , 'ի ՄԵԴԻՎԻՆԻ . և Բաժանուան
ՄԵԴԻՎԻՆԻ :

Յայտ է յասացելոցս 'ի վերոյ , թէ արուենն մեքսիւ
քոնի 'ի սկզբան անդ՝ էր իբր հնրկութ ինչ ռամ
կապետական . յորում ոչ գոյր ոք առանձին հրա-
մանատար . այլ յորթամ պիտոյ լիներ՝ ժղվան կու-
ցուցանէր զոք , զոր առաւել քաջ և հանձնարեղ տե-
սանէր , կառավար և առաջնորդ 'ի պատզմի . իսկ ար-
տաքոյ սրբազնի՝ ոչինչ իշխանութ վարեր 'ի վր նց . զե-
ամքն էին ազատք ըստ այլոց անհրահանդ ամերիկաց-
ւոց : Ազա 'ի զօրանալ նց , և յշարձակել զսահմանս-
տրուե իւրեանց , առ սակաւ սակաւ մի ոմն կտրու-
զգերագոյն իշխանութ էր 'ի վր այլոց . որով և կառա-
վարութ նց փոխեցաւ 'ի միավետութ . բայց 'ի սկզբան
անդ իշխանութ միապետի նց՝ սահմանառոր էր յոյժ .
զի մեծ մասն իշխանուե էր 'ի ձեռս աւագանոյն .
քզի առանց հաւանուե նց ինչ ոչ կարեր առնել
միապետն . այլ 'ի թիգրել մանթեզումոյի , յափշտակ-
եաց զնամ իրաւունս նց . և եմոյծ զսարզ միապե-
տական կիմ բռնական կառավարութ . որ և պատճռա-
ետ բազմաց քաղիքեց կիմ կուսակալաց՝ ապստամ-
բելոյ 'ի նմէ , և յարելոյ 'ի սպանիացիս . որք օդնութ
նց կտրան զբովանդակ ինքնակալութին մեքսիքոնի :
Սը նոր կառավարութ հաստատեցին 'ի նմ . որ պահի
մինչեւ ցայսօր . զի կացուցին անդ զի՞ ոմն գլխաւոր
իշխան իբր փոխանորդ արքային սպանիոյ . որ և
յայն սակս կոչի փոխարքայ . սովորաբար կացուցանի
յայս պաշտօն մի ոմն 'ի նախապատիւ ազնունակն յ
սպանիոյ . իշխանութ նր ըարձակ է յոյժ . զի կարօղ
է հաստատել օրէնո . և առնել զանազան կար-
պագրութիս 'ի բարգաւածութիւ և 'ի պահպանութ Շին-
դատել և վճարել զնամ գայսու և զվեհս ծագելս 'ի
մէշ ժղվական . բաց 'ի դիպուտածոց ինչ , որք սպահել
են առ գերագոյն ասեանն հնդկաց՝ որ 'ի սպանիո-
Պաշտօն նր ձգի ը ամս հինդ . իսկ տարեկան թոշակ
նր յարբունուսու՝ է 100 հշը փէցա . բայց այն սա-
կաւ ինչ է առ համեմատութ անբար պարգևաց՝ զոր
տան նմ կուսակալք և քզքաղետք և այլ ամ սպա-
տօնատարք , առ 'ի ձեռս բերելոյ զիշխանութիս զայ-
նոսիկ .

նոսիկ . վեց փոխարքայն թէպէտ և չկցէ ընչափաղ ,
ը այն հինգ ամս իշխանութե իւրոյ , առանց ինչ
դժուարութե կարօղ է կուտել իբր 4 հջր 500 քսակ
զիշի : Բաց 'ի փոխարքայէն են անդ և գլխաւոր
գատաւորք և ատենակալք՝ որք կացուցանեն զերիս
գլխաւոր ատեանս . յորս բաժանել է բովանդակ
մէքսիքեան արութե սպանիացւոց . և են Ատեանն
մէքսիքոն քղքի : Ատեանն կվատալքսարայ . և
Ատեանն կվարգիմալայ : Զատեանն մէքսիքոնի՝ որ
է առաջին և նախապատիւ , կացուցանեն վեց գա-
տաւորք , մի գործակալ արքայի , և երկու նախա-
գահք . որք ը փոխարքային գատեն զնմ գատառ քղքա-
կանս և քրէականս . և թէպէտ նք իբր 'ի բղմա-
համախոհ են փոխարքայից , սակայն ունին իշխանութե
ընդդիմանալ գործոց և կառավարութե նց . յորժամ-
տեսաննեն թէ ըդէմ օրինաց են . նոյնողս և այլ
երկու ատեանք ունին սահմանել թունով գատաւորք
և ատեանակալս : Զկնի ոց են կուսակալք , որք
իշխան միոյ միոյ գւուի . բերդակալք , քղքաղետք ,
և այլ սաորին իշխանք և պաշտօնատարք . նք ամին
են բուն սպանիացիք , առաքելք 'ի սպանիոյ . բայց
գտանին անդ 'ի զանազան տեղիս և բնիկ ամերիկացի
քաղեքէք . ոչ եթէ իշխալք 'ի սերնդոց նախնի քա-
ղեքէից , այլ կացուցելք 'ի սպանիացւոց 'ի մէջ այնց
ցեղից 'որք առաւելանց ձեռնառ և օգնական եղեն
նց 'ի սկզբան անդ . սք իշխան 'ի վր փոքրիկ վիճա-
կաց աղդի իւրեանց ը արութե սպանիացւոց . ժողո-
վեն զհարկս 'ի ժղվդենէ իւրեանց 'ի աալ սպանիաց-
ւոց . հսկեն՝ զի մի ոք 'ի բնակչաց վիճակի իւրեանց
'ի բաց մեկնեցի անտի . բոյց ունին և զանազան
աղատութե շնորհեալս նց յարքայից սպանիոյ . և
իշխանութե նց է մշտնչենական . որ և ժառանգութ-
անցանէ 'ի հօրէ յորդի . որք և 'ի միասին ը ժղվդեան
իւրեանց են քրիստոնեայ ուղղադաւան :

Մոււաք և հասք թագաւորութե սպանիոյ 'ի մէքսի-
քոնէ՝ են 'ի աասանորդաց ոսկեհանքաց . և 'ի հին-
դերդաց արծաթահանքաց . 'ի ծաննաբեռն մաքսից
կարգելոց 'ի վր վաճառաց եւրոպիոյ և ասիոյ . 'ի
գլխահարկաց . զի ոող ասացաք 'ի վեր անդք , ամ
ամերիկացիք 'ի 18 ամաց մինչև ց50 ամ հասակի
իւրեանց սպարտապան են տալ գլխահարկ 'մի ոսկի
գահեկան . իսկ սոլանիացիք թէպտ ոչ տան գլխա-
հարկս , բոյց անտանելի մոքս վճարեն վո վաճա-
ռաց 'զոր տանին անդ յեւրոպիոյ , մինչև 33 ը հար-

իւրոյ. Թռղ զայլ զանազան հարկս և կատալս, որք պէսպէս պատճենօք եղան՝ ի վր ժղվդեան: Յորմէ յայտ է՝ թէ դումար տարեկան մաիս թդըուն սպանիոյ ՚ի մէքսիքոնէ՝ մեծ է յոյժ. սակայն յանբառ դրամոց անտի՝ հազիւ շն հէր քսակ զաշչի ամի ամի մասնէ՝ ՚ի դանձն արքայի. իսկ մնացեալն բովանդակ ծախի ՚ի թոշակ կուսակալաց, քղքապետաց, զօրավարաց, և ոյլոց զանազան պաշտօնատարաց. զի ոնդ ՚ի վերոյ ասացաք, լոկ փոխարքայն յամին ունի իւր թոշակ 100000 փեցայ. իսկ վեց ատենակալքն ոնդ և գործակալն արքայի՝ 12000 իւրաքանչիւրն. նոյն պէս և ոյլք իւրաքանչիւր ըստ իւրում աստիճանի:

Թռղ զայն զոր խունեն անտի անխնայաբար:

Այս համատարած Ծ ըստ բաժանման՝ զոր արարին ՚ի նմ սպանիտացիք, նախ բաժանի առ հնրկ յերիս զլխաւոր ատեանս, կմ նահանդս. որք են Աշտեանն մէտիտն ժաղագի. Աշտեանն իւստալատարաց. և Աշտեանն հւարինալայ. և երեքին ոք դրձէլ յայլեայլ դաւառս բաժանին. զորս սկիզբն արասցուք յոջիկայդ սառ բագրել յերիս յօդուածս. յորս յետոյ յաւելցուք զնոր մէքսիքոն. զբալի ֆօրնիա. և զայլ ևս հիւստային տեղիս:

Յօդ ա. Ատեան կմ նահանդ

Մէքսիքոնի:

Այս նահանդ է կեդրոն և գլուխ համօրէն մէքսիքեան թդրուն. արգաւանդ, բազմամարդ, և փարթամ. և բաժանի յութն գաւառս. որք են Մէտիտն. Մէտօտն. Պալատալս. կուադսագա. Դապագան. իւտադան. Փանուս. Կոր լեռ. զորս մի առ մի յառաջիկայդ ստորագրեացուք:

Մէտսիտն:

Մէքսիքոն գաւառն առանձնակի՝ ունի իւր սահման յարեւելից՝ զդլասքալս. յարեւմաից՝ զնքասկան, և զզաքադուլս. ՚ի հարաւոյ՝ զծուին հարաւային. իսկ ՚ի հիւսիսոյ զիվասդէքա: Ունի երկու

կու մեծամեծ գետս, և զանազան լիճս, յորս մինն յաւետ երեկը է, զի է ըարձակ յոյժ, և բաժանեալ յերկուս. անջրպետ ը մէջ ունելով զարս ժայռից, առ որով կառուցել կայ և մէքսիքոն քաղաքն: Իսկ երկիր նր լեռնային է, այլ արդաւանդ և քաջ մշակել. որոյ գլխաւոր տեղիք են հետագայթ:

Մէտախոն: Եշ գլխաւոր մայրաքղք համօրէն մէքսիքեան արութեն սպանիացւոց. արքեկոսանիստ՝ և աթոռ փոխարքայի և գլխաւոր ատենին. կառուցել առ մէծի լճին, որ ՚ինմէ առնու զանուն. շրջապատել ՚ի ջուրց. ուստի և չունի հազօրդութիւն ը ցամաքին, բայց եթէ ը երիս ամբարտակս ուղ էր և ՚ի նախնումն: Եւ է սա քղք մէծ գեղեցիկ և բազմամարդ ք զայլ ամ քղքս ամերիկոյ, և ը ոմանց մի յառաւել բազմագանձ և ՚ի բազմավաճառ. քղքց աշխարհի: այլ անողարիստ և անպատճարան. փինէ պարսպաց ունելով զշրջակայ լիճն, և զամբարտակս: Ծինուածք նր ըսվանդակ քարաշէն են, կմ ՚ի թրծել պատռւական աղիւսայ. բայց չեն այնչափ ինչ բարձր. սակայ յաճախ գետնաշարժուն. փողոցքն լայն և գեղեցիկ. իսկ թիւն ընակչացն իբր 50 հզը. յորոց հազիւն հինգերդ մասն՝ ֆ իբր 10000 սպետակք են. իսկ այլք առ հորկ սեաւք կմ թուխք յաւէտ և նուազ, ը գունոյ ծնողաց իւրեանց. զի են ՚ի խառն ամաւսնուէ, յու յառնէ եւրոպացւոյ, և ՚ի կնոջէ ամերիկացւոյ կմ ափրիկեցւոյ: Բնդմ են մեծատանք յայսմ քղքի. յորս ասի թէ գտանին իբր 15 հազարք, որք ունին կառս մեծածախս և չքնազակերտս. զի ոչ խնայեն ընտա ՚ի ծախս վշ զարդուց կառաց, և զգեստուց, և այլ ամ իրաց, որք յաւելուն զարտաքին շուք և զիառաւորութիւններ կանայք մեծուհիք՝ որոց հանդէսն յելանելն արտաքս, չքեզուի մեծագին զգեստուց, և յաճախութիւն ականակուռ և մարդարտայեռ զարդուց, ապշեցուցանէ զտեսօզս: Յիսուն եկեղեցիք են ՚ի սմին քղքի, գրեթէ առ հորկ մեծաշէնք, և փարթամուք անզուգականք. զի յամ կողմանս նց շողշողել փայլեն ոսկի և արծաթ. և ակունք մեծագինք. և պատռւական մարմարինք. նոյնիպս եկեղեցականք նր առ հորկ փարթամ են յոյժ, այլ ոչ նոյնիպս և իմաստունք: Իսկ գլխաւոր շինուածք, և առաւել նշանաւոր տեղիք այսր քղքի են հետագայթ:

Գայթ:

P 5

Անձ

Մեծ հրապարակն կմ վաճառանոցն՝ ըստրձակ և գեղեցիկ • զարդարել երեւլի շինուածովլք • 'ի մի կողմն նր են վայելու կրպակք բազմահարուստք ազգի ազգի մետսքսեաց կերպառաւց • որոց առաջի վաճառեն բանջարո ծաղիկս և տղառզա • հանդէսէ սց 'ի միւս կողմն՝ են ապարանք փոխարքայի մեծացն և ըարձակ յոյժ • որ 'ի միասին ը պարտիզաց իւրոց գրաւել զբովանդակ երկայնունի հրապարտ կին • այս ապարանք են մարքէզացն տելավալեան 'ի սէրնդոց քորթիսի • զոր ետուն 'ի վարձու փոխարքային ը 4000 փէցայի • 'ի ծագ ապարանից՝ է հնրկց բանտն քարաշէն և ամբակուռ • և մօտ առ նավառ փողոցն ըարձակ կոչեցել Աշեցւի • զի անդ են մեծագանձ կրպակք վաճառակնց և ոսկեդործաց • յորոց՝ ուղ ասեն, մի կրպակն արմէ այնչափ, որ չափ բովանդակ կրպակք միանդսէնոյն միոյ 'ի մեծագոյն մայրաքղքցն եւրոպիոյ • նոյնողս և փողոցն սբյն օգոստինոսի՝ փարթամէ յոյժ • ուղ և փողոցն կոչեցեալ դապուքա, զարդարել մեծակառոց շնուռածովլք • ուր գտանին ամ ազգ երկաթի պողոտատեեայ և պղնձի ձեռակերտաց : Երեւլի է և փողոցն արծուոյ • ունելով առտի և անտի վայելու շինուածս • և յանկեան միում արծունի մեծ կօփիւլ 'ի քարէ • զորմէ ասեն թէ էր կուռք նախնի մէք սիրացւոց • բայց պիշինի ասէ, թէ առաւել հաւանական երեսի՝ լինել գործ անվարժ քարահատի սպանիացւոյ • և եղել անդ յաւաշնոց տերապէտուզաց 'ի նշան է կարողոսի կայսեր • որ ը այն ժմկա թղթէր միանդամոյն և 'ի սպանիտ :

Են անդ երկմ մենաստանք կրօնաւորաց զնիւն կարգաց • զր օգոստինեանց, կարմեղականաց, դոմինիկ եանց, ֆրանցիսկեանց, և այլոց • ուղ և կուսանաց • պյլե համալսարան • և ատեան քննուն հաւատոյ • երեւլի է և մայր եկեղեցին սկսել 'ի քորթիսէ, և աւարտել 'ի սէբաստիանոսէ ուամիրէզայ : Այս քղքամ իրօք պատուական է և բարեշէն • բայց զայս մնաս ևեթ ունի, զի 'ի յաճախել անձրեաց՝ և յորդախաղաց ուղիսից 'ի շրջակաց լերանց, բարձրանան լիճք և ողողանեն զքլքն • առ 'ի գարման այսմ մեծի վնասու, 'ի 1604 հրամանաւ արքային սպանիոյ սկսան բանալ իրամ մեծ առ շիւք • զի 'ի յորդել ջուրոց նց՝ ը այն հոսեսցին • բայց այս գործ կարեւոր առ անհոգուե սպանիացւոց՝ մնաց անկատար : Կէն մէքսիքոնի բաժանեալ է յերկու լիճս, մինքազը

քաղցր՝ և միւսն աղի . անջրապետ ունելով՝ 'ի միջե
շարս ժայռից 'ի պատուար իմ թումբ : Քաղցր
լիճն բարձրագոյն է քաղցին . և վնկ բղմանդամ
յորժամ առատանայ, զեզու յաղին , և անտի ծա-
ւալի 'ի քղք անդը յանհնարին վնաս շինուածոց .
ջուրք քաղցր լիճն՝ յարաժամ խաղաղ են և անդորր .
ուր աղի լիճն յամ միրկալից հաղոց խառվի և մե-
ծամեծ ալիս յարուցանէ . առաջնն քերէ ձուկն
առատ , խսկ երկդն զուրկ է ամենեին 'ի ձկանց .
ընարատ նց անհաւասար է և թիւրաթեք , խսկ լայ-
նուի երկոցուն միանդամայն իբր 75 մղոն : Ճագումն
այսոցիկ երկուց լիճ՝ գեռ ևս անյայտ է . բայց
անտարակոյս է ունել սց երկու զանազան ստոր-
երկրեայ ակունս . և ջրոյ քաղցր լիճն իբր բարձ-
րագունի 'ի բարձրագոյն ականէ բղիսել , զոր չէ
մորթ այլուր խնդրել , բայց 'ի հարաւային արե-
մուեան լերինս , որք բարձրագոյն են և առաւել
մօտաւոր : Խսկ զանազանուի համոյ ջուրց նց՝ լո-
կարծեաց ոմանց պաճռի 'ի ստորերկրեայ անցից՝ Ը
որս անցանեն մինչեւ իցեն ժամանել 'ի լիճն : Այլ
առաւել ք զստորերկրեայ ջուրա՝ ուղիսք և հեղեղք
յորդեալք 'ի ընջակայ լերանց՝ առատացուցանեն
զայսոսիկ լիճն , որք և բղմանդամ հեղել ծածկեցին
զշջակայ գեօլս և զէնս մէքսիքացւոց . ոչ բաւել
լոդէմ ահաւոր բռնուել հոսանաց թմբոց և ամբար-
տակաց , զոր բղմաշխատ տառապանօք շինել էին
նք : Այս մեծամեծ լիսառք զարթուցին զսպանիա-
ցիս բանալ զնախայիշտկեալ խրամն առ տալոյ անցա-
յաւելել ջուրց լիճ . այլ չփետեմ առ տարսապայ-
ման ծախուց , թէ առ հեղդուել կմառ անհաւատար-
մութե թողաւ անկատար : 'Ի 1629 պատառեալ
թմբոյ կմ ամբարտակին որ անջրպետէ զերկու-
լիճն 'ի միմեսնց , ծածկեցտւ 'ի ջուրց մէքսիքոն
քղքն . այսպիսի լիսառք ստէպ պատահեն անդ , է
զի՝ յաւէտ , և է զի՝ նունազ ապականարարաք :

ԱՀԿԱՔԱՆ: Քղք ծովեղերեայ . և գլխաւոր նաւա-
հանդիսատ և վաճառատեղի մէքսիքոնի՝ իբրև 210
մղէ հեռի 'ի նմէ յարեւման հարաւային կողմն :
Քղքն փոքր է . և բնակիչքնը սակաւ յոյժ առ յո-
ուուե օգոյն , այլ նւհնդիսատնը համարեալ է լաւա-
դոյն ք զամ նւհնդիսատ , որք գտանին 'ի խաղաւ
զական ովկիանոսի . զի է լարձակ , ուր կարեն
կալ հարիւրսուոր նաւք՝ առանց լիսառելոյ միմեանց .
մուտ նը քաջ որաշուպանել 'ի ձեւն ցածուն կղզւոյ'

որոյ երկայնութե է իրրեւ և մզօն և կէս . իսկ լայնու թին 500 քայլ . ուստի և աղահով և անվանդ կարեն նաւք մտանել և ելանել : Յորժամ նաւք մանիլայի հասանեն աստ , մեծ աօնավաճառք լինին 'ի քղբի . և բազմուի վաճառականաց ժողովն . այլ յաւարուիլ տօնավաճռն՝ գրեթէ ամոյանայ քղքն 'ի ընակցաց : Իրրեւ 3 մզէ հեռի աստի յարեւելեան կողմն՝ է նւհնդիստն մարգեղայ մեծ և պատուա կան . ուր սովորաբար խարիսխ արկանեն նաւքն եկեալք 'ի բէրուայ առնել առևաբուն արգել եալ վաճառաց :

Գ. Աւելարօ . Դասլա . և Փափառ : Են երեք աւանք 'ի հիւսիսակողմն մէքսիքոնի :

Մ. Եղան : Աւան առ ավն գուսփայ գետոյն . որ է մի յերկուց գլխաւոր գետոց գւնին մէքսիքոնի . որ յարեւելից հոսեալ ը արևմտսա մտանէ 'ի ծոյն մէքսիքոնի :

Գ. Հայուապահ . և Զաւմբանիօ : Են երկու աւանք 'ի հարաւակողմն մէքսիքոնի առ Ճնիղաւն աքափուլ քայ :

Վ երօափան :

Լ. մի յշարձակագոյն գւոց նահանդին կմատենին մէքսիքոնի . որ ունի իւր սահման 'ի հիւսիոյ՝ զնոր պիսպալիս . յարեւմտից՝ զնոր կալիցիս . յարեւելից՝ զիվասդեքա , և զմեքսիքոն . իսկ 'ի հարաւաոյ՝ զծովն խաղաղական . ը մասին զբագագուլա գւոցն : Օդ նր բարի է և առողջ . և երկիրն արդաւանդ , որ բաց 'ի հարկ արմաեաց և պազոց 'բերէ և այլ ազգի ազգի պատուական քերս . իր գագառովն . վանիլիս , ինչյարշէնպէ , տեսակ մի պատուական արմատոյ , զոր յանօւն գւոցին մէքսօպան կոչեն : ազգի ազգի խէժա , և բարասամս անուշահոտ , և ամպէր : Ունի և բոլս ոսկոյ . արծաթոյ . պղնձոյ , և այլոց մետաղաց . և ընտանի անսասունս . յորս նշանաւոր են երիվարք նր ընտիրք և պատուականք 'ի հեծնուլ և 'ի լծել 'ի կառա . գտանին անդ և վայրենի գաղանք . զբ աղուէնք , տեսակ մի առիւծոյ , վայրենի շունք , ինձք , ևն : Բնակիչք նր բնիկ ամերիկացիք քաջավարժ են յամ արուեստ . այլ յաւետ 'ի գործել մետաքսեայ կերպասս , և այլ ձեռագործ մետաքսեայս : Այս գւոց 'ի նախնումն էր

եր առանձին ինքնիշխան թղթութե . այլ յառնուլ պատանիացւոց զմէքսիքոն , փութով տիրեցին և նմ . և արարին զիա գւռ մէքսիքոնի՝ և թեմ եղանի՝ որ ունի իբր երկերիւր բնակել տեղիս . զր քղթս , աւանս , և գեօդս . որոց գլխաւորքն են հետագայքդ : Մէտարքուն : Պալխաւորը քղթ համօրէն գւռին . եղանակստ , մեծաշէն և գեղեցիկ , այլ անսպատակար . կառուցել առ մեծ և ձկնալից գետով մօտ յարեւանեան եզերս մեծի ՀՅին . յարեւանեան կողմն մէքսիքոնի իբր 120 միջ հեռի ՚ի նմէ : Ունի բղմ մեծաշէն ապարանս . յորս բնակին մեծատունք ումանք սպանիացիք , տեարք բովուց արծաթոյ կվարքաւսիադայ . այլ ՚ի մէջ ամ շինուածոց ՚նը երևելի է մայր եկեղեցին մեծակառոյց և փարթամ : Մէտիմ . և Դիօքէտինա : Են երկու աւանք կմ գեօդք ՚ի ծովեղերս խաղաղական ծովու :

Չէւիմա . Ուրիմաւ . Բաստէւրօ . Սալամանչա . Սալայա . Չառնոսա . Լէն . Սէ միայէլ . Սէ լուրուկիս խաղաղական . Սէ լուրուկիս գետայ : Են առաւել նշանաւոր տեղեք սորին գաւառուի :

Զակարաւալա : Ե քղթ ծովեղերեայ , և գլխաւորը տեղի համանուն վիճակի . զօր ումանք իբր առանձին գւռ դնեն արտաքոյ մէքօտքանայ :

Փէւաւելան : Քղթ կմ աւան ՚ի մէջ զակադուլայ և աքափուլքայ ՚ի ցամաքակողմն : ՚ի կողմանս յայսութիկ առ ծովեղերեայ սահմանօք առանձնական մէքսիքոնի՝ գտանի նշանաւոր սարն կոչեցել Կէտ բէրադան : ՚ի խաղաղական ծովին :

Չայնիկոյս մէքօտքայ ՚ի կողմն ՚նոր պիսքալիոյ՝ էին ՚ի հնումն զնզի աղդք վայրենիք՝ լեզուաւ և սովորութ տարբերք ՚ի միմեանց , որք միով անուշամբ կոշեցան ՚ի իրիմեգք , տուեալ յորսորդուէնց . զիքաց ՚ի յոմանց ոչ մշակէին զերիիր . այլ որսորդութ առգրէին . ՚ի լերինս և յանապաս թափառէին իբրե զանասունք բացօմետայք , առանց կրօնի և առանց կառավարուե . մերկ գնային , ումանք միայն զանձամբ արկանէին զմորթ կենդանեաց՝ զորս որսային . ունէին սովորուէն ներկելոց զմարմին . ստէպ ստէու արշաւէին ՚ի մօտակայ սահմանս սպանիացւոց և յանցաւորս՝ ՚ի յափշտակել մւնդ զնորիս , որոց միս՝ համեզ կերակուր էր առ նու . նաև կանաք նց ՚ի միասին արշաւէին , պնդել զնորածին մանկունք յոստածառոց , ինքեանք իբրե զարս առապատակէին առտ և անդ . գոլովքաջ աղեղնաւորք . և փախչէին յոնմաւ :

մատոյց լերինս և յայրս : Բայց մեծ մասն սով կոտորեցան 'ի սպանիացւոց 'ի մարտի , մնացել քնառակաւ սակաւ նուռանեցան չը տրութ նց . ընկալսն զուղղափառ հաւատու , և ընտելացան 'ի քաղաքական օրէնս :

Դաշտալա :

Պարգմանի երկիր հացաւէտ . յոյս անուն անւ ունանեցաւ գւուս վաս առատուե մսրացորենոյ կմ մայիզի՝ զար բերէ : Ոմանք յատգրաց կոչեն զնակու Անկելսո . յանուն գլխաւոր քղթի նր . բայց սովորաբար ուահի առաջին անունն , որ է յըարձակ յոյժ . զի 'ի ծոցոյն մէքսիքոնի ձգել տարածի մինչև 'ի ծովն խաղաղական : Ուստի և ունի իւր սահման յարեւելից՝ զնոցն մէքսիքոնի . 'ի հարաւոյ՝ և մասամբ իմն յարեւմտից՝ զնովն խաղաղական . 'ի հարաւոյ արեւելից՝ զկվաքսաքա . իսկ յարեւմտից՝ ըզ մէքսիքոն առանձնակ , և մասամբ իմն զիանուքո : Երկայնուն նր 'ի միոյ ծովէ մինչև 'ի միւսն՝ է իւր 300 մլուն . իսկ լայնուն յըարձակագոյն տեղւոջ իւր 240 : Գլխաւոր գետ նր կոչի Զանեալ . որ բղմ անդամ 'ի յորդել ջուրց նր հեղեղէ զըրջակայ վայրս : Օդ նր՝ և երկիր՝ և բերք՝ գրեթէ նոյն են , որ ինչ տուանձնական մէքսիքոնի : Յարեւմտեան կողմն նր ձգին միագոտի ըլուրք քաջ մշակեալք իւր 5+ մլւ ըերկայն . նոյնակս 'ի հիւսիսային սահմանունր՝ գտանի միւս ևս գոտի լերանց . ուր յաճախեն մըրքիկ և հողմունք սաստկաշունչք , և հեղեղք զանալ գետոյն՝ յանհնարին վիշտ բնակցացն : Այս գւուս առաւել բազմամարդ է անշուշտ ք զայլ ամ գւուս մէքսիքեան նահանդի . և բնակիչք նր՝ որոց թիւն հասանէ ասեն ց300 հզր , եռանդնուաք աշալուրջք և աշխատասէրք , և վերագոյնք ք զայլ բնիկ ամերիկացիս մէքսիքոնի . 'ի զգեստս՝ և 'ի սովորունս՝ ուղ և 'ի լեզուն՝ նմանեալք սպանեացւոց . զի հազիւ երբէք խօսին յայլ լեզու , բաց 'ի լեզունէն սպանիացւոց : 'ի նախնումն կացուցանէին զմանիաւոր հնրկապետուն . էին անհաշտ թշնամի ինքնակալուն մէքսիքոնի . յայն սակս դիւրաւ յարեցան 'ի քորթէս . և եղեն նմ հաւաաարիմ գաշնակից և նիզուկակից յամ մրցմունս մինչև 'ի վախճան . ոչ յաշխատանս , և ոչ 'ի կեանս իսկ գլխովին խնայելով .

սող տեսաք 'ի վերոյ . որով և կարողացաւ քորթէս
աիրել մեծազօր ինքնակալուն մէքսիքոնի . ապա
թէ ոչ զօլք նը , և ոռումքք , և հրացանք , և սու
սերք , սակաւ ինչ զօրէին յայնմ բազմամարդ ։ Աի :
Վէկ ըստ խնդրոյ քորթիսի եւ կարուղոս կայսրն ար-
քայ սպանիոյ ազատու արար զնո՞ 'ի գլխահարկաց .
ուստի մինչեւ ցայժմ ոչ առն նք դրամն թէրին .
այլ միայն սակաւ ինչ մայիզ : Խոկ գլխաւոր տեղեք
գլուխին են հետադայքդ :

Լու Աջնիւս : Գլխաւոր քզք համօրէն գաւառին .
եկամանիստ , և աթոռ գաւառակալ իշխանին . գե-
ղեցիկ բարեշէն և բազմամարդ . կաւուցեալ 'ի
զուշարձալի վայրի առ ափն գետոյ՝ որ մոտանէ 'ի
ծովին խաղաղական : Բնակիցք նը ըստ մեծի մասին
ամերիկացիք են , և սակաւ սպանիացիք . այլ թէ
նը՝ և թէ սք՝ փարթամ են յոյժ և քղբական :
Բայց մեծաշէն և գեղեցիկ շինուածու ունի . յորս
երևելի է մայր եկեղեցին փարթամ . ոող և մեծ
հրատարակ քղբին վայելու շինուածովք շրջապատ-
եալ : Ունի և գործարան սպատուական կերպա-
սուց . որոյ կերպաք 'ի յարդի են յոյժ . և միւս
ևս գործարան սպակւոյ , որ է մի միայն 'ի համօրէն
նորն սպանիա . այլեւ փողերանոց , որ զարպիսանէ .
ուր հատանեն զկէսն դրամոց նոր սպանիոյ . խոկ
զայլ կէսն՝ հատանեն 'ի մէքսիքոն քղք : Յովհան-
նէս փալաֆօրս , զոր սք եկեղեցին հռովմէական
կարդեաց 'ի դասս երանելեաց , եղեւ եկոս սորին
քղքի . որոյ վէճք ըստեան կրօնաւորաց՝ հռչակա-
ւոր են ըստ բովանդակ եւրոպիա : Հին դլասքալա-
մայրաքզք գլուխ զոր 1698 ետես ձէմելլի , էր
գեոդ փոքր ունելով ժղվէրդպետին եկեղեցի . ուր
ցուցանեին զպատկեր նաւուն , զոր էած քորթէս
'ի ճշմարիտ խաչն :

Նոր ճշմարիտ խաչ : Է նաւահանգիստ , և գլխաւոր
վաճառաւատեղի մէքսիքոնի . ամուր բազմամարդ և
բազմավաճառ . կաւուցել առ ծոցով մէքսիքոնի :
Ունի նաւահանգիստ սպատուական և ապահով 'ի
հողմոց , և քաջ ամրացուցեալ ըդէմ թշնամւաց .
'ի քերան մտից խրոց՝ ունի ամրոց հզօր , անունան-
եալ Սբ յովհաննէս ուլուսայ 'ի վը փոքրիկ կղւոյ .
'ի հարաւակողմն մեծի խաղխաղի : Աստ դայ նա-
ւահանգէսն սպանիոյ , և թափէ զնում քեռինս իւր-
յայն սակս կարի ծաղկել է վաճառականուին 'ի
քղքի աստ :

Հին ճամանակ խու: Եր սա քղք փոքր հիմնեալ 'ի քորթիսէ . ուր ել նա զառաջինն 'ի ցամաք 'ի գիմելն 'ի մէքսիքոն , իբր 15 . 16 մէլ հեռի 'ի նոր ճշմարիտ խաչէն . այլ այժմ անքնակ է . քղի սպահիացիք նախկին բնակիչք նր անցին 'ի նոր ճշմարիտ խաչն : Տօմ (կմ ուն) կարլիտ : Աւան կառուցել առ ափն իազարական ծովու 'ի հարաւոյ արևելից աքա փուլքայ:

Եայադարձան . Փիասդլա . Քօրդօձա . Աշերիա . Աշերիա . Դառիս : Են առաւել նշանաւոր տեղիք դլառ քալա դւռի :

Աշակեադա :

Պաւառ Շարձակ . որ 'ի ծոցոյն մէքսիքոնի ձգի ը հիւսիս մինչեւ 'ի ծովին խազաղական . ունելով իւր սահման 'ի հիւսիսոյ արևմտից՝ զդլառքաւա . իսկ 'ի հարաւոյ արևելից՝ զքեափատ , և զդապասքոն : Երկայնութենր առ խազաղական ծովու ' է իբր 280 մղոն . առ ծոցովին մէքսիքոնի՝ 150 . առ սահմանոք դլասքալայի՝ 360 . իսկ առ քեափաիւ՝ 150 : Օգ նր բարի է . և երկիրն թէպտ լեռնային , այլ արդ ասաւոր յօյժ . բերէ առատանկս ազգի ազգի արմտիս և պառւզս . և այլ զանազան բերս . իր շաքար , բամբակ , մեղք , մօմ , մետաքս ազնիւ և առատ , որդան կարմիր , խիշարշէնալէ , գագառովին . և առաւել ք զնմ վանիլիա . որ ոչ ուրեք լինի այնուէս առատ և աղնիւ : Ունի և առատաբեր բովս ոսկւոյ , արծաթոյ , կապարի , և այլ հանկս , և արջասպ . և մամ գետք նր իջեալք 'ի լերանց , բարձեալ բերեն խառն ը աւազոյ հատա ոսկւոյ . և զի միանդամայն ասացից , լի է և բարգաւաճ ամ բարեօք . վշյ եթէ բնակիչք նր ժրաջան էին և աշխատասէր , արդարե 'ի բովանդակ ամերիկայ ոչ գոյր ժղվդ փարթամ իբրև զնո՞ : Այլ ը հակառակն ծոյլ են ամենենին և գատարկառուն , ոչ միայն սպանիացիք , այլև բնիկ ամերիկացիք . որք յամի զնետ երթեալ մոլութեց տեարց իւրեանց՝ ոչ գործեն զերկիր . շատացեալ զառօրեայ պէտս հայթհայլ թէլ սակաւ ոսկւովին , զար կանայք նց հաւաքեն 'ի գեաց : Ասի թէ դւռս այս 'ի նախմնումն առաւել բազմամարդ էր , և ունէր 450 աւանս , և գեօղս մե-

մեծամեծու և մանոււնս . այլ այժմ բնակիչք նր սակաւ են . իսկ գլխաւոր տեղիք են հետագայքդ : Կվածառագա : Ե գլխաւոր քղք համօրէն գւռին . ե պիսակողոսանիստ , և աթոռ կուսակալ իշխանի նր . ոչ այնցտի ինչ մեծ . այլ ըստ իւրում համեմատուե բազմամարդ և բազմավաճառ . կառուցել 'ի գեղեցիկ և յարգաւանդ հովտի առ ձնողհւ' որ 'ի քեափայէ հանէ 'ի կրադիմալա . իբր 280 մզւ հեռի 'ի մերսիքոնէ : Բնակիչք նր խառն են . յր սպանիացիք , և բնիկ ամերիկացիք . որք առնեն երեսելի վշտկանունի 'ի հիւսիսային և 'ի հարաւային ծովս : Ունի բջմ եկեղեցիս և վանորայա արանց և կանանց . յորս երեսելի է մայր եկեղեցին մեծաշէն և գեղեցիկ : Կուսանք վանաց սրբյն կատարինեայ՝ շնորհ զիոնի ինչ անուշա՛ռոտ , որ 'ի յարգի է յօյժ ոչ միայն 'ի բոլոր մերսիքոն , այլև 'ի բէրու , և 'ի սպանիա ևս . նոյնողս անուշանի է և չոքալաթն՝ զոր շնորհ կուսանք սորին քղքի : 'Ի շրջակայ հովտի գտանին բջմ գեօղք , և վանորայք , և եկեղեցիք վայելուչք : 'Ի 1801 'ի հոկտ' 6 դինի մշշ գիշերայն՝ եղեւ աստ ահարկու ուսանունի երկրի , որ գլորեցոյց զբլքն ողջոյն . զանգակատունք եկեղեցեաց և ծինուլոյզք ատ հարկու ուսանունի երկրի , որ գլորեցոյց զբլքն ողջոյն . զանգակատունք եկեղեցեաց և ծինուլոյզք ատ հարկու ուսանունի երկրի . իսկ այլ շնորհածք կը եկեղեցիք , վանորայք , և հարկ առնեք՝ ոմանիք տառալեցան , և ոմանք աննորոգելի խարխալեցան . քղի սոոկալի շարժումն այն յարածգեցաւ աւուրս 15 . յորս է զի երկիցս և է զի երկիցս յաւուրն երկնէր յաւէտ և նուշազ սաստկութ , որով շնաց բնաւ անդ շնորհածք ինչ հաստատուն . յորմէ լցիլ արհաւրօք բնակչացն և խուճապել 'ի մթան գիշերոյ , ոչ գիտէին թէ ուր և զիարդ փախուցել ապրեցուոցեն զանձինս : Եւ ևս մի 'ի բարձրագոյն մերձակայ լերանց կոչեցել հրարուղի . (զի ըստ ողջոյն ձիւնապատ էր և մոխրամած .) 'ի բուռն սասանուէ անտի 'ի բաց հատել , անկաւ 'ի վրա ագարակի միում , և թաղեաց կենդանուոյն զբազմունի եղելի ամերիկացւոց՝ որք անդ բնակէին . և 'ի տեղւոյն ուստի հստաւ , բոցաւ բերան հնոցի մեծի՝ որ ցոյսոր արձակէ հուր մեծաբոց , և քարինս մոխրախառն . իսկ թիւ մեռելոց և անողանալի վիրաւորելոց , եղեն անհամար :

ԱՀՆԱԿԵՎԵՐ : Ե քղք փոքր , զար ոմանիք նոյն համարին ըստ նախընթաց քղքիք . այլ կակէ Շագիր զանգանէ զաա . և ասէ՝ թէ փոքր է . և ունի բնակիչը

կելս իրը հղի և եմք . որք կէս մի սպանիացիք են ,
և կէս մի բնիկ ամերիկացիք :

ՍԵ ուժուու : Ե փոքրիկ նաւահանգիստ առ խաղաղա
կան ծովու :

ԳՐԵՒԹՈՒՆԴԵՐԵԴ : Քղք փոքր առ ոտս հրաբուզիս լե
րին մօտ 'ի համանուն ծոց ինչ խաղաղական ծովու .
քուդ հոչակաւոր նաւաուեան ազգ առնէ նաւոր
դաց , յանցանելն ը այս տեղի՝ մօտ քերել առ ցա
մաքաւ որչափ հնար է , առ 'ի զդուշանալ 'ի հիւսիս
սային հողմոց , որք շնչեն 'ի լերանց , և ածեն 'ի
կորուսա :

ԱՀԱՅՐՈՎԸ . ՍԵ իտէլքօնու . Քայնուա : Են այլ նը-
շանաւոր տեղիք սցսր գաւառի :

Դատապահուն ։

Անի իւր սահման յարեմափից՝ զիվաքսաքա . յա-
րեւելից՝ զիւքագան . 'ի հիւսիսոյ՝ զծոցն մեքսի-
քոնի . առ որով ձգի ը երկայն իրը 120 մղոնաւ
յարեւելից յարեմաւուս . այլ լայնուն նր սակաւ է :
Անի զանազան գետու . որոց սլաւաորն կոչք գա-
պասքոն , յորմէ և գաւառն կալսւ զանուն . որ է
գետա մեծ , առ որով բռւսեալ կան իփտ առ խիտ
ծառք կոչեցեալ ծառ կաղամբոյ . որք սովորաբար
ուղիղ են և բարձր երթեմն մինչև 100 ուսնացափ .
և ծառք բամբակաքերք մեծամեծք յոյժ՝ զոր ոչ ու-
րեք է տեսանել յթի : Օդ նորա խոնաւ թանձր և
վիասակար կենաց . 'ի պատճառս յահախ անձրեւաց .
քղի ը ամիս ինն գրեթէ անընհատ անձրեւէ անեդ .
խոկ յամսեանն փետրվարի , մարտի , և ապրիլի՝ յորս
տիրէ տօժ սաստիկ , անհնարինս յահախեն յօդս պի-
ծակք , մժեխք , գուեխք , և այլ ազգի ազգի հանձք
խայթոցաւորք և վիասակարք : Եւ 'ի սկզբնէ ուետ .
տեմբերի մինչև ցաւ արտ մարտի՝ յահախեն 'ի ծովե-
զերս նր հիւսիսային հողմունք սաստկաշունչք և
մրրկալիցք , վտանգաւորք յոյժ նաւորդաց : Երկիր
նր ը մեծի մասին գիւր է , գիշին , ճախճախուտ ,
և լճային . վոյ և ոչ այնցափ ինչ արդասաւոր . սա-
կայն բերէ մարացորեն , կամ մայիզ առատ . և ըն-
կոյզ գոփօյի : Անի և ընտանի անառունս բղմն .
յարաց յոլովս շահին սպանիացիք . այլք անտառս մե-
ծամեծս , ուր դտանին ծառք պատճականիք . կը
մայլք , և փայտ սլրամիլեան , և պէսալէս տեսակք
վոյ .

զայրենի դաշտանաց . զբ առիւծ , ինձ , վարագն , այժմ
եամն , ևն : Բնակիչք սորին գաւառի սակաւ են ,
որոց գլխաւոր տեղիք են երկու հետագայքդ :
Դապաստն : 'ի սպանիացւոց կոչեցեալ Մէր ալըսուի
շաղթուեն . սակս յաղթուեն՝ զոր արարքորթես 'ի հա-
սանել իւրում անդ : Եշ գլխաւոր քղք գաւառին ,
որ թէպէտ չէ այնչափ ինչ մէծ , այլ բարեշէն և
բազմամարդ . կառուցեալ 'ի կղզի ինչ երկայն իրը
36 մզրն . այլ նեղ , գործեալ 'ի կրիեալսայ գետոյն ,
որ մերձ 'ի ծովի բաժանի յերկուս առաջս . և ան-
ջատէ զկղզին 'ի ցամաքէն : Առ սովին կղզեաւ են
ըարձակ դաշտք խոտաւէտք . ուր արածեն զբազմուե-
լնտանի անասնոց :
Գևօն հերմուս : Եշ աւան մէծ առ դապասքոն դետուլ :

Դաշտուան :

Ինդարձակ ցամաք կղզի շրջապատեալ 'ի հիւսիսոց
և յարեմաից 'ի ծոցոյն մէքսիքոնի . 'ի հարաւոյ
'ի ծոցոյն հոնառու բանայ . 'ի հիւսիսայ արևմտից 'ի
բամբեկեան պարուրէն . իսկ 'ի ցամաքակողմն՝ ու-
նի իւր սահման զդապատքոն . և զդաւառն կոչեցել
ճշմարիտ խաղաղուեն , որ 'ի կվարիմալա նահագին .
Հայնուեն պարանոցին կմ կրծին՝ որով միանայ ընդ-
ցամաքին , է իրեւ 40 փարսախ՝ սակաւ գետս ու-
նի , այլ ջրհորս բնդմ յոյժ : 'ի բնդմ նշանաց երանի
թէ այս ցամոք կղզի բովանդակ ծածկեալ եր 'ի
ջուրց ծովու ։ վո զի ուր ուրեք փորեն զերկիր ,
գտանեն յատակս ծակոտս , և ծերոս , և խոռացս :
Օդ նը թէպէտ ջերմ է յամառան , (որ սկանի
յասրիլի . և աւարտի 'ի սեպտ' ,) այլ 'ի ձմեռան
քաղցր և բարեխառն և առողջարար . մէնդ յայն
լեռնային կողմանս , որ ձգի 'ի սալամանքայ չե արե-
մուռա , մինչեւ ցարեւելեան սահմանս . ուր ընակիցքն
սովորաբար երկայնակեաց են . հարաւային կողմանք
նոյն լեռանց գլխովին անգործ են . և ընակիցքն
սակաւ , առ պահստութէ ջրոյ . այլ հիւսիսաչինքն
բազմամարդ են . զի առ յաճախութէ քաղցրաշունչ
հողմոց քաղցր է անդ օդին , և երկիրն արդաւանդ
և բարւոք մշակեալ : Ունի ցըքոտանի անասունս
բնդմ յոյժ ընտանիս և կոյրենիս , և աղդի աղդի
թուզունս , և մոմ , և մեղք . 'ի ծովեզերս նը գաանի
ամեղէր պատուական . այլ ըունի բովս ուկւոյ կամ

արծաթոյ . կմ գեթ մինչև ցայժմ ոչ յայտնեցաւ . վնկ սակաւ սպանիացիք դառանին յայսմ գաւառի . քզի անդ առաւել յաճախին նք , ուր առատուի է հանքաց . ուստի բնակիչք նր գրեթէ բովանդակակ ամերիկացիք են հնազանդեալք . կմ ստրուկք սպանիացւոց . որք ծոռայեցուցանեն զես 'ի գործել աղ ՚ի պարոյրն քամեկեան . և 'ի դարմանել զանասունս նց , և յայլ գործս ծառայուե :

Գրեն ոմանք 'ի պատմագրաց սպանիացւոց , թէ յորժամ հասին նք յայս գաւառ , գտին 'ի մէջ բը նահչաց նր նշան քրիստոնէութե . ի՞ր զաւակի ինչ մկրտուե , այլ եթէ չիցէ առասպելական պատմութե , այն մկրտութի ոչ այլ ինչ է . բայց եթէ լոկ լուսացումն առանց ինչ ձեռյ բանի , որ հնրի է և այլոց ազգաց բազմաց . մենդ թէ դոդ ամ նախնի կրօնից Շի : Ոմանք ևս գրեցին , թէ դտան 'ի մէջ բնակչաց սորին գաւառի , որք ասլրեցան ամս երեք հարիւր . բայց 'ի հաւատալ այսմ՝ 'ի վերջին գարս մեր , յորս ոչ լսեմք 'ի վերին Շի մերում ասլրեալ ուրոք տաւաւել ք զամա 170. կմ 200 , մեծի վկայ ուե կարոտիմք : 'ի պարոյրն քամեկեայ , և հոն տուրասայ՝ յաճախին անգլիացիք 'ի հատանել փայտա ՚ի պէտս ներկոյ . որ կարի շահաբեր է նց . այս ազատուն շնորհեցաւ նց 'ի գաշնադրուե՝ որ եղեւ 'ի 1763 : Խակ գլխաւոր տեղիք գաւառիս են հետա դայրդ :

ՄԵՐԻ Փա : Գլխաւոր քղք համբորէն գաւառին , եպիս կոպոսանիստ . և ամուս գաւառատկալ իշխանի նր . կառուցեալ 'ի հիւսիսային ծովեզերս իւքադանայ : Քամբէիտո . կմ Սի Քըանչիսիո տամբէիւն : Քղք բարեշէն , և բազմանարդ . կառուցեալ առ ըարձակ պարուրիւն որ 'ի նմէ առնու զանուն . շնունածքնր քարաշէն են , և վայելքակերտ : Ունի նւհնդիստ մեծ , այլ ոչ այնչափ ինչ խոր , և բերդ հզօր , զոր երկիցու տռին անգլիացիք 'ի 1659 և 'ի 1678. այլ յետոյ անդրէն դարձաւ 'ի ձեռու սպանիացւոց : Յնչին Ֆմկս էր վաճառատաեզի փայտաի ներկոյ . զոր անդղիացիք Լոկվուտ կոչեն . բայց յորմեց հետէ տը տւաւ աղատուի անդղիացւոց 'ի հատանել զայն աեսակ փայտաի ուր և կամիցին , նունազեցաւ մեծաղս այս շտհավաճառուի քղքիս : Այժմ գործեն 'ի նմէ կտաւս , և այլ զնզն ձեռափակերտս բամբակեայս : Դատադրէտո . և գեօլ Մողայ : Են երկու քղքք կառու ցեալք առ ափն էսդափօ դեաոյ . 'ի մէջ նց են գեղեւ

պեցիկ Ճնշղհք ծառոց գագտավայ՝ աստի և անտի
գետոյն, ուր գտանի և ազգ մի սպիտակ գագտո-
վայ՝ որ չիք այլուր : Մեծութիւն և արտաքին գոյն
փեճեկաց նր՝ նման են հասարակ գագտավայ, բայց
մէջն կմ՝ պտուղն է սպիտակ : որ լուսեալ փոխի յալ-
իւր սպիտակ իրեւ զձիւն . իսկ չոքոլաթն զոր գոր-
ծեն անտի, կոչի փրփրացեալ, կմ՝ փրփրատեսակ :
զորմէ առեն թէ պատուական է յոյժ, և յաճախել
առ սպանիացիս : Իսկ 'ի ծովեղերս շրջակայ վիճո-
կի քղզցո՞ւ գտանի ազգ մի խիժի առատ յոյժ 'ի հա-
տորս հատորս, այլ ոչ գիտեն թէ ուստի գոյ : զոր
փիսկ հորկ կպրոյ 'ի կիր արկանեն 'ի ծեփել նովաւ
զնաւս : Ասի թէ գտանի անդ և կենդանի ինչ, զոր
կոչեն Հեռչ . քզի այնչափ յամրաշարժ է, մինչև առ
բւնուե հարուածոց հազիւ քայլս ինչ առնել զօրն
ողջոյն :

Վալշաբուլիս : Է Վալշաբուլիս : Քշք կառուցել յա-
րելեան ծովեղերս իւքադանայ հանդեպ քողումէլ
կղզւոյն :

Վալանանիս : Քղք փոքր, այլ բարգաւաճ և ծաղ-
կեալ, կառուցեալ առ գետութն՝ որ կոչի գետ մեծ :
'ի հիւսիսակողմն նր :

Դաշնասաւ : Աւան առ մեծ լճիւ, որ հոսի 'ի ծովն
մօտ 'ի հարաւային բերան մեծ գետոյն :

Սումաբիսորա : Զիւրու . Սահակուէն . և Պարոյը գե-
րանմաւայ : Են աւանիք և գեօղք այսր գաւառի :

Փանուշն . Է Լ Ա Հ Ա Ր Ե Կ Ա :

Այս գաւառ ունի իւր սահման 'ի հիւսիսոյ՝ զնոր
լէսն . և զմասն ինչ կվատալաքսարայ . յարեե-
լից՝ զծոցն մէքսիքոնի . 'ի հարաւոյ՝ զմեքսիքոն ա-
ռանձնակ . և մասամբ իմն զդլասքալա . իսկ յարեմը-
աից՝ նոյնոչս զմասն ինչ կվատալաքսարայ . Երկայ-
նուի նր է իբրև 165 մզ՝ նոյնչափ գրեթէ և լայ-
նուին . և է ուղիղ 'ի նելքոյ արեւտգարձին խեցդեա-
նի . վզյ կէս մի անկանի ը բարեխտան գօտեաւ, և
կէս մի ը այրեցածիւ : Օդ նր բարի է . իսկ եր-
կիրն ը արգասաւորուե պէսպէս . քզի հարաւային
մասն մօտ 'ի սահմանս մէքսիքոնի՝ պարարտ է և
արգաւանդ . ուր գտանին և բովք ոսկւոյ . այլէ
աղահանք . իսկ հիւսիսայինն՝ աղազուն ամուլ և
անքեր : Քորթէս էառ զգաւառս զայս զկնի տիրե-

Այ մէքսիբոն քղքե ։ բայց թշմա տառապեցաւ յառ նուլն զնա ։ նոյնպէս և 'ի մշակելն ։ որոյ գլխաւոր տեղեք են հետադայքթ ։

Փանուտօն : Գլխաւոր քղք այսր գաւառի, եղիսկո պոսանիստ, և աթոռ գաւառակալ իշխանի նը ։ հիմ նեալ 'ի 1520 'ի քորթիսէ, և անունանեալ Սբ սու ժաննոս նատահանգոփի, առ համանուն գետով իբր 51 մղոնաւ հեռի 'ի ծովէ ։ և 186 'ի մէքսիբոնէ ։ Անի իբր 500 տունս կմ գերդաստանս ։ տունք նը քարաշէն են, այլ ծածկեալ տերեւով արմաւենեաց ։ իսկ գետն է մեծ և շատաջուր ։ ըստ կարեն նաւել և նաւը մեծամեծք ։ բայց առ մուտս նաւա հանդստի նը՝ ծանծաղ է ջուրն, ըստ չէ մարթ անցանել ծանրաբեռն նաւուց ։ որ և մեծաղ նուն զեցուցանէ զառեւարուի քղքին ։

Սբ յակով յորս : Քղք փոքր առ փանուքօն գետով 'ի գեղեցիկ և 'ի զուարձայի վայրի ։
Հաւատադէլան ։ Դամիկիս ։ Դամագլիկի ։ Դանուսուն ։ Դանլուն ։ Փարիսագնէ ։ Են աւանք և գեօղք երեւ լիք այսր գաւառի ։

ԱՐՄ ՀԵ՞Ն :

Ձագաւորուն նոր լէօնի ձգի ։ 'ի հիւսիսային արևմտեան կողմն փանուքոնի, 'ի սահմանս լուիս սիայ, և նոր մէքսիբոնի ։ Գլխաւոր գետ նը կոչի Պրակ ։ այլև գետ հիւսիսոյ ։ որ 'ի հիւսիսոյ հոսել ըստ հարաւ, մատնէ 'ի ծոցն մէքսիբոնի ։ Երկիր նը լեռնային, ուստի և ոչ այնցափ ինչ արդաւանդ ։ 'ի լերինս նը գտանին հանք ։ այլ գրեթէ իսպառ անդործ թողել կան, առ 'ի ցոյշէ գործալարաց ։ Քղք մեծ մասն գաւառին բոլորովին անբնակ է ։ նաև սովանիացիք սակաւ են անդ ։ որոց գլխաւոր տեղիք են երեք հետադայքթ ։

Բերդ սբյն յականնոս ։ կմ Սբ յականնէս : Ե ամրոց և աւան առ պրավօ գետով ։
Քահուիդա ։ Աւան 'ի հարաւային կողմն գւակին ։
Սբ բեռնաբրդն ։ Ե ամրոց և ողարոյր համանուն առ սահմանօք լուխիսոյ ։

**Յօդ ք . Պատեան կմ նահանդ
Ավատալաքսարայ :**

Այս նահանդ՝ զոր սպանիացիք երբեմն անուանեն Թագավառութիւն նոր կալիցիայի, պարսադրէ ըզ հիւսիսային կողմն մէքսիքոնի, կմնոր սպանիոյ . և ունի իւր սահման՝ ի հարաւոյ և յարեւլից՝ զնահան գըն մէքսիքոնի . 'ի հիւսիսոյ՝ զնոր մէքսիքոն . իսկ յարեւմտից՝ զծովն հարաւային, կմ զովկիանունիս զաղական . զծովն կարմիր, կմ զծոցն քալիքօրնիայի . առ որով տարածի ը երկայն իբր 600 մզոն . իսկ ը լայն 'ի ցամսքակողմն իբր 500. բայց հիւսիսային ծայր նր նեղ է յոյժ . և ը փոքր ինչ մասին՝ անկանի ը այրեցած գոտեաւ . իսկ մեծ մասն նր՝ է 'ի ներքոյ բարեխառն գոտեոյ . ուստի և օդ նր պէս պէս է, բայց յամ կողմանս քաղցր բարեխառն և առողջ . վիյ և բնակիչք նր սովորաբար երկայնակեաց են . և զերծ 'ի զանազան ախտից, որք յաճախ են յայլ տեղիս .

Երկիր նր ը մեծի մասին լեռնային է և անպառաւ լից, մւնդ 'ի ծովեզերեայ տեղիս . վիյ 'ի ծովէ երեւի իբր անընատ իմն անտառ . սակայն 'ի ներքին կողմանս ունի շարձակ վայրս մասկեալս . որք այն չափ բերրի են և արգաւանդ, մինչև յարմտեաց եւ բոսիոյ բերել ը միոյ՝ հարիւր . իսկ յսմերիկեան արմտեաց՝ երկերիւր, և աւելի . ամբանջարք արմատք և պտուղք եւ բոսիոյ քաջ պտղաբերենն, ունի և եղեգնաշաքար առատ . որդան կարմիր . մեղու անխայթոց . և արօտս խոտաւէտս, անսամունս ընտանիս և վայրենիս . ազգի տղթի փայտս պատուականս . այլ առաւել ք զամ գերագոյն բերք նր են բովք սակոյ, և արծաթոյ, կաղաքի, և պղնձոյ, բնդք և պշտատթեքք : 'Կ վերջին ժմկս բացաւ ու կէ՛հանք 'ի գաւառն չինալոայ, և սոնորայ, 42 մզոն ը երկայն՝ գրեթէ առ երեսօք երկրի՝ այնչափ առատաբեր, զի 'ի բոլոր նի ոչ լսի գաանիլ զուգականն այնմ . յորմէ անբաւ գանձս հանեն սպանիացիք, և տանին 'ի փողերանոցն մէքսիքոնի . ոչ ընդ ծով, (որ գիւրին երյոյժ, երկուցեալ 'ի վտանգե նա-

Նաւարեկուել, այլև՝ ՚ի (թշնամեաց .) այլ ՛ը սպանք բղմ ծախիւք և անբաւ աշխատու ք բարձեալ ՚ի վր ջորւոց իբր 1000 մզրնաչափ Ճնդրհաւ . իսկ ՚ի ծռ վեզերս քալի ֆորնիայի գտանի մարդարիտ, որ յառաջադոյն առաւել առատ էր, այլ ոյժմ ոչ նոյն սիս :

Բնակիչք նահանգիս են ստրուկք սպանիացւոց բայց երբեմն ըմբոստացեալ յառնեն ըդէմնց, յորժամ չեն համախոհ իւրեանց քազեքէից : Սք ըս բնածին բարուց, փառասէրք են սնապարծք և հեղք ՚ի դործո . որք ոչ երբէք միւն զձեռս ՚ի դործ, եթէ ոչ տացի նց վարձ բղմ . զգեստ նց՝ է շաղիկ և վերարկու բամբակի . և առնապանք նոյնավէս ՚ի բամբակոյ . անկողինք նց փսիաթ լոկ, զոր ինքեանք դործեն . կրեն մանեակս ՚ի պարանոցս ՚ի կանաչուդոյն քարանց . և ապարանջանս ՚ի դաստակս, և ՚ի սրունս . սովորական զուարձուին նց՝ է կաքաւել և խաղալ ՚ի ճայն շեփորայի . առաւել համեղ կերակուր նց՝ է միտ ձիոյ . և մարացորեն կօմ մայիզ . իսկ ըմպելին՝ դինի արմաւոյ, և չքուլաթ : Ամ գեօղ և հնրկութին նց՝ ունի իւր սեփական քազեքէ կացուցեալ ՚ի սպանիացւոց . որոյ իշխանուին ժառանգութք անցանէ ՚ի հօրէ յորդի . բայց ըս նմա են և երկու իշխանք սպանիացէք . որոց պաշտօնն ձգի ընդամս հինգ . և երեքին նք ՚ի միասին կառավարեն զգեօղս և զհնրկութիս նց :

Այս նահանգ բաժանի յեօթն գաւառս . որք Են Նոր իալիշիա . Քաւլիսուտ . Քեամեդլան . Զագարինիա . Նոր պիտաւլիա . Քաւլիտան . և Զինալու . զորս յառաջիկայդ ստորագրեսցուք :

Եր իալիշիա :

Ուզի և Կվատալաքսաշա տռանհանակ, ունի իւր սահման յարեւելից և ՚ի հարաւոյ՝ զմէքօպքան . ՚ի հիւսիսոյ՝ զքսալուքօն . և յարեւմուից՝ ըս մասին զովկիանոս : Երկայնութին է իրեւ 150 մազն, նոյնչափ գրեթէ և լոյնուին . և թէողէտ ըս տյըրեցուք գօտեաւ անկանի, այլ օդ նոր բարեխոան է և առաջ . իսկ երկիրն արգաւանդ . թէպէտ ՚ի ծովեղերեայ տեղիս լեռնային : Գլխաւոր տեղիքն են հետագայք :

Ելուագաւարաք, կմ կուագաւայարա : Եւ գլխաւոր քղք Ժե

ոչ միայն նոր կալեցիոյ, այլև համօրէն նէդին։
Եպիսկոպոսանիսա՝ որոյ ենպն է ը արքեպիսկոպոսին մէք-
սիրոնի։ և աթոռ ատենի կմ ժողովոյ բոլոր նա-
հագին։ մեծ բարեշէն և բազմամարդ։ կառուցել-
առ ողառնայոս կմ էսդվիդլան գետով։ յլեարձակ
գաշտավայրի՝ որ շրջապատել է 'ի լերանց։ և ուր-
դեալ 'ի բազմապատիկ ականակիտ ձորակաց։ բնաց
երեկլի եկեղեցիք և վանորայք արանց և կանանց
գտանին յայսմ քղքի։ յորս յաւէտ երեկլի է մայր
եկեղեցին մեծաշէն և մեծածախ։ 'ի հարաւակողմն
սորին քղքի՝ է լիճ մեծ կոչեցեալ Քափալա։ որոյ
շրջապատն է իբր 120 մզոն։

Դաստիւլ։ Եւ աւան մեծ առ միով 'ի վտակաց պառնայ-
ու գետոյն։

Սբուդիգլիտագէ։ Քղք ծովեզերեայ կառուցեալ առ
քերանով նախասացել պառնայոս գետոյն։ որ է մի
'ի գլսաւոր գետոց նոր սպանիոյ։ և գործէ առ սո-
վին քղքաւ նաւահանգիստ պատուական և ընդար-
ձակ։

Քապեսօն ։

Դժե 'ի հարաւային եղերս այսր նահանդի։ և է
շրջապատեալ 'ի հարաւոյ և յարեմակց՝ 'ի խա-
ղաղական ովկիանոսէ։ յարեկլից՝ ունի իւր սահման
զիվաստլափուարա առանձնակ, և զմէքօաքան։ իսկ
'ի հիւսիսոյ՝ զքեամեդլան։ յորմէ բաժանի անձուկ
կումիւն, որ ձգի արտաքս ՚ի ծովն։ Տարածութիւնը
ոչ ուրեք անցանէ զէհօ մզոնաւ։ Երկիր նը արդա-
ւանդէ։ որ բաց յարմուեաց՝ ունի և արծաթահանքս։
այլ ընտանի անասունս սակաւս։ 'ի գաւառէ աստի
ելանէ իւղն, զոր սպանիացիք կոչեն իւղ դժոխային
թղոյ։ որ բաց յայլոց զօրուեց՝ զոր ընծայեն նմա,
լուծանէ զուռոյցու։ ցրուէ զնիթս որովայնի։ օծա-
նելով արտաքուստ զորովայնն։ կմ կաթեմս ինչ ըլ-
ուելով խառն ը բաժակի դիմուոյ։ օդակար է և
ելունդից գլխոց, այլև խլուն։ Մեծ մասն ընակ-
չաց այսր դրաի՝ են ընիկ ամերիկացիք։ որք առա-
ւել քղքին են և հրահանգեալ, և լաւ ևս կեանս
վարեն ք զբնակիչս այլոց գւոց։ գտանին անդ և
յոլովք ծնեալք՝ յառնէ սպանիացւոյ, և 'ի կնոջէ
ամերիկացւոյ։ որք ը մեծի մասին փարթամ են։
այլ բուն սորանիացիք սակաւք։ իսկ գլսաւոր աեւ
զիք նց են հետադայքդ։

Քառականութեաւոր գլուխաւոր գլուխին . բարեշն այլ փոքր . կառուցեալ 'ի հիւսիսային արեւմտեան կողմն քօմբօսդէլլայ քղզին մերձ 'ի ծովն :

Քօմբօնդէլլա : Քղզ մեծ բազմամարդ և փարթամ . իբր 30 մղոնաւ հեռի 'ի խաղաղական ովկիանոսէ . հիմնեալ 'ի սպանիացւոց 'ի 1531. որ և էր եղաստ նիստ . այլ եղաստրան նր յետոյ փոխագրեցաւ 'ի կվատալաքսարա ՚ի սպատճառու յուռուն օդոյն նր , որ ջերմ է յոյժ և գիշին . 'ի շրջակայ վլանակի նր Են ըշմարծաթահանք . յորս զհարիւրաւոր գերիս ծառ պայեցուցանեն սպանիացիք :

Տէառն ընդառաջ : Քղզ երեւելի 'ի հարաւային կողմն գլուխին առ գետով որ մտանէ յովկիանոս անդր :
Պանդէւաս : Պարոյր մեծ ը մէջ հրուանդանին քորիէնդայ , և դինդուգվէյայ :

Երեւան մարդանուն : Են կղզիք 'ի նմին լայնուն ը քսալիսքոնի իբր 90 մղոնաւ հեռի 'ի ցամաքէ :

ԱՐԵԱՄԵԴԼԱՆ :

Աստ մասին անկանի ը այրեցած դօտեաւ , և ը մտօին ը բարեխաւն գօտեաւ . ձգել ը երկայն առ խաղաղական ովկիանոսից , որ շրջապատէ զնայարեւմտից . իսկ յայլ երից կաղմանց ունի իւր սահմանակից զզաքադէքաս . զքուլիսաքան . զքսալիսքոն , և զկվատալաքսարա առանձնակ : Երկայնուն նր է իբր 111 մղոն . նոյնըափ և լայնունին : Երկիր նր արգաւանդէ . իսկ գլխաւոր բերքն՝ մեզր , մում , թող զարծաթահանքօ : Գլխաւոր տեղիք են հետագայքդէ :
ՍԵՐԵԲՐԱԿԱՆՈՒ : Գլխաւոր քղզ համօրէն գւառին . և ամոռ գաւտուակալ իշխանին , կառուցել առ գետով որ գնայ անկանի յովկիանոս անդր :

ՔԵԱՄԵԴԼԱՆ : Քաղաք փոքր . որ 'ի նախանումն եր գլխաւոր տեղի գւառին . այլ այժմ միայն ամերիկացիք բնակին 'ի նմ .

Մակարչան : Աւան 'ի բերան նախասացեալ գետոյն :

ԱՀԱԹՈՆԻԴՐ : Եւ աւան 'ի հարաւոյ արեւելից քետ մէդլանայ :

Օ աշտվագաւ :

Ունի իւր սահման՝ ի հիւսիսոյ՝ զնո՞ւ պիսքալիս .
յարևելից՝ զիանուքո . ի հարաւոյ՝ զկվալաք-
սարա . և մասամբ իմն զքեամեդլան . իսկ յարեւ-
մաից՝ դքուլիաբան . մասամբ իմն և սա անկանի ը-
բարեխառն գօտեաւ . իսկ ը այլ մասին ը այրեցա-
ծիւ : Երկայնուինը է իբր 300 մղոն . իսկ լայնուին
135 : Արևմտեան կողմն նը է գլխավին անջրդի և
անբեր . և եթէ չեին անդ հանգ , որք համարել են
առաւել առատաքեր ք զայլս՝ որք են յամերիկայ ,
կարծեմ թէ բնաւեին անբնակ լիներ : Իսկ արևելեան
մասն ը հկակին՝ արգաւանդ է յոյժ և բերրի . վայ
և է մի յառաւել բազմամարդ գաւառաց այսր նա-
հանգի . որ և ունի բղմ քղքս , և դեօզ մեծա-
մեծս , որոց գլխաւորքն են հետագայք :

Զատարէւաս : Գլխաւոր քղք գւուին և աթոռ գա-
ւառակալ խնամեի նը . կառուցել ը արեագարձիւ
խեցդետնի . իբր 120 մղոն հեռի ի կվատալաքսարայ .
և 240 ի մեքսիքոնէ : Սպանիացիք պահեն աստ սո-
վորաբար իբր հազար զօրականս . առ ի նուաննել
ունել 800 գերգաստանս ամերիկացւոց գերեաց ,
զորս ծառայեցուցանեն ի մետաղս , և յայլ գործա-
ծառայուել :

Տառանի : Քղք փոքր՝ այլ ենպսպնիստ . կառուցել
 առ սաս լերանց , մօտ առ արծաթահանքս սրբյն մար-
 տինոսի . և առ ձորն սր փրկվին . իբր 400 մղոնաւ
 հեռի ի մեքսիքոնէ . ուր ալֆոնսոս փաքեքեան էած
 գաղթական սպանիացւոց հրամանաւ ֆրանչիսկոսի
 խլառայ . և յայս անուն կոչեաց զնա ի յիշատակ
 համանուն քղքին որ ի սպանիս : Օդ սորին քա-
 զաքի բարի է . և շրջակայ երկիրն ուոգել ի բղմ
 պետոց և ձորակաց . ուստի և արգաւանդ : Բովք
 սրբյն զուկայ մօտ են նմ :

Կիւարինատ : Քղք փոքր ի հիւսիսակողմն առւրան-
 կայ . հիմնել ի ֆրանչիսկոսէ փաքեքեան առ կու-
 սակալութն խլառայի ի ձոր ինչ արգաւանդ և բազ-
 մամարդ , որ ի քղքէ աստի առնու զանուն :

Սբ նորդինոս : Քղք սպանիացւոց , և արծաթահանք
 առատաքեր յոյժ , իբր 60 մղոնաւ հեռի ի զաքա-
 գեքասայ :

Սբ պօղս : Լ նոյննպս բնակուի սպանիացւոց , և ար-
 ծաթահանք առ սահմանոք նոր պիսքալիս :

Քիւռաս . Սբ Գաբրիէլ . Սանգրերէ . Սանկեպա . Կըստին
Տադէ . և Բառառաս : Են բնակուլք սպանիացւոց . և
Երևելի հանք յայսմ գաւառի :

Երբ պիտիալիա :

Ի հիւսիսոյ՝ ունի սահման զնոր մէքոիքոն . յարեա
մտից՝ զչինալօա . և զնոր նաւառուա . 'ի հա
րաւոյ՝ զզաքադէքաս . իսկ յարելիից՝ զնոր լէոն . և
զափաքէրիա : Յայս դաւառ՝ ողպ և 'ի զզաքադէ
քաս՝ զառաջինն եհաս ֆրանչիսկոս իպառա . զոր
'ի 1554 առաքեաց լուդովիկոս վելասկոս փոխար
քայն . տունել նմ առատ սպաշար ճնշեհի . զէնո և
սուուար դունդ զօրաց . նա զառաջինն եհաս 'ի զա
քադէքաս . և մի առ մի նուածեաց անդ զրշմ
քաղիքէս զտնազան ցեզից վայրենի ամերիկացւոց .
գտեալ անդ սպանիացւոց զբշմ հանքս ոսկոյ և
արծաթոյ , դիմեցին . իլերինս զոքադէքտուայ 'ի խըն
դիր սյըլոց . և առ սակաւ սակաւ մոխն 'ի գաւառն
ուռուգէլ 'ի սալինէս կմ սոլինէս գետոյն , զոր կոչե
ցին նոր սկիպալիա . և քաղցրութ և մարդասիրութ
որսացել զսիրտս բնակչաց երկրին , հիմնեցին անդ
նոր բնակուն անուանել Սօնակէ ու պիտ . յր անուն
ոյ : Բայց ժողովուրդք երկրին ոչ նուածեցան ը
Ծով սպանիացւոց , եթէ ոչ 'ի ժմկս փոխուրային
մարքէզի մանրիգվայ . առ որով անձնատուր եզեն
նց և քիքիմացիք և կվաքաքիլացիք՝ ժողովուրդք
տմէհիք և ահարկուք նախնի ինքնակալաց մէքսի
քոնի . և անտի մինչեւ ցայժմ այս ամ ազգք են ը
տրութ սպանիացւոց . որք բաժանեցին զնոտ 'ի 104
ցեզս , կմ գեօղս : Իսկ գլխաւոր տեղիք գւուիս են
հետագայքդ :

Նօմուն պէ պէս . կմ Աշեան այ : Գլխաւոր քղք
համօրէն նոր սկիպալիոյ . և Երևելի յոյժ 'ի սպատ
ճառս բովուց իւրոց . կառուցել 'ի ֆրանչիսկոսէ
իպառայ . որ և կացուցաւ գւուակալ իշխան այսր
գւուի յազքայէն սպանիոյ 'ի վարձ աշխատանաց
իւրոց : Սա կամեցել որչափ ինչ մարթէ ծաղկե
ցուցանել զայս գաւառ , ետ 'ի սպարդէ բնակչաց նը
ամերիկացւոց և սպանիացւոց զբովս արծաթոյ
ավինովայ , զոր գնոյ առել էր . վոյ 'ի սուղ ժմկի
քաղմացան անդ բնակիչք . որք և ամջանիւք գոր
ծէին 'ի մետաղս նը . ուստի արքայն սպանիոյ առ
նոյն

նոյր տմի ամի հասս բղմն լոկ 'ի հինգերդաց հանքացն:

ՄԷ իւլիպոս: Աւան առ առլինէս գետով. 'ի հարաւային կողմն նը:

Բաւառաւ. Քուտի. Միքունիտի. ՄԷ խալ. ՄԷ իգնադիս. Կընտամ. Մայսիտի: Են աւանք և գլխաւոր գեօղք այսր գաւառի:

Վաւլիափան:

Օվավերեաւ գաւառ Շարձակ. որ ունի իւր սահման 'ի հիւսիսոյ զինալօա. յարևելից՝ զղաքադէքաս. 'ի հարաւոյ զկուատալաքսարա. իսկ յարևմտից՝ և շրջապատեալ 'ի խաղաղական ովկիանուսէ: Երկայնուի նը 200 մղոն ձգեալ առ ծովեցերը. իսկ լայնուին իբր 100: Գլխաւոր գետ նը կոչ Սու. որ է մի յերևելի գետոցն մեքսիքոնի. որոյ մակեալ 'ի ծովն՝ գործէ անդանօր մեծ ինչ սպարոյր և նւ հնդիատ պատուական, այլ մուտ նը դժուարին: Երկիր նը արգաւանդ է. բերէ զնմ տեսակս արմտեաց և պաղոց առատ. ունի և բավա արծաթոյ տուատաքերս: Զայս գաւառ եգիտ և կալաւ նուինոս կուդմանոյ 'ի 1531. և ասի թէ յորժամ սպանիացիք հասին անդը, տունք կիմ հիւղք բնակչաց նը էին օտարութի իմն ձեռվ շինել, և լի օձիք. որք յօրժմ մերձէնայր ոք 'ի տօւն անդը. յամ կողմանց շենին Շգէմ նը: Խթու կալան սպանիացիք զգւռս զայս: 'ի զանազան տեղիս հիմնեցին բնակութիս, որոց գլխաւորքն են հետագայքդ:

Քաւլիափան: Գլխաւոր քղք գաւառին կաւուցելաւ սաւ գետով. և աթոռ գաւառակալ իշխանի նը: որ յուշագոյն նստէր 'ի քաղաքն կոչեցել ՄԷ մէտիւլ:

ՄԷ մէտիւլ: Ե քղք հիմնել 'ի նուկնուսէ կուսմանայ առ գետով զօր նա ինքն կուսման կոչեց Մուտէէն, յու կանանց, 'ի պատճառս բազմուել կանանց. զորս տեսին սպանիացիք յեզերս նը, յորժմ հասին անդ: Բարադո. Բէրտւլոն. Զանօրի. և Եսիս: Են այլ նշանաւոր տեղիք այսր գւռի:

Արտավալ: Ե կղզի երկայն իբր 70 մղոն հանդէս ծովերեզեռյց քուլիաքանայ:

Հինալըս :

Չգի 'ի հիւմիսային արևմտեան կողմն քուլիս
քանայ . ունի իւր սահման յարեւլից՝ զզաւ
քադէքաս և զնոր պիտքալիա . 'ի հիւսիսոյ՝ զնոր
նաւառուա . իսկ յարեւմտից զկարմիր ծովն , կմ զծոցն
քալի ֆօրնիայ : Ունի բդմ գետս . օդ նր ըս մէծի
մասին պարզ է , բարեխառն և առողջ . երկիրն
լեռնային . այլ ըհանրանդս խօսելով արգաւանդ և
քերրի . ունի և բդմ հանքս ոոկւոյ և արծաթոյ ։
Զայս գաւառ եգիտ նախայիշատակեալ նուկնոս
կուսման . որոյ 'ի 1552 ելեալ 'ի քուլիաքանոյ հդէ
արամբք իւրովք , և ձեղինորդել իւր 150 մզոն ը
հիւսիս , եհաս 'ի բէդադլան գետ . եգիտ անդ սու
կաւ բնակիչս , որք զգեցեալ էին զմորթ եղջերուի .
և էին բարձրահասակ և բարեդիր մարմնով , այլ
թիսագոյն . քաջ ովատերազմականդ . ոէնք նց էին
նետ գեղեալ , նիզակ , մահակ , և վահան . և ասի
թէ մարդակեր էին , և ովաշտէին դարեգակն . այլ
զոհս ինչ բնաւ ոչ մատուցանէին նմ : Անցել կուս-
մանոյ հանդերձ գնդաւն իւրով զբեդադլան դեռովլ .
յետ այլեա 150 մզոնաչափ ձեղինորդուել եհաս 'ի
չննալօա . ուր եգիտ աւելի ք 25 գեօդս բազմա-
մարդս . և 'ի պտճռս անձքեաց՝ կացին սպանիացիք
առ նու աւուրս 42 . յորս բնակիչք տեղւոյն կերակ-
րէին զնու որսովք իւրեանց . առա ձանձրացեալ
'ի նցէ , թողին զնու և առ հորկ փախեան և թաք-
եան 'ի լերինս և յանտառս : իսկ կուսման շրջել
ը բովանդակ գւոնն , եհաս մինչեւ 'ի եագվիմի գետն .
և անցել ը այն , զնինի թեթե ինչ մրցմանց ը բնակ-
չաց երկրին , գարձաւ յետս : Յետոյ վերստին դի-
մեցին անդը սպանիացիք . և բլմն աշխատ եվեն 'ի
նուանել զբնակիւ նր . որք են յաղթանդամք ու-
ժեզք և քաջ ոտքրզմականդ . և 'ի 1554 սկսան հիմ-
նել անդ բնակուիս . որոց գլխաւորքն են հետա-
գայդ :

Ջինալըս : Գլխաւոր քզք կուսին . հիմնել կմ
լաւ ևս ասել նորոգել 'ի 1554 'ի Փրանչիսկոսէ
իսպառայ , որ էած անդը և բնակեցոյց գաղթական
սպանիացւոց . որք այժմ մտագիր են 'ի դործ մետա-
դաց . յորս ծառայեցուցանեն զբնակիչս երկրին :
Սբ մույէւ . քանակուալ . քէսթէ . Դէկէտո . Պատ-

Ուրիշնեան : Են նշանաւոր տեղիք այսը
գւակի, զորս յիշաստակեն աշխարհագիրք :

Յօդ Շ. Ատեան կմ նահանդ

Ավարդիմալայ .

Այս ատեան կմ նահանդ՝ սրարագրէ բովանդակ
ազայն մասն նորոյն սպանիոյ կմ մէքսիքոնի ,
որ 'ինահանդէ մէքսիքոնի ձգի ը արևելեան հարա-
մինչեւ 'ի կիրճն փանամայ , և տարիենայ . յա մինչեւ 'ի
սահմանս հարաւային ամերիկոյ : Երկայնուն նը
տարածել առ խաղաղական ովկիանոսին է իբր 900
մղոն . իսկ լայնուն յըարձակագոյն տեղիս 420 . և
բաժանի յեօթն գաւառս . որք են . կըսրտիմալա ա-
ռանցնակ . բնակու . Շնառուի . խաղաղուի . Հոնդուրա .
Ալտարիւ . Քառուիրու . և Վերակա . զորս յառա-
ջիկայդ մի առ մի ստորագրեսցուք :

Ավարդիմալա իմ Ավարդիմալա առանձնահի :

Արարատ բնակչոց երկրին՝ Գևարդանալա ա-
սացել , ձգի յեղերս խաղաղական ովկիանոսի .
և ունի իւր սահման 'ի հիւսիսոյ՝ զկվաքսագա . որ
է 'ինահանդին մէքսիքոնի . 'ի հարաւոյ՝ զնիքարակ-
վայ . իսկ 'ի հիւսիսոյ արևելից՝ զքեափա , զնչմարիա
խաղաղուն կոչեցել գաւառն , և զմասն ինչ հօնուու-
րասայ : Ունի թշմ գետս մեծամեծս և մանունս .
յորոց յոմանս գաանի բազմուն կոկորդիլոսաց : Օդ
նը ըհանրանկս խօսելով՝ յոռի է և խատակար . զե
խոնաւ է յոյժ , թանձր , և տօթագին հողմունքն .
մինդ հիւսիսայինք և հարաւայինք՝ խիստ են և
մրրկալից . այլ սովորաբար ոչ տեեն աւելի ք 15 .
20 աւուրս . նոյնողս և անձքեք նը յորդք և ջաղքք .
թէպէտ ոչ այնչափ յաճախեն : Երկիր նը լեռնային
է . բայց ունի և թշմ հովիտս , և դաշոս արգաւանդս
յոյժ . որք բերեն մայիզ , կմ մարագորեն տւատ ,
և ցորեան , և այլ աղբե աղգի արմախս , և պտուզս
պատունիանս , և բամբակ . ունի և գագառով առատ ,
և մեզք , և մամ , և բալաստն աղնիւ , և անասունս

ընտանիս, և վայրենիս. առ սաստիկ խոնաւութեածալական անդ օձք, իժք, կարիճք, և որդունք մեծամեծք, թաւք և թիւնաւորք. որոց լոկ շօափումն բիշմանգամ մահաբեր է. նոյնու յանախեն անդ և աղգի աղգի ճանճք խայթոցաւորք. յանհնարին վիշտ ընակաց:

Գրտանին անդ լիճք ծծմբայինք, որոց ջուլք բուրեն զծանր հոտ ծծմբոյ. և ասի թէ շրջակայ արօտք նց պարարտացուցանեն զերիվարս վախտս և անդօրս բնակիչք այսր գաւառի ըիրտ են, այլ քան որ սորդք, սովորական զգեստ նց են վարտիք կարձմինչև 'ի ծունկս. և շապիկ, և վերարկու մի ասունի կմ կտաւի. դրեթէ նոյնու զգեստաւորին և կանայք նց. և թէպէտ ունին զմասնաւոր լեզու, այլ սովորաբար խօսին 'ի բարբառ մէքսիքացւոց. և ըզանազան ցեղից իւրեանց բաժանել են 'ի զանազան գեզս. որոց յիւրաքանչիւրսն գտանին ՅՅՅ. ԳՅՅ գերգաստանք, որք ունին մտսնաւոր գատաւորս սպանիացիո. իսկ ունանց 'ի դիւղօրէից շնորհեալ է ունիլ քազնքէս յազգէ իւրեանց. որք գատեն զնամ գատաւոտանս նց, բաց 'ի գատաստանէ գլխապարտուե. զի այն պահել է առ մեծապոյն գատաւորս:

Իսկ գլխաւոր տեղիք նը են հետագաքդ:

Կիշրդիմաւ. կիմ կիշրդիմաւ: Գլխաւոր քազաք ոչ միայն համանուն մասնաւոր գւոնի, այլև բովանդակ նահանգին. եղուանիստ, և աթու գաւառու կալ ատենի կմ ժողովայն. յորում են երեք նախագահք, վեց իորհրդականք. և դործակալ արքային սպանիոյ. կառուցել է 'ի հովանի շրջասրատելոյ 'ի բարձրաբերձ լերանց. յորոց մինն հնող վասի, և արձակէ բոց ահարկու, և բուբիւնս որոտաձայնս, և ուղիս հրեղէնս ծծմբահոտ. և երբեմն անհնուրինս բորբոքել, ցնդէ 'ի վեր մոխիր յորդառատ, և քարինս աճիւնացելո. ուստի բովանդակ լետոն գոլով ծածկել մոխրով, և այնպիսի աճիւնացեալ քարամք, զարհուրելի իմն տեսիլ ընծայէ աշաց: Յառաջ ք զամս ինչ առաւել ք զավորականն բորբոքել, բացաւ ըարձակ և անդնդախոր սպատառուած 'ի գլւսւխ լերին. յորմէ ցնդեցաւ մոխիր այն շափ, մինչև լնուլ զնամ տունս քդքին և զըրջակոյ վայրս նը. ը մախրոյ և քարինք արձակեցան, այլ 'ի խնամոց տն յայնկոյս լերին հոսեցին. օրք երեխն մինչև ցայսօր 'ի զարմացումն տեսողաց. ապա թէ ոչ եթէ 'ի կողմն քաղաքին անկել էին, մեծամեծ քանդա:

քանդմունս և սպանութիւն գործելը էին : Քղքն է մեծ գեղեցիկ մարգաշատ և բազմավաճառ . ունի գեր գառանս իբր 5000 . և բարձ շինուածս երևելիս և դեղեցիկս . այլ մի միայն ժգվագաղետական եկեղեցի . որ է նոյն իսկ մայր եկեղեցի քղքին . իսկ այլ եկեղեցիք են 'ի ձեռս կրօնաւորաց . զի վեց մենաստանք են 'ի սմին քղքի . չորք արանց . և երկու կուսանաց . իր գոմինիկեանց , Փրանչիսկեանց , կրօնաւորաց՝ որք կոչին վարձուց , և օգոստինեանց . յառաջադոյն և յաւեանք ունեին անդ վանս . երեք առաջինքն մեծ են , յորս սովորաբար բնակին հարիւր միանձունք . այլ 'ի մէջ ամցն յաւէտ հուշակաւոր է մենաստանն և եկեղեցին գոմինիկեանց , փարթամ' և մեծաւեն . 'ի զարդու եկեղեցւոյ նր երևելի է արծաթի կանթեղն մեծ և ծանրակշիռ . և արծաթաձոյլ արձանեայ պատկեր ածամօրն 'ի չափ հասակի մարդոյ . առաջի որոյ հնաղ վառել կան 12 կանթեղք . իսկ 'ի մէջ վանացն են մեծամեծ պարտէզք . և բուրաստանք ծաղկանց և պտղոց , զարդարեալ շատրուճանօք . և 'ի միւտմ'յայնցանք է լճակ 250 քայլ երկայն , բովանդակ սալայատակ . և շրջապատեալ ցածուն որմօվ : Իսկ մենաստանք կուսանաց՝ կոչին անարատ յղութ . և որչն կատարինեայ . երկոքին ևս մեծամեծք և փարթամք . այլ առաջինն առաւելէ . յորում ասի թէ բնակին իբր հազար անձինք ծաղկել է վաճառականուն սորին քղքի . ուր յաճախեն վաճառականք ոչ միայն 'ի շրջակայ գաւառաց , այլև 'ի սպանիոյ , և 'ի բերուայ ը ծով և ը ցամաք : Վարենք կերակրոց գիւրադին են յայսմ քղքի . զի ամ ինչ առատապէս գտանի անդ . վայ գիւրաւ կարեն ապրիլ անդ և աղքատք :

Ս-+ի+է+է+ . կմ ՍԷ անդան Ս-+ի+է+է+այ : Ծովել զերեայ քղք փոքր . որ ունի նաւահանդիստ առ բերանով գետոյ :

Ս-+ն-ս-ս-տ-օ : Քղք ծովել զերեայ , կառուցել առ ափն խաղաղական ովկիանուի 'ի հիւսիսոյ արևմակոյ կվարդիմալայ : Սակաւ սպանիացիք գտանին 'ի նմ . իսկ այլ բնակիչք նր ամերիկացիք են : Ոմանք յաջնարհագրաց զայս քղք գնեն իբր գլխաւոր տեղի մասնաւոր գաւառի . արտաքոյ գաւառին կվարդիմալայ : **ՍԷ է+ի+է :** Քղք փաքր առ գետով , որ իբր 12 մինւ հեռի գնայ անկանի 'ի ծովին խաղաղական . 'ի հիւսիսակողմին նր են մեծամեծ լերինք ապառաժուաք և քարաժայուք . անուաննելք Քեանդալեան լերինք :

ՎՐԵԱԳԹ 2

Պաւառ միջերկրեայ 'իներքս 'ի ցամաքն . որ ունի
իւր սահման 'ի հիւսիսոյ՝ զդապատքոն . 'ի հիւ-
սիսոյ արևմտից՝ զիւքադան . 'ի հարաւայ՝ զկվարդի-
մալա առանձնակ . իսկ յարեւելից՝ զշմարիա իս-
ղազութիւն : Երկայնութե նր արեւելից յարեւուտամ՝ է
իրը 225 մղոն . իսկ լայնութիւն յըարձակագոյն տեղիս՝
իրը 300 : Գլխաւոր դետ նր նոյնոպս կոչի քեափա-
որ է մեծ շատաջուր և նաւարկելի . որ իջեալ 'ի
հիւսիսոյ՝ անցանէ ը գաւառն գվելենացւոց . և
ապա գնայ անկանի 'ի ծովին գապագոնայ . այս դետ
ոչ միոյն զերկիրն արդասաւոր գործէ , այլէ զվա-
ճառականութիւն գաւառին ը ոյլոց չը ջակոյ դաւառաց
գիւրացուցանէ յոյժ : Երկիր նր արդաւանդ է և
բերբէ , զի Երկրագործութիւն առաւել ծաղկեալ է
աստ , ք յայլ տեղիս 'ի կօզմանիս յայստուիկ . ունի
ցորեան , և այլ աղդի աղդի արմտիս պառւզ և
բանջարս տարելու յեւրոպիոյ . և գործ , բամբակ ,
մետուքս , որդան կարմիր վայրենի , մեզք , մոմ , բաղ-
մառեսակ ծառս մեծամեծս պիտանիս 'ի շինուածո-
նի թեղօշ , սոճի , մայրս , նոճիս , կտղնիս ևն . զա-
նազան ծառս իիժարերս , իշմս ինկահոտս , բա-
լասանս պատուականս , և զամ տեսակս ընաանի
անասնոց . զի արջառ , ոչխար , այծ , խոզ . այլ յա-
ւէտ անունանի են Երիվարք նր , զորս տանին մինչեւ
'ի մեքսիկոն . թէտան իրը 500 մղոնաւ հեռի է առտի-
գաանին անդ . և վայրենի անասունք . զի առիւծ ,
ինձ , ազունէս , վարազն , ճագար , ևն . աղդի աղդի
թուզունք գեղեցիափետուրք . նոյնոպս և օձք մեծա-
մեծք յոյժ մինչեւ 20 ունաշափ Երկայնութե . և այլ
աղդի աղդի սողունք :

Բնակիչք սր առ համեմատութ այլոց ամերիկաց
Հոգ , առաւել քղբական են և հրահանդել եռան-
գոտք արիասիտք և ժրաջանք . մի 'ի գլխաւոր գոր-
ծառնութեց նց է կրթութ զինունորական ը ջուր և
ը ցամաք . շնեն նաւակս 'ի գետս , և փայտակերտ
ամբոցս 'ի ցամաքի , և ելեշ գեմըդէմ միմեանց
մարտնչին իրբև ոսոիք . առնելով զնմ փորձ
պազմի . ծաղկել են առ նու և արհեստք առաւել ք

յայլ գաւառս մէքսիքացւոց . զի բայց յայլոց արունեաւ տաւորաց , գտանին անդ նկարիչք , երաժիշտք , և այլ այսպիսի արհեստաւորք , առ որս առաւել հանձնար խնդրի :

Եւ թէպէտ այսցափ զանազան արդեամբք ճոխացել է այս գաւառ , սակայն յաջս սպանիացւոց արհամարհ է , և անողիուան համարել քը զայլ ամ գտաւոս , զոր ունին 'ի մէքսիքոն . առ ՚ի չքոյէ 'ի նմ հանքաց . և զայն ոչ ածեն զմուաւ , եթէ արդիւնք երկրի և ժրաշան աշխատասիրուե բնակչաց՝ նուզպակասուի հանքացն . վեյ սակաւ բնակունք սպանիացւոց գտանին 'ի գաւառի աստ . որոյ գլխաւոր տեղիք են հետագայքք :

Քէսափա . կմ՞ Քաղաք արքունի : Գլխաւոր քը ւք գտաւուին՝ ենդսանիստ , և ամօսու գաւառակալ իշխանին կառուցել յը արձակ և 'ի զուարձալի դաշտավայրին շընապատել դալտրագեղ բլուզք , Անի եկեղեցիս . և մենաստանս գեղեցիկս . յորս երեւելի է մայր եկեղեցին . այլ ոչ է այնցափ ինչ բազմամարդ և ոչ փարթամ : Ազնունականք քղքիս յառակս եղեն , եթէ աղքատ են և հպարտ . ոչ լոխն անդ տու անունանք , եթէ ոչ քորթիսի , վելագրունեայ , մէնտոզայ , և այլոց երևելի սոհմից սպանիոյ , առաջին ախրապետալոց մէքսիքեան Ծի . որովք պարծին ոչ միայն արք՝ այլև կանայք , որոց այնցափ է փափկասիրուեն , մինչև տան բերել յեկեղեցին զորքուաթ . զի ոչ կարեմք տանն երկար տոկալ , առանց զօրացուցանելոց զատամեռքս մէր : Եւ թէպէտ ենդս ոք գովանի նախանձայուզութ պատունոյ տանն այ՝ բլշմ աշխատ եզմ սպառնալեօք , այլև յայտնի նզովիւք , բառնալ զոյն անկարդ և գայթմակղզական սովորուեն . այլ ոչ կարաց . յոյր սակս ասի թէ կորոյս և զեւսնս իւր : Քէսափա հետիւա : Ե , քղք մէծ ք զայլ ամ քղքս գւուին . կսաւուցեալ 'ի ծոր մէծ մօտ 'ի գապապօն գեւան իբր Յն մզոնաւ հեռի 'ի նախորնթաց քղքէ . Բնակից նր բովանդակ ամերիկացիք են . քղի բարդուղիմքոս տելաս քաղաս աւաշջին ենդս այսր գաւասի՝ բողոք կալեալ առ արքայն սպանիոյ , սակս անդիմունց զոր գործէին 'ի կողմանս յայսոսիկ սպանիացիք , ընկաւ լաւ յարբայէ բլշմ աղատուես վս ամերիկացւոց . յորոց մին է , լինել նց զերծ 'ի գերուե . ուստի և նք շինեցին զքղքո զայս , որ 'ի սուզ Ֆլիի բարգտանն ճոխացաւ բազմութ բնակչաց . զի 'ի շընակայ կողմանց ամենեքեան անդր գիմեցին , և փարթա-

մացուցին . Վայ ժեք քղք ուր այնշափի բղմ մեծատուն
ամերիկացիք գտցին օրշափի աստ . որք և են քղքա-
կանք և կրթելք ոչինչ ըհատ 'ի սպանիացւոց . և
ունին 'ի քղքի անդ բղմ եկեղեցիս մեծաշենս , և
մենաստանս կրօնաւորաց : 'ի մերձակայ վայրո սորին
քղքի՝ են ըարձակ անդաստանք շաբարաբեր եղե-
գանց . և մեծամեծ դործատունք :

Փաւէնգչէ : Քաղաք փոքր առ սահմանոք գաւառին
գավառոնայ , առ ափն պացի գետոյն :

Կվէլէւէնահէ : Քղք փոքր առ արևմտեան վատկաւ
սումասիադայ գետոյն :

ԴՅԱՄՐԻԹ ԽԱՂԱՂՈՒՄ :

Այս գաւառ 'ի բարբառ սպանիացւոց Աէքա հաշ-
կոչեցեալ , ունի խոր սահման յարեւմաից՝ ըզ-
քեափա . 'ի հարաւոյ՝ զկվարդիմալա . յարեւելից՝
զհոնտուրաս , և զծոցն համանուն . իսկ 'ի հիւսիսոյ՝
զցամաք կղզին իւբադանայ : Երկոյնուն նր է երբ
144 մղոն . իսկ լայնունն իբր 84 : Օդ նր յա կի-
առյն՝ բարի է և առողջ . իսկ ը մնացեալ մասին՝
յուի սակս կարի խօնտուուն . յաճախեն անդ գետ-
նաշարժունք , որոտմունք , և անձրեք յորդք դրե-
թէ անընատ ը տմիսս ինն : Երկիր նր ը սնային
է . ուստի արմաիս սակաւ բերէ . այլ դլսաւոր
գերք նր են գագառվ , համեմք , բամբակ , ասր ,
մեզք , և մայր ծառք . իսկ գլխաւոր տեսք նր են
հետագայքդ :

Քապան : որ կոցի և **ՃՅԱՄՐԻԹ ԽԱՂԱՂՈՒՄ :** Գլխաւոր
քղք գաւառին առ ափն գետոյ՝ որ մտանէ 'ի ծոցն
քաղցր կոչեցել :

Քրիստովալ . կմ ԱԷ Քրիստովալ : Եշ քղք փոքր առ գե-
տով՝ որ նոյնպէս դնայ անկանի 'ի ծոցն քաղցր :
Զատափա : Քաղաք փոքր 'ի ծայր նորին քաղցր
ծոցոյ :

ԱԷ Քէրդինանդոս օմայ : Եշ ամրոց մերձ 'ի ծովն յան-
քեր և յապառաժուտ վայրի . շինել 'ի սպանիացւոց
'ի մերձակայ թմիս 'ի սպանականուն ծովեղերեայց
այսր գաւառի , յերեսաց եւրոպէական թշնամեաց
իւրեանց :

Հայութաւաս : Կոչի և Քօմայակը :

Ունի իւր սահման 'ի հարաւոյ' զնիքարակվա և պկվարգիմալա . յարեմակց՝ զհմարիտ խաշնիսի 'ի հիւսիսոյ և յարելից՝ է ըջապատեալ 'ի ծոցոյն մեքսիքոնի . որ յայսմ վայրի 'ի գւանէ աստի առել ղանուն՝ կոչի ծոց հոնառւասայ : Երկայնուն նր յարելից յարեմուտս ձգել առ ծոցով մեքսիքոնի ' է իբրև 39^o միջն . իսկ լայնունին 'ի տեղիս տեղիս իբր 180 : Օդ նր ընդհանրապէս խօսելով բարի է . և երկիրն լեռնային . և ը մէջ լերանց նր հովիտք ընդարձակք , և ձորք խորինք . որք յաւէտ պարարանան յուռոգմանէ ջուրց գետոց նր . քզի 'ի սեպա' և հոկա' 'ի յորդել գետոց . բնակիչք երկրին 'ի ձեռն խրամոց ածեն զջուր նց յօռոգանել զարտորայո իւրեանց . որով պարարտացել երկրին՝ բերէ սուատապէս ազդի ազդի արմոխ , և բամբակ , և սցլ բերտ . ունի և մեղք , մամ , բովս ոսկւոյ և արծաթոյ , արօտս խոտաւէտս , անասունս ընտանիս և վայրենիս , այլև այգիս . որք յամին երկիցտ պտղաբերեն . քզի 'ի կթել զառաջին պտուղն , գարձեալ ոռոգանեն զայգիս՝ և որթքն վերստին արձակին սղկոյզս . որք 'ի մշջն կմ յաւարտ գեկտեմբերի հասանեն :

Աստի ելանէ և հռչակաւոր փայտն պատուական և մեծագին՝ անուննել Քամբէիւն . խառլ" Քամբէ մանակ . որ միշտ եղեւ պատճառ հսկառակութեն 'ի մշջ սպանիացւոց : Քանզի այս ծառ պատուական՝ լինի 'ի մշջ սահմանաց սորին գաւառի յընդարձակ գիւր և լըսային գաշտավայրի՝ առ ծոցով հոնտուրասայ . ոււտաի և 'ի մշջ սահմանաց սպանիացւոց մրտւեն . այլ փայտահատք անգղիացւոց եկեալք 'ի ձեամափրայ կղզւոյն , սկսան հատանել զժոռուն . զառաջինն 'ի ծոցն բամբեկեան . բայց տարագրեալք անտի 'ի սպանիացւոց . անցին 'ի ծոցն հօնառւասայ . և բռնութ զինուց աիրեցին երկրին , զի էին իբր 1500 . և կացուցին անդ զմասնաւոր հաստրակուի . ունելով 'ի մշջ իւրեանց և թագաւոր . և կան բռնացել անդ մինչև ցոյսօր , որք և օր ըս օրէ յաւելանան . վու զի ամ նաւավարք՝ որք 'ի դժոճոս պարտուց ոչ ևս կարեն մնալ 'ի ձեամափա , փախաւցել առլասատան լինին 'ի ծոցն հոնտու-

րասայ , և միանան ը նո . ուր 'ի ոռւղ ֆմկի 'ի փայտից անտի շահին բշմ ինչ : Այս գւ՛ռ յոջ ք զտիւել նմ՝ սպանիացւոց՝ բազմամարդ էր յոյժ . այլ այժմ ոչ նոյնողս . որոյ գլխաւոր աեղիք են հետագայք :

Վաշլապօւիպ : Գլխաւոր քղք այսր գաւառի . ենդստ նիստ , և առվարտկան աթոռ գաւառակալ իշխանին , և այլոց արքունի պաշտօնատարաց . ուր և բերեն զտմ մետաղս , որք ելանեն 'ի գաւառէ աստի 'ի հաւլել և 'ի ձուլել . կառուցեալ 'ի գեղեցիկ յարդաւանդ և 'ի զուարձալի հովտի . ուր արածեն բազմուն արջաւոց և խաշանց : 'ի 1558 աստ փոխադրեցաւ աթոռն եպիսկոպոսական 'ի գրուքսիլոք քղքէ :

Դրսուիլոն : Յառաջադոյն էր գլխաւոր քղք հոնտուրասայ , այլ այժմ ոչ ևս . շնել 'ի սպանիացւոց յամուր վայրի ը մեջ երկուց ականակիտ և ձկնալց վետոց , իբրև 3 մզիւ հեռի 'ի ծովէ . ունի նաւահանգիստ մեծ և պատուական և անքոյթ յամ հողմոց 'ի ծոցն հոնտուրաս առ բերանով երկուց գետոց , ահուանել նաւահանգիստ սիյն դեղէօայ , կի՞ ճիլէօայ . և 'ի ծովակողմանէ պարիսպ ամուր . առ որ չէ հնար մատչել , բայց եթէ ը մի միայն հանապարհ գահավէժ և ապառաժուտ . և առ նովարերդ 'ի վր բլրոյ . իսկ յետկոյս քղքին են բարձրաբերձ լերինք . 'ի 1576 առին անդդիացիք զայսքլք . այլ ոչ կարացին պահել . ապա 'ի 1596 վերստին յարձակեցան 'ի վր . բայց ընդունայն եղեն ամ ջանք և հնարք նց . քզի բնակիչք քղքին 'ի գիտօղ ժամու ծանուցել զբալումտ նց , կալան զանձուկ կիրճ հնապհին , որ հանէ 'ի քաղաք անդր :

Գանձուիլոն : 'ի բարբառ սպանիացւոց կրայիտա ա փիօն : Եւ աւան առ ոտս լերանց 'ի վր մեղացել ժայռի . ուստի և ամուր առաւել 'ի բնական դրից տեղոյն ք յարուեստական ամրուեց . իբր 90 մլոնաւ յարեմուտս վալլատոլիտայ . շնել 'ի 1530 'ի նտւապետէ գարբիէլէ ոսյասայ յապահովուն ոսկեհանքաց , որք դտանին յայս շրջակոյ տեղիս . և քզի 'ի ոկզրան անդ չէր այնցափ ինչ ամուր , առ 'ի դիմագրաւ լինել հնապղորդ արշաւանաց վայրենի ժղվիլեան , յայն սակա 'ի բաց թողաւ . ապա զինի վեց տանց վերստին նոր բողեցաւ 'ի կոնսալվոսէ աըլլարատայ : Բնակիչք սորին քղքի ըստ մեծի մասին սպարապին 'ի գործ մշակուել երկրի բշմ աշխատրուք և տաժանմանը սակա

ասկա կարի կարծրութ երկրին : Երիվալքը և ջորեք
այսր զիմանկի ընտիր են և անուանի :

Սբ Գևորգ օշական : Աւան առ կուկուա անուանել
մեծ գետով , որ գնայ անկանի 'ի պարոյրն հոնտու
քառայ որ 'ի ծոցն մէքսիքանի յարեմափից նաւանդու-
տին դրուքոիլլոնի :

Մանդա և Կետա : Են այլ երկու նշանաւոր աւանք
այսր գաւառի :

Ռինդան ճառիդայուց : Գլխաւոր աւանագեօղ մոս-
քիդացւոց . որք են ժղվերք ինչ վայրենիք աղատք •
ամրացեալք 'ի լեռնային դժուտրամասոյց վայրա-
տու սարին գոհութ ոյ : Սբ մահուցափ տաելութ
ըերին առ սղանիացիս . զի յիշատակ անգթուեց
զոր գործեցին 'ի նախնիս նց՝ անջնեղ տրմատացեալ
է 'ի սիրատ նց • զոր հայր աւանդէ որդւոյ • զի մի
երեք անձնատուր լիցին օրինաց և կրօնի սպա-
նիացւոց • վոյ կան մնան 'ի նախնի կատապաշտուե-
լւրեանց • սակայն անգղինացիք իւրեանց սովորա-
կան հնարագիտութ մոխն 'ի սահմանս նց , ոչ միայն
'ի հատանել զիսայտքամբեկեան , այլը 'ի հիմնել
անդ բնակուիս . ուր ունին ոյժմ քանի մի փոքրիկ
պեօլո , յոյր սակո վէճ է 'ի մէջ երկուց թղթուեց
սպանիացւոց և անգղիացւոց . զի սպանիացիք պըն-
դեն՝ թէ գտւառն մոպիդացւոց է չը մըրութ իւր-
եանց , զի է մոսն հօնտուրասայ . իսկ անդղիացիք
ըհակառակն հաստատեն թէ սպանիացիք ոչ եր-
բեք տիրեցին գաւառին մօսքիդացւոց . ուստի և է
ազատ . վոյ տուանց անիրտւելոյ առ սպանիացիս ,
իարօլ են ինքեանք հիմնել անդ բնակուիս . այն զի
և զօրութ գանագրուեն՝ որ 'ի 1763 , ունին նք իւ-
րաւունս 'ի վը այնր գաւառի :

Ուդիլա . Շառուդան . և խաշանայա . կմէ կրայանայա : Են
երեք կղզիք մեծամեծք 'ի ծոցն հոնտուրասայ , պատ-
կանեալք 'ի գաւառն նը :

Անդարակնա :

Այս գաւառ ունի իւր սահման յարեմափ՝ ը
ֆոքրիկ մասին զկվարդիմալա . 'ի հիւսիսոյ՝ ըլ-
հոնտուրաս . 'ի հարաւոյ՝ զբոսդառիքքա . իսկ այլ
արեմուեան և ազեելեան մասունք նը՝ են չըջապա-
տել . 'ի խաղաղական ովկիանոսէ , և 'ի ծոցոյն մէքս-
սիքնի : Օդ նը յամառան տօթագին է յոյժ . իսկ

Կ ձմեռան անձրեւային և մրրկալիր : Երկիքն արդաւանդահող բերբի և զուարձալի . մինչեւ կոչիլ նմ՝ պարտէզնոր սպանիոյ . ունի կանեփ, վուշաւատ և աղնին, բամբակ սպասուական, բալաստն, Եզեղնաշաքար, սպազեղ Երկայն, լոյժ ամպէր, ովէս ովէս իուժս, անտառս մեծամեծս, որք բերեն ազգի ազգի փայտս սրատուականս և սիխտնիս 'ի ներկ և 'ի շինուած . ծառս ինկահոտս, բնշմատեսակ ծազիկս անուշահոտս և գունագեզս, և չըրքոտանի անսատունս ընտանիս և վայրենիս, թուշունս գեղեցկափետուրս, մանաւանդ թութակս, որք առ կարի յաճախութեն՝ բշմ վասոս դործեն յանդաստանս : Այլ ովնար տակաւ ունի . ոնկ և ցորեան և այլ արմասիք՝ նուազ են անդ . բայց զպակասութեն ոյ և այլոց իրաց՝ թէ իցեն, ըսուն առաւելութեր ողատուական ոսկեհանք, և արծաթահանք առատարերք . մինչ նաև յաւազս դետոց դտանին մանրիկ հատք մաքուր ոսկւոյ :

Ընդ. մէջ դաւառիս գտանի լիճ մէծ, որոյ շրջաւ պատն է ՅՀ մզոն . կրէ զտեղատուի և զմակրնթայուն ը օրինակի ծովու, և ունի բշմ կղղիս, և ձուկն առատ, բայց կոկորդիլոսք որք յաճախուն յեզերս նր, սպասեն վիճ . յարեւմտեան կոզմն սակաւ մզոնիսք հեռի է 'ի խալազական ովկիանոսու . ուր և հօսի 'ի հիւսիսակողմն նաւահանդստին սընն յովհաննու ը ջրանցք լոյն՝ որ յանուն նիքուրակվայայ կոմ : Այլ զարմանք այս են . զի թէ այտ ոնկ ասացաք՝ կրէ զտեղատուի և զմակրնթայութեզօրէն ծովու, սակայն չուր նր քաղցը է, և ըմպելի . և ես 'ի միում'ի կղղեաց՝ որ է ը մէջ նր գըտանի հրաբուզիս երեւելի՝ որ հնող վասի : Խոկ գլաւոր տեղիք գտաւասիս են հետագայքդ :

Կիւտակիւս : Քշք յորմէ գտաւառն առնու զանուն . կառուցել մերձ 'ի բերան փարգիստ գետոյն, որ գնայ մտանէ 'ի փափակայո կոշեցեալ ծոցն :

Լէն : Քշք երեւելի մեծ բարեշէն և բազմամարդ . և այժմ գլուխ համարել համօրէն դւուին, զի անդ նստի գտաւառակալ իշխանն, և ոյլ աբքունի պաշտօնատարք . ոնկ և ենդսն նիքուրակվայայ . կառուցեալ առ վերոյիշատակեալ լճին յաւազուտ և յանտառամոլ վայրի, իբր ՅԵ մզոնաւ հեռի 'ի խալազական ովկիաննոսէ . ունի քանի մի եկեղեցիս, և մենաստանս կրօնաւորաց, յորս երեւելի է մայր եւ կեղեցին : Իբր Զ մզոնաւ հեռի 'ի քշքէ 'ի հիւսիս

սակողմն լճին՝ է լեռառն բարձր սրածայր . և 'ի միջին
նր վիճ անդնդախոր . ուստի հնազգ ելանե ծուխ
թարձրամած . և երբեմն արձակին սունկ քարինք
ծծմբայինք . պատմի թէ արք ոմանք միամիտք և
տղէտք 'ի նախնի սպանիացւոց անտի՝ որք զառա
ջինն տիրեցին այսմ գաւառի , կարծելով թէ 'ի
լեռառն յայն հալեալ եռան մետաղք պատուականք ,
որք յայլ տեղիս գտանին պնդացել , իջուցին 'ի վիճ
անդր շղթայինք դոյլ երկաթի 'ի հանել անտի մե-
տաղ հտլել , իբրև ջուր 'ի ջրհորոյ . և ահա առ
սասակուե ստորերկրեայ հրոյն : լուծեալ հալեցու-

դոյլն՝ և շղթայն ընմա :

Կոտակադա : Քղք փոքր առ ափն լճին նիքարակ-
վայայ , յարեւմատեան կողմն նր , ը մէջ լէոնի և նի-
քարակվայայ :

Երբերտունի : Քղք փոքր տու նովին լճին յարեւելեան
կողմն նր , 'ի վիք փոքրիկ գետոյ որ 'ի նոյն լիճ
իջանէ :

Լոր սէկուլա : Քղք 'ի ներքին կողմն դւռին , մօտ
'ի գետ մի մեծ , որ իջանէ 'ի ծոցն մէքսիքոնի 'ի
ներքոյ սուտ սարին :

Սբ կարաւան : Ամրոց կառուցել 'ի բերան գետոյն
սբյն յովհաննու , որ իջանէ 'ի լճէ անտի նիքարակ-
վայայ , առ 'ի խափանել զմուտ 'ի նմի նաւուց թջնա-
մեաց :

Սբ մէտայէլ : Է բնակուի սպանիացւոց առ ափին խա-
զաղական ովկիաննոս , առ սահմանօք կվաղեմալայ ,
և ճշմարիտ խաղաղուե :

Աղմակալա : Աւան և փոքր նաւահանդիսոտ 'ի խա-
զաղական ովկիաննոս անդր 'ի հարաւակողմն սր մի
քայէլի :

Գուռլուդէտա : Է քղք փոքր 'ի պարոյրն ֆօնսեքայ ,
կմի անդափալօսյ որ է մի 'ի մէծագոյն պարուրից
որք գտանին 'ի ծովին խաղաղական :

Որիալէյօ : Աւան և նաւահանդիսա անունանել բառ
սէսսին :

Դիմասսկադիտիտ . և Քորիսսա : Են առանք նշանառոքք
'ի հիւսիսակողմն լէոն քաղաքի մօտ առ գետս :

ՎՕՐԱԿՈՒՄՆԻՒԹԻՒ :

Գարդմանի Հարուստ ծռվելերէ . ին վաֆերայ յայս անուն անուանեցաւ 'ի սպանիացւոց ը կատակս . իբր զի ը բովանդակ նոր սպանիա՝ չիք գաւառ անբեր և աղքատ իբրեւ զսա . իսկ այլք ոմանք 'ի նօրագոյն հագրաց հաստատեն , թէ յայս անուն կոչեցաւ 'ի որատճառս առատարեր հանքաց իւրոց . որք կոչին Հանք Ֆիտինկալայ . զորո նա խագասեն սպանիացիք փագոսեան հանքաց : Այս գաւառ անկանի յարեւելեան հարաւային կողմն նիքարտկվայայ , և վերակվայայ . և ձգեալ տարածի 'ի ծոցոյն մեքսիքոնի , մինչև 'ի ծովին հարաւային , յարեւելից յարեւմուտս իբր 260 մղոն ժ թերթ նը սակաւ են , զի երկիրն ամուլ է և անքեր . 'ի տեղիտ տեղիտ ուր լաւագոյն է հողն՝ լինել գատքառին գատուական : 'ի հարաւային կմ 'ի խաղաղական ովկիանոսի ունի ծոց մեծ ուր սպիտակ սարին , անուաննեշ ծոց սալինեսայ : 'Երինպէս և 'ի ծոցն մեքսիքոնի ունի երկու պարոյրս , յորոց մին որ է առուել ը արեւմուտս , կոչի յանուն Սբա բնինոսի . իսկ երկդն՝ որ է առ սահմանօք վերակվայայ . յանուն Քաշերուտու գլխաւոր տեղիք դաւառին են հետաքայլդ :

Քարդախ . կմ կարիւրուն : Գլխաւոր քղք համօրէն գաւառին . և ամուռ գաւառուակալիշնանին . և այլոց արքունի պաշտօնատարաց , ուր յուջոյն նսուեր և եկու . իբր 80 մղոնաւ հեռի 'ի հիւսիսոյին ծովէ . և իբր 75 'ի հարաւային ովկիանոսէ . և յերկոսին ծովսն ևս ունի մի մի նւհնդիսու քաջտգեղոս : 'ի նախնումն առաւել ծաղկել էր քղքս ոյս՝ ք տյժմ բայց և զարդիս գտանին 'ի նմբ բազմ վաճառականք մեծառունք . որք առնեն երեւելի վճռկնուեն ը փանամոյի , ը գեղեցիկ նաւահանդսատի , ը հաւանայի , և ը այլոց տեղեաց :

Սբ Դամինիս : Գղք փոքր առ սալինէս ծոցով յովկիանոսն խաղաղական 'ի հիւսիսակողմն սպիտակ սարին :

Սեւենոս . Աւան 'ի հիւսիսակողմն նախընթացքազաքի 'ի ներքին գողմն սալինէս ծոցոյ : Փառաւա . կմ Սբ լունդիս պորուտայ : Գղք փոքր առ երեւելի գետով յորում ունի նւհնդիսու պատուաւ :

ունական , 'ի հիւսիսոյ տըեմաից սարին պորուքայ
առ սահմանօք վէրակվայայ :

Մ Ա Բ Ի Ր Ա : Է աւան ոչ կարի ինչ հեռի 'ի ծոցոյ
մշքսիքոնի :

Վ Է Ր Ա Կ Հ Ա :

Ո այս գտաւառ ոմանք 'ի մատենագրաց մղանիաց
• և ոց դնեն 'ի հարաւային ամերիկայ , միացուց
ցանելով ը նահանդիւ ցամաքին : Խոկ այլք սոտո
բագրեն զնա իբրև զմի 'ի թւոց նահանդին կվանդիւ
մալախ . որոց և մեք զհետ գնացետլ , տատ գտաեց
տք . որ գտաւ 'ի բրիստափորէ քսլումպոսէ , և յեւ
տոյ շնորհեցաւ նմ՝ ը անունամբ դքսուե . զոր զայեց
լեն ժառանգք նր մինչև ցայսօր : Երկիր նր առ հար
սարակ լեռնային է և անտառալից . և տմենեին
անընք . բայց ունի բդմ հանքա ոսկեոյ , և յոլովաւ
դոյն ևս արծաթոյ . նաև 'ի ձորտփորտ գետաց նորա
գտանի մանրամազ ոնկի խառն ը աւագոյ : Սակայն
բնուկից նր սակաւ են . որոց գլխաւոր մեջլիք նե
երկու հետագայքու :

Մ Ե Հ Ա Բ : Գլխաւոր քղք կըւսին փոքր և անշուք .
կառուցել 'ի կողմն հարաւացին ծովուն . յարկմատից
երեելի հրունանդանին՝ որ ձեացուցանէ ծոյ ինչը .
յորում գտանեն Քահանա Գլխարծ , և այլ փոքրաւ
գոյն կղզիք :

Մ Ե Պ Ե Ր : Քղք փոքր . կմ աւան ծովեղերեաց յա
րեելեան կողմն սարին սղորուքայ :



Ա Ը Խ Ա Բ Հ Յ Բ :

Ն Ո Ր Մ Ե Ք Ս Ւ Ք Ո Ւ :

Յայս անունն անուշանեցաւ յանտոնիոսէ եսպեյս սէ , որ զառաջինն եգիտ զնա . է նէգ մէհդ թէ Հ ը արձակ յոյժ . և ունի իւր սէմինից յարեւ լից՝ զլո իսիա . 'ի հարաւոյ՝ ղիմին մէքսիլոնն , կամ զնոր սպանիա . 'ի հիւսիսոյ՝ զանծանոթ երկիրն , զոր ոմանք նոր ալպիոն կոչեն . իսկ յարեւմտից՝ զնովն խաղաղական և զկարմիր ծովն , որ յայս անուն կոչեցաւ սակո նմանուեն , զոր ունի ը բնիկ կարմիր ծովուն . զի ոոկ նա զարարիա բաժանէ յափրիկոյ , նոյնող և սա բաժանէ զքալիֆօրնիա 'ի հիւսիսային շամաքէ ամերիկոյ . բայց միոյն զի սա մեծագոյն է , և բերան նը առաւել ը արձակ : Չափ տարածում Շիս չէ յայտ որսակի , բայց մարթ է անտարկոյս ասել՝ թէ չէ ինչ նուազ քան զբովանդակ նորն սպանիա , կմ ղիմին մէքսիլոնն : Ունի բայցում պէտո մեծամեծու և մանունս . յորոց երեւելիքն էն Պիրանք . որ կոչի և գիւտ հիսուսայ . մի 'ի մեծագոյն գետոց հիւսիսային ամերիկոյ . որ ելանէ 'ի հիւսիսային անծանոթ վայրաց . և յետ ընթացից աւելի ք հազար մղոնս 'ի հիւսիսոյ ը արևելեան հարաւ : պնայ տնկանի 'ի ծոցն մէքսիլոնի , առ ծովեղերեաց սահմանք թագաւորութեն նոր լէոնի : Քուշադաս . նոյնովէս մեծ ք զոյլ ամ գետս նոր մէքսիլոնի . որ մտանէ 'ի կարմիր ծովն ը հիւսիսային ծայր նը : Այս լայնարձակ Շ անկանի ը բարեխառն գոտեաւ . ուստի օգ նը ը հանրապէս խօսելով բարեխաման է լաւ և առողջարար : Իսկ երկիրն ը մասին լեռնոյին , և ը մասին դիւր հարթածաւալ , բայց արգաւանդ գրեթէ ը ամ տեղիս . բերէ զնոմ ազգս տրմը տեաց , պտզոց , և ծառոց եւրոպիոյ . թնդլ զմերս համարնականս նիմ , ոոկ և հիմ մէքսիլոնի . ոյլ առաւել պատուական բերք նը , որք և յարգի և ցանկալի առնեն զայս Շ յալս սպանիացւոց , և յետոյ եկել պատարեր ուկեհանք և արծաթահանք յաճախելք 'ի զանազան տեղիս :

Յայանեցաւ 'ի 1553 . 'ի ձեռն անտոնիոսի եսփեյս սի , որ ծնաւ 'ի քորթովա սպանիոյ , և յետոյ եկել բնաւ .

բնակեցաւ 'ի մէքսիքոն , կմ' 'ի նոր սպանիխ . և էր
այր մէծատուն յոյժ : Ալրդ՝ լունեալ նր , թէ 'ի հիւ-
սիսային կողմն գտանին ազգք բղմք , և նք հա-
րուստք , եդ 'ի մոխելանել 'ի խնդիր նց . վայ վզիւզկին
ել 'ի ձնողը : 'ի մինալօայ անցեալ 'ի նորն նաւառ-
ուոյ , անտի 'ի փիմէրխա , եհաս 'ի քոլորատոս գետն .
ուր սպանիացիք հիմնեցին զքզքն սբյն բարդուղի-
մեայ , և անախ 50 երիվարօք և բղմջարեօք , յորս
քարձեալ էր պարէնո կերակրոյ և զէնս , ունի լոլ
ը իւր յադնաթիւ գերիս , դիմեաց ը հիւսիս . և
նախ պտհեցաւ ազգին կոնքացւոց . որք առշնորդե-
ցին նմ յան Սումամեցւոց , կմ' Փամարապուցեցւոց .
ը օր ձնողհորդեալ աւուրս 15 , եհաս առ ափն գե-
տոյն հիւսիսոյ , կմ' որավոյի , և զքրջակայ ճն կո-
չեաց նոր մէքսիքոն . յեզերս գետոյն էին անտառք
կաղամախ ծառոց . և 10. 12 գեօղք , յորս էին իբր
10 հղը բնակիչք : Կացէալ անդ եսփեյրսի ը արանց
իւրոց աւուրս չորս , անցին 'ի գաւառն գիկվացւոց .
ուր գտին 16 գեօղս . անդ զտեղի կալաւ , ոչ ևս
կամեզով յաջ խաղալ ը հիւսիս , առ 'ի ըդնելոյ ըզ-
բովանդակ գունդ իւր 'ի վասնոք կօրսաեան . և
խումբ մի զօրաց առաքեաց 'ի խնդիր բազմագմանք
գւոցն , զորոց համբաւէին լինել յարեւելեան կողմն :
'ի նմին ժմկի և ինքն էանց 'ի գաւառն քուիրեցւոց .
ուր եդիս 15 հղը ոգիս բնակեալս 'ի 5 աւանս . և
խաղացեալ ը հիւսիս , եհաս 'ի գաւառն բունամեց-
ւոց , ուր եդիտ նոյնպէս 5 մէծամեծ աւանս . որոց
զլիսաւորն կոչէր կիտ , կմ' Զիտ . իսկ թիւ բնակաց
նց իբր 20 հղը : առա դարձեալ ը արեւմուտս , և
գիտ աւսն մի մեծ Ազգօնտ անուն 'ի վր ժայռի կա-
ռուցեալ . և անախ յետ 240 մզոնացափ ճանապար-
հօրդուն , եհաս 'ի գաւառն չնպօլա . զոր բնակիցք
նր Զանայի կոչէին : Եդիտ անդ 'ի զնզն տեղիս խաց
բղմն , զորս կանգնեաց ֆրանչիսկոս վասկոնէս . որ
յաջ ք զինքն էհաս անդ . ուր և հիմնեաց բնակուն
փոքրիկ զայթսականին սպանիսցւոց . յորոց արք
երեք և թ կենդանի գտան յայնժամ . անդ զտեղի
էսու եսփեյրս , և ոչ էանց յաջ : Այլ զինի նր փոխ
արքայք հնոյ մէքսիքոնի՝ յուղեցին զնմ կողմանս
այսր նորոյ ճի , և աիրեցին նմ կէս մի բանութ զի-
նուց , և կէս մի քարոզութ աւետարանին . և 'ի զնզն
տեղիս հիմնեցին քաղաքս , աւանս , և ամրոցս :
իսկ այժմ բաց 'ի սպոննիացւոց՝ որք չեն այնչափ ինչ
բազմաթիւ , գտանին առանքն և այլ զանաղան ապդք

և ժղվագք, որպ պրեթէ առ հնրկ քաղցր Են, բարեթարոյ, և հրահանդեալ. կերակուր նց Են որսք վայրենիք, և ձաւին և պտուղք երկրի, զոր ինքեանք մշակեն. ունին իւրեանց սեփական քաղցրէս, որք կառավարեն զնո՞ւ. իսկ դենին կռապացւան. ունանք պաշտեն զարեգակն. այլք ունին բաղմութիւն դրօշելոց. իսկ այլք ոմանք չունին բնաւմն պաշտօն. սակայն բղմք 'ի նցէ դրձլ Են 'ի քրիստոնէական հաւատա. և օր լը օրէ դառնան: Այս ու բաժանի 'ի հինգ. որք Են 'Սր Ֆէտիտն առանցնավէլ. Աշտէրին. 'Սր հաւատառա. Փիտէրին. և Դիուլ. զորոյ ջնիկայդ ստորագրեսցուք:

Այր Ֆէտիտն առանցնակ :

Պարակրէ զհիւսխային կողմն Շիս, ունելով իւր սահման 'ի հարաւոյ՝ զափաքէրիա. յարեւելից՝ զլուխսիա. իսկ յարեւմտից և 'ի հիւսխայ՝ սահմանք նը ձգին ը անծանօթ երկիրն. և է ոռոգել 'ի հիւսխային կամ պրավօ գետոյն, որ 'ի հիւսխայ հօսի ը հարաւ: Բնակիցք նը բաժանեալ Են 'ի զանազան ցեզս, և յերկու դլխաւոր աղդս, որք կոչին Քուիրեցիք. և Քունամեցիք՝ որք առհնրկ քրիստոնեայ Են. և բնակին 'ի բղմ գեղար և յաւանս առ պրավօ գետով. որոց դլխաւորքն Են հետագայթ:

Սբ հաւադ: Գլխաւոր քղք համօրէն նոր մէքսիքոնի. ենպանիսատ, և աթոռ գաւառակալ իշխանին. բարեշէն բազմամարդ և փարթամ, կառուցել յարեւելեան կողմն գետոյն հիւսխայ իբրև 9 մղոնաւ հեռի 'ի նմէ: Ոմանք յՇագրաց զայս քղք կոչեն Սբ հաւադ իշխափայի. այլք 'Նր Ֆէտիտն:

Սբ հերոնին: Աւան առ նովին գետով 'ի հիւսխատ կողմն նախընթաց քղքի:

Սբ դեկա. **Ս**բ յալսէկ. **Ս**բ անայ. **Ս**բ Քիսպահոր. **Ս**բ Իդնապիս. **Ս**բ Գէտիւլ. Փառը սիլլիտ: Են սաւանք և գնողք նշանաւորք այսոր գաւառի. որոց բնակիցք Են բնիկ ամերիկացիք քրիստոնեայք առհնրկ:

Աշտէրին :

Պարաւէ զհարաւային կողմն այսոր Շի. և ունի իւր սահման յարեւմտից՝ զնո՞ւ նաւառռա. յարեւելից՝ զլուխսիա. 'ի հիւսխայ, զնո՞ւ մէքսիքոն ասանձնակ: իսկ 'ի հարաւոյ՝ զմանքուին նոր լէսնի: Բնայ-

բնակիցք նր՝ ի սպանիացւոց կոչեցան Ավաքեցիք .
որք յոշագոյն բնակելին առ եղերքը սալատօ գե-
տոյն . և բղմք՝ ի նշնէ գարձան՝ ի քո . զորս սպա-
նիացիք բնակեցուցին առ ափն գետոյն հիւսիսոյ .
իսկ մնացեալ ցեղքն բնակին՝ ի նախնի կայանս իւր-
եանց . ուր վարեն աղատ և ինքնիշխան կեանս , ան-
կախ՝ ի սպանիացւոց , և դեռ կան՝ ի հին կռապաշ-
տուե իւրեանց . և թէողէտ՝ ի 1768 սպանիացիք յա-
րուցին պտղմ ըդէմ'նց , այլ սակաւ ինչ շահեցան :
Զիք՝ ի սմ նշանաւոր ինչ քոք . այլ միայն փղքրիկ
աւանք և գեօղք մօտ առ միմեանս , աստի և անտի
պրավօ գետոյն . որոց գլխաւորքն են այսոքիկ . Վէ-
րադասուն . Յշտ . Սբ Քրիստուոք . Սբ Գեորգ . Սբ Պա-
տա . Կայութեան . Սօմա . Մաքման քնի . Դադեւե . Սբ
յանձնաննէս . և ն :

Եր Ակադեմի :

Զգի առ կարմիր ծովու . և ունի իւր սահման
՝ ի հիւսիսոյ՝ զփիմէրիա . յարեւլից՝ զափաքէ-
րիա . և զնոր պիսքալիա . ՚ի հարաւոյ՝ զկինալօա .
իսկ յարեմաից՝ զկարմիր ծովն . կմ զծոցն քալիֆօր-
նիոյ : Երկիր նր ըստ մեծի մասին լեռնացին է , այլ
արգաւանդ . իսկ բնակիցք նր են բնիկ ամերիկա-
ցիք . և են քրիստոնեայլք . և բնակին՝ ի զն զն աւանս
և դեօղս , որոց գլխաւորքն են հետագայթ :

Անէաւ Երայլէսոյ : Աւան կառուցեալ առ սահմանոք
շնալօայի :

Սբ Էաւ : Աւան առ երեւլի դետով յափն կարմիր
ծալուն :

Պէլէմ: Աւան առ կտրմիր ծովու . ուր ունի նա-
ւահանգիստ պատուքական՝ ՚ի բերան մեծի գետոյ՝
որ իջանէ՝ ՚ի սահմանաց նոր պիսքալիոյ .

Բէրէ Էանոսայ : Եւ ամրոց կառուցել՝ ՚ի մէջ սահմա-
նաց նոր նաւառուայ , և ափաքէրիսոյ :

Աւու գիւղօրէք նր են Բիօնիո . Փիրուն . Սբ Կրեւ-
ուտ . Յշտ . Սբ Էւսե . Քանիսորտ . Զերոս . Դա-
րէմ . Սբ յալէտ . Մաքման . Պատմուստ . Սբ Խարիէլլ .
Սբ յալէտէր . և ն :

Պիմէրէա :

Երկիր շարմակյոյժ , ուռոգել՝ ՚ի քոլորատոս գե-
տոյն . բազմամարդ , և քաջ մշակեալ՝ մւնդ՝ ՚ի
գետ .

պետեղերս քոլորատառի . և 'ի մէրձակսոյ վայրս կտը միւր ծավուն . ուր զանազան ազդք և ժգլուգք բնու կին . յորոց սմանք են ը արուբ սորանիացւոց , իսկ այլք ազտա են և ինքնիշխան : Հպատակք սովանիացւոց են փափակեցիք . նիզոդացիք . զոփեցիք . յորս 'ի 1768 յաւելան Սէրացիք . Փլագեցիք . Սիպու փափեցիք . որոց գլխաւոր տեղիք են հետագայթք : ՍԷ բարդազիւն : Քզք , կմ աւան հին , և դլխաւոր տեղի սպանիացւոց 'ի փիմէրիա , կառուցեալ առ քոլորատոս գետով 'ի սաորին կողմն նը : ՍԷ յաշաննեն այր այ . և ՍԷ քանչիսիս : Են երկու նոր բնակուիք , կմ աւանք 'ի մօւտոս քոլորատոս գետոյն , 'ի ծայրն կարմիր ծովու : ՍԷ դիմեսիս : Աւան առ քոլորատոս գետով . ոչ կարի ինչ հետի ՚ի նոյն կարմիր ծովէ :

ՀԵՊԸԼԱ :

Դգե 'ի հիւսիսակողմն այլոց նախայիշատակել գաւառաց . օդ նը ցուրտ է . և երկիրն ը մեծի մասին գիւր , այլ անքեր . ոչ այնչափ առ յուռութեն հովոյն , ք թէ առ սաստիկ ցրառուե . յորմէ բերք նը ոչ ժամանեն հասունանալ . վոյ բաց 'ի մայիզէ . և այլոց վայրենի ինչ պտղոց , չունի այլ ինչ արմրախս և պտռուղս . նաև բամբակն , որ հնրի է յամերիկայ , աստ ոչ հասանէ սակս վաղաժաման ցրտութե : Կոյնպէս զուրկ է և յընտանի անասնոյ . այլ փիսկ նց գտանին անդ զանազան տեսակք վայրենի երկոց . կը ինձ . առիւծ ամերիկեան . արջ . վարազն . եղչերուք մեծամեծք . և այծք վայրենիք : Զայս գաւառ եգիտ ֆրանչսկոս վասկուէս 'ի 1540. տու բգեշխութեն 'ի մէքսիքոն 'անտօնի մենտողեան . և պատմէ 'թէ եգիտ 'ի նմ բնակիչ յոգնաթիւս . որք զգենուին ը տարալու մէքսիքացւոց . և ասի՞ թէ յօրժմ առին սպանիացիք զգլիսաւոր աւան նց , ոչ գտին անդ մանկունս , ոչ կանայս , և ոչ ծերս , բաց 'ի միոյ կմ յերկուց , որք կային 'ի սրահնորանուի հիւանդաց , և ունանց զառամեալ ծերոց . գուցէ փախուցին զնոյ յայլ անքոյթ աեղիս . զն մի անկցին 'ի բերան սրոյ սպանիացւոց . կմ զի մի լիցին ինքեանց խոչընդուն 'ի պաղպի : Խակ բնակել տեղիք նց , ծանուցեալք յՆագրուիս ' են նք . ՍԷ հաւաք դէնեալսայ . Լէյան . Գունիուտան . ՀՀնադրութիւն . և այլ գեողք անհշանք :

Ա. Ը. Բ. Ռ. Հ. Խ.
Ք Ա Լ Ի Ֆ Օ Ր Ն Ի Ա :

Ա Լ Ի Երակղղի կմ ցամաք կղզի ըարձակ, որ ձգի
'ի հարաւոյ արևելից ը արևմտեան հիւ-
սիս. 'ի սարէն սըյն զռւկայ, որ է ը արևա-
դարձիւ խեցդեանի՝ մինչև 'ի Յ աստիճան հիւսի-
սային լայնութե, ուր աւարտի կարմիր ծովն. բայց
առ հարաւային կմ իսաղաղական ովկիանոսիւ՝ ձգի
հեռագոյն, մինչև ցապիտակ սար սըյն սեբաստիա-
նոսի, և անդր ևս : Եւ 'ի սոյն արևմտեան ծովե-
զերս իւր՝ ունի զանազան պարոյրս, նաւահանդիսատս,
և կղզիս. յորոց ծանօթագոյնքն սկսել 'ի սարէն սը-
զռւկայ՝ դնալով ը արևելեան հիւսիս, են այսորիկ ։
Պարոյր սի Տ-ԳԴԱՀԵՆԱՊԱՐ. Պարոյր սի Տ-ՀԱՐՄԻՆԱՍԻ. ։
Եսաւհանգիստ աննոդոնայ. Կըսի սի աննայի. Սար սի Տ-
օդոսդինասի. Կըսի սի իշխայ. Նեղուց սի չաւշու-
նայ. ը մշջ ոմանց մանր կղզետց և ծովեզերեսոյց
ցամաքին. Սար յղուն. ծասդ կմ սար մանրէրայ կմ մա-
նրէրէայ. Սար յիւնապար. Նստահանգիստ կմ Պարոյը
բինասայ. Սար մենապունոյ. Սար սպիտակ սի սեբաստիա-
նոսի. Անդ սկսանի գօտի լերանց, որք ձգին ը
արևելո. և գնան միանան ը ժայռից, յորոց ելանէ
քողորատօս գետն. Նոյնոր և յարևելեան ծովե-
զերս նը 'ի կարմիր ծովու գտանին զանազան ծոցք.
նաւահանդիսաք, և կղզիք, բայց չեն այնչափ ինչ
ծանօթք :

Օդ քալեֆօրնից պէսպէս է ը այլեայլ գրից տեղ-
եացն. 'ի ծովեզերս նը սասաթիկ է տօթն, և հա-
զիւ երբէք անձրեւէ. իսկ 'ի ներքս 'ի ցամաքն՝ յա-
նախ անձրեւէ, տօթն բարեխառն, և օդն առող-
ջարար. յանձրեային ժմկս հեղեղաթար իջանեն անձ-
րեք. և 'ի գագառիլ անձրեաց՝ սկսանին յորդառատ
ցոլք գիշերայինք, որք արդաւանդս գործեն զեր-
կիր. իսկ յապրիլի 'ի մայիսի և 'ի յունիսի 'ի միա-
սին ը ցողոյ իջանէ տեսակ ինչ մանանպայի կմ գաղ-
պէ, որ թանձրացել պնդանայ 'ի վը տերեւոց եղե-
զանց. յորոց յետոյ ժողովին. և է պատուահան
յոյժ, սպիտակ և քաղցր իրր զշաքար. որ և այս
է մի 'ի նշանաց պատուականութե օդոյ նը. ուղ և այն՝

զոր հաստատեն սպանիացիք, եթէ ը ամս հինգ, յորս կացին անդյան հնարին աշխատանս, և 'ի հանապազորդ վիշտ, ոչ ոք 'ի նցէ կրեաց ինչ հիւանեդութիւն. բաց 'ի միոյ կի՞ յերկուց՝ որք կորեան վը անկարգուե իւրեանց :

Այս ո ըհանրապետ առել արգաւանդ է և բերքի. ունի լայնարձակ գաղտավայրս, և հավասար գեղազուարձս, և արօտօ խոտաւետա ուռողելս 'ի զանազան գետոց, և յականակիտ վտակաց. ունի 14 տղթս արմաեաց, և պէսակէս արմասս, և բանջարս 'ի կերակուր բնակչաց իւրոց. և ազգի ազգի պտուղս ընտանիս և վայրենիս, ողլ և վարունկ, և մեզրա պոպ պատուական յոյժ. և բազմատեսակ ծառս թակաւագիւտու. յորս նշանաւոր է ծառն կոչեցել 'ի բարբառ իտալացւոց Փալ սոնդո. որ թրդմանի սթ ձող. որ բերէ պտուղ բղմ. ը նմին և խունկ անուշահոտ: 'ի տեղիս տեղիս յամին երիցս հնձեն և կթեն զալտուղս սակս բարեխառնուե և քաղցրուե ոդոյն: Բաց յազգի ազգի վայրենի անասնոց՝ որք դտանին և յայլ տեղիս, ունի երկու տեսակս անասնոց, որք անծանօթ են յեւրոպիա. զորս կոչեն խոյս, վն զի ը երաց ինչ բերեն զնմանուի խոյոց: Առաջին տեսակն մեծ է իբրև զիամերայ կմ զերկեմեան որթ. գլուխին նման է եղջերունի, բայց եղջեւըն են ը եղջերաց խոյոց. մորթ և մետ նր պիատկ են և խայտարդէտ. և ստեն մանր առաւել քան զեղջերունին. իսկ կճղակք ոտից՝ մեծ բոլորակ և բաժանել ը եղանց. և միս նց պատուական 'ի կերակուր: Իսկ երկդ տեսակքն նմանին յոյժ մերոց խոյոց. բայց միայն զի մեծ են ք զնս. ասր նց երկայն է նրբաթել և փափուկ, քաջադէպ 'ի գործ ասուեղէն կերպասուց: Ունի և պէսպէս թուղունս ընտանիս և վայրենիս, և ձուկն առատ 'ի ծովէ և 'ի գետոց: Այլ առաւել մեծագին և պատուական բերք նր՝ է մարդարիտ ազնիւն, որ գտանի յեղերս կարմիր ծովուն, առաւել առատ ք 'ի բուն կարմիր ծովն, և 'ի ծոցն պարսից: Բայց հանք ինչ մինչեւ ցայժմ ոչ գտաւ անդ. սակայն կարի հաւանական երեսի, թէ լերինք նր չիցեն զուրկք 'ի հանքաց, որք են ը նովին գծիւ լայնուե, յորում բազմահարուստ լերինք չինալօայ և սոնորայ:

Բազմամարդ է մենդ 'ի հիւսիսային կողմանո. թէ պէտ գեօղք նր փոքր են. յորոց մեծագոյնքն չունին թունս կմ հիւզա աւելի ք 50. զի մեծ մասն բնիսկ

շուզնը՝ յամառան ողաշտպանեն զահէլնս՝ ի բոցակէզ շովզյ տրեգական ըլ հովանեաւ մեծամեծ բաղմասաւ զարթ ծառոց ։ իսկ ի ձմեռան բնակին՝ ի խորոփիւտ և ի փապարս երկրի՝ ի միասին զօրէն դազանաց ։ Առք ամեննեին մերկ շրջին ։ բայց ունին մանեակս՝ ի պարանոցա և ապարանջանս՝ ի դառտակս և ի սրունտ ՚ի ծովային խեցեաց ։ իսկ կահայք ունին ածել զմբ ջով սփածանելի գործել ՚ի տերեւոյ եղեգանց ։ որ հասանէ մինչեւ ՚ի ծունկս ։ իսկ ըստ մասանց մարմնոյ մերկ են ։ Զէնք նց են նետ, աղեղն, տէգ, և բիր, զորս միշտ՝ ի ձեռին կրեն, ոչ միայն՝ ի պտճառ որտորգուեն, այլև՝ ՚ի պաշտպանել անձանց ՚ի թշնամեաց ։ քզի ամ ցեղք մահուցափ թշնամի են միմեանց ուսաի և ոչ երբէք գաղարին՝ ի պտղմէ ։ Առ տնին գործ արանց և կանանց՝ է նիւթել տեսակ ինչ խոտոյ, յորմէ շինեն զամ ձեռակերտ ՚ի պէտս իւրեանց ։ զբ ուռկանս, զարդս, պաստառս, մինչ նաև կահս՝ ի պէտս աղքատին խահարանի իւրեանց ։ իսկ ըստ բարուց՝ ասի թէ եռանդնոտ են, աշալուրջ, նըրքամիտ, և հպատակ քրիստոնէական ուսմանց ։ ուստաի և բդմք գարձել են, և դառնան անդադար ՚ի քնական կաթուղիկէ հաւատս ։ Յորժամ հասին անդ սպանիացիք, ոչ գտին՝ ՚ի նշ հաստատել զեզանակ ինչ քդքին կառավարուեն ։ և ոչ զպաշտօն ինչ կանոնաւոր ։ զի թէպէտ պաշտէին զլուսին, ոնց և այժմ իսկ պաշտեն, որք չեւ ևս են գարձել ՚ի քո, այլ արտաքին ինչ պաշտօն ոչ մատուցանեն նմ։ բայց միայն ասի թէ զիերս իւրեանց հատանեն, և տան քրմաց ։ յորոց նք շինեն յուռութուլուն :

Զոյս ՚ զառաջինն գտին երկու նստք առտքելք ՚ի քորթիսէ յետ տիրելոյ նը հին մէքսիքոնի ։ այլ մինն անդ առ ափն նը խորտակեցաւ ։ և յամին որ զինի՝ քորթէս ինքնին եմուտ ՚ի նաւ, և եհաս ՚ի բերան գետոյն սըյն պետրոսի և սըյն պօղոսի, ուր է նաւահանգիստն սը խաչի ։ ուր և ՚ի նախընթաց ամի խորտակեցաւ մին յերկուց նախասացեալ նաւուց ։ անտի նաւել ըստ կարմիր ծովն, քերելով առ ցամաքաւ, կորոյս զնաւ իւր ՚ի ծովեզերս քուլիաքանայ ։ և յետ բդմ տառտպանաց ուր ուրեմն եհաս ՚ի տեղին, ուստի ելեալն էր ։ ՚ի 1539 վերստին արձակեցաւ ֆրանչեսկոս ուզովայ երկոքումքն նաւուք առ ՚ի յոջ խաղալ ՚ի գիւտ այնր նորոյ երկրի ։ արդ՝ նաւել նց ըստ կարմիր ծովն, և հասել առ ՅՕ

աստիճան լայնուեն, տեսին զցամաք երկիր յերկուց կողմանց . և նաւել յառաւել անձկադոյն կողմն ծոցոյն իբր 150 մղոնաւ, սկսան գտանել զջուր ծովուն սպիտակ . անտի և ևս յուջ խաղացել ունելով միշտ 'ի ձեռին զլարն ծովաչափ, նաւեցին մինչեւ համարին 'ի 5 գրկաչափ խորութի' ծովուր, ուր սպառ էր չուրն, և տղմալից : Խսկ նաւապետն և նաւուղիղն ելեալ 'ի մեծագոյն կայմն նաւուն, զերկիրն տեսին յամ կողմանց, որոյ ծովեզերք ցած էին յոյժ, հաղիւ առ փոքր մի բարձրացեալ ք զմակերեւոյթ ծովուր . վայ տեսելնց թէ չէ հնար և ևս յուջադէմն լինել յարեմուտս, գարձան յետս :

Սուղ ինչ զկնի այսր ճննդհորդուեն՝ կրօնաւոր ոմն 'ի կարգէ սըյն ֆրանցիսկոսի՝ կոչեցեալ մարկոս նիղացի, 'ի միասին ը միում սետւ ափրիկեցւոյ, գնաց ցամաքաւ 'ի գտանել և զայլ անծանօթ տեղիս նոր մէքսիկոնի . 'ի գառնալին իւրում բկ'մ մեծաբանութ պատմէր զհարստուեց՝ զոր եգիտ . յորմէ փոխարքային անտօնի մէնտոզեան յորդորել 'ի տիրել այնմ երկրի, առաքեւոց զվասկոս կորոնատոս հանդերձ սառնար դնդաւ ը ցամաք . և զերնանդոս ալարսոն ը ծով . պատուէր տունելնմ յուջ խաղալ ը ծով, զոր վայր կարելի է : Վասկոս կորոնատոս սակաւ ինչ եգիտ յայնցանէ, զոր պատմէաց նախայիշտկել կրօնաւորն . խոկ ալարսոն հասեալ 'ի ծանծտղ տեղին . ուր զկայ էառ. ուլովայ, էանց ը այն, և եհաս 'ի բերան սրընթաց և խորսյատակ գետոյ՝ զոր կոչեաց Պօնա իւայտ . ը որ նաւեաց աւելի ք 240 մղոնա . սակայն ոչ եգիտ զոր խնդրէր : Ասրա զկնի երկուց ամսոց նոյն փոխարքային առաքեաց զյուլհաննէս հռոդրիկոս քառրիլլոս երկու նաւուք . որոյ նաւել ը ծովին հարաւային՝ եհաս մինչեւ 'ի 44 աստիճան լայնուեն . և առ սաստիկ տառնամսնեաց՝ ոչ կարելով և ևս յուջադէմ լինել . սահիպեցաւ դառնաւլ անդրէն 'ի մէքսիկոն ուստի ելեալն էր : Յետ այսորիկ գրձլ 'ի 1611, 1636, և 1675, գիմեցին սպանիացիք 'ի կողմանս յայնոսիկ . բայց զայլ ինչ ոչ արարին յայն ամ ճննդհորդուիս, եթէ ոչ գտանել զանազան նաւահանդիստս, սարս, ծոցս, և գետս, առ եզերք քալիֆօրնիոյ, և գնել անունանս նց . ապա 'ի 1683 մարքէզն լակունաց փոխարքայ մէքսիկոնի, պատուէր ընկալել յարքայէն սպանիոյ ցննայէլ բնաւ յիրս ինչ առ 'ի ծաւուլել զբրիթառնէական հւառ 'ի մէջ բարբարոս ազանց բնաւ

բնակելոց 'ի հիւսիսակողմն մէքսիքոնի, առաքեաց շնաւս ը հրմնտարութ տն իզեդորոսի ատոնդոսի. որոյ հասել 'ի ծովեզ քալիֆօրնիոյ՝ շինեաց անդ ամրոց և եկեղեցի. և առաքեաց խնդրել երիվարս 'ի սոնորայ գաւառի, առ. 'ի սակաւ սակաւ տիրել երկրին. Հուսկ յետոյ 'ի 1690 կրօնաւորք յնեանք հասել ցամսքաւ առ վայրենի աղջնս' հերիսեցիս և փեմասեցիս բնակելս 'ի նոր նաւառուա, և 'ի փիմէրիա, սպանիացիք կալան յոյս հաստատուն թէ միջնորդութ նց ծաւալեսցի 'ի կողմանս յայնոսիկ կրօնն քրիստոնէական. ը նմին և մարմնաւոր տրութեն իւրեանց:

Աշխարհագիրք առ հարկ մինչև ցայնժամ անտարակոյս համարէին, թէ քալիֆօրնիա ծանօւցել 'ի բազմաց ձեղի որդաց՝ բայց անկատար ծանօթութ, իցէ կղզի՝ անջատել 'ի ցամաքէ. վայ և այնու նկարէին զնա յնացոյցս. սակայն յետոյ հայրն ֆրանչսկոս գինոս 'ի միաբանուէ յիսուսեանց՝ որ 'ի նոր մէքսիքոնէ գնաց ցամսքաւ 'ի քալիֆօրնիա բնշմ անդամ, 'ի 1698 էն մինչև ց1701, քննեալ խնամով ղամ տեղիս ը որս էանց, հաւաստեաւ եցոյց, եթէ քալիֆօրնիա կցել է ը ցամսք. այլ ոմանք ասէ պիշխնկ կալել զմիջին ձեղի, հաստատեն՝ թէ ցամաք կիրճն կմ պարանոցն՝ որով միանաց քալիֆօրնիա ը ցամսքի, ծածկի 'ի ջուրց 'ի մակընթանալ կմ յաճել ծովուն. և թէպէտ կարելի է թէ երևելի մասն ինչ նր ծածկեսցի. բայց դժունարին երեկի, թէ բավանդակին ծածկեսցի, որոյ լայնուին առաւել է ք 240 մղոն. այն զի՝ զդիսեմ ասէ պիշխնկ թէ յինչ վկայուեն հաստատել իցէ այս կարծիք: Այլ զիարդ և իցէ, այժմ գրեթէ ամ իրօք յայտնի է, եթէ քալիֆօրնիա է ըարձակ ցամաք կղզի. ուր սպանիացիք ունին քանի մի բնակուիս. որք են հետագայքդ:

Լուէր: Ամրոց շինեալ 'ի սպանիացւոց 'ի 1703 'ի ծագսամաք կղզւոյն, 'ի տեղւոշ՝ զոր բնակիչք երկրին քոնք կոչէին, 'ի վիճակի որյին գիտնեսիոսի. և անուանեցին զնա տիրուհի լորեդօի, 'ի պատիւ տան անտամօրն, որ 'ի լորեդօ աւանի իդալիոյ: Այս ամրոց շինեցաւ 'ի սպասարարան սպանիացւոց. և մնդ քարոզաց յնեան միաբանութեն 'ի Ֆմկի հարկաւորութեն:

Սար սբ բակայ. կմ Սբ յուղենի ստքն սբյն զաւկայ: Եթնակուի սպանիացւոց մօտ 'ի սարն սբյն զուկայ. որ ուղակի անկանի ը արևադարձին խեցդետնի:

ՍԵՐԵԲՐԻ : Բնակութեասպանիացւոց 'ի ըերան գետոյն սբին թովմայի . որ է գլխաւոր գետ քալիֆօրնիայ . և հոսելը արևմուտս , գնայ անկանի 'ի ծովին հարաւային :

ԱՎԱՐԱՀԱՆԴԻԱ . ԱՄ ՅԱՀԱՆՆԵՍ . ԼԵՍ ՇԵԿԵՆ : Են այլ գեօղք և բնակութեասպանիացւոց 'ի քալիֆօրնիա : 'ի հիւսիսակողմն քալիֆօրնիոյ 'ի վերոյ քը զսարն մէնտոչինոյ՝ ոմանք յ՛նագրաց գնեն զԵր ԱՂՋԵՒՆ . զոր ասեն գտեալ 'ի 1578 ֆրանչիսկոսի տրադոյ հոչակաւոր նաւապետի անդղիացւոյ . և 'ի նմէ կոչեցել 'Եր ալպիոն : Ոմանք ևս յարեմտեան կողմն քանատայ , և ականց միսիսիբեայ գետոյն՝ ը 43 աստիճանաւ 'ի հիւսիսակողմն մէնտոչինոյ , գծադրեն յաշխարհացոյց պատկերս ծոց ը արձակ . զոր կոչեն ծով արեմտեան . և համարին թէ զըերան նր , որով հաղորդի ը հարաւային ովկիանոսի , եդիտ մարտինոս ակվիլար սպանիացի : Խօկ կուլիելմոս աէլիլ զընիկ աեղի գուլիվիրայ Շի , ուր հասին սպանիսցիք ցամաքաւ ելել 'ի նոր մէքսիքոնէ , հաւանական կարծեօք դնէ 'ի հարաւակողմն այնր ծոցոյ : ԱՅԼ այս ծով , ոոկ և հաղորդուեն նր ը ովկիանոսի , և գուի վիրայ Շն , և բնակիչք նր երկայնազգեստք , և նաւք , որոց խելք , (յ՛ն խըչք) ոսկեզօծ էին , և արծաթազօծք , են անհիմն ստեղծուածք մտաց : վժ զի ը վկայելոյ նոցին իսկ սպանիացւոց , չեք դեռևս քացայայտ և որոշ ծանօթուի զվայրացն , որ յայն կոյս սարին մէնտոչինոյ . ուր անհնարին տառնամանիք տիրեն :



* * * * *

Ա Շ Խ Ա Բ Հ . Ճ .

ԱՆԴԻԼՎԱՆԿՈՉԻՔ . ԿՐԱՄԵՎԱՐԺԻՊԵՂԱ

ԴՈՍ ԱՆԴԻԼՎԱՆ :

Կն յոգնաթիւ կղզեք մեծամեծք և մանունք՝
յարեւելեան կողմն ամերիկոյ 'ի սփռուռա
համատարած ծոցոյն մեքսիկոնի և հիւսիսային ծո-
վու . որոց բազմուե և տարածուե համեմատ ոչ տե-
սաւ մինչեւ ցայժմ յ՛ջի . ը մէջ հարաւային և հիւ-
սիսային ամերիկոյ 'ի ներքոյ այրեցած գօտուոյ , միա-
շար տարածեալք 'ի հարաւայոյ ը հիւսիս՝ և ը արև-
մուսաս . զի սկսել 'ի դապարք կղզոյն՝ որ մօտ է 'ի
հարաւայինն ամերիկոյ , ճգին ը հիւսիս մինչեւ
ցանդիկօա , և ցողարապատա , և անտի դառնան
ը արեւմուսաս , և ը արեւմուսան հիւսիս : Առա-
ջինքն , որք են յարեւելեան կողմն՝ կոչին կրպիւ հո-
յո . կմ' հողմաբէրտ . սակա հնողզորդեան արեւելեան
կողմոց , որք շնչեն 'ի կողմանց անտինց . այլև Փուր
մուշիւլւան իւղիւ . զի առ համեմատուք այլոց՝ փոքր
են . կոչին նաև Գառչիպէ : Իսկ երկդ կարդ կղզեացն՝
կրպիւ հողմախան հողմոյ . և Մէծ անդիւլւան իւղիւ . զի սք
մեծագոյն են ք զառաջինսն : Այս ամ կղզեք ու-
նին անջրպետ 'ի միջի խորեանց նեղուցս պէսպէսու
ը լայնուե և ը խորուե . զի լայնուի ոմանց է 18
միլոն . ոմսնց 45 . և ոմանց մինչեւ 60 . իսկ խորու-
թին 'ի շուրջ կանգնոյ մինչեւ 'ի 15 :

Այլ բաց 'ի յերկիարգեան կղզեացս՝ գտանին 'ի
կողմանս յայսոսիկ և այլ արշիպելագոսք , կմ' խումբք
կղզեաց . ողջ երկու փաքրիկ խումբք , մի՛ առ կուա-
նագայ կղզեաւ . և միւս ևս առ կղզեաւն սըյն վին-
չեցիսի : Եւ այլ երկու խումբք . անոնանեալք
Աւայաւանէ . և Պէրմագիւնէ . յայն կոյս արեւադարձին
խեցգետնի ը բարեխառն գօտեաւ : Այս կղզեք .
մանաւանդ առաջինքն՝ երեխն հատեալք 'ի միաս-
տանի ցամաքէն ամերիկոյ 'ի ձեռն գետնաշարժու-
թէ . կմ' բռնուք ալեաց ջուրց ծովու , ողջ ցուցա-
նեն զանազան նշանք :

Երկու եղանակք են յանդիլւեան կղզիս ը ամն ող-

Հայն . թ չոր և անձրեւային . բայց յերկոսին և ո ոանտիկ է անդ տօթն . զոր թէպէտ հնաղզրդ հողմն արեւելեան առ փոքր մի բարեխառնէ , այլ ոչ ը բաւականին . որ սկսանի իբր յիններդ ժամու ա ռուր . և գնայ սաստկանալով ը չափու ելից արե դական մինչև ցօր հասարակ . և աղա անդրէն մեղ մանայ 'ի խոնարհիլ արեդական . իսկ այլ հողմունք ոչինչ զովացուցանեն զօդն . այլ մւնդ տապացո ցանեն . յորս առաւել սաստիկ է և մրրկալից հողմն արևմուեան . որ բջմ անդամ յարմատոց 'ի բաց իսկ զծառս մեծամեծս : Հարաւային և հիւ սիսային հողմունք ուր ուրեմն շնչեն 'ի կղզիս յայ բոսիկ : Յանախ են անձրեք յորդք և ջաղփք . որք պտճռեն յօդս զխոնաւուն սաստիկ և լիսասակար , ոչ միայն մարդկային կենաց , այլև անկենդան ի բաց . զի զամ ինչ փտեցուցել ապականեն : 'Ի մե ռանիլ մրդոյ 'հարկ է փութանակի թաղել զնա . քզի ը աւանդել հոդւոյն , իսկոյն սկսանի ըուծա նիլ և ներին . նոյնպա և միտ անասնոց պատրատո եալ 'ի կերակուր մարդկան , և պտուղք հասեալք կմտհասք կորդեալ 'ի ծառոց , առ օրին գնան 'ի փառւի . հացն բորբոսի , զոր չորացուցանեն՝ առ ՚ի պահել յապականուն . հնրկ գինին 'ի փոքր ժմկի փոխի 'ի քացախ . երկաթն յառաւօտէ մինչև ցերե կոյ ժանկահար լինի . սոյննպա և այլ ամ ինչ եղծել ապականի առ թանձր եյոյժ խոնաւուն : Վայ հարկ է զամ փոյթ և զցուշուն 'ի մէջ առնուլ 'ի պահպա նել զսերմանս յապականուն մինչև արկցին յերկիր , կմ սերմանեսցին :

'Ի սկզբան անդ՝ յորժոմ գտան այս կղզիք , զոր եանն՝ զոր տանէին անդր յեւրոսիոյ 'ի կերակուր եւրոպացոց , որք չէին սովորել առ կերակուրա երկրին , 'ի սակաւ ժմկի փտեալ արականէր . ապա խորհեցան սպանիացիք տանիլ հանդէրձ հսսկաւն . որով համարէին առաւել ըերկար պահպանիլ ցորե նոյ 'ի փոտուն . որ արդարեւ յաջողեցաւ , բայց ը նմին և գին ցորենոյն անեցաւ յոյժ յոյժ . ուստի և փութով վախճան էառ այս ազգ վհնկանութե . քզի բնակիչք երկրին դժկամակէին այնպիսի ծանր գնով առնուլ առնուլ . յետ այնորիկ վՃռկանք այլոց ազգաց կամեցիլ դարմանել երկուց լիսասուցն և ո , յու արագ ապականուն , և ծանր գնոյն , սկսան տանիլ անոց ալիւր . սակայն և սք վրիովեցան 'ի յուսոյ . քզի թեփն , որ էր խառն ը ալեր՝ խոնաւացել , խմօրէը

զբոլոր ալիւրն, և վաղագոյն ևս տապականէր . 'ի զանազան փորձոյ աստի ուր ուրեմն ուսել վաճառականաց, զայլ Ճնդէ կալան . զի հանել զթեփն . Հնուին զալիւրն մաքուր 'ի փոքրիկ տակառս . և կոխել պնդէին յոյժ, մինչև բոլոր ալեր լինել իբր միաձոյլ զանգուշած . և զբերան տակառացն քաջ խցել գնէին 'ի նաւս : Այս փորձ բարւոք յաջողեցու . քղի ալիւրն սյապէս պատրաստեալ, յետ վեց ամսոց, այլև զինի միոյ ամի՞ դտաւ միշտ անեղծ ամենելին և անապական :

Այս կղզիք դրեթէ առ հարկ լեռնային են . և երկիր նց կաւուտ և կարծր . որք յորժամ հասին անդր եւրոպացիք, կային անդործ և անդարման գլխովին . և ծածկել բովանդակ մեծամեծ և անմաշչելի անտառովք . յորս գտանէին աղջի աղջի ծառք մեծամեծ ուղղաբերձք . արմատ նց ոչ էր այնցափ 'ի խորս, ոնդ սովոր է լինել յայլ տեղիս . այլ տարածել զերեսօք երկրի յաւէտ և նուազ, ը համեմատուել մեծուել երարձրուել ծառոյն : Ճառք բուսեալք 'ի վր բարձրաբերձ լերանց և ժայռից՝ կարծր էին, և կեղև նց ողորկ, և տարրացեալ ը փոյտի ծառոյն . յորս հազիւ ներգործէր երկաթ . յայն սակս սովորաբար հրով հատանէին զայնոսիկ . որովհիսի են՝ ծառն կոչեցել փայտ երկաթի . քորպար . աքայա . պորաթա : Այլ առաւել նշանաւոր ծառ անդիլեան կղզեաց՝ էր աքօմա կոչեցել ծառն .

որ հատել և ընկեցել 'ի դետին՝ քարանայ :

Երևելի է միանդամայն և օդտակար՝ և ծառն խիժաբեր . զի բաց 'ի պատուական խիժոյ զոր բերէ, սկիտանի էր բուն նր 'ի շինել անտի քանօթս, կմ նաւակս միաստանիս . որով բնակիչք կղզեացն նաւելին 'ի շրջակայ եզերս կղզեաց իւրեանց յորս ձըկանց . այս տեսակ ծառոյ՝ սովորաբար բարձրանայ ց45, ց50 ոտնաչափ . իսկ տրամսդիծ նր՝ լինի իբր և ոտնաչափ : Գտանէին անդ և զանազան արմառք, և սպտուզք վայրենիք ինքնարոյսք, որք և էին սովորական կերակուր ընակցաց երկրին . յորոց սաւէի էր և Պանանա կոչեցել պառողն բուսել 'ի հովտնաւոր և 'ի զով տեղիս . փայտ ծառոյ նր է փուղչ և սպնդային . և սովորական բարձրուի նր և ոտնաչափ . յորժմ պատուղն հասանէ, ը նմին և ծառն դօսանայ . բայց նախ ք զկործանիլ յերկիր, այլ շառաւիլ ելանէ յարմատոց նր . որ զկնի միոյ ամի բերէ պտուղ . ապա և այն չորաննոյ, և այլ զինի նր

Նը բուսանի : Այլ առաւել շահաւետ բերք այսց
կղզեաց , էին պէսպէս բոյսք բժշկականք . որք կմ
արտաքուստ եղել 'ի վը ախտացել մասին մարմնոյ ,
կմ կերեալ , կմ ճմբել , և կմ եփել , և զնուր նը
ըմպել բժշկէին զնմ ախտս սեփականս այնց տեղ
եաց : Ոչ դոյին 'ի կղզիս յայնսսիկ բնաւ ընաանի
անասունք , ոչ ըորբուտանիք , և ոչ հաւք . նոյնպէտ
և վայրենիք սակաւ էին . բաց 'ի թութակաց , որք
ը ամ կղզիս յաձախեալ էին առաւել ք զայլ թըռ-
չունս :

Իսկ նախնի բնակիչք այսց կղզեաց , էին զանազան
աղջք և ժողովուրդք բիրսք և վայրագք . յորս ա-
ռաւել նշանաւոր էին Քարիպտ . կմ Քարիպտ , բնա-
կիչք փոքր անդիլլեան կղզեաց . որք համարէին
զանձինս սկիզբն ունել 'ի կույանայ . և լինել յազ-
գէ կալիոպեցոց : Էին միջահասակ մարմնով , ա-
ռոյգք , քաջալանջք , գազանաբարոյք , և քաջամար-
աֆիկք . սրունք ոտից նց թանձր , և մկանունքն
ատունար . ացքն սեաւ և մէծ , և առ փոքր մի ցըց-
ունել արտաքս . իսկ կերպագրուն գիմաց նց չէր
այնցափ ինչ տգեղ . այլ ինքեանք պատճառաւ և
ևս գեղեցկացուցանելոյ , կամովին խանգարէին ըլ-
տեսիլ կերպարանաց իւրեանց . սովորաբար մերէ
շրջէին . բայց փինկ զգեստուց ներկէին զմարմին
յոտից մինչև ցդլուխս կարմրադոյն կաւով : Իսկ
բնակիչք մէծ անդիլլեան կղզեաց ը հակառակն
աց , էին տկար , երկշու , անխարդախ , և ամենեւին
պարզամիտ . զորս առանց ինչ դժոնարուն ը լծով
իւրեանց նունանցին սպանիացիք : Ցայս ամ ազգաց
և ժողովրդոց ոչ մնաց և ոչ մի . քզի 'ի տիրել սպա-
նիացոց երկրի նց , առ փոքր փոքր խապառ ջըն-
ջեցին զնո . և 'ի տեղի նց յաշորդեցին եւրոպացիք
յայլեայլ ազգաց , որք ը Ֆմկս Ֆմկս տիրեցին
այնց կղզեաց . քզի այժմ գրեթէ ոմ ծովեգերեայ
տրունիք եւրոսլիոյ՝ ունին ը արութ իւրեանց զա-
նազան կղզիս յանդիլլեան կղզեաց անտի :

Սպանիացիք որք նախ հասին անդր , ունին զմեծա-
գոյն և զյաւետ արգաւանդ կղզիս . նշ զբուապա .
զհարուստ նաւահանդիսան . և զմեծ մասն կղզւոյն
սըյն դոմինիկոսի , և զայլ փոքրագոյնս : Անդղիացիք
զՃեամսիքա , զոր առին 'ի ձեռաց սպանիացոց .
զԱնգիբիօս . զԱնգ քրիստոնքոր . զԱնգ զինչենդ .
զՊարպատա . և զայլ աննշանս : 'ի վերջին Ֆմկս
առին 'ի գաղլիացոց և զԱնգ լուչիա . այլ կորուսին

զԱրանադա . և զՏոմինիկա . զորս 'ի 1779 առին
 'ի նցէ գաղղիացիք : Զկնի առին անդղիացիք 'ի
 սպանիացւոց զկզզին Սբ երրորդուն : Գաղղիացիք
 այժմ բաց 'ի Մարդինիքայ , Վլատալուբայ , և Մա-
 րիկալանդ կղղեաց , և այլոց փոքրագունից , ունին
 և զԼուանադա . և զՏոմինիկա : Հոլանտացիք ունին
 զՔուրաքածու . զՍբ եւստաքէոս . զՍապա . և զՍբ
 մարտինոս : Խակ դանիք ունին քանի մի տեղիս 'ի
 Սբ յովհաննէս , և 'ի Սբ Թովմաս : Զայս ամ կղղիս .
 ը նոսին և զայլ փոքրագոյնս մի առ մի ստորագրեա-
 ցուք յառաջիկայդ . բաժանեալ 'ի զանազն յօդ-
 ունածս ը իւրաքանչիւր տրուեց՝ որք իշխեն 'ի նա ,
 սկիզբն արարել 'ի սպանիացւոց յառաջին տիրա-
 պետողաց նց :

Յօդ ա . Կղղիք սպանիացւոց :

Յառաջագոյն միայն սպանիացիք վարեին զարուն
 յանդիլլեան կղղիս . զորս եգիտ 'ի 1492 գերա-
 հուսակն քրիստափոր քոլամպոս . ոնկ յը հանուր ներա-
 ծուն անդ նշանակեցաք : Այլ յետ այնորիկ հասին
 անդ և այլ զնշն ազգք յեւրոպիոյ . և տիրեցին բազ-
 մաց 'ի կղղեացն . քղի սպանիացիք իբրև կոխեցին 'ի
 բազմահարուստ ցամաքն ամերիկոյ , չարարին այ-
 նուհետե փոյթինչ զկզզեաց նր . սակայն տակաւին
 մեծագոյնիքն յայնցանէ . և առաւել արգասաւորքն
 են ը նց տրուեր , ոնկ ասացաք . յու Քուառա . Հո-
 րոստ նաւահանգիստ . մեծ մասն սբն Դումինիսսի . որք
 են 'ի մեծ անդիլլեանց . խակ 'ի փոքր անդիլլեանց ,
 Մարտարիտա . զորս յուջիկայդ . ստորագրեացուք :

Կ ուապա :

Կմ 'ի մեծամեծ կղղեաց Շի . և մեծ ք զայլ
 ամ անդիլլեան կղղիս . տարածել յարելլեց
 յարեմուտս . ունի 'ի հիւսիսոյ զֆլորիտա , և ըզ-
 զուկայեան կղղիս . 'ի հարաւոյ արեւելից՝ զսք դո-
 մինիկոս . 'ի հարաւոյ՝ զձեամակքա . և զհարաւային
 ցամաքն ամերիկոյ . խակ յարեմուից՝ զծոցն մէքսի-
 քոնի : Արկայնութի նր է իբր 720 մզօն . խակ լայ-

Նուին յըարձակագոյն տեղիս 120. և յանձկագոյն վայրս 36. իսկ բովանդակ տարածութին՝ 50000 քառ. ուակուում մղմն Շադրական. և է անմիջապս առ արեադարձիւ խեցդեանի յեզերս այրեցած գտաւոյ։ Օդ նր քաղցր է և քարեխառն, այլ ՚ի բնշմ տեղիս դէճ և թանձր. իսկ երկիրն ոլէսպէս. արևմատեան կողմն նր դիւր է և գաշտային, և քաջայարմար ՚ի մշակութ. իսկ տրեելեանն ը հկոկն՝ գլխովին լեռնային ապառաժուա և անառառալից. յանապառս նր բաց յայլոց ազգի ազգի ծառոց՝ գտանին մայրք մեծամեծք յոյժ. և այլ զանազան ծառք պիտանիք ՚ի շինուած. այլեւ անուշահոտք։ Գատանին անդ և վոյրենի ցուլք սերեալք յարջառոց՝ զորս սպանիացիք ՚ի սկզբան անդ տարան անգր. և առա անխրնամ մնացեալ վայրենացան. իսկ այժմ որսան զնոս սեաւ ափրիկեցիք դերիք սպանիացւոց լոկ վոր թոյնց. որ է մի ՚ի գլխաւոր վաճառաց կղզւոյս. իսկ զմիսն՝ որ թէպտ պատուական է ՚ի կերակուր, ՚ի բաց ընկենուն. ոնդ և զմիս այլոց վայրենի երեսոց ընւնի այժմ և ընտանի անասունն ըրբուանիս. զուերիվար, ջորի, արջառ, և ոչխար. այլեւ հաւս ընտանիս, և վայրենիս, և կրիայս, օրոց սուք ասեն թէ է ազդողական դեղ ըդէմ բորսաութ. Ունի և հանքս գոյլախաղ վիմի, և կուպր բղիսել յերկրէ. և հանքս ազի առ ափն ծովու, ուր դործնն աղ բնշմ. և ձուկին առատ ՚ի ծովի և ՚ի գետոց. և ծիսախոտ պատուական. որ է երկդ գլուխ վճռ նր. ոնդ և աղնիւ փայտան քամբեկեան բերել ՚ի քամբեկեան ծոցոյ, և ՚ի հոնուուրասայ. զոր աստի բարձեալ՝ տանին յեւրոսկիա։

Զայտ կղզի զառաջինն եգիտ քոլոմպոս ՚ի 1492 ՚ի հոկտ 28. բայց ոչ կալաւ անդ կալուածս. և ոչ հիմնեաց բնակութի. այլ վեր' իվերոց քննեալ զնոսինինին, և ՚ի ձեռն արանց իւրոց, էանց անտի ՚ի սբ գոմինիկոս ՚ի խնդիր ոսկեհանքաց. և առա դարձաւ անդրէն ՚ի սպտնիա։ Յետոյ ՚ի 1511 առաքեցաւ անդր յարքայէն սպանիոյ յովհաննէս վէլասկուէս այր ամբարտաւան, անգութ, և ընչաքաղց, 500 հետեւակգք, և 80 հեծելովք. և հասել ՚ի քուպա, ել ՚ի ցամաք յարեելեան կողմն նր. ՚ի գւուին յորում տիրէր հաթուէյ անուն քաղիքէ. ծնել ՚ի սբ գոմինիկոս. և աստ փախուցել յահէ սպանիացւոց. այլ տեսել նր թէ և աստ չիք հնար նմ դերձանիլ յամենածախ սրոյ սպանիացւոց. ընտրեաց

քաջութեարքի մեռնիլ, քեւը ուղղվեա մատնել զանձն
'ի գերաւեն նց. վեյ ժողովել զարս իւր, եդ նց ա-
ռաջի զվերահաս վատնգ կորստեան իւրեանց. և
մինչը էր միսեալ 'ի մարտ, հաւանեցոյց նց ընկե-
նուլ 'ի ծով զնմ ոսկի զոր ունէին. զի կարծէր նա,
թէ այն հանգ զոր այնշափ անցագ տենանօք, մշնդ-
թէ մոլեգնաբար խնդրէին սպանիացիք, իցէ ոծն
նց. վեյ զմաաւ ածէր, թէ 'ի չգտանելն նց զայն
յանի անգ 'ի սպաշտել, ոչ ևս այնալիսի եւանդեամբ
ովնդէին զհետ 'ի տիրել նմ: Առև վրիուցաւ 'ի
յուսոյ. քզի հասել սպանիացւոց 'ի կղզի անգը,
զազանաբար յարձակեցան 'ի վր, ցրուեցին զբանակ
նր. և կալել զնա, դատապարտեցին յայրումն կեն-
դանեոյն. արդ մինչդեռ կապել կայր, 'ի ձող եղիե-
լին հաթուեյ, և դահիճքն ոպատրաստէին զիայտ և
զհուր, մի ոմն 'ի քհնյից անտի սպանիացւոց՝ որ ը եր-
կաց կացել 'ի կողմանս յայնոսիկ, ուսել էր զենցու-
երկրին, մատուցել առ նա, յորդորէր զնա ըունիլ
զմիրառութ, և լինել քրիստոնեայ. և զառաջիկաց
տանջանս և զմահ յանձն առնուլ կամակար 'ի պա-
տիմ մեզաց իւրոց. որով ասէ. ը մեռանիլն քո ու-
զիդերթաս յարքայութ. զորոյ զգեղեցկուին և զեր-
ջանկուին բնշմ բանիւք նկարագրէր նմ առաջի:
Առէ ցնա քազիքէն. յարքայութ անդ՝ դորմէ դու-
խօսիս, դատանին և սպանիացիք. պիսի ետ քհնյն.
այո՛ բայց միսոյն նք որք բարի են. իսկ քազիքէն
ըն դառնութ ասէ ցնա, բարեգոյն նց է չարագոյն.
թոյլ տուր ինձ զզի մեռանիլ. և չաեսանել և
և զերեսս նց. և այնողու կենդանւոյն հրկէզ եղե-
եղիելին:

Եւ այնուհետեւ ցունելով սպանիացւոց զգք դիմա-
մարտ, առանց այլ ինչ ունզմի տիրեցին համօրէն
կղզւոյն. զի բնակիցք նր ահաբեկել 'ի սարսափելի
զինուց նց և յերիւլրաց, բոլորովին անձնատուր
եղեն նց. իսկ սպանիացիք վարեալք յապարասան
ցանկուէ ագահութ, ոչ թողին անդթուիս և բռնա-
կալուիս, զոր ոչ 'ի գործ արկին 'ի վր եղիելեացն.
վեյ առ զերծանելոյ նց յայնալիսի դժոխային գե-
րուէ, խոյս աային և թարքէին յանտառս և 'ի ծոր-
ծորս լերանց. այլ սպանիացիք զհետ պնդել նց,
որսային զնս իբրև զլայրէնի գազանս. և արկեալ
յոտնակապս զոտս նց, յանխնայ ծառայեցուցանէին
'ի իսիստ և 'ի դժնդակ դործս. և զի բնութ ակար
էին նք, և անկիրթ յաշխատանս, յայն սակա ը-
ծան:

ինքեանք սպանիացիք սպանանէին իբր անպիտանս
 'ի գործ , առ չկերակրելոյ զնա վայրասպար . բղմ
 անգամ ևս առ գուղնաքեայ ինչ յանցանաց , կմ' ի
 տեսանել զնո դանդաղս 'ի գործ , յափշտակել 'ի
 մօլեգին սրամառէ , հարկանէին և անդէն սպա-
 նանէին զի՞ : Եւ այսպէս յետ ոչ բղմ ժմկց սպառ
 սպուռ ջնջեցին 'ի միջոյ զբուն բնակիչս քուպայի .
 որք բազմաթիւն էին , այլ ոչ 5 միլիոն , որդ դնէ տէ
 ըստ քազատ ենց սպանիացի . որ անդ գտաւ առ
 նովին ժմկօք . քզի եթէ և զսրբուտանիս , և ըզ
 թռչունս , որք յայնժամ գտանէին 'ի քուպա , 'ի
 կարգ մարդկան գասեցուք , ոչ հասանեն 'ի 5 մի-
 լիոն . այն զի և անհնարին էր այնչափ բազմութեն
 մարդկան առանց երկրագործութեն և առանց այլ
 ինչ արունեստի , լոկ ինքնաբեր անզօր և սակաւ
 արդասեօք երկրի ասպրիլ : Այլ չէ պարտ ինչ զար-
 մանալ ը այսպիսի անագորոյն խժդժական գնացո
 սպանիացւոց ը տառապէլ քուսկացիս . քզի ողջ
 գրեն պատմիչք սպանիացւոց նա ինքն վելասկուէզ
 էր այր անողորմ և անգութ . և արք նր ը մեծի
 մասին գազանաբարոյք և սրեանարբուք . և միան
 գամայն ասացից՝ յետին դիրա սինլիքոր ժղիդեան
 սպանիացւոց . որք իբրև հասին յամերիկայ , 'ի բաց
 ձգել զնամ սանձ և զհնազանդութի , գործէին ան-
 սպատիժ զնամ՝ զոր ինչ կամէին . որով և սպառեցին
 զբուն բնակիչս նց . և այնուուհետեւ սպանիացիք օր
 ը օրէ բազմացան անդէն . որոց գլխաւոր տեղիք
 են հետագայութ :

Հասանա : Գլխաւոր քզք քուսկայ կողւոյն 'ի հիւսի-
 սային արեւելեան եզերս նր 'ի գեղազունարձ գաշտի ,
 'ի բերան ծոցոյն մէքսիքոնի . 'ի հիւսիսոյ ունելով
 զնովիս . իսկ յայլ կողմանց շրջապատէլ յերկուց
 վասկաց լաճիտայ գետոյն : Ընեւալ 'ի 1512 'ի յա-
 կորայ վելասկունեայ . և զառաջինն անունանեալ
 նւհնգիստ քարէննասայ . ապա փոխադրել յայն
 ուեղի՝ ուր այժմդ է , և ըարձակել զնզն շինունա-
 ծովք , կոչեցաւ ՍԻ Քրիստոֆոր հաւանայի , կմ սոսկ
Հասանա : Ե՛ քզք մեծ բարեշէն բազմամարդ և բազ-
 մավաճառ . 'ի սկիզբն անցել դարու՝ թիւն բնակչաց
 նր հասանէր ց 26 հազար . այլ ասի՝ թէ այժմ այս
 թիւն նուազել է . շինունածք նր բովանդակ քարա-
 շէն են և գեղեցիկ . այլ ոչ այնչափ ինչ բարձր :
 Ունի 11 եկեղեցիս , և մենաստանս արանց և կա-
 նանց ,

նանց + փարթամս և մեծաշէնս . յորս երևելի է մեծաստանն և եկեղեցին կուսանաց սբյն քըտրայի . ուր աւելի ք զշարիւր հաւատաւորս բնակին . ունի և երկու մեծամեծ անկելանոցս վայելուց , և այլ պատճեական շինուածու հասարակաց և մասնաւորաց , սովորաբար տատ նստի ենդս սբյն յակոբայ . այլ չունի իւր սեփական ապարանս , և ոչ աթոռանիստ եկեղեցի , 'Ա, Հնդիստ նր՝ է մի 'ի լաւագոյն նւհնդստից համօրէն ամերիկոյ , ըարձակ մնքոյթ և ապահով յամ հողմոց . ուր կարեն անարդել կալ հազար մեծամեծ նաւք միանդամայն . բերան նր է նեղուց անձուկ իրր կէս մղմն երկայն . որ ունի 'ի ստաշտամունի իւր չորս բերդս ամուրս 'ի զանազան տեղիս , քաջ սպասազինելս . այլ մինչըն էր այսնկա քաջ ամբացուցիլ քղքս այս , առին զնա 'ի 1536 հէնք գաղղիացւոց . բայց քղի ը այն ժմկո գեռ փոքր էր և աննշան , նմին իրի սակաւ դրամնք անդրէն լինքեանա ընկրկեցին զնա սպանիացիք . յորոց զկնի սուլ ինչ ժմկի առին անդղիացիք . և 'ի նցնե գաղղիացիք . և աղաս դրձլ էանց 'ի ձեռս սպանիացւոց . որք ը բղմ ժմկո չունէին ինչ փոյթ ամրացուցանել զնա : Այլ իրրե թագաւորեաց 'ի սպանիա տռւնն սորբաննեան , այնուհեաւ յաւելան ամբուիք հաւանայ . սակայն 'ի վր այսր ամին 'ի 1762 առին անդղիացիք զքղքն . ը նմին և 12 սպանիան նաւս . այլ 'ի գաշնագրուեն՝ որ 'ի 1763 , անդրէն դարձուցին 'ի ձեռս սպանիացւոց . ոլք և ևս յաւելին զամրտւիս նր . և ստուար դունդ մի զօրաց կարգեցին 'ի հնդզորդ սրբհպանուն քղքին և նաւահանգստի նր :

ՍԵՐԵԿԻ: Գլխաւոր քղք քուպա կղզւոյն . ենպսանիստ , (թէպէտ ենդս նր սովորաբար նստի 'ի հաւանա .) և աթոռ գլխաւոր ատենի նր . շինել 'ի վելասկուեայ՝ որ յայս կղզի հաստատեաց զաթոռ կառավարութե . 'ի հարաւային արեմտեան կողմն կղզւոյն իրրե 6 մղնւ հեռի 'ի ծովլէ , 'ի ծագ պարուբին՝ ուր ունի նւհնդիստ սպատուական և սուպահով յամ հողմոց , շրջապատել 'ի բղմ մանր կղզեաց : Յառաջագոյն ծաղկել էր յոյժ վճռկանուի սորին քղքի . այլ այժմ գրեթէ բոլորովին փոխադրեալ է 'ի հաւանա . վայ թէնդտ ը կարգի իրաւանց առաջն է սա 'ի կղզի անդր . այլ ը իրին անքացիալ յոյժ . թէնդտ 'ի վերջին ժմկո և ևս յաւելան ամբուիք նր :

ՄԵ Ի Ա Յ : Ա ւան ի բ ը և 60 մ լ ո ն ա ւ հ ե ռ ի ՚ ի հ ա ւ ա ն այ յ ա ր և ե լ ե ա ն կ ո ղ մ ն ն ը :

ՄԵ Հ ա գ ի : Ա ւան ՚ ի հ ա ր ա ւ ա յ ի ն ծ ո վ ե զ ե ր ս ա յ ս ր կ ո զ ւ ո յ :

ՄԵ Յ ա ւ ի ա ն ո ւ ս : Ա ւան ՚ ի հ ա ր ա ւ ո յ ա ր և ե լ ի ց ն ա խ ր ն թ ա ց ա ւ ա ն ի ն :

Մա ն դ ա ն ի լ լ ս : Ա ւան ն ո յ ն պ է ս ՚ ի հ ա ր ա ւ ո յ ա ր և ե լ ի ց ս ը յ ն յ ո ւ լ ի ա ն ո ա ի :

Մի ւ լ է ս , կ մ Մ ի ւ լ ւ ս : Ք ղ ք փ ո ք ր ր , կ մ ա ւ ա ն ՚ ի հ ի ւ ս ի ս ո յ ա ր և մ ա ի ց ս ը յ ն յ ա ր և ր ա յ , բ ա ժ ա ն ն ե լ յ ե ր է կ ու մ ա ս ո ւ ն ս . ո ր ո ց մ ի ն ն կ ո չ ի հ ա յ ն ս ի ւ լ է ս . և է ա ռ հ ա մ ա ն ո ւ ն պ ա ր ո ւ ր ի ն . ի ս կ ե ր կ դ ն ՚ Ն ո ւ ՚ ի շ է ի ւ լ է ս . կ ա ռ ո ւ ց ե լ ՚ ի պ ա ր ո յ ի ն դ ա ր գ վ ի ն ա յ .

Փի ն ո ւ ս : Ե կ զ զ է ի բ ը 60 մ լ ո ն ը ե ր կ ա յ ն . և 25 ը լ ա յ ն . մ օ տ ՚ ի ք ո ւ պ ա ՚ ի հ ա ր ա ւ ա կ ո ղ մ ն ն ը . ՚ ի մ է ջ ք ա կ վ ա յ ծ ո ց ո յ , և ս ա ր ի ն ք ո ր ր ի է ն դ ա յ :

Հ ա ր ո ւ ս ս փ ն ա ւ ա հ ա ն ի շ է ս պ :

Մյ կ զ զ ի ա ն կ ա ն ի ը 18 ա ս տ ի հ ա ն ա ւ հ ի ւ ս ի ս ա յ ի ն լ ա յ ն պ է ն : Ե ր կ ս յ ն ո ւ ն ն ը յ ա ր և ե լ ի ց յ ա ր և մ ո ւ տ ո ւ ն 140 մ լ ո ն . ի ս կ լ ա յ ն ո ւ ն ՚ ի հ ի ւ ս ի ս ո յ ը հ ա ր ա ւ 50 : Օ դ ն ը ջ ե ր մ է յ ո յ ժ , բ ա յ ց մ ի ա ն դ ա մ ա յ ն և խ ո ն ա ւ . մ է ն դ ՚ ի յ ո ւ ն ի ս ի : ՚ ի յ ո ւ լ ի ս ի , և յ ա գ ո ս ո տ , ՚ ի յ ա ն ա խ ե լ յ ո ր դ ա ն ձ ր ե ա ց , ո ւ ս ա ի և մ ի ս ա ս ա կ ա ր կ ե ն ա ց : ի բ ը և ՚ ի կ է ս ն ա մ ա ռ ա ն և ՚ ի ս կ ի զ ը ն հ ն ձ ո ց ս տ է պ շ ն չ ե ն ա ն դ տ ա մ ա խ ա ռ ն հ ո ղ մ ո ւ ն ի ք . բ ա յ ց ս ո վ ո ր ա բ ա ր յ ո ւ թ ե ր դ ժ ա մ է ա ւ ո ւ ր ն մ ի ն չ ե ց ը ր դ ժ ա մ ե ր ե կ ո յ ի ՚ շ ն չ է հ ո ղ մ ն ի ն չ մ ե զ մ ք ք ա ղ ց ր և զ ո վ ա ց ո ւ ց է ս , և ՚ ի դ ա դ ա ր ի լ ա յ ն ը հ ո ղ մ ն յ , ա ի ր է տ ա ռ պ ա ս ա ս ի կ :

Եր կ ե ր ն ը մ ա ս ի ն լ ե ռ ն ա յ ի ն է և ա ն տ ա ս ա լ ի ց . և ը մ ա ս ի ն գ ի ւ ր գ ա շ ա պ յ ի ն . ո ւ ս պ ե ա լ ՚ ի բ ա զ մ ա պ ա տ ի կ գ ե տ ա կ ա ց , ո ւ ս ա ի և ա ր գ ա ւ ա ն դ , ա յ լ ս ա կ ա ռ ո ւ ր է ք մ ա կ ե ա լ ա ռ ն ո ւ ա զ ո ւ ն բ ն ա կ ա ց . զ է ՚ ի բ ը լ ո ր կ զ զ ի ն հ ա զ ի ն զ տ ա ն ի ն 1500 ս պ ա ն ի ս ա ց ի ք , և ծ ն ե ա լ ք ՚ ի խ ա ռ ն ս ե ր ն դ ո ց . ֆ ր յ ա ռ ն է ս պ ա ն ի ս ա ց ւ ո յ , և ՚ ի կ ն ո չ է ա մ ե ր ի կ ա ց ւ ո յ . և ի բ ը 3000 խ ա փ շ է ք ա փ ր ի կ ե ց ի ք . զ ո ր օ գ ն ե լ ս պ ա ն ի ս ա ց ւ ո յ ՚ ծ ա ռ ա յ ե ց ո ւ ց ա ն ե ն ՚ ի մ շ ա կ ո ւ ն ե ր կ ր ի : Ս ո վ ո ր ա կ ա ն կ ե ր ա կ ո ւ ր հ ա մ օ ր է ն բ ն ա կ ա ց ն է մ ա յ ի դ . կ մ մ ս ր ա ց ո ր ե ն . փ ա գ ա դ է , (ֆ ր տ ե ս ա կ ի ն չ է ե ր է լ բ ա ս ի ի) , և ք ա ս ա ւ ա . ո ր ք է ն ս ե փ ա կ ա ն բ ե ր ք ա մ ե ր ի կ ա յ : Բ ե ր է և շ ա ք ա ր , և

և ծխախոտ , և գագառվ , այլ սակաւ , որք և բնակեցաց նր չեն բաւական : Ունի և զանազան տեսակն վայրենի ահամսոց , սերեալս յայնց՝ զորս 'ի սկզբանն տարան անդր սպանիացիք . ուստի այժմ գլխաւոր վաճառք այսր կղզւոյ՝ են մորթք նց , այլ և ջորիք . որք թէպէտ փոքր են , այլ ուժեղք և արագընթացք . բայց այս ամ սակաւ ինչ են . վոյ թէքրութն սպանիոյ ըռնի ինչ օգուտ 'ի կղզւոյ աստի , այլ մշնդիմու . քզի ամի ամի ծախէ աւելի ք 5000 փեցա 'ի թոշակ 200 զինունորաց , (զորս կարգել է անդր 'ի պահպանութի .) և եկեղեցականաց կղզւոյն : Ասկայն 'ի վր այսր ամի բզմ՝ զգուշութք պահէ զնա , տակս պատուականն և յաջողակ դրից իւրոց . առ 'ի համարիստ առնոււլ անդ նաւահանդիսի իւրեանց , որ 'ի սպանիոյ նաւէ 'ի մէքսիքոն . քզի է ը մէջ անդեւլեան կղզեաց . և է առաջնին կալուած սպանիացւոց որ ը առաջ լինի , որոց 'ի սպանիոյ նաւեն 'ի մէքսիքոն :

Այս կղզի գտաւ 'ի քոլոնիզոսէ 'ի 1493. այլ չեղենինչ փոյթ սպանիացւոց տիրել նմ մինչեւ ցամն 1509. յորում ամի ելեալ 'ի կղզւոյն սրբյն դոմինիկոսին՝ ը ասալնորդութք լէոնեանն փոնսայ , յուսով գտանելոյ անդ ոսկեհանքս առատաբերս , մտին կալան զիղզին տւանց ինչ մարտի պտղմի : Քզի բնակիչք նր լուեալ զնմ անցո , զոր անցուցին սպանիացիք ը բընակիչս այլոց կղզեաց , որք գիմումարտ գտան նց , կամովին արկին զանձինս ը ծով նց :

Աք 'ի սկզբան անդ այնող ունէին 'ի մոի 'եթէ սպանիացիք անխոցելի են և անմահ . վոյ թէսպէտ անհընարինս տառապէին 'ի խիստ ծոյտութէ նց , այլ ոչ իշխէին բնաւ գլուխ ամբառնալ , և թօմթափել ըշծանրաբեռն լուծ նց 'ի պարանոցէ իւրեանց . առամի ոմն 'ի քաղիքէից կղզւոյն՝ պրայօ անուն , ունելով 'ի տան իւրում օթագայեալ զերիասարդ մի սպանիացի սալսէտոս կոչեցեալ , կամեցաւ զփորձ առնուլ 'ի վր նր , և ստուգել զնչմարտուի իրացն . վոյ յորժամ ել նա 'ի ճնողհ երթալ 'ի տեղի իւր , ետ նմ ուղեկից և առջնորդ ճնողհի զոմանս յարանց իւրոց . պատուէր առնեալ նց , զի յանցուցանել զերիասարդն ը գետ մի , ը որ հարկ էր անցանել , ընկեցեն զնա 'ի ջուր . և ջանացեն թէ հնար ինչ իցէ հնդզուցանել զնա անդ . արարին և նք այնող զի նա որ բարձեալ ունէր զերիտասարդն յուս իւր անցուցանել ը գետն , իրրե եհաս 'ի մէջն , ընկեց զնա

զնա 'ի գետ սնդր . և 'ի վր հասել այլոց ընկերաց նր , կալան զեղեցէլի սպանիացին 'ի ջուր անդր այն շափ , մինչև աեսին զի ոչ ևս առներ շարժումն ինչ , ապա հանեալ 'ի ցամաք , անկանեին առաջն նր , և ինդրէին ներել ինքեանց վշ այնր գիպուածոյ . զի գեռ ևս կասկածէին , թէ գուցէ չիցէ մեռեալ . և կացել անդ աւուրսերիս . կեղծելով զանձինս սուդ առնուլ 'ի վր նր . իբրև աեսին զի դի նր սկսաւ նեխիլ և քայլայիլ , ծանեան փորձիւ եթէ մեռա նին և սպանիացիք :

Այս լուր վզվզի ծաւալեցաւ առ ամցեղս կղզւոյն . և նոյն ժամայն զէն սուեալ՝ յամ կողմանց գիմեցին 'ի վր սպանիացոց 'ի ջնջել զնայ յերկրէ իւրեանց . այլ փոնտէ լիօնեան գումարեալ զորս իւր , և օդ նուի ևս ընկառէլ 'ի նը գոմինիկոսէ , մոլեգնաբար յարձակեցաւ 'ի վր նց . և եհար զնայ 'ի հարուածս սաստիկս . սակայն և նք սպանին զբարմա 'ի սպանիացոց . այլ աեսել յետոյ զի սպանիացիք օր ըսօրէ յաւելուին , և զօրէն ամեհի գաղանաց սաստատակէին յամ կողմանս կղզւոյն , սարսափելի կոտորածս գործելով եղին 'ի մալի թէ մեռեալք նց զկնի աւուրց ինչ անդրէն յառնեն 'ի կեանս սաստել գաղանացեալ ք զառաջննն . վեյ յուստահատեալ այնուհետեւ միւսանգամ 'ի ձեռս բերելոց զառաջնն ազատուցին զպարանոց ը լծով նց . իսկ սպանիացիք աւաւել ցասուցեալ սակս այսր աւստամբութէն նց , սյնչափ ծանրացուցին զբեռն ծառայուե 'ի վր եղելիքացն , մինչև 'ի սուզ ժմիկի իսպառ անհետ առնել յերկրէ զսերունդս նց . որբ ըս սովորական չափուականացուե պատմագրաց սպանիացոց՝ առաւել էին ք 600000 . իսկ այժմ ընակիցք նր չեն այնչափ ինչ բազմաթիւ . որբ են բնիկ սպանիացիք . և 'ի իստոն սերնդոց ծնեալ . որոց գլխաւոր տեղի է քաղաքդ՝ որ զկնի :

Հարուածս նառականդիստ : Ե՛ գլխաւոր քշք համօրէն կղզւոյն . ենպանիստ , և աթոռ կուսակալ իշխանի նր . փաքր , և ոչ այնչափ ինչ բազմամարդ , այլ գեղեցիկ և ամուր , կառաւցեալ 'ի հիւսիսային կողմն կղզւոյն , 'ի կղզի ինչ փոքրիկ միացեալ ը մեծի կղզւոյն 'ի ձեռն ամբարտակի . ունի նաւահանգիստ մեծ և պատուական . ուր կարեն կալ անքոյթ նաւք որ չափ և մեծ իցեն , այլ և բերդ հզօր . 'ի 1595 փրանչիսկո տրաքէ հրձիդ արար 'ի նաւահանգստի աստ զամ

զնո՞մ նաևս սպանիացւոց . այլ ոչ կարաց առնուշ
զբեղքն . ասպա զինի երից ամաց կոման քումովէրլան-
տայ էառ զբոլոր կղզին . ուր մեռան 400 զինունորք
'ի զօրաց նր յախտէ հիմանդուե՛ . յորմէ ստիպեցաւ
'ի բաց թողուլ զկղզին . այլ յելանել անտի , երարձ
70 ումբագործիս իր դօփ , և անհամար գրամն , և
այլ աւարս . 'ի 1615 հոլանտացիք առսփեցին մշն
նաւահանգեստ 'ի վր այսր կղզուոյ . որ էառ զբեղքն ,
և աւար եհար . այլ ոչ կարաց տիրել բերդի նր .
վոյ ստիպեցաւ 'ի բաց թողուլ և զբեղքն :

ԱՅՆ ԴՐԱՄԻՆԻԿԱՆ և իտ". Ան Տօնիսիո և

Պյա կղզի զառաջինն 'ի ընակցաց իւրոց անուննել
կոչեր Հային . ապա 'ի սպանիացւոց կոչեցաւ
Սպանիուս , որ փոքր սպանիա . և հուսկ յետոյ ԱՅ դու.
մինիստ , յանաւն գլխաւոր քղզի իւրոյ . անկանի ը
մէջ բուսպայի , մամախթայ , և հարսւսանաւահանգըրս-
տին , յորմէ բաժանի անձուկ նեղուցաւ : Երկայնուկն
նր յարեւելց յարեւմուտամ 'է իբր 400 միջն . իսկ լաւ
նուին 'ի ճիւսիսոյ ը հարաւ '120 , ուստի և զինի
քուսպայի մեծ է ք զայլ ամ անդիլեան կղզիս և Առ-
նի բեկմ գետս , և վտակս , ովք ուռոգանեն զերկիր
նր . որոց գլխաւորն է Օքոս . որ իջեալ 'ի լերանց
խառն ը աւագոյ բարձեալ բերէ և մանրիկ հատա-
սակւոյ : Օդ նր տօթագին է , այլ բարեխտունի 'ի
կանոնաւոր հողմոց , որը հանապազ շնչեն անտանօր -
անձրեք ջաղըք յաձախն յամառան , թե դու ոչ միա-
պէս ը ամ տեղիս . արդաւանդ է և բերրի առաւել
ք զայլ շրջակայ կղզիս . և գլխաւոր բերք նր են շա-
քար , լեղակ , բամբակ , գագատէ , խաչվէ , ազգի
ազդի համեմք , և պտուղ պատաւականք . դր ա-
նանաս , պանտինէ , որք են մասնաւոր պառողք սե-
փականք ջերմոյին նահանգաց . լիմոն , կիարոն ,
նպրինջ , արմաւ , ծիրան աղնին , այլև խաղող , և
մեղր , և մոմ . ունի և հանքս ուկւոյ . և արծաթոյ ,
և պղնձոյ , և այլոց իրաց . յորոց 'ի սկզբան անդ-
րշմա շահեցան սպանիացիք . այլ այժմ դրեթէ բո-
լորովին լքեալ կան անգործ . առ չունելոյ սպանիաց-
ւոց բաւական գերիս 'ի ծառայեցուցանել զնո 'ի
դործ մետաղաց . զորս և ջանան ծածկել յայլոց
աղքաց եւրոպիոյ . ունի և անտաւս մշամնշա , և
ազգի ազդի ծառս 'ի սկստս ներկոյ և շինուածոց .
յորս գտանին և մասնաւոր ծառք անծանօթ յա-
մար .

մեր . յորոց մի է և ծառն կաղամբոյ . զոր անդպիս ցիք կոչեն Քաղաքէրէն . իսկ գաղղիացիք Փաշտէն . որ է ծառ առուար և բարձր յոյժ . տերեք նր մեծամեծք լոյն և երկայն , որք միայն 'ի գագաթան ըռասանին . և 'ի հատանել զայնոտիկ , ընդ նմին և ծառն անվրէպ գօստնայ . փայտ նր անփուտ . և ասի թէ այնցափ կարծր է , մինչև և երկաթի բեկուաց բղմգժուարութ միսիլ 'ի նմ . վոյ սովորաբար զդադամն նր հատանեն , զի 'ի բունն դժուարաւ ներդործէ տապար . այս ծառ չունի այլ ինչ նմանուի ը կաղամբոյ , բայց միայն 'ի համն , և 'ի փափի . կուե ոմանց 'ի տերեց նր , որք չեւս են բացետլ և ծաւալեալ , այլ 'ի մէջն այլոց տերեւոց ամփոփել . պատմէ հոյրն լապար , թէ յօրժամ հատանի գլուխ ծառոյս , 'ի բուն նր գոյանան որդունք մեծամեծք . զոր ուտեն իբր փափուկ կերակուր : Ունի և ընտանի անասունս . իր տրջառ , ոչխար , բայց առաւել երիվարս պատուակախնիս , զորս տանին յամ շըրշակայ կղզիս . այլև իսոլս ընտանիս և վայրենիս՝ սերեալս յընտանի խոզից անտի , զորս 'ի սկզբան անդ տարան անդր սպանիացիք , և արձակել յանտառա :

Վայրենացան :

Զայս կղզի եղիտ քոլոմնզոս 'ի 1492 . ուր և հիմնեաց ամրոց փոքրիկ , զոր կոչեաց 'Նուլիադ . ապա 'ի քանդել բնակչութ կղզւոյն զայն ամրոց , յերկրորդ գարձի իւրոյ յամերիկայ 'ի 1493 , հիմնեաց զեղիսարեթ քղզն մերձ յըտրձակ ծոց ինչ ծովու , և այլ բղմ փոքրիկ ամրոցս 'ի զանազան տեղիս . մղեաց բղմ պտղմունս ըդէմ բնակչաց նր . մինչև ուր ուրեմն զերևելի մասն նց ը լծով սպանիացւոց նուանեաց . յետոյ և այլք առ սակաւ սակաւ բոլորավին մատնեցան 'ի գերուի սպանիացւոց . որոց անդմութին թվկայելոյ ականատես սպասմադրաց սպանիաց . ոոց 'ի տալացւոց և այլոց ազդաց՝ յայն աստիճան եհաս , մինչև եղկելի բնակչութ կղզւոյն առ յետին յուսահատուե անձամբ զանձինս սպանիանել . քզի ումտնք կախէին զանձինս զծառոց . այլք 'ի վիհս խորինս գահավէժ լինէին . կէպք 'ի ծով և 'ի գետս հեղձնուին . և այլք այլով օրինակաւ կարձէին 'ի կենաց . կտմակար ընտրելով զմահ , ք զկեանս ը այնպիսի անողորմ ձեռամբ բռնակալաց . վոյ չեն ինչ զարմանք այնպէս փութով սպառելոյ նց . քզի ոչ էանց ազգ մի , զի յերկու միլիոն ժողովրդենէ (ըսովորական շափաղանցուե սպանիացւոց), չմաց և

ոչ մի : Ապա յորժամ սպանիացիք ոչ ևս գտանէին
 'ի կղզի անդր գերիս 'ի ծառայեցուցանել զնո՞ 'ի մետաղս , 'ի մշակութ երկրի , և 'ի ժողովել ոսկեփոշի
 'ի ձորագետոց , տաղտկացան 'ի կղզւոյ անտի . ևս
 առաւել յօրժամ յայտնեցաւ բազմահարուստ Շն
 մէքսիքոնի . որով բացաւ տուածի նց դաշտ ըարձակ
 'ի լնուլ զաղարաստան ցանկութ ադահուե իւրեանց .
 մոյ սկսան դունգագունդ դիմել անդր . որով և կըլ-
 զին սըյն դոմինիկոսի նուճազեցաւ յոյժ 'ի բնակաց :
 Ապա 'ի 1630 գաղղիացիք ոմանք և անդղիացիք՝
 տարագրեալք 'ի կղզւոյն սըյն քրիստուֆորա , եկին
 սպաստան եղեն 'ի սըն դոմինիկոս . և ընտրեցին ըշ-
 հիւսիսային և զհարաւային ծովեզերսնք . զորս գտին
 անքնակ լքել 'ի սպանիացոց . և կամեցել նց ունել
 տեղի ինչ ապահով , առ 'ի ապաստանիլ անդ 'ի համա-
 ծել զնո՞ սպանիացոց , անցին 'ի դորդուե կղզին որ
 մօտ է առ կղզին սըյն դոմինիկոսի 'ի հիւսիսակողմն
 նը . և վանել անտի զշհ սպանիացիս որք պահէին ըշ-
 կղզին , ամրացան անդ . և սկսան տնկել ծխախոտ . և
 երթալ յնրս վայրենի ցլուց 'ի սըն դոմինիկոս . և
 ասպաստակել 'ի ծովու . որով 'ի սուղ ժմկի ստացան
 վարթամուե և զօրուե բաւական 'ի պաշտպանելնո-
 րատունի հսրկուե իւրեանց : Խակ սպանիացիք գըր-
 գուեալք 'ի նեղութեց և 'ի խառնուց՝ զոր հէնք սց
 հասուցանէին նաւուց և վաճառականուե իւրեանց ,
 խորհեցան խալառ ջնջել զնո՞ . վոյ նաւապետն նա-
 ւահանդիսին սպանիացոց՝ յորժամ մեծ մասն գաղ-
 զեցւոց և անզ վեացւոց էին արտաքոյ դորդուե
 կղզւոյն , էկս մի ելել յասղատակուե 'ի ծովու . և
 էկս մի յորս վայրենի ցլուց . յանկարծակի յարձա-
 կեցաւ 'ի կղզի անդր . և կոտրեաց զամօին որք
 կացին անդ :

Իբրև գարձան նք 'ի կղզի անդր , և աեսին զկոտորած
 արանց իւրեանց , միանգամայն և ծանուցել եթէ
 սպանիացիք սպառազինէին դունդ մի հոյ զնո՞ զինսու-
 րաց : առ 'ի միւսանդամ յարձակիլ 'ի վր . խորհե-
 ցան և ինքեւանք առնել պատրաստուե առ իւրեանց
 հսրկաց փրկուե : Ընտրեցին 'ի դլուխ զանգփացի ոմն
 վիլլիս անուն . և առաջնորդուք նը մտին անդրէն
 'ի ժաւանդուե կղզւոյն . և 'ի 1638 լաւ ևս ամրա-
 ցուցին զանձինս . բայց յետոյ տեսել գաղղիացոց՝
 զի վիլլիս առաւելք զարժանն նպաստէր համազ-
 գեաց իւրոց , և զինքեանա իբրև ոտրուկա ուներ ,
 ինդրեցին 'ի փոյինսայ կուսակալէ գաղղիացոյ փոքր

անդրիցեան կղզեաց օգնութի . և նա առաքեց նշ 49
ջօրականս գաղղիացիս . օրոց եկեղ և միացել ը
այլոց յիսնից 'ի ծովեղերս սիյն գոմինիկոսի , անցին
'ի գորդուէ կղզին . և միարան ը նմ' որք էին 'ի կղզի
անդր , պատուիրեցին անդղիացւոց նոյն ժամայն 'ի
բաց մեկնիլ անտի . ը այսպիտի յանկարծահատ պատ-
գամ չըտուցել անդղիացւոց , և աեսել զի չեին բա-
ւական զդէմ ունիլ նշ , ելին վզվզկի անտի . և ոչ
ես գարձան անդր երբէք . բայց սպանիացիք չետուն
թոյլ գաղղիացւոց խաղաղութք ժառանգել զկղզին .
զի երիցս հալածեցին զնս անտի . նոյնու և նք
երիցո գարձան անդրէն 'ի ժառանգութի . իսկ 'ի
1659 հաստատեցաւ արուեն գաղղիացւոց 'ի վր գոր-
դուէ կղզւոյն . և զինի սակառուց անցին և 'ի սըն
գոմինիկոս , և առ փոքր փոքր տիրեցին երևելի
մասին նր յարևելեան կողմն :

իսկ թագաւորուինշ կամեցել ծաղկեցուցանել զայս
նոր կալունած , կացոյց կուսակալ գորդուայ և սընին
գոմինիկոսի զցոկերոն ազգաւ գաղղիացի , զոյրն խոռ
հասկան բարեթարոյ և իմաստուն կառավար . որոց
կացել ը բաշմ ամս 'ի մէջ ամերիկեան գաղղիացւոց ,
և քաջ ծանուցել զբարս և զյօժարուինշ , այնպիսի
խմաստութ վարեաց զիշխանուեն իւր , մինչեւ զսիրաս
ամցն յինքն յանկուցանել . և 'ի տուղ ժմկի բաղմա-
ցուցանել 1500 բնակիչս 'ի սըն գոմինիկոս . ուր 'ի
1665 թիւ գաղղիացւոց հազիւ հատանէր ց 400 :
Չետ այնորիկ կարգ և քղբական կառավարութի
երկրին լաւ ևս բարեկարդել , և բնակչաց նր օր ը
օրէ ևս ք զես բազմացել , 'ի 1764 թիւ բնակչաց
նր՝ յի գաղղիացւոց , և 'ի խտոն ամսունուէ ծնելոց ,
և սեամորթ գերեաց 'եհաս ց 230000 . որք և հիմնեցին
զնկն քղբս , աւանս , և ամրոցս անդ 'ի սըն գոմինի-
կոս : իսկ արևմտեան մեծագոյն մասն կղզւոյն եկաց
մնաց 'ի ձեռս սպանիացւոց մինչեւ ցայսօր . բայց
բնակիչք նր օր ը օրէ նուշազեցան . մինչեւ 'ի 1717
հազիւ գտան 'ի նմ 18400 բնակիչք սպանիացիք
սեաւք 'և 'ի խտոն ամսունուէ ծնեալք . որք ը մեծի
մասին գատարկ և անդործ կեանս վարեն . կերա-
կուր նշ են արմատք , և ինքնաբեր պտուղք երկրի .
և բնակարանքն հիւղք աղբատակերտք . իսկ գլխա-
ւոր վաճառք են մորթք և այլ ինչ իրք սակաւագինք :
Յայսմ վայրի նախ զդլիսաւոր տեղիս սպանիացւոց
ստորագրեցուք , և ասկա զդաղղիացւոցն , զոր ունին
'ի սըն գոմինիկոս :

ՊԱՀԱԿԱՐ ԹԵՂԵՔ ԱՊԱՆԻԹԱԳՄԱԳ :

ԱԲ դամինիս : Գլխաւոր քղք համօրէն կալուածոց
սպանիացւոց՝ ի սբն գոմինիկոս . արքենկուանիստ.
որ ունի ը իւրե վեց ենդսոււնս . և աթոռ հանրական
կուսակալ իշխանի սպանիական ամերիկոյ . և գըլ-
խաւոր արքայական ատենի , և գատաւորաց . շնել-
'ի բարթուղիմեայ քոլոմպոսէ յեղօրէ գերահւզակն
քրիստափորի քոլոմպոսի . 'ի հարաւային կողմն կըղզ-
ւոյն , առ դրամբ հայնայ՝ կմ եղիսաբեթ գետոյն ,
յըարձակ դաշտավայրի մօտ 'ի ծովն : Քղքն է գե-
ղեցիկ մեծաշէն . ձևներ քառակուսի . փողոցքն ուղիղ .
առնկք նր ը մեծի մասին քարաշէնք . շնեալք ը
սովորուե սպանիացւոց . ունի 'ի միջի հրապարակ
ըարձակ և գեղեցիկ . եօթն մենաստանս արանց .
և երկու կանանց . եկեղեցիս մեծաշէնս և գեղե-
ցիկս . յորո երեւելի է արքենկուական մայր եկեղեցին .
դպրոց վա լատին լեզունի . և անկելանոց մեծ , որոյ
տարեկան մօւտք է իրը 78 քամակ զուշի . փողերանոց ,
այն է՝ տարապիսանայ . նւհնդիստ մեծ և առահով ,
և քաջ սպաշտապաննել ամրակուռ ամրոցովք , և 'ի
ծայր մտից իւրոց՝ բաց յերկուց ամրոցաց՝ ունի և
բոլորաձև աշտարակ բարձր . ուստի 'ի ծովակողմն
ամրուր է յոյժ . իսկ 'ի ցամաքակողմն չունի այլ ինչ
ամրուի , բայց միայն լոկ սպարիսպ առանց խրամոց :
Այս քղք յառաջագոյն ծազկել էր յոյժ . և բար-
դաւաճ բնակչք , և վաճառականութ և հարստութ .
այլ առել զնա տրագեայ տապեաին , և կալել ը
ամիս մի , հրձիգ արար զմի մասն նր . ինայեալ
միւսոյ մասին սակս 60000 փեցաից , զոր ետուննմ
սպանիացիք . ապա այնուհետեւ օր ը օրէ անշ քացաւ .
բնակիչք նր սակաւացան . և վաճառականութն նուն-
զեցաւ յոյժ . մենդ զկնի հաստատելոյ սպանիացւոց
զվաճառականութ իւրեանց 'ի նաւահանգդիստն հա-
ւանայ , 'ի քուպայ կղղին :

Հետոն ժի : Քղք ծովեղերեսյ , և վաճառատեղի 'ի
հիւսիսակողմն կղղւոյն . ուր յաճասիեն նաւք անդ-
զիացւոց՝ որք գնեն և վաճառեն արգելել վաճառս ,
փախուցել 'ի մաքսից :

ԱԲ յակոբ ասուեդայ : Ե քղք ենդսանիստ . որոյ ենդսն
է ընդ արքենկուական սբ գոմինիկոսի առ մանչէնիլէ
գետով , յըարձակ դաշտավայրի 'ի հիւսիսային ծու-
վելու .

վեղերո . ուր ունի նւհգիստ , անունինել նւհգիստ
վլադայ՝ այլ մուտնր դժուարին է , սակա բազմուն
ժայռից՝ որք գտանին առ նովաւ :

Վէիս . կմ Վէիս արքայական : Քղք փոքրիկ՝ կմ աւան
անշուք յարևելեան կողմն նախընթաց քղքի՝ ի մեծա
տարած դաշտավայրի . որոյ երկայնունն է իրը 240
մզոն . իսկ լայնունն 30 . և է արգաւանդ ուսարար
տարօտ ուսոգեալ՝ ի բազմապատիկ գետակաց . այլ
սու հեղզութե բնակչացն մեծ մասն նր կայ մնայ
անգործ . զոր թէ մշակէին ոսկ արժան էր , անբաւ
դանձս կուտեին :

Քօդուի : Աւան փոքր յարևելեան կողմն վէկոյ ՚ի
հարաւոյ համանուն գետոյ . որ մտանէ ՚ի պարոյրն
սամանայ :

Պայա , և Փլադայ : Են երկու աւանք յարևելեան
կողմն վէրմէյօ վտակին . որ գնայ խառնի ՚ի գետն
եղիսաբեթի , առ որով կառուցել կայ սբ գոմինի
կոս քղք :

Պայականատ . Սէյզօ . իւլիս : Են աւանք ՚ի նելքին
կողմանս կղզւոյն ը արևելս :

Աղբսատ : Աւան յարևմտեան կողմն սրբն գոմինի
կոսի , իրը 68 մզոնաւ հեռի ՚ի նմէ :

Սամանատ : Յնացոյցս ինչ գծագրեալ կայ իրը կա
տարել կղզի անջատ ՚ի կղզւոյն սրբն գոմինիկոսի .
աւանայն աշխարհագիրք միաբան հաստատեն , թէ է
ցամաք կղզի կցել ը կղզւոյն սրբն գոմինիկոսի յա
րևմտից ՚ի ձեռն ցած և տղմուտ լեզուի հօղոյ . ը
այսմ գծագրել կայ յաշխարհացոյցն տէ լիլեայ : Եր
կայնուն նր է իրը 48 մզոն . իսկ լայնունն 15 . եր
կիրն է լեռնային , այլ արգաւանդ : Յնագոյն գաղ
թական ինչ գաղզիացւոց սրբն գոմինիկոսի բնակե
ցան ՚ի նմ . այլ տեսել , եթէ կարի հեռի են յայլ
բնակուեց և կալունածոց իւրեանց , զոր ունեին ՚ի
սրբն գոմինիկոս , ուստի և անպատճապար ՚ի թշնամնց ,
ինքնակամ ՚ի բաց մեկնեցան անտի . և այժմ է ՚ի
ձեւս սպանիացւոց . այլ անբնակ ՚ի մարդկանէ :

**Այս ցամսգակղզի ը կղզւոյն սրբն գոմինիկոսի՝ ձեւա
ցուցանէ սպառոյր մեծ ՚ի մէջ սարին սամանայ . և
սարին ռափոյէլի . զոր ոմանք յաշխարհագրաց վրի
պակաւ նոյնակս սար սամանայ կոյէն . յորում լի են
ժայռք և փոքրիկ կղզեակք . վոյ ՚ի նաւել ը այն , առ
զերծանելոյ ՚ի վտանգէ՝ պարտ է ձգիլ ը արե
մուաս :**

**Այս մասն կղզւոյս սրբն գոմինիկոսի՝ ՚ի սպանիաց
թէ**

որ էանց՝ ի ձեռս գաղղիացւոց՝ ի ժմկս վերջին խոռ
վուեն. քանզի գաղղիացիք 40 հշը զօրօք դիմեցին ՚ի
սպանիա. և զզնշն տեղիս ը տրաւբ իւրեանց դրա-
ւցին. բայց զինի ՚ի 1795 ՚ի յուլի 22 դաշն խա-
ղաղուեն արարել ՚ի պազլէւա, զամ տեղիս գրաւելա
՚ի սպանիա, անդրէն առ սպանիացիս դարձուցին.
և փինկ այնց՝ առին զբոլոր զայն մասն կղզւոյն սըյն
գոմինիկոսի, որ էր ը տրաւբ սպանիացւոց. զոր
մինչեւ ցայս վայր ստորագրեցաք. զնմ քղքս և ըզ-
նէգիստաս. հնդա ամ զինուք ամրութք և պաշարք
պազմի՝ որ կայր յայնժամ ՚ի նո. դր է տեսանել ՚ի
թ համար նոյն գաշնադրուեն. Յետ անցանելոց ՚ի
ձեռս գաղղիացւոց ՚ի 1802 սպատամբեցան սեաւք
որ ՚ի նմ. բղմ կոտորածս առնելով. և տրուին գաղ-
ղիացւոց բղմ նաւս պազմի առաքելով լի զօրօք հա-
զիւ կարաց նուանել զնո.

ԴԱՎԱԿԱՐ ԱԵՂԲԻ ԳԱՂՀԻ ԱՄ-ԱՐ ՚Ի ԱՅՆ ՊՈԽԻՆԻ ՀԱՍ

Գաղղիացիք տիրեն յարևելեան ծովեզերս իրը 540
մզոն տարածուե. բայց ՚ի ցամաքակողմն սեկաւ
կալուածս ունեին առեալ ը առաջին վիճակի. որ
թէպէտ առ. համեմատուե կալուածոց սպանիացւոց՝
գցզն ինչ էր, սակայն ը բազմամարդուեն, և ը առա-
տարեր պատուական արդասեաց նոր, և ը ծագել-
վաճառականուեն՝ առ. ժրախան ոչխատասիրուե-
քնակաց նոր, բազմօք դերազանցէ զնովաւ. զի բաց
յայլոց յարմատեաց և ՚ի պազոց, և յայլոց հասարակ
տրդասեաց, ունի շաքար առատ. լեզակ. գագառվ.
խահվէ. բամբակ. և մորթս ընտօնի և վայրենի
անասնոց. յորոց տմի ամի բղմ յոյժ տանեին ՚ի գաղ-
ղիա, նախ ք զծադիլ խռովուե իւրեանց. ոնդ ահա
՚ի 1767, 347 նաւք գաղղիացւոց բարձին աստի:

Ըստար անմաքուր, լիդրէ 72718781.

Ըստար մաքուր 51562013.

Լեզակ 1769562.

Գագառվ 150000.

Խահվէ 12197977.

Բամբակ 2965920.

Մորթ, բեռն. յթ թայ 8470.

Օզի, փոքր տակառ 4108.

Աւելի շաքարի, տակառ 21104.

Խակ յետ այնոր թռէտկանի յայտնի է, թէ այս ամ
ժը

բերք առաւելել են . մւնդ խահվէն , որ եռապատիկ առաւելաւ քյայնժամ :

Երեւելի է և վաճառականութին՝ զոր առնեն ոք ըսպանիացւոց բնակչոց կղզւոյն սրբյն գոմինիկոսի . որոց մատակարարեն զամմակաս հանգերձից . և 'ի նցէ փոխարէն առնուն երիվարս , արջաւս , այլեւ ապուխտս եզին , և խոզի . և մորթս . և բաց յայն ցանէ իբր 1550 քսակ զոշի , զոր թէքրութին սոլանիոյ ամի ամի առաքէր անդ 'ի թոշակ արքունի պաշտօնատարաց , եկեղեցականաց , և զօրաց եվելոց 'ի սքն գոմինիկոս . վոյայս կղզի չերեւէր ինչ շահաբեր թագաւորուն սպանիոյ առ հեղգուն բնակչոց նր . իսկ ը հկոկն՝ գաղղիացւոց է շահաւոր յոյժ . թէպէտ ողպ առացաք , առ համեմատութ կալունածոց տպանիացւոց՝ այս կալունած փոքր է . զոր բաժանել են յերիս մասունս . դոյ յարեւմուտս , 'ի հարաւ , և 'ի հիւսիս . յորս ունին 9 քղքս , 28 աւանս , և գեօղարկման . որոց գլխաւոլք են հետագայքդ :

Կաւահանգիստ իշխանի : Գլխաւոր քղք , և աթոռ գերագոյն և հանրական ատենի կղզւոյն , կառուցել առ ափին ծովու յարեւմուեան մասին նորա , երկայն իբր 1200 ձողաչափ . և լայն իբրեւ 500 . բաժանեալ 'ի 29 փողոցս : Դիլք նր քաջայարմար է վոնաւարկունք . այլ ամենեին անյարմար յամրացուցանել զնա ըդէմ թշնամեաց . առ որ հնար է յարձակիլ յամ կողմանց . և ևս զի չունի ջուր բարի , զոր 'ի հեռուստ բռնագտախն բերել :

Լեսիան : Քղք յարեւմուեան մասին իբր 1 միջն հեռի 'ի ծովէ , յանձուկ այլ յարգաւանդ գաշտի . անքոյթ 'ի յարձակմանէ նաւուց թշնամեաց . ունի տունս իբր 317 . և 15 փողոցս լայնու և բարեկարգս . բայց չունի պարիսպս , և ոչ ամրոցս :

Փատր իսամէ : Եր սա 'ի սկզբանն գլխաւոր քղք գաղղիացւոց 'ի կղզին սրբյն գոմինիկոսի . և աթոռ գերագոյն ատենի նր . բարեշէն բաղմամարդ և բաղմավաճառ . 'ի պտնուս մեծ և պատուական նուռահան գոտի նր . ուր նառքն ապահով են յամ հողմոց . այլ յետոյ յապականիլ օդոյ նր 'ի պատառմանէ ապարէդ գետոյն . յորմէ գործեցան ճահիճք ժահահոաք , յորս այժմ ծաւալի գետն , մեծ մասն բնակչոց նր 'ի բաց մեկնեցաւ անտի , մւնդ զկնի փոխագրելոյ դւռկն ապենին 'ի լէոկանս , վոյ այժմ ոչ այլ ինչ է . բայց եթէ աւան , կմ գետը անշուք և անհշան : Այս հարիս : Քղք նոյնպէս յարեւմուեան մասին 'ի ծագպա :

պարուրին շրջապատելոյ 'ի քարաժայր բլրոց · յորոց հասանեն քարինս 'ի պէտս շինուածոց : Դերք քղքին է երկայն , այլ նեղ . ունի առւնս իբր 154 բովանդակ քարաշէնս . յառաջագոյն ունէր շուրջանակի և հողաբլուր պատնէշ , այլ այժմ ոչ ես . վաճառականուն նր ծաղկեալ է , մնդ զինի աւերելոյ

նախայիշատակել փոքր կոավէ քղքին :

Մագրենու . այն է՝ Տէրուակի : Է փոքրիկ կալուտծ գաղլիացւոց յարեմանեան մասին կղզւոյն . ուր հազիւ գտանին 50 եւրոպացիք , որք կարօղ են զէն սունուլ . սակայն նսախն անդ յանհոդս 'ի թշնամեաց . զի ունին զնիւն գեանափոր տեղիս . յորս 'իյարձակիլ 'ի վր նց ծովային հինից՝ փախուցել թաքչին :

Մէծանոնէ . կմ Երեմա : Է աւան 'ի վր բլրոյ . գեղցիկ բաղմամարդ և բաղմովաճառ . վոր զի հենք զաղղիացւոց որք ասպատակեն առ նեամալքայ կըլ զեաւ , սատ բերեն զամ աւար իւրեանց :

Մէծ իսավէ . Դրուդրադար . Աշտակայ . Միւեպալէ . Դատին . ևն : Են նշանաւոր աւանք յարեմանեան մասին կղզւոյն սրյն դոմինիկոսի :

Կանավէ : Է կղզի 'ի հիւսիսոյ արևմտից լէոկանայ լեռնային և անբեր , և ձեացուցանէ զբերան ըարձակ պարուրին :

Լագիւլ . կմ Լագիւլէլ : Քղք փոքր . և մի 'ի հնագոյն բնակել տեղեաց գաղլիացւոց 'ի կողմանս յայսոսիկ 'կառուցել 'ի հարաւային կողմն կղզւոյն . ունի տունս իբր 50 և եթ . և պարոյր և նւհնդիստ պատուական . ուր 'ի ժմկո պաղմի գաղլիացւոց ը անդղիացւոց՝ գնան մասանեն բղմ նաւք հոլանտացւոց , եկելք 'իքուրասառն կղզւոյն . և բերել անտի պարէնս կերակրոյ :

Սէ լուդումիս . կմ Սոն լուիմի : Քղք փոքր կմ ամրոց 'ի հարաւային մասին կղզւոյն . շինել 'ի սկիզբն անցել գարու 'ի ծագ պարուրին յանբեր վայրի : Ճուրն 'ի պէտս ըմիկելոյ գայ 'ի քղք անդր 'ի հեռուստ ը ջրմուղ պատուական . զոր հրէայք ոմանք անդէն բնակելք ետուն շինել . և պահեն իւրեանց ծախիւք 'ի պէտս հարկց օգտի :

Քաշիւլն . զոր այլք Քաշէն կոչեն : Քղք նոյնող 'ի հարաւային մասին կղզւոյն . կառուցել 'ի ծագ նաւակայանին յաղտաղտին և ծախմախուտ վայրի , շրջապատել 'ի նեխել և ժահահոտ լջից , որք առականեն զօդն . յոյր սակս վաղու ևս արդեօք 'ի բացւքեալ կայր քղքս 'ի բնակչաց իւրոց , եթէ ցունէր

շուրջանակի գաշտ ըարձակ . որոյ երկայնութին է իբր 18 մզոն . իսկ լայնութին 12 . ոռոգել ը ամ տեղիս , և արդաւանդահող քաջայարմար 'ի մշակութի շաբարաբեր եղեգան : Վոյ բղմք 'ի վաճառատկանաց ոչինչ հայեցել 'ի յոռութ օգոյն , գնացել բնակեցան 'ի քզբի անդ սակս շահասիրութեն . ուստի և ունի տոռնս աւելի ք 280 . և ամրոց պատուական . իսկ նաւահանդիստ նր թէպէտյառի յառի է և վտանդաւոր , սակայն ոչ կարի ինչ հեռի 'ի նմէ գտանի պարոյր զատութեան և նաւահանդիստ ըարձակ և ազահով 'ի հողմոց . բաւական բազմաց պազմական նաւուց . յայն սակս և սա է մի 'ի նշանաւոր վաճառատեղեաց գաղղիացւոց 'ի կողմանս յայսոսիկ :

Աշան բւրու: Ե աւան , և մի 'ի գլխաւոր վաճառատեղեաց զկնի քավիլլոնի հարաւային ծովեզերեայց կղզւոյն սըյն դոմինիկոսի , բայց նաւահանդիստ նր փոքր է . և անբաւական մեծամեծ նաւուց . սակայն 'ի շրջակայ վիճակի նր լեղակ բղմ դործեն :

Կամ իւշու: Ե կղզի ոչ այնչոտփ ինչ մեծ , և ոչ նշանաւոր յարեւելեան կողմն ապաքու ծոյրին : 'ի հիւսիսակողմն նր գատանին և այլ փոքր կղզիք աննշանք :

Սար Գառնիայու: կմ լոկ Սու : Ե քղք գեղեցիկ բազմամարդ . և բազմամինու կասուցել 'ի ծագ ըարձակ և արդաւանդ գաշտի . որոյ երկայնութին է իբրեւ 60 մզոն . իսկ լայնութին 12 . 'ի հիւսիսային մասին կղզւոյն սըյն դոմինիկոսի : Ունի առան 810 . և փողոց 29 . որք բաժանեն զբղբն 'ի 226 կղզեակու . և թէպտ նմ փողոցք ուղիղ են յոյժ , այլ նեղ և տըզմուտ . զի ոչ են բարսյատակ . և ջուրք որք յերկուց կողմանց իջանեն , չունելով համարձակ անցո . 'ի փողոց անդ հաւաքին և լճանան : Ունի և քանի մի հրապարակս . յորս երեւելի են հրապարակն կոծցեալ տիրուհոյն , և քլուկնեայ . և երկու երեւելի անկելանոցս վս հիւանդաց և աղքատաց գաղղիացւոց . 'ի բղմ թմկս սկսել են շինել անդ եկեղեցի մեծ , այլ շեևս է կատարեալ :

Նաւահանդիստ նր մեծ է և յաջողակ : պատսպարել յամ հողմոց . մուտ և ելք նր գիւրին և համառօտ . զի յելտնել դոյզն ինչ հողմով , վաղեղի 'ի խորս ծովու գտանիննաւքն . նոյնպս օդ նր բարի և առողջարար : **Առաջին սկըզբ.** նաւորութ քղքիս եղել 'ի կոպին անուն կալվինական . որ նախ շինեաց անդ տուն . յետ այնորիկ սկըզան և այլք շինել բնակութիս . որով 'ի սուղ թմկի շինեցաւ անդ քղք փոքրիկ . զոր 'ի 1695 շինի 25 տաց

մաց հիմնարկութեն նր՝ անդ զետքիք և սպանիացիք հրձիք արարեալ խսպառ յումիւն գարձուցին. այլ ապա վերստին շինեցաւ. յորժոմբնակիցք նր խսչի, և նր քրիստափորի, երկուց փոքրիկ կղզեաց գաղղիացւոց 'ի փոքր անդիլեան կղզիս, աստ փողադրեցան :

Պայակա : Եր քզք փոքր 'ի ցամաքակողմն. այլ յետոյ բնակիցք նր փոխադրեցան առաւել մօտ 'ի ծովն. ուր և շինեցաւ նոր քզք որ կոչք Անրու Տէլֆինոյ. որ է քզք փոքր ու այնցափի ինչ հեռի նի ծովէ. ունի առւնս իրը 70 և եթ. և նաւահանդիստ ըարձակ. որոյ մոււն է երկայն իրը 1500 ձոզ. և լայն 100. վահառականուի այսր քզքի չէ այնցափի ինչ ծաղկել. սող բերեր արդաւանդուի երկրի նր, և դիւրու և յարմարուի նաւահանդստին :

Ան նիւղոյ, կմ Ալիք-ըրտու ոբյն նիւղոյուի : Աւան կառուցել 'ի թերակղզի, որ թէնդտ փոքր է և անշուք, այլ թղթրութին գաղղիացւոց գուն գործեաց մամ հնարիւք ծաղկեցուցանել զլձռկնուի սր. յոյն սակս բղմաքաստիացիք, և գերմանացիք աստ փոխադրեցան, այլ չզի հնար. զի մեծ մասն նց մեռաւ անդ 'ի սուզ ժմկի :

Խոշոշ նուսանուգիստ : Եւ աւան փոքր. և նաւահանդիստ աննշան 'ի հիւսիսային մասին կղզւոյն սըյն դոմինիկոսի :

Ան շորովհոյ. Մորիս. կմ Կառականդիստ հորիոդայ. Լինդ. Ալու. Փուր անէ. Մօրն ուսն. Պաս ունէ. Եսգէն. ևն : Են աւանք և բնակութիք գաղղիացւոց 'ի հիւսիսային մասին կղզւոյն սըյն դոմինիկոսի :

Դարդաւէ : Կղզի փոքր հանդէպ խաղաղ նաւահանդըստին, և սըյն լուղովիկոսի մօտ 'ի ծովեզերս սըյն դոմինիկոսի. օգ նր բարի է, և երկիրն արդաւանդբերէ ծխախոս, և այլ աղջի աղջի բերս առատ, զոր մշակեն անդ գաղղիացիք : Այս կղզի եղի առաջին կայսրն գաղղիացւոց 'ի կողմանս յայսոսիկ - սող 'ի վեր անդր նշանակեցաք. և աստի անցին 'ի կղզին սըյն դոմինիկոսի. բղմանդամ առաւ 'ի սպանիացւոց, այլ միշտ դրձլ 'ի բաց լքաւ. ուստի և եկաց մնաց 'ի ձեռս գաղղիացւոց մինչև ցայսօր :

Այսչափ ինչ վզ գլխաւոր տեղեաց գաղղիացւոց 'ի կղզին սըյն դոմինիկոսի. արդ գարձուուք անդրէն 'ի ստորագրել և զայլ կղզիս սպանիացւոց :

Վաստակավագանքա . Աշխարհականք . և Երրորդութիւն :

Վաստակավագանքա կղզին գտաւ . ի քոլոմազոսէ 'ի 1498.
և 'ի սկզբանն կոչեցաւ կոչի նարդարի . կամ
Մարդարաբէր . սակա պատուականն մարդարատի , որ
դատանէր 'ի շրջակայ ծովեղերս նը . այլ քոլոմազոս
ոչ հիմնեաց անդ բնակուի սպանիացւոց . առաջ յետ
ամաց , յո 'ի 1509 , յորդորեալ սպանիացւոց 'ի
որատուականն մարդարատաց սորին կղզւոյ , գնացին
անդր . առեալ և ինքեանս զոմանս 'ի վայրենի ամեր
ընկացւոց 'ի լուքայեան կղզեաց , զորս տեսին ան
յարմարս՝ գործել 'ի մետավա , այլ քաջավարժու մը
տանել 'ի խորս ծովու . և կացեալ անդ սպանիաց
ւոց , մինչեւ սպառեցին զմարդարիտն 'ի շրջակայ ծո
վեղերեաց կղզւոյն , կուտել գանձս բղմն , փոխար
քեցան 'ի մարդարիտա կղզին . ուր գտին նոյնապէս
մարդարիտ առատ և պատուական . բայց փութով
սպառեցաւ և անդ , ոոկ 'ի քուպակվա : 'ի նոյն ժմկա
անցին և 'ի կղզին երրորդութե : Ուստի այս երկու
կղզեք՝ յո մարդարիտա , և կղզին երրորդութե եղին 'ի
ձեռս սպանիացւոց . թէպէտ թագաւորութիւն սպա
նիոյ սակաւ , կմ ոչինչ օգուա ըսւնի 'ի նցնէ , սա
կայն պահէր զնոտ մինչեւ ցայժմ . իսկ 'ի 1802 զօրութ
գաշնադրութեն՝ որ եղեւ 'ի լիւնէվիլլ և 'ի տմիէնս ,
վիզզին երրորդութե ետ անգղիացւոց : Բնակիցք նց
դրեթէ բովանդակ են սերել 'ի խառն ամուսնութէ .
յ յառնէ սպանիացւոյ և 'ի կնոշէ ամերիկացւոյ .
որք ձկնորսութ և պտղովք երկրին գարմանեն ըզ
կեանս . սնուցանեն և ընտանի անասունս , այլ առ
հորկ վտիտ են , և միս նց անհամ . զորս գտղա վա
ճառեն գաղղիացւոց բնակչաց մերձակայ կղզեաց .
և փոխարէն առնուն 'ի նցնէ ասուեղէն կերպասս ,
սեաւ սնդուս , յո պիւրիւնձիւկ , կտաւս , մետաքս
եայ սոնապանս , սպիտակ գլխարկս եւրոպիոյ , յո
շափզայ , և այլ զանազան իրս 'ի պէտս հանդերձից .
Ընտանի անասունք վայրենացելք բաղմացել են յոյժ
յերկասին կղզիս ևս . և լցել զանտաւս նց . զորս
հրացանիք որսան , և զմիս նց ապիստետլ վաճառեն .
Բնակիցք այս երկուց կղզեաց հազիւ հասանեն 'ի
2000 . որք 'ի ժմկա պատերազմի պարտապան են տալ
արս 200 :

Յօդ ը : Կղղիք գաղղիացւոց :

Սկիզբն բնակուե գաղղիացւոց յանդիլլեան արշի-
պեղագոսն եղե 'ի ծովային հինից նց . որք զա-
ռաջինն գնացեալ որջացան 'ի կողմանս յայնոսիկ լոկ
սակս յարմարական դրից տեղւոյն առ 'ի ասպատա-
կել 'ի ծովեղերս սղանիացւոց . և աւար հարկանել
զբաղմագանձ նաւո նց . առա առ փոքր փոքր ըս-
կսան մշակել ղերկիր , և 'ի զանազան կղզիս շինել
ինքեանց հաստատուն բնակուիս . յորս յետոյ յարե-
ցան և այլք բղիք 'ի գաղթականաց գաղղիացւոց որ
'ի հիւսիսային կողմանս տմերիկոյ : Մոքա ը երկար
ժմկս կեցին աւանց օրինաց . և առանց հաստա-
տուն և կանոնաւոր կառավարուե . այլ յետոյ թա-
գաւորուենն գաղփոյ զմօսաւ ածեալ զօդուտն՝ զոր
ունէր քաղել 'ի նոր կալուածոց անտի , ետ նց օ-
րէնս , և սահմանագրուիս քղքականս . և կացոյց 'ի
վր նց զանազան դատաւորս և կուսակալս . և 'ի վր
ամին գշանրական կուսակալն մարդինիքա կղզւոյն .
և նովին եղանակաւ կառավարէ մինչև ցայժմ զամ
կղզիս , զորս ունի յանդիլլեան արշիպեղագոսն . որք
են Մարտինիքա . Կխաբաւուբա . Մարիկաւանդ . Մբ բար-
դուղիմաս . Սեսիփերապա . Մբ խաւ . և մասմա-
ինչ կղզեաց Մբյն մարտինոսի . և Մբյն դամնինիսի . յա-
ռաջագոյն և Մբ լուն . զոր 'ի 1779 առին 'ի նցնէ
անգղիացիք . բոյց փխկ նր առին և գաղղիացիք 'ի
նմին ամի յանդղիացւոց զկուանադա , և զտոմինիկա :

Մարտինիքա :

Գլուաւոր կղզի գաղղիացւոց 'ի մեջ փոքր անդիլ-
լեան կղզեաց , անկեալ ը 15 աստիճան հիւսու-
լայնուե : Երկայնութին նր է իբր 58 մզսն . իսկ բո-
լոր ըրջապատան 135 . 'ի բաց թողեալ զժրուանեգանս
և զսարս 'որք 'ի բղմ տեղիս 6 այլեւ 9 մզոնաւ նր
կայնեալ ձգին 'ի ծովիս : Երկիր նր ը մեծի մասին
լեւանային է . և 'ի տեղիս տեղիս սփռել կան բլուրք
ձագարաձեք . և 'ի մեջ նց երեք բարձրաբերձ լե-
րինք ապառաժուտք . յորոց 'ի միում 'որ բարձր է
ք զայլս , երեխն հետք պատառման 'ի ստորերկրեայ
հրոյ 'որ և է անտառալից և հնաղ միգապատ . ուս-

տի և ոդ նը գէջ և յոռի . և հողն ամենելին անթեր ,
ուր այլ երկու լերինք ը և ամ տեղիս քաջ մշակեալ
են . յերից լերանց ասաի մւնդ յառաջնոյն՝ բղիսեն
գանազան աղբիւրք , որք ուռոգանեն զգաշտա , և ըզ
հովիտս , և արգասաւորս գործեն զնոսա : Իսկ
դլիսաւոր բերք նը են շաբար , խահվէ , գագաով ,
քամբակ , ծիսախոտ , պանանէ , մանեօք , փադադէ ,
փայտ . ունի և ընատանի անաստնա . դի երիվար ,
արջառ , ոչխար , ջորի , և էշ :

Առաջին հիմնադիր գաղղիացւոց յայս կղզի՝ եղեւ տէ
նամնպուք անուն ոմն գաղղիացի կուսակալ կղզւոյն
արյն քրիստափորի . որոյ անցեալ անդր 'ի կղզւոյ
անտի 100 արամբք , զտեղի էառ 'ի հարաւային և
յարեմտեան ծովեզերս նը . իսկ քարայիալք բնիկ
բնակիցք նը , խոյս ետուն 'ի միւս կողմն կղզւոյն . և
կացին մնացին առ ժմկ մի խաղաղութք ը գաղղիաց
ւոց : **ԱՆՃ իբրև տեսսին զի օր ըստօրէ բաղմանսյին**
նք , միաբանեցան ը վայրենի սպանց ընտիկաց այլոց
մերձակայ կղզեաց . դիմեցին 'ի վը գաղղիացւոց ,
հանել զնն 'ի կղզւոյ իւրեանց . այլ սպարտել 'ի գաղ
ղիացւոց , խոյս ետուն անդրէն 'ի կայյանս իւրեանց .
և բանագատեցան խնդրել զհաշտութ , զկնի սակա
ւոց վերստին նորոգեցին պազմ . ոչ կարելով տա
նիլ զանազան արգելմանց և կապանաց , զորս գաղ
ղիացիք եդին 'ի վը նց . այլ յայս նոճագ իսպառ
խորասկեցան . և որք ապրեցան՝ ելին 'ի կղզւոյ ան
տի , ոչ ևս գառնալով անդր . որ եղեւ 'ի 1658 : Յետ
մեկնելոյ նոցա , գաղղիացիք օր ըստօրէ բաղմացան 'ի
կղզի անդր . և սկսան մշակել 'ի նիմ բամբակ , լեզակ ,
գադաով , և բոքով . որ է բերք ինչ սեփական սցնը
կղզւոյ , և ծիսախոտ , աղա և խահվէ , զոր 'ի սուրդ
ժմկի բաղմացւցին յոյժ , զի սցսօր առատագոյն և
առաւել շահաւետ բերք նը . է խահվէն : Եւ այսակա
ը ամս 78 այս կղզի այնչափ բարգաւաճել ճոխացաւ
բնակչօք արգասեօք և հարստութ , զի 'ի 1736 թիւ
բնակչաց նը եհաս ց84000 . յորմէ 72000 էին ծնելք
'ի խտոն ամսւանուէ . և սեաւք աղաուք , և գերիք .
իսկ 12000 գաղղիացիք : Եւ բերք նց հանեալք ար
տաքս 'հասին առաւել քան ութն միլիոն զուշք , ուր
ամի ամի հասանէին 200 նաւք գաղղիացւոց . 14. 15
առաքելք 'ի գաղղիոյ . 30 'ի քանստայէ . և 10. 12
'ի մարգարիտա կղզւոյն . թող զնաւս անդրիացւոց ,
և հոլանտացւոց , որք գաղտագողի հասանէին անդր .
այլ զմանաւոր նաւարկուն կղզւոյն առ հիւսի
սային

սային բնակիչոց գաղղիացւոց . և 'ի գաւառուս սպանիացւոց . և յայլ կղղիս յոր գրաւել կային 130 նաւակք բաւականք 'ի բառնալ 20 կմ 60 տակառս , ու ուղնորդեալք 600 նաւավարաց եւրոպացւոց , և 1500 գերեաց որք քաջավարժք էին 'ի նաւարկութիւն . Բայց այս բարդաւաճ վաճառականութիւն մարդինի քայլի 'ոչ մնաց ը երկար . քզի 'ի 1740 սկսաւ նույտ զիւ . իսկ 'ի 1762 յառնուլ անգղիացւոց զայս կղղի . և 'ի խնուլ զամ ձնապհու առաջին յաջողութեց նր . գրեթե իսպառ շինաւ : Եւ թէպէտ 'ի գարձուցանել անդրէն զիւզին , գուն գործեցին գաղղիացիք վերսախն ծաղկեցուցանել զվաճառականութիւն նր . բայց ոչ երբեք հասուցին , և ոչ իսկ հասուցեն յառաջին բարդաւաճութիւն իւր . թէպէտ բնակիչք նր թունի թէ այժմ առաւել են՝ ք յայնժամ . զի 'ի 1770 թիւ բնակչաց նր հասանէր ց85260 . որք մինչև ցայժմ երեխ թէ և ևս յաւելան . և բաժանին 'ի 28 ժղովուապետութիւն , կմ' բնակեալ տեղիս , որոց գլուաւորքն են հետապայքդ :

ԱՀՆԵՐ ՊՐԻՎԱՆԻ : Եւ գլխաւոր քզք համօրէն կղզւոյն . և աթոռ հանրակսն կուսակալի գաղղիական անդիլեան կղզեաց . կառուցել 'ի հարաւային ծովեղերս կղզւոյն 'ի բերան ըտրձակ պարուրի ուր ունի նւհնդիստ մեծ . որ յուջագոյն պատուական էր յոյժ և յաջողակ , այլ այժմ ոչ նոյնոպս . քզի կամեցեալ դաղղիացւոց իսպաննել զմուտ անգղիացւոց 'ի նաւահանգիստ անդր , բղմգուգս , այն է՝ թէքնէ նաւուց ընկլուզին անդ . զորս դժուարին է հանել . և բղմծախուց պէտք են 'ի պեղել զաւազն կուռեալ զնորքք : Հին ամրոցք այսր քզքի՝ անկանոն են և անզօր . զոր չէ իսկ հնար ամրացուցանել 'ի պատճաւս անյարմար գրից քզքին . որ է շրջապատեալ 'ի չորից լերանց . յորոց մարթ է թշնամւոյն հարկանել զքզքն . բայց 'ի վերջին ժմկս 'ի միում'ի բարձրագոյն լերանց շինեցին բերդ ամուր ոչ միայն 'ի պաշտպանուի քզքին , այլև բոլոր կղզւոյն . ուստի մարթ է ասել , թէ մարդինիքա այժմ է ը բաւականին ամրացուցեալ :

ԱՀՆԵՐ ԱՐՅԱ : Աւան և ամրոց բազմամարդ և բարեշէն , կառուցեալ յարեմուեան ծովեղերս կղզւոյն 'ի բերան գետոյն՝ որ յուջ Ռոբսէլար կոչերիոկ այժմ գետ ամրոցի սրբին պետրոսի . և թէուտ անոլարիսպ է , բայց 'ի ծովեղերս իւր ունի զնշն մարտկոցս , և բերդ 'ի սկաշտպանուի :

ԵՐԵՐԵՐԻ: Աւան երևելի 'ի հիւսիսային ծովեզերս կղզւոյն առ ծոցով ծովու . ուր ունի նւէնդիստ պատ օնական . և առ նովաւ բերդ ամուր 'ի պաշտպանութիւն նը :

ՏԻՎՈՒՄ: ԱՀԵՐԻ բառէ՛ր . ԱՀԵՐԻ սալէ գեղոյն . Դարս . շուրջ . ԼՀԵՆԴԻՆ . Քարողէ՛ր . Փէլք . Մէծ անսէ . Մատիու . ՍԷ ճարիս . ևն : Են աւանք և ժողովրդակետութիւնիք մարդինելքոյ կղզւոյն :

ԿՀԱՊԱԼՈՒՄԻԱ . ԿՐ ԿՀԱՊԵԼՈՒՄԻԱ :

ը ամէ հանէ 1246860 դահեկան : Խոկ գլխաւոր վաճառք նր են բերք երկրի նր , և մենդ նախայի շատակել տերեն , և բալասանն մանկվայոյ , և մորթ եղանց և ցլուց . բայց գին մորթոց 'ի վերջին Շմկս բարձրացաւ յոյժ . զի օրթօրէ նուազեցան եղնքն ոչ այնչափ յորսորդաց , ք թէ 'ի բազմուէ վայրենի շանց , որք չարաչար կոտորեն զնն . վոյ կուսակալն բարակվայոյ կամեցել դարմանել այսմ վնասու . զի մի սպառեսցի այս բազմաշահ վաճառ երկրին , խոստացաւ տալ վարձս առ իւրաքանչիւր դլուխ վայրենի շանց , զոր սպանցեն . սակայն ոչինչ շահեցաւ . զի ոչ ոք 'ի սպանիացւոց յօժարի զհետ պնդիլ նց :

Դ . Աշուտ , պատմուի , և գիւտ Բարեկայայ :

Սկիզբն գիւտոյ բարակվայոյ եղեւ 'ի գետոյն բլագայ . ուր 'ի 1515 եմուտ տիազ սոլիս մեծանուն նաւապետ քատիլիացի , և յիւր անուն կոչեաց զգետն . այն անուն պահեցաւ մինչև ցամն 1526 ։ յորում սեբաստիանոս քալոդա վէնէտկեցի 'ի ծառայուէ անգղիացւոց անցեալ 'ի ծառայութի սպանիացւոց , եմուտ յայն գետ հանդերձ նւհնդիսին հ նաւուց . զորս ունէր ածել 'ի մոլուզեան կզզիս ը նեզուցն մակելլանայ . և խաղաց ը գետն մինչև ցտեղիս՝ ուր ուրակվայ և բարանա խառնին 'ի նմ . անդ ժողովել նր ոսկի և արծաթ բղմ 'ի գետեղերեցայ բնակչաց անտի ամերիկացւոց , կրչեաց զգետն գետ բըսդայ կմ արծաթոյ . որ պահի մինչև ցայսօր :

Ծնդ այն Շմկս տեսել քաղորդայի անդ զղօրապետ մի փորթուքալացի՝ որ եկել էր 'ի զննել զերկիրն , ուր յառաջնմէ խոկ սկսեալ էին փորթուքալացիք բնակեալք 'ի պրատիլիա՝ երթևեկս առնել գուն գործելով մատանել 'ի բէրու , կարեոր վարկաւ կալ մնալ անդր առ 'ի ապահովացուցանել զատացումն երկրին վոյ սպանիոյ . վոյ զմի 'ի նաւուց իւրոց առաքեաց 'ի սպանիա , ինդրել օգնութի . միանդամայն և ծանուցանել ե կարոլոսի զպանոն՝ յոյր սակս հաստատեաց զմիտս անդ զտեղի առնուլ , և չդնալ 'ի մալուզեան կզզիս՝ ուր առաքեալն էր 'ի նոյն կարուսէ . տղա և ինքն թողել զնւհնդէսն իւր մերք 'ի իառնումն բարակվայ գետոյն , էանց 'ի վեր իբր Յօ փարսախաւ առ բերան գէրչէրօ փոքրիկ վտակին որ խառնի 'ի բարակվայ գետն . և անդ շնեաց

ամրոց անուշանել Սբ Հռիփի . այլ իրրե ետես եթէ յամէ օգնութին որում ակնուներ , դարձաւ անձամբ ՚ի սպանիա հանդերձ նւհնդիսի իւրով , թողեալ 120 զօրականս 'ի պաշտպանութի ամրոցի սբ հոգւոյն . բայց ամրոցն այն փութով քանդեցաւ . և մասն ինչ զօրացն մեռու 'ի պտճառս տռ.փական սիրոյ՝ որով մի ոմն 'ի քաղեքէից տեղւոյն՝ հարաւ ՚ի կինն միոյ ՚ի պլիսաւոր զօրապետաց սպանիացւոց . իոկ մնացելքն գիմեցին ՚ի սահմանս պրասիլեոյ , բայց և անտի

վզդպկի հալածեցան ՚ի փորթուքալաց :

Յետ այնորիկ ոչ ևս դիմեցին սպանիացիք ՚ի բարակվայ մինչև ՚ի 1535 . յորում ամի առաքեցաւ անդր պետրոս մէնտողեան հզօր նւհնդիսի . որ և կացուցաւ յարբայէն սպանիոյ հանրական կուտակալ բոլոր երկրին զոր գտցէ , և կալցի մինչև ՚ի ծովին խաղաղական . սա հիմնեաց զբարեօդ քղքն առ բլադայ գետով . այլ յետ բազմապատիկ ձախողակ պատահարաց և թշունառուեց . զոր կրեաց ՚ի շահատակուե իւրում՝ մեռաւ անդէն . սակայն հատունածք ինչ յարանց նր 'ի 1538 իրրե 300 փարսախաւ հեռի 'ի մոխց բլադայ գետոյն՝ հիմնեցին զղղղքն կոչեցել վերափոխումն , 'ի պատիւ վերափոխման անտմօրն . որ այժմ է գլխաւոր տեղի առանձնականն բարակվայ գւարին . ուր յետոյ խոյս ետուն . և բնակիչք բարեօդ քղքին , սահպետալք ՚ի սովէ և ՚ի հարըստահարուեց շրջակայ բնակչաց . այլ յետոյ տեսել սպանիացւոց . զի կարեւոր էր ինքեանց ունել նաւահանդիստ առ մուտս բլադայ գետոյն յապահովուին նաւուց իւրեանց , դարձան և վերստին շինեցին զբարեօդ քղքն . որ ապա եղե գլխաւոր աթոռ սպանիացւոց յ՛նի գետոյն բլադայ , կմբարակվայայ : Յետ այնորիկ առ սակաւ սակաւ ընդարձակեցին յոյժ զորուի իւրեանց 'ի կողմանս յայնոսիկ , զբշչմ ազգս 'ի վայրենի բնակչաց անտի ը իշխանութե իւրեանց նունաձելով ոչ այնչափ զօրութ զինուց , ք թէ ժրաշան քարոզութ յնեանց . որք 'ի 1580 մտին 'ի բարակվայ : Այլ յայրմ վայրի ՚ի դէպ համարիմ համառօտել զնոչակաւոր պատմութե որ վակ կարծեց եալ թիւորութե յնեանց 'ի բարակվայ , մէնդ թէ յուրակվայ :

Յետ մոանելոյ սպանիացւոց յ՛ն գետոյն բլադայ , տեսել միաբանուե յնեանց զի թիւք սպանիոյ ցանկային մէծանկս վլայրենի գալզանաբարոյ աղինս այնը մի ածել 'ի քնական հաւասար , ը նմին և 'ի հնազան

զանդութիւն իւրեանց՝ զորս գժունարին էր սրով նունացն որպէս բղմանգամ զփորձ առին, ինքնայօժար յառաջամատոց եղեւ և խոստացաւ արքայի՝ եթէ հրաման տացէ՝ առաքել անդր արս առաքելական անախանձայոյզս հոգւոց, ժրաջանիս և աշխատասէրտ ՚իքարոզել նց զաւետարանն քսի: Բայց գիտելով յնեանց եթէ անուն սպանիացւոց տաելի էր յոյժ ՚իքարոզակ ամերիկայ, վնյ և մեծագոյն խոչ գառնալոյ նց ՚ի հաւատ սպանիացւոց, առաջի արարին արքայի, թէ ըունայն է ձեռնամուխ լինել յոյժ պիսի գործ մեծ և գժունարին եթէ թոյլ տացի զօրաց և վճռկանաց սպանիացւոց մունել ՚ի մէջ այնց ազանց՝ նաև զկնի գառնալոյ նց ՚իքն, և վարել ՚ի նոն զիւրեանց սովորական զրկանս զյափշտակունս և զբոնակալունս, որք դարշեցուցին զանուն նպանիոյ ՚ի բովանդակ ամերիկայ. վնյ ինդրեցին և ընկալան յարքայէ հրովարտակ՝ յորում խոտին պառնիրէր զի մի ոք ՚ի սպանիացւոց իջևեցէ բնաւ կոխել ՚ի գուռու, յորս յնեանք քարոզութ ընտելացուսցեն և գարձուսցեն ՚ի քն զվայրենի բնակիչս նց և կամեցել խցանել զնոմ ձնողն, զի մի մոլուիք և զեզմունք եւրոպացւոց ծաւալեսցին ՚ի մէջ նորահաւատ քրիստոնէից, ազատս արար զնոն արքայն յօական կուսակալաց սպանիացւոց. զի մի ՚ի պատճառս կովրուն հաղորդուն ինչ լիցի ՚ի մէջ. և սահմաննեաց տալ յարքունուստ ամի ամի 60000 դահեկան ՚ի պէտս քարոզքաց, և շնորւն քղքաց, և մշակուն երկրի, և յայլ պէտս այնց ժղվթոց որք դառնան ՚իքն, և մատանեն ՚ի հնազանդութիւն սպանիոյ. բայց ըստվին պայմանաւ, զի յետ այնորիկ նմաց այր յութուտան ամենից մինչև ՚ի վաթուն ամս՝ ամը ըստ ամէտ տացեն գլխահարկս արքայի մէն մի դահեկան առ այր. ըստվին պատունիրեաց քարոզքացն ուսուցանել նց զեզու սպանիական, այլ այս վերջն պատունէր ոչ կատարեցաւ, թերեւս զի մի ոյսուբացցի ձնողն հաղորդակցելոյ նց ըստվանիացւոց: Զայս հրովարտակ ընկալել յնեանց ելին ՚ի ձնողն. և յետ բղմացւաց և տառսալնց հասին յօն գետոյն բացայ. մտին ՚ի մէջ վայրենի գենքարոյ ազանց սփուելոց ը լերինս և յանտառս. ոք բղմ խոչք և գժունարունիք անհնարինք, և վտանգք մեծամեծք ը առաջ ելին նց, այլ ամի յազմեցին. և երկայն մառւթ առ սակաւ սակաւ զբղմ ցեղս ընտելացուցին, և դարձուցին ՚ի հւաս: Վնյ զկնի ամաց ինչ

ժրածանքարողիչըն անխսոնց աշխանակրութ հիմնեցին ըարձակ կը ուռ առ երիւք գլխաւոր գետովք . յը բարանայ, բարակվայայ, և ուրակվայայ . որոյ տարածութն 'ի հիւսիսոյ ը հարաւ էր իբր 600 մղոն . իսկ յարևմտից յարևելս 500 : Եւ անդ հաւաքեալ 'ի լերանց և 'ի դաշտաց զննզն ցեղս վայրենի ազանց, շննեցին աւանս բզմս և եկեղեցիս . կարգեցին գրուրաց . ետուն նց օրէնս քղբականս և եկեղեցականս . և ուսուցին նց զերկրագործութելի , և զայը զամարհեստս կարեւորս մարդկային կենաց . և այսպէս զվայրագ զդատարկասուն զանընաել և զանած ժղվթ , յանասնական կենաց անափ ածել 'ի մարդկային կեանս , արարին քղբականս հնազանդս աշխատառէրս և ճշմարիտ ածապաշտս . ինքեանք կառավարէին զնոն իբրև հարք զորդիս , և իբրև վդիպոք զոտակերտելս իւրեանց . բայց միայն վո դատատանի արեան ամի ամի կացուցանէին Շական դատաւորս . սակայն և նք կտիսել կային զհարց յնեանց Յամ աւանս կմ 'ի ժղվթապետութիս էին երկու հարք՝ մինն ժղվթապետ և հոգաբարձու , իսկ միւսն իբր աթուակալ նր և իսկան ժղվթգեան . և նք խնամէին զամ պէտս ժղվթգեան իւրեանց . քանզի ժղվթն ժրածան աշխատէր 'ի մշակութի երկրի , և յայլ զնոն արհեստս . և զարդիւնս վաստակոց իւրեանց ժողովէին 'ի հսրկց շահմարանս , որք էին ըսպահպանութեն նց . և անտի նք մատակարարէին ամցն զկարեւոր պէտս կերպակրոց հանդերձից և տանց նոյնպէս և բոլոր վհականութի երկրին էր 'ի ձեռա յնեանց . նք առնէին առեւարութիս ը եւրոպացւոց և ը այլոց սահմանակից կը ուց : իսկ գլխաւոր վահառք երկրին էին բամբակ , ճարպ , մօրթ եղին , մեղր , և առաւել ք զամ մաթէ , կմ խոտ բարակվայայ . յորոց շահէին յոյժ . 'ի շահէից անտի նախ հանէին զդլահարկս ժղվթգեան վո արքային սպանիոյ , որ ամի ամի հասանէր ց 300 հազար դահեկան . իսկ զմնացեալն ծախէին առ 'ի ծաղկեցուցանել զքարոզութ աւետարանին , և յայլ ուկատ ինքեանց և ժղվթգեան , 'ի գնել վո նց վաճառս եւրոպիոյ . դր զնզն գործիս արհեստից , սուսերս , հրազէնս և վառոգս , և այլ գործիս սպազմի . քղի մարզէին զնոն և 'ի զինունորուի . զի իւրաքանչւր ժղվթգապետութ ուրակվայայ , բարանայ , և առանձնականն բարակվայայ ունէր երևելի գունդս զօրաց հեծելոց և հետեակաց բաժանելոց 'ի զնզն խումբս . յորս էին 60 հըլլ

հերզինունորք . որք յամ կիւրակէի ը երեկս յետ կու տարման ածային պաշտամանց առնելին կրթութիս պազմի . ուստի և 'ի զինունորական մարզս չեն ինչ ը հատ 'ի քաջավարժ զօրաց եւրոպիոյ . որք և բզմ անգամ քաջութ զինեցան ըդէմ փորթուքալաց , որք ստէպ արշաւուէին 'ի սահմանս նց :

Ասդ՝ մինչդեռ այս ամ բզմ խաղաղութ և յաջողութ յնջադէմն լինէր , և դւռն առաքելու յնեանց օրըօրէ բարդտւաձեալ ծաղկէր բնակչօք և հարստութ , յարեաւ մըրիկ իմն՝ որ զամ վեր 'ի վայր շրջեաց . քդի փորթուքալք ունեին քդք մի և նաւահանգիստ կոչեցել բնակունի կմ ժաղափ Սբ խորհրդու առ բլագայ գետով 'ի հիւսիսակազմն նր . յորմէ բզմ ինսոս լինէր արքունի մտից սպանիոյ . զի անքաւ վաճառք մտանէին և ելանէին ը բլագայ գետն ըդէմ արգելմանց սպանիուցոց . վայ խիստ թունէր արքային սպանիոյ տեսանել զփորթուքալացիս հիմնեալ անդր . և ը հկուկն արքայն փորթուքալաց չեր այնցտի ինչ համել ը այն կտլուած իւրեանց , զի շունէր ինչ օգուտ անտի , այլ յաւէտ ինսոս բզմ յոյժ՝ սակս անքաւ ծախուց , զոր առնէր 'ի պահ սպանուի այնր տեղւոյ . և դիտելով նր զկամս արքային սպանիոյ , խորհեցաւ 'ի ձեւն այնր տեղւոյ 'ի ձեւս բերել զայլ կալուած արգաւանդ և բազմարդիւն , փոխանակելով զայն ը մոսսին ինչ արգաւանգահող դւռին հիմնելոյ 'ի յնեանց . յոր 'ի վողուց հետէ աջս արձակել էին փորթուքալք : Հաւանեցաւ ը այն արքայն սպանիոյ , ուստի և ձգեցաւ գիծ բաժանիչ սահմանաց երկուց թդրուեց . որով եօմն ցեղք , կմ աւանք կուարանեցոց ժողովրդոց յնեանց , յթ Սբ պորթիս . Սբ նիւղայս . Սբ աւուիս . Սբ լաւրենիս . Սբ միտոյէլ . Սբ յովհաննէս . և Սբ հրեշտակ , անկաննէին 'ի բաժնին փորթուքալաց : Բայց սք յայտնապէս հկուկ կացին բաժանման . ոչ ը ուրութ փորթուքալաց մնալ կամցան . զորս անհաշտ ատելութ ատէին սակս բզմ ինասուց , զոր յնջադոյն հասուցել էին նց փորթուքալք պրասիլիոյ , և ոչ տեղափոխ լինել 'ի սահմանս սպանիաց ուց . թողել զարգաւանդ և զքաջ մշակել երկիր , և զիմնել և զհաստատել բնակուն իւրեանց . թէսպէտ արքային սպանիոյ խոստացել էր նց հատուցանել զամ ինասս , զոր ունէին կրել 'ի տեղափոխիլ իւրեանց . ուստի և զէն առին 'ի պաշտպանութ ազաառել իւրեանց :

Զայս ապստամբութիւնը բնծիք ընծայեն յնեանց . բայց կուսակիցք նց ստեն քաջայայտ փորձիւ . մի զի յայս ապստամբութիւն ոչ մտին այլ ցեղք որ յայնկոյս ու բակվայայ , բաց 'ի կուսարանեցւոց , զորս կարօղ էին յնեանք միով ակնարկութ յարուցանել , քզի յամի հաղատակ էին նց . և երկդ՝ զի յորժմ յովսէփ անտոնայիկի հանրական կուսակալ սպահիացի գետոյն բլագայ՝ ունելով իւր նիզակակից զյովակիմ վիանայ զիշխանն վիտեան լերին յաղթեաց կուսարանեցւոց 'ի միում պտղմի , կոտորել 'ի նցէ իբր 2009 . բոլոր ժղվրդն լցաւ ահիւ . զոր տեսեալ անտոնայ կեայ վատահութ մեկնեցաւ անտի , թովեալ անդ զվիանայ 600 զօրօք ևեթ , որոյ 'ի հնազանդութիւնուամել զի 'ի ցեղից անտի , այլ վեցք ինքնակամ անձնատութ եղեն նմ : Աւրդ՝ ասեն , եթէ յնեանք էին գրգռուից այնր առատամբութ , ոչ տրդեօք թողեալ էին միով պտղմաւ վհարիլ իրացն . քզի կարօղ էին նք ոչ միանգամ , այլ բնշմ անգամ ժողովել ստուար գունդս քաջազին զօրաց , ոչ միայն 'ի կուսարանեցւոց , այլև յայլ ամցեղից , զորս 'ի լայնարձակ ոի անդ ունեին ըստ իւրեանց ձեռամբ . որոց թիւն 'ի 1702 հասանէր ց8943 : իսկ 'ի ժմկա այրո պտղմի գրեթէ եռապատիկ առաւել էին . և այնպէս խոպառ վանել զապանիացիս 'ի սահմանաց իւրեանց . բայց նք զայս ոչ արարին , այլ իբր գորովական հարք կամեցել պաշտպաննել ժղվրդեան իւրեանց , գրեցին վզմվելի 'ի սպանիա առ թիւրին , և ծանուցին նմ զիրաւունս ժղվդեան , և զանիարդ գնացս վերակացուաց սպանիացւոց . վայ մինցեռ զօրք սովանիացւոց քանդէին և ապականնէին զդւուն կուսարանեցւոց , ահա եկն եհաս յարբայէ հրաման 'ի վր նց 'ի բաց մեկնիլ անտի . և յովսէփ անտոնայիկի կոչեցաւ 'ի սպանիա . որոյ փինկ կացուցաւ ըհանուր կուսակալ գետոյն բլագայ կմ բարակվայայ՝ կել վազու :

Մինցդեռ այս մրցմունք լինէին յառանձնականն բարակվայ՝ մենդ թէ յուրակվայ , հնչեաց համբաւ յեւրոպիա , թէ յնեանք կամեցել ինքնադլուխ տիրել համօրէն բարակվայայ , կացուցին թիւր զոմն նիւ կողայոս անուն . որ ըստ ունանց էր աշխատաւոր եղբայր նց , և ըստ ույլոց մի 'ի քհնցից անտի . տեսաւ յայնժամ յեւրոպիա և գրամ հատեալ յանուն այնր կարծեցել թիւրի . յորոյ վր գոյր գրումն պատկեր նր հանդերձ լատին մակագրով . ուստի հաւատա-

ցաւ համբաւն 'ի բոլոր Շէ : Սակայն ասեն կուսակիցք յանեանց, թէ յետոյ յայտ յանդիման խայտառակեցաւ ստուեն նր . զի ստուգեցաւ եթէ այն նիւ կողայոս թէք ոչ այլ ոք էր, եթէ ոչ մի ոմն քաղիքէ կմ ստարտպետ կուարանեցւոց ապստամբելոց . որ դոլով այր քաջ և հմուտ 'ի մրցմաւնս պտղմի՝ կացուցաւ զօրավար եօթն այնց ցեղից նշ առաջնորդ 'ի պտղմի . բայց իբրև հարաւ գունդն կուարանեցւոց յառաջնում մարտի անդ, և համօրէն եօթն ցեղք անձնատուր եղեն, մնաց յիւրում առաջին սոսկական վիճակի և յաղքատուեն . զոր 'ի 1768 մարքէզն պուքարէլլի, որ գնաց անդը 'ի տարագրել զյուեանս 'ի բարակվայայ, և տես եօթանասնամեաց զաւամեշ կիսամերկ, և մերձ 'ի դրունս գերեզման նի . իսկ դրամն ասեն է հնարեալ յեւրոպիա կմ սակս շահասիրուեն, ող զի իբր նոր ինչ թանկադին վաճառեսցի, և կմ որ առաւել հաւանական թուն 'ի թշնամեաց անտի յանեանց . որք յամի հնարս ինդրէին 'ի կործանել զնս : Այսչափ ինչ առ այս շատ լիցի . արդ մատիցուք 'ի ստորագրուի Շին որ բաժանի 'ի չորս մեծամեծ դւռս կմ նհնդս, որք են 'յահանգն բարէօդոյ . Բարակայ առանցնակի . Պառփառն . և Քարտ . զորս յառաջիկայդ ստորագրեսցուք հանդերձ գլխաւոր տեղեօք իւրեանց :

Յօդ ա . Կահանդն Բարեօդոյ :

Այս նահանդ երեելի է ք զայլս . և ունի իւր սահման 'ի հիւսիսոյ զբարակվայ առանձնակի . յարելից զբուռս փորթուքալաց պրասիլիոյ, յարեմոից զդուգուման . իսկ 'ի հարաւոյ զանծանօթ երկիրն մակելանեան : Գլխաւոր գետք նր են Բլադարականի . և բարանա . ունի և լիճ ըարձակ կոչեցել Լիճ Խէրայ . որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ ճահիճ ըարձակ պահմուել 'ի զեղմանէ բարանայ գետոյն . և 'ի լճէ անտի ելանեն երկու գետք ք Քորենդենդէն և Քը ընահի . օդ նր քաղցր է բարեխառն և առողջ : Իսկ երկիրն գաշտային առ հնրէ և արգաւանդ . բերեզամ տեսակս պաղսց եւրոպիոյ և ամերիկոյ . ունի և ըարձակ արօտս խոտաւէաս . ուր յանբաւս բազմացել են ընտանի անասունք, զի արջառ և ոչխար . այլւ երիվարք . յորոց կարօղ է իւրաքանչիւր ոք

ըմբռնելքանի և կամեսցի . զի չունին նք սեփական տեարս . նոյնպս և ոլէսպս առակեք վայրենի թռչնոց այնշափյածախել են , զի և դւդնու սպանանեն զնո՞ : Առաւելքազմամարդ և արգասաւոր մասն այսր նհնդի է դւռն առաքելուն յնեանց ու բակվայայ , և բարանսց . կմ երկիրն կուարտնեցոց , որք ունին անդ Յ մեծամեծ աւանս սփռել 'ի հիւսիսային և յարեւելեսն եզերս նհնդին բարեւ .

դոյ : Խսկ գլխաւոր տեղիք նր են հետագայքդ : Բաւըօդ : Ե գլխաւոր քղք համօրէն բարակվայայ եպսանիստ . որոյ եղան է ը արքեպսիւ բլադայ , օր 'ի բէրու . և աթօռ կուահալ իշխանին և գլխաւոր ատենի երկրին կառուցել առ բլադայ դետով 'ի հարաւային կողմն նր ը Յ աստիճ" հար" լայնուե . և Յ աստիճ" երկայնութեն . նիստ քղքին ըարձակ է . վա զի տունք նր բաց 'ի վանոքէից և հնրկց շինուածոց՝ բովանդակ միայարկ են և ցած . ունին շուրջանակի ըարձակ բակս և պարակզաւայլ բնակիչք նր առ համեմատութե ըարձակութե ատես են , զի հազիւ հասանեն ց Յ հըլր , սպանիացիք ամերիկացիք խափչիկքափրիկեցիք և ծնելք 'ի խառն ամուռնութէ միանգմյն առել . աւնի բղմ շինուածս մեծաշէնս . յորս երեւելի են ամրոցն աւք նսաի կուսակալն , ապարանք քղքին կմ տուն խոր հրդոյ , և մայր եկեղեցին , որք են 'ի վլր մեծ հրապարակի քղքին . նոյնպս և մենաստանք բղմ են անդ զնզն կարգաց արանց և կանանց . ուր յաճախ լինին եկեղեցական տօնախմբութիք թափօրք հրավառութիք . յորս նշանաւոր իմն է տօնախմբութին և թափօրն զոր ամի ամի առնեն խափչիկք ափրիկեցիք գերիք սպանիացոց :

Աք ունին 'ի մեջ իւրեանց հոգեսոր եղբայրակցութիմն ը սպաշտապանութե սը ածածնին , և սըյն բենեդիկտոսի փալերմացւոյ . յաւուր տօնի իւրեանց ընթրեն երկու թիգրս , յորոց մին յանդիման առնէ զթդն սպանիոյ , խսկ միւսն զթդւոր փորթուքալայ . ամքն վայելուչ զգեցեալ և զինել դասաւորին յերկուս կարգս . և կազմել թափօր մեծ շրջին ը քղքն . տանելով առաջի խաչս և խաշվարս , և 'ի ձայն զանազան նուագարանաց երգեն զերգս գովուեն այ և աբ ածամօրն , միանգամայն և կաքաւեն և ձեացուցանեն մրցմունս երկոքին դասք ը միմեանս . այս հանդէս ձգի յայգուէ մինչև ցերեկոյ : Վաճառականութին սորին քղքի ոչ ևս է այնպս ծազկել , ողելը

եր յն ջագոյն . քղի իբրև արգելաւ տանիլ աստի ցամակաւ զվաճառս եւրոպիոյ ՚ի բէրու և ՚ի քիլի , կարի նու ազեցաւ առևտրուն նը . զի այժմ ոչ այլ ինչ տանին աստի , բայց միայն բամբակ մեզը և մամեկ կմ իսոտ բարակվայայ . սակայն և այնպս հարուստ է քղքն և երեւելի . չունի նւհնդիստ , կմ ծոց մօտաւոր , այլ իբր Յ փարսախաւ հեռի զտեղի առնուն նաւք . և անդ բարձել զվաճառս իւրեանց ՚ի նաւակս , տանին հարուստ մի ՚ի ներքս ը քուել փոքրիկ գետակ , և անտի ցամաքաւ հասուցանեն ՚ի քաղաքին :

Վէտեան լեռնան : Քաղաք և նւհնանդիստ երեւելի բարեշէն և բազմավաճառ , կառուցել առ բլադա գետավ ՚ի հիւսիսակողմն իբր Յ փարսախաւ հեռի ՚ի բթրանոյ նը ՚ի ցամաք կղզւոջ . յորոյ ՚ի ծայրն դոյ լեասն բարձր՝ որ է ուղեցոյց նաւուց յորմէ և քաղաքն կալաւ զանուն : ՚ի հիւսիսա նը է սկարոյր ընդարձակ , և պաշտպանեալ ՚ի հողմոց . բայց ոչ է այնցափ ինչ խոր . վոյ ՚ի ժմիս տեղատուն մեծամեծ նաւք բեռնաւորք նստին ՚ի ցամաք , սակայն ինչ ոչ վնասին . քղի յատակ նը կակուղ է , և ը շնչելոյ հողմոց ջուր նը բարձրանայ և զիջանէ . բայց հարկ է զգուշանալ ՚ի ժայռից՝ որք գտանին յարեւելեան կողմն պարուրին . ունի գղեակ ՚ի ցամաքակողմն , և զնզն ամիոցս ՚ի ծովակողմն . ուստի և է քաջ ամբացուցեալ յամ կողմանց : Ըրջակայ վիճակ նը է ամեննեին անդործ . վոյ ալիւր և պաքսիմոտ , և այլ սկարենք հարկաւորք վոյ նաւուց՝ գան ՚ի բարեւոդ քղքէ . այլ ընտանի անասունք բղմ են յոյժ . որք ը իրաց ինչ լնուն զպակասուն արմտեաց . և օդ նը բարի է և աւողջարար . ունի և բղմ պարտէց մրգաւետս ՚ի ներքս և արտաւոյք քղքին :

Լատիսն : Քաղաք փոքր յարեւմտեան կողմն բարեւոդ քղքին ՚ի մեջ լուքսան և քոնքէս գետոց :

ՍԵ հաւաք : Քաղաք երեւելի առ բերանով աղի գետոյն յարեւմտեան եղերս բլադա գետոյն :

Քորենտէն : Քաղաք կառուցել ՚ի տեղին ուր բարանա վտակ խառնի ՚ի բլադա . բնակիչք նը են ամերիկացիք . այլ գտանին անդ և քանի մի տունք սոլանիացւոց . որ և է վերջին տեղի բնակուն սոլանիացւոց ՚ի հիւսիսակողմն այսր նահանդին :

ՍԵ յակոբ . և ՍԵ լուլիս : Են երկու փոքրիկ քղքք առ բլադայ գետով յարեւելեան կողմն նը ՚ի հարաւոյ քորբիէնդեսայ :

Քոնդէլսրիտ : Աւան մեծ ամերիկացւոց քրիստոնէից, և գլխաւոր տեղի քարոզութեանց 'ի կողմանս յայսոսիկ . ուր նոտէր նուռապէտ նց , կառուցել առ բարանա գետով 'ի հրւակողմն նը : Սէ իարալս, կմ նալցուապոս : Քաղաք և տմբոց մերձ 'ի սարն կոչեցեալ Սէ մարիամ յարեւելեան կողմն վիտեան լերին, և մէծ սօլիս գետոյն . ունի նաւառ հանդիսա պատուական ողացուպանեալ 'ի փոքրիկ կղզոյ , որ կոչի մալտոնատոս . յորմէ և քաղաքն կալաւ զբնուն :

Յօդ բ. Բարակվայ առանձնակի :

Ես նահանգ ձդի 'ի հիւսիսակողմն ըհանուր բարակվայայ . կմ Շին գետոյն բլագայ . զոր ու մանք շփոթեն ը ուրակվայայ դւռին առաքելութեանց , ուստի և վրիսին յայսմ . վազ զի ոք են այբ և այլ դւռք բաժանելը 'ի միմեանց . զի ուրակվայ այժմ որարփակի 'ի նահանգն բարեօդոյ . իսկ բարակվայ առանձնակի կացուցանէ զմանաւոր նհնդ հիմնել նոյնող 'ի յնեանց : Արդ բարակվայ ըստայսմ առեալ՝ ունի իւր սահման 'ի հարաւոյ՝ զնահանգն բարեօդոյ . 'ի հիւսիսոյ զպրասիլիս . յորմէ բաժանի 'ի ձեւն մոհեդդէյ գետոյն , որ է մի 'ի վտակաց գետոյն բարակվայայ . յարեւելից նոյնող զպրասիլիսի յարեմտից զբաքօ նահանգն վայրենի ամերիկացւոց : Գլխաւոր գետք նը բաց 'ի բարակվայայ են Գրեշեգլար . Մռանգուայ . Ազգարայ . Քուետունի . Քորդէնտէն . Եւետունի , կմ Դուետունի . Դարաւունի . Մռունդէնի , կմ Մռունդէնի : Յայանհնդ մտել յնեանց զբաքմա 'ի բնակչաց նը գարձուցին 'ի քառ . ուր և հիմնեցին ութն աւանս մեծամեծս 'ի մշջ կուագիմնինի լերանց՝ և բարակվայայ քսերէսայ և մազայերեայ գետոց . այլ փորթուքալք ողրատիլիոյ արշաւել 'ի սահմանս նց , վեր 'ի վայր ըրջեցին զնոմ , զբաքմն 'ի նորահաւատ քրիստոնէից անտի կոտորել , ը որս ուպանին և զմի ոմն 'ի քարոզքացն յնեանց . ուստի այժմ սակաւ են անգ հաւատացեալ ամերիկացիք . իսկ 'ի հիւսիսակազմն գտանին ժղվողք վայրենիք կոչեցելք Փայտիլցիտ , որք միշտ հկուկ կացին քարոզուեաւետարանին . վայ և կան մնան մինչև յայսօր 'ի նախ

Նախկին կռատպաշտուել իւրեանց և ՚ի վայրենուել . և . են աղառք և ինքնագլուխք : Իսկ գլխաւոր աեղիք բարակիվայոյ են հետադայքդ :

Վէրաբենան : Գլխաւոր քղք նհգիս մեծ և բազմամորդ . և ողսանիստ և աթոռ գաւառական ատենի շնուեալ 'ի 1538 'ի սպանիացւոց առ բարակիվայ գետուկ յարեելեան կողմն նր յարգաւանդ և յառողջ վայրի . բնակիչք նր սպանիացիք իջելքյաշնուշական տօհմից՝ որք զաւածինն բնակեցան անդ . քղի սինվեքորք նց ոչ մնացին անդ , այլ ցրուեցան յայլ և այլ տեղիս . իսկ մնացելքն են ամերիկացիք , և ծնեալք 'ի խառն ամուսնուել . շրջակայ երկիր նր արդաւանդ է յոյժ , բերէ առատանդ զնոմ աղդս տրմուեաց . օդ նր այնըսափ քաղցր և բարեիսաւն , զի դաշտք նր ը ամն ողջյն գալարագեղ տեսանին :

Վէլլէքա : Քղք փոքր յարեելեան կողմն բարակիվայ գետոյն . հանդէպ բերանոյն ը որ փիլքօմայօ վտակ մասնէ 'ի բարակիվայ 'ի հարաւոյ վերափոխման քղքի . Վէլլա , կմ' Վէլլաստիտ : Քղք փոքր յարեելեան կողմն երկուց նախընթաց քղքաց առ գէվիդվար գետով :

Գառախնադի : Քղք մեծ և բազմամարդ յարեելեան կողմն քսէքովի գետոյն . ուր է այժմ ըհանուր վահառականուել խոտոյն բարակիվայ՝ որ յառաջն լինէր 'ի մարսքային քղք , որ այժմ աւերակ է . մօան առ այս տեղի անտառք խոտոյ , զոր սպանիացիք երվալէս կոչեն . և են բովանդակ ը մրուք սպանիացւոց , բաց 'ի տեղեաց ինչ յորս տիրեն կուարանեցիք . որք ը մեծի մասին բնակին յեղերս բարանայ և ուրակիվայ գետոց :

Խոդի . Քասախ . Խասիք . Էտիւրան . Խոտ . Խոսնէ . Վշինա . Դապադի . և Վշին : Են գեողք , և ժողովրդապետուիք ամերիկացւոց քրիստոնէից : ՍՔ յաշիիմ . ՍՔ սպանիուլատու . և Պէլէն : Են աւանք հիմնելք 'ի յնեանց 'ի գւռին բարակիվայայ :

Յօդ Շ . Դառգուման :

Ունի զիւր անուն յաղքէն՝ որ 'ի նախնումն անգընակէր . ձգեալ ըարձակ յոյժ գրեթէ կրկնապատիկ մեծ ք զբարակիվայ այւանձնակի . որ և ունի

Նի սահման յարեւմտից՝ զքիլի և զբէրու . յարեւելից՝ զնահանդն բարեօդոյ , և զքաքօ . 'ի հիւսիսոյ՝ նոյնող զքաքօ . իսկ 'ի հարաւոյ՝ զերկիրն մակելտնեան : Գլխաւոր գետք նր բաց յաղի և 'ի քաղցր գետոց են Գրէւըր . Գումարչո . Սէտունփա . Փոտորա . Աշենաս . և Աբ Գիւյել . օդ նր բարեխառն է և առողջ , երկիրն արգաւանդ . ըս մասին մշակել , մնոդ 'ի կողմն քիւեայ , և առ քաղցր , և աղի , և սիանքաս գետովք : Բերք նր են բամբակ , մամ , մեղք , մարացորեն , և աղցի աղցի պտուղք , բանջարք և արմատք . ու նի և անսասունս բղմս յոյժ ընտանիս և վայրենիս , կը արջառ , ձի , շուն , այծեամն , առիւծ , ինձ , վիկոնեայ և կուանիքի անուանել չորքուտանիք և պէսպօթունք վայրենիք . 'ի վերջին ժմկս գտաւ անդ և արծաթահանք առատաթեր յաքոնդվիքսայ լերին : Բնակիչք նր 'ի նախնունն էին գաղանաբարոյք , և ամենենին վայրենիք , որք և մերկ շրջէին . յորս առաւել բաղմաթիւ էին մոկովեցիք . յորոց զերևելի մասն ընտելացուցին յսեանք և աշակերտեցին 'ի քո . և այժմ զգենուն հանդերձս , զոր ինքեանք շնեն յասուէ վեկոնեայ , և 'ի բամբակոյ . և բնակին 'ի փոքրիկ գեօղս մնտաւորս յոյժ միմեանց : Ասի թէ յայսմ նհնդի գարձուցին յսեանք 'ի քո 78 ժղվըդս . յորս էին և Քիւիշեցիւ ժղվըդ հզօր և գաղանաբարոյ . զոր զէնք սպանիացւոց ոչ զօրեցին նուաճել : Իսկ գլխաւոր տեղիք դու գումանայ են հետագայք : Աբ յակ . մականուանել Աշքառին : Եր գլխաւոր քղք համօրէն նհնդի գարձուցին . ենուանիստ և աթոռ գաւառականայ : Կառուցեալ առ քաղցր գետով 'ի գաշտի շրջապատելոյ անտառօք , վոյ օդ նր թանձր է և յոռի . շունի շուրջանակի ոչ պարիսպս և ոչ խրամն և ոչ այլ ինչ պաշտպանութի . բնակիչք նր՝ որք են իբր 500 գերգասաանդն ծնելի մասին ծնելք 'ի խառն ամուսնուէ , տկար են և հիւանդագին սակս ջերմուե և յոռուն օդոյն , միանգամայն և 'ի պտճռս անկարգ կենաց . որք մատնելք զանձինս 'ի գատարկուն 'ի հեշտուիս մարմնոյ , շունին այնշափ ինչ փոյթ զվաճառականութէ , որ գիւրին է նց . զի գետ նց 'ի կօպմանս յայսոսիկ լայն է և խոր բաւական և մեծամեծ նաւուց . որ բերէ և ձուկն առատ . բաց 'ի մայր եկեղեցոյն՝ են 'ի սմ և այլ 3 եկեղեցիք . և 2 մենաստանք : Ըրջակայ վեճակ նր արգաւանդ է յոյժ . բերէ յորեան որիզ գարի առատ , և պէսպ պտուղս , մա-

մանաւանդ թուղ ողատռնական և խողով :
 Քորդովն մականաժանել Ասր անգալուսահոյ : 'Ի պղնձուա
 դիւր գաղտավայրի ուր կայ կառուցեալ , որ բերե
 զնմանուն անտալուսիոյ սպանիոյ . և թէնպատ գէճ է
 և լճային՝ այլ արգաւանդ : Ե քղք փոքր , այլ բա-
 րեշէն և ենցսանիստ . բնակիչք նր ըս մեծի մասին
 սպանիացիք են , որք առնեն բիշմ առետրութիւն ը-
 բերուայ . զի է 'ի Ճննպհին՝ որ 'ի բարեօդ քղքէ հա-
 նէ 'ի բերու . վոյ բղմ երթեւեկք լինին ասա վաճա-
 ռակսնաց . աստ էր հոչակաւոր դպրոց քարոզացն
 յնեանց վոյ համօրէն հարաւային ամերիկոյ : Են անդ
 և այլ քանի մի մենաստանիք կրօնաւորաց : Ըսլա-
 կայ վիճակ նր արգաւանդ է յոյժ . բերէ ցորեան և
 այլ արմտիս . ազգի ազգի պառազս . մեզր , մոն-
 բամբակ , և շաքար . ունի և ըարձակ արօտս խո-
 տաւէտս , ուր արածին անհամար մատակ ձիք . որք
 յաճախ են յոյժ յայսմ քղքի . գտանին անդ և ա-
 զահանք :

ՍԵ ալսուիս : Ե քաղաք փոքր առ կուինաս գետով
 մերձ 'ի սահմանս քիլեայ :

ՍԵ քերնանփոս : Քաղաք փոքր առ ձորակաւ որ գը-
 նայ ընկլուզոնի յաւազուտս :

Ռիոյա . և Վէհիսանդա : Են երկու աւանք առ սահ-
 մանօք քիլեայ իբր 60 մղանաւ հեռի 'ի միմեանց :
ՍԵ միաւէլ : Քղք փոքր 'ի հարաւակողմն սալդա քղքի :
Սուլդա : Քղք փոքր՝ այլ բարեշէն և բազմավաճառ-
 առ արաս փոքրիկ գետով , որ մաանէ յազի գետն .
 բնակիչք նր ըս մեծի մասին սպանիացիք են . ունի
 տունս իբր 400 . և չորս մենաստանս . այլ չունի ոչ
 պարփսպս , ոչ խրամս , և ոչ այլ ինչ ամրուի . բայց
 բնակիչք նր զօրաւոր են , և քաջավարժ 'ի պղնձմ .
 վոյ և լիուն զպակասութի քարեղէն պարսպաց քա-
 ջութ իւրեանց . որք և յարաժամ որոզմ մղեն ը շըր-
 ջակայ վայրենի ամերիկացւոց . կարի յաճախսն անդ
 սպանիացիք սակս մեծի արաւուե ցորենոյ , դին-
 ոյ , անասնոց , աղի , մոյ , ճարապոյ , մորթոց , և
 այլոց իրաց . զորս ըս մեծի մասին տանին 'ի պւռա
 բերուայ :

Քսաւդսուի : Քաղաք փոքր առ վտակաւ որ խառնի 'ի
 սիանքաս գետ :

Յօդ Շ. Վաքո :

(այս նէնդ սպանիացիք կոչեն թռագաւորուն գուգում որ և ձգի ը մէջ առանձնականն բարակ վայայ և բէրուոյ . և 'ի մէջ ամազունեաց Ծի և դուգումանայ . և սպարագրէ զլայնարձակ տարածուի երկրի . ուր բնակին զնդն ժղվարդք ազատք վայրենիք և թափառականք . որոց դլխառորդքն են դովացիք . մոքովլեցիք . ապիփոնացիք , և լենկվացիք որք բնակին 'ի ներքին կողմանս նէնդին : Խսկ քիրիկ վացիք , և քիքիդացիք , զորս յնեանք դարձուցին 'ի քս՝ են 'ի հարաւային և 'ի հիւսիսային կողմանս երկրին . որք և հպատակ են սպանիացւոց , և անխափու պահեն զքնական ուղղագաւան հաւասար : Գաւառն քիքիդացւոց շարձակ է յոյժ , զի 'ի 14 աստիճանէ ձգի մինչւ . 'ի 20 հարաւային լայնուեն . ուստի և տիրան խօսելով է արտաքոյ բարակվայայ . բայց գուղվ սահմանակից նր , գասի 'ի կարգս նէնդաց նր : Բնակիցք նր հաւատացելք 'ի քս աւելի են ք զ: 100 հշը . որք ըստ սպատմելոյ ոմանց՝ միջնորդուք յնեանց ինքնակամ անձնատուր եղեն սպանիացւոց : Գլխաւոր տեղիք նց կմաւանք՝ են Յշուն . ՍԵ հաւելեիս . ՍԵ իգնորիս . ՍԵ աննա . ՍԵ ոտայել . ՍԵ դոյել . ՍԵ յուշետ . ՍԵ իտապետ . ՍԵ յարբ . և Սերդ յնը : Խսկ քիրիկվացիք բնակին առ միլքօմայօ գետով . բայց չեն այնափ բազմաթիւ , ոտքիքիտացիք : Գըլիսաւոր տեղի գւուի նց կողի դօչչա . որ է մի միայն քղք 'ի քուքա նէնդի ուր բնակին սպանիացիք : Խսկ այլ նախայիշտակել ժղվարդք վարեն թափառական կեանս . և շրջին հեծել յերիվարս ասպատակելով աստ և անդ զօրէն թաթարաց . և քանդելով և եղծանելով զնամ , զոր ինչ գտանեն :



Ա. Յ. Խ. Բ. Հ. Ժ. Ժ.

ԱՄ ԱԶՈՒՆԻՔ:

Ոչեցաւ այսող հա 'ի ֆրանչիսկոսէ օրէլլանայ .
որ 'ի 1539 մտել 'ի մարակնոն դլիսաւոր գետ
այսր հի , և նաւելը պյնյարեմտից յարեելո ,
պատահեցաւ կանանց ոմանց սպառազինելոց .
և մի ոմն 'իքազիքէից երկրին ոպատմեաց նմ սպար-
ծանօք զքաջուեինց . յոյր սակս և նա յանուն նախնի
միտսանեաց կմ ամազունեաց պտղմական կանանց
կոչեաց զնու Աշակունիս . և զգետն՝ Գիշ ամազունեաց .
յորմէ և հն որ ձգի աստի և անտի գետոյն՝ կա-
լաւ զանուն : Ար և շարձակ է յոյժ և ունի իւր
սահման 'ի հարաւոյ՝ զբւոս մոյեցւոց և քիթիդաց-
ւոց . յարեմաից՝ զգվիդոն և զբէրու . 'ի հիւսիսոյ՝
զցամաքն , որ կոչի և երկիր հաստատուն . իսկյարեե-
լոց զպրասիլիս և զծովի հիւսիսային . և ոպարու-
նակէ զամմիջերկրական գլւոս հարաւային ամերի-
կոյ , որք ձգին առ մարակնոն գետով , մինչեւ 'ի ծովի
հիւսիսային . ը նոսին և զկույանա , որ է ը զնուն
որունք :

Անհամար գետը մեծամեծք և մանունք ոռոգանեն
զոյս հ . որք գրեթէ ամբին են վասկք որք խառնին
'ի հարաւոյն կմ 'ի գետն Աշակունեաց՝ մեծ շատաջուր
հոչակաւոր և մի միայն ը ամհ . ելանէ 'ի բերուաց
'ի լաւրիքսքոյ ընէն , և հոսելը հիւսիս 'ի մէջ եր-
կուց բազիաց քորակիեան լերանց մինչեւ 'ի սը յով-
հաննէս քղք , դառնայ ը արեելո . և յինքն ընկա-
լեալ զանհմբ վտակս 'ի հիւսիսոյ և 'ի հարաւոյ ը-
արձակի յոյժ . և ընթացել իւր 5400 մղոնս յարե-
մտից յարեելո , գնայ անկանի 'ի ծովի ադլանդեան
առ հիւսիսային սարին ը բերանն՝ որոյ լայնուն
է իւր 252 մղոն . և քաղցրացուցանէ զջուր ծովուն
իւր 240 մղոնաւ : Ընթացք նր արագ է և դահավիժ .
ձորագետնր լայն՝ յլարձակագոյն տեղիս իւր 9 մղոն .
իսկ յայլ տեղիս՝ սովորաբար 4 և փոքր մի աւելի .
բայց յորժամ' յորդէն ջուրք նր , զեղեալ արտաքս
ծովանայ և հեղեղէ զըրծակայ վայրս հարուսա մի
տարածուք . և ծածկեալ զկզզիս փոփոխէ զդիրս
իւր . մերթ ը այս և մերթ ը այն ձորոփոր ըն-

թացել, զոր ինքնին գործէ՝ ի կակուղ գեանի անդ, ուր չկը բնաւ քար. յերկուս և եթ տեղիս ամփոփի և հաւաքի ՚ի մի անձուկ ձօրոփոր, դր ՚ի փոնկօն ման զարիքայ, և ՚ի փաւփսիս: ջուր նր քաղցր է, այլ միշտ պղտոր. և բարձեալ բերէ փայտս և ծառս. որք դժունարացուցանեն զնաւարկուն փոքրիկ նաւակաց. բերէ զնդն տեսակս ձկանց առատ, և երկակենցազ կենդանիս. դր կոկորդիլոս, և կով ծովացին, զոր ստորե ունիմք ստորագրել:

Խսկ այլ գլխաւոր գետք այսր Շի Են Աւա-գետն մեծ. որ հաղորդի ը օրէնոք գետոյն մեծի որ է գլխաւոր գետ ցամաքին. և ը մարակնոնայ կմ գետոյն ամազունեաց. զայսպիսի երիս մեծամեծ գետս հաղորդեալ ը միմեանս չկը տեսանել այլուր ՚ի համօրէն Շի, որք դիւրացուցանեն յոյժ զներքին վաճառականուն այսց ըարձակ Շաց:

Բարձադինկ. զոր ոմանք կոչեն և բարայպ: Ելանէ ՚ի պրասիլիոյ, և հոսել՝ ՚ի հարաւոյ ը հիւսիս, խառնի ՚ի գետն ամազունեաց:

Մատէրա, կմ Մատիւիս: Ելանէ ՚ի գաւառէն մոյեց լոց, և գնայ մտանէ ՚ի նոյն գետ ամազունեաց. ոնդ և բառըն օր ելանէ ՚ի բերուայ. նոյնակս և ՚ի հիւսիոյ բղմ վտակք խառնին ՚ի նմ, ոնդ Նադոն, Իզ, իւբուկ, ևն:

Այս Շ անկանին ը այրեցած գօտեաւ. ուստի և օդ նր չերմէ՝ խոնաւ և վնասակար կենաց՝ մննդ ՚ի մերձակայ վայրս գետոյն ամազունեաց. ուր յաճախուել են յոյժ ազգի ազգի ճանճք և զեռունք վնասակար յանհնարին վիշտ բնակչաց: Խսկ երկիրն ը մեծի մասին հարթածաւալ գաշտային և արգաւանդ յոյժ. բերէ պէսապէս բերս ինքնին առանց մարդկային խնամոց, ոնդ գագառլ, վանիլիս, կինամոն, մեխսկ, սալսափարիլլա՝ որ է արմատ ինչ, անանաս, փստուղ կմ նուշ. ունի և ազգի ազգի խէժս և բալասանս ազնիւս, և փայտս գունագոյնս և պատուականս. ոնդ ոպնիսազ, մայր փայտ, սանտալ փայտ, սիրուանէնել փայտ, կարմիր փայտ ևն. և զնդն խոտաս բժշկականս, և ՚ի պէտս ներկոյ: Այս ամ բերք վայրենի են և ինքնին բուսանին. բայց ունի և այլ բերս, զոր բերէ ՚ի ձեռն մարդկային մշակուե. դր խահվէ, շաքար, որիշ, մսրացորեն, սեխ, լեմոն, կիտրոն, նարինջ, և այլ պատուզս և արմափիս. ոյլս մեզը և մոմ:

Գրանին անդ և զնդն վայրենի կենդանիք. դր ինձք կա.

կատաղիք և մեծամեծք ոչինչ ըհատ յընձուց ափրել
կոյ . որք դժնդակ մարտ մղեն ը կոկորդիլոսաց .
կապիկեք բաղմատեսակք՝ ոմանք մեծամեծք 'ի շափ
մեծամեծ շանց , այլք Փաքրիկք իբրև դիւլուրդն . են
և միջականք թաւամորթք և երկայնաձետք . գլուխ
նց փոքր է և քառակուսի . և ականջք սրածայր ը
շանց և կատուաց . որք կարի դժուարու ընտելա-
նան . այս աեսակ կապկաց ը իմիք բերեն զնմանունի
փոքրիկ առիւծուց , զօր յ Տն ամսազունեաց կոչեն
Փինքէս . իսկ 'ի քակէննա կոչեն Պ.ամարինս . յաճախ
են անդ օձք , և ամազզք թիւնաւոր սողնոց . և ա-
ռաւելք զամ չլիկունք մեծամեծք , որք ծծեն զա-
րիւն ձիոց և ջորեաց և արջառոց , այլև մարդկան
եթէ 'ի քուն գտցեն զնո , մինչև երբեմն վատնգել
և զկեանս . սատամի թէ 'ի աեղիս աելվիս սպառեցին
զանասունս մեծամեծս . զր զարջառս և զերիվարս ,
զօրքարողիչք ոմանք տարել էին անդր և արձակելք
'ի դաշտս առ 'ի բաղմանալ : Են անդ և ամ տեսակք
թունոց ամերիկոյ անհամարք քաղցրաձայնք և գե-
զեցկափետուրք . ը որս և սկսողէս աեսակք թու-
թակաց երփնադեղք . յորս է տեսակ մի բոլորովին
գեղին , ունելով 'ի ծայրս թեոց փոքր մի կանաչ .

այլ պք սակաւ են :

Նշնկս յաճախ են անդ և կոկորդիլոսք մեծամեծք
ոչ միայն առ գետովիս ամազունեաց , այլև առ այլ
գետովք . յորս են ոմանք երկայն 20 տանաչափ , որք
'ի ժմկս յօրդուե ջուրց տեսան երբեմն մտանել 'ի
խրճիթս բնակչաց երկրին : 'Նշնաւոր են 'ի մշշ
երկակենցաղ կենդանեաց այոր Տի և կովք ծո-
վայինք . որք տիրանկս խօսելով չեն ը ամի երկա-
կենցաղ , զի ոչ երբեք բոլորովին ելանեն 'ի ջրոյ .
այլ կացել 'ի ջուր ճարակին յեղերս գետոյն . երկայ-
նուի նց երբեմն Հասանէ 'ի 7 սահաչափ , իսկ լոյ-
նուին 'ի 2. ունին երկու թես մերձ 'ի գլուխն երկայն
իբր 20 մատնաչափ , և երբեմն աւելի . որք են նց
թիք և ոտք որով լողան . իսկ էզք ունին և երկու
ստինս մեծամեծս , որով դիեցուցանեն զկորիւնս
իւրեանց . աչք նց բալորակ են և փոքրիկ յօյժ ա-
մենեին անհամեմատ մեծուե մարմնոյն . նոյնպս և
խորոփիք ականջաց չեն մեծագոյն ք զծակ ասղան .
միս նց և ճարպ նման է մոյ և ճարպոյ որթուց

կովուց մերոց :

Են 'ի գետ անդր ամազունեաց և զանազան տեսակք
կրիայից մեծամեծաց և մանունց այնշափ , զի՞նք և
էթ

Եթ բաւական էին 'ի կերակուր համօրէն քնակցաց
առ նովին գետով . խակ առատալի ձկանց նր այնչափ
է , զի 'ի յորդել ջուրց՝ և 'ի զեղանիլ արտաքս՝ լնու
ձկամբ զնամ լիճն և զջահիճն , ոչ միայն զայնս՝ որք
են առ նովին գետով , այլև որք գտանին 'ի հեռաւոր
տեղիս , ցոր վայր ժամանեն ջուրը նր . և 'ի զիջանիլ
ջուրցն անաշխատ որսան զնո՞ . գտանի անդ և տեսակ
մի մուռինա ձկան , որ ամ իրօք նման է հնրէ մու^ռ
ռինէսի . այլ ունի զմանաւոր իմն յատկուի , զի
թէ պք մերձեսցի 'ի նա ձեռամք կմ դաւազանաւ ,
թմբրեցուցանէ զբազուկ նր , և պտճակ ցաւ սաս
տիկ . Չիք յթի աստ ոսկի , կմ գէթ մինչև ցայժմ
ոչ դաւաւ , և ոչ այլ ինչ մետաղ . ող և ոչ աղդ ինչ
քարի քնաւ ը բռվանդակ երկիրն , ը որ հոսի գեան
ամազունեաց մինչև 'ի ծով:

Չգետն ամազունեաց՝ ող և զնո՞՝ զառաջինն յեւրո
պացոց եգիտ նաւապետ ուն սպանիացի վինչեն
ցիոս եանէզ փինզոն 'ի 1500 . և կոչեաց զնա մա
րակնոն . ապա 'ի 1539 ֆրանչիսկոս օրէլլանայ նաւել
ը քոքա վտակ որ խառնի 'ի նափոն , և 'ի նափոնայ
մտել 'ի մարակնոն , նաւեաց յարեմտից յարեելս ը
ընթացից գետոյն մինչև ցըներան նր ցաւրն հիւսի
սոյ որ է առ սահմանօք կուայանայ ը հաշունի նր մղոնս
իբրև հ420 . և կոչեաց զնա գետ ամազունեաց 'ի
քաջամարափիկ կանանց անտի , որոց պատահեցաւ 'ի
հնող հի . ուղ 'ի վեր անդր նշանակեցաք . այլ ոմանք
կոչեցին զնա գետ օրէլլանայ՝ յանուն նորին ֆրան
չիսկոսի օրէլլանայ . բայց այժմ սովորաբար կոչ
գետ ամազունեաց , կմ մարակնոն . յետ օրէլլանայ
եմուտ յայս գետ պետրս ուրսովայ 'ի 1560 . ապա
'ի 1638 պետրոս գէքսէյնայ փորթուքալացի՝ առա
քեալ յիշխանէ անտի բարայ քղթի որ 'ի սպրասիլիսա
նաւեաց ը այս գետ մինչև 'ի տեղին , ուր նափոն
վտակ խառնի 'ի նմ . ուր մաեալ գնաց յաջ , և ցա
մաքաւ եհաս 'ի գվիդոն . այլ յաջ ք զնա ըրջեցան
ինամով 'ի նոյն գետ քարոզիչք յուեանք յամին 1602 .
1616 . 1635 . 1639 . 1689 . և 1691 . և անխոնչ
աշխատութեամբ ընտելացուցեալ զոմանս 'ի վայ.
րենի և յահասնակենցազ ժողովրդոց երկրին՝ որք
մերկ ըրջէին , և թափուկան կեանս վարէին , որոսր
գութ հայթհայթելով զգարման կենաց իւրենց գար.
ձուցին 'ի քո , և հիմնեցին զմոյնաս կոչեցել գւան ,
որ 'ի փոնկոնէ՝ կմ 'ի նեղուցէն մանզարիքայ՝ ձգել
առրածի առ հիւսիսային եղերը գետոյն ամազո
նեաց

նեաց մինչև ցլորետոն գիքուկնացւոց . իսկ առ հարաւային եղերը մինչև ցեավարի գետ , մղնոս իբրև 834 . յարեմտից յարեւելս . ուր շինեցին զնդն թնակութիւն կիմ աւանս . որոց աւածինն կոչեցաւ սբ իդնատիոս մայնասայ . զոր և կտուտվարէին ըստ օրինակի դւոց հիմնելոց յինքեանց 'ի բարակվայ , 'ի բէրու , և 'ի դուդուման :

Այս Յայժմ ըստ մասին է ըստ րուբեն փորթուքալաց , և ըստ մասին սպանիացւոց : 'ի բերանոյ գետոյն ամազունեաց՝ մինչև 'ի բերան եավարի գետոյն , որ է իբր ըստ 308 տատիճանուա երկայնուեն առ հարաւային եղերը , և մինչև ցլորետոն գիքուկացւոց առ հիւսիսային եղերը , է 'ի ձեռոս փորթուքալաց . իսկ մնացել մասն մինչև 'ի բէրու , է սպանիացւոց . բոյց 'ի նեղքին կողմանս Շին ըստ հիւսիս և ըստ հարաւ՝ գրանին զնիվն ժղվարդք վայրենի ամերիկացւոց ազատք . ուր շւես հասին եւրոպացիք : Իսկ դլխաւոր տեղիք ամազունեաց Շին են հետագայքդ :

Լամազունեաց . որ թարգմանի լիճ : Է աւան փոքր և գրլիաւոր տեղի սպանիացւոց յայտմ Շի առ լճիւ որ է յարեւելեան կողմն կուալլափայ , կմ կուտլակփայ գետոյն . ունի բնակիչ իբրւ հնդր մի , որք գրեթէ առ հնրի ամերիկացիք են . բրիստոնեայք՝ զորսյնեանք դարձուցին 'ի քն . բայց օդ նր չե այնցափ ինչ լաւ . յաջագոյն դլխաւոր տեղի սպանիացւոց , կմ լաւ ևս ամելյնեանց՝ էր աւանն կոչեցել Սբ Քրիստոնիոս պորմէան . ուր նստէրտառաշնորդ քարոզացն յնեանց . այլ յետոյ քանդեցաւ տեղին այն , և փիսկ նր շինեցաւ լտկունա աւանն :

Սբ յակալիմ : Է աւան օմակվացւոց ամերիկացւոց , զորսյնեանք դարձուցին 'ի քն . շինել 'ի նշէ 'ի 1686 առ գետովն ամազունեաց 'ի հրւային կողմն նր . թիւ բնակչաց նր էր իբր 600 . այլ այժմ բազմացել են . որք առ հնրի օմակվացիք են : Սբ որք 'ի սկզբան անդ յամերիկայ միով անուշամբ Ակվացիք կոչեին , բնակէին 'ի նախնումն 'ի կղզիու գետոյն ամազունեաց . այլ այժմ ցրունեալ կան 'ի զնզն տեղիս , ոչ միայն յնին ամազունեաց , զր առ նափսն , քօւրաբայ , փուդումայօ , և սեաւ գետովք , այլև 'ի գաւառն վէնեցուէլայ 'ի ցամաքն ամերիկոյ . և յիւրաքանչիւր տեղեաց յորս բնակին 'առել են զանուն : Բնութ քազզը են , հլու հւարիմ առատտձեռն ուժեղ և քաջ պազմօղ . որք և յարաժամ ողազմէին ըստ շրջակայ վայրենի աղքաց . ունին տարադէպ սովոր

բռուի ինչ, զի՞ ի ծնանիլ տղայոց, նոյն ժամայն ողբեն զգլուխ նը ՚ի մէջ երկուց նուրբ տախտակաց, որով գլուխ նց ձեանայ ՚ի ձև եկամական թագի տափարակ յառաջոյ և յետ կուսէ, որով և զնվնին յայլ ամ ազգաց ամերիկացւոց:

ՄԵ Էֆնագիս: կմ Բեշադի: Եւ աւան բէվացւոց իբր 30 կմ 33 մղոնաւ հեւի ՚ի բերանոյ նափոն վտակին որ մտանէ ՚ի գետն ամազունեաց, որ և է վերջին աեզի յնեանց յամոզունեաց Շի. զայս տեզի հիմ նեցին նք և ըարձակեցին զգւռ նը տաւելք 600 մղոնս, այլ ՚ի 1710 առին փորթուքալք զմեծ մասն նը, բնակիչք նը կոցին բէվացիք, որք և խառնեալ են ՚ի զնզին ցեզից և ժզվդոց, յորոց իւրաքանչիւրն ունի զմասնաւոր լեզու. մեծ մասն նց չե ևս է դրձլ ՚ի քո, այլ կայ մնայ ՚ի նախնի կռապաշտուե. ունին պէսպէս սովորութիս տարագէպս, սիրեն կաքաւել և պմնիլ արք և կանաչք, այլ զարդք նց ծիծաղական են յոյժ և տգեզացուցիչ, զի ծակեն զունչ և զշթունս և ցցեն ՚ի նո պէսպիս ոսկերս. նոյնապ և ՚ի բլթակ ականջաց՝ որք մեծ են մինչև ցվեց կմ եօթն մատնացափ, գործեն ծակ մեծ, և միեն ՚ի նմ փունջս խոտոց և ծաղկանց. հանդերձք նց հազիւ ուատեն զամօթոյս, իսկ ըստ այլ մասանց մարմնոց բոլորովին մերկ շրջնե. սովորական գործ նց է որ սորգութիվայրենի երէոց և ձկան:

ՄԵ Պօլս: Եւ առաջին տեղի փորթուքալաց և քարոզաց փորթուքալացի կարմեղականաց առ ամազունեաց գետով մերձ ՚ի բերան եավարի գետոյն ՚ի դրուին օմակվացւոց իբրև ութն աւուրբք հեռի ՚ի նախայիշատակել սբ իւլնատիոս քազաք:

ՄԵ Պէպը: Աւան փոքր առ գետով ամազունեաց յարևելեան կողմն սըյն պօղոսի:

Քռարի: կմ կռայարի: Աւան փորթուքալաց, և վերջին տեղի եօթն ժզվդոց, զորս կարմեղականք գարձուցին ՚ի քո առ ամազունեաց գետով:

ԱՎԵԼԻԳ: և **ՄԵ Հրէշտակի:** Են երկու աւանք փորթուքալաց առ սեաւ գետով ՚ի հիւսիսակողմն ամազունեաց գետոյն:

Դարսնաս: Ամրոց շինեալ ՚ի փորթուքալաց առ բերանով սեաւ գետոյն, յորմէ կալաւ և զանուն. փորթուքալացիք յահամիւն յոյժ ըստ սեաւ գետն, ուր գնեն բզմ մարդագերիս. փոքր մի ՚ի վայր ք զբերանն, ըստ սեաւ վտակն մտանէ ՚ի գետն ամազունեաց ՚ի հանգիպակայ կողմն է բերան մատերա վտակին.

կին . որ ելանէ 'ի բէրուայ , և անցելը դւռն մոյ եցւոց , մտանէ 'ի գետն ամազունեաց :

Փատոսի : Ամրոց փորթուքալաց 'ի հիւսիսակողմն գետոյն ամազունեաց , ուր ձոր գետոյն անձկանայ ունելով լոյնուի գիրկս իբր 900 . տեղատութիւն մակընթացութիւն ծովու հասանէ մինչև ցայս տեղի , թէպա իբր 600 մերնաւ հեռի է 'ի ծովէ :

Դաբայս , կմ՝ Դօքէյս : Ամրոց փորթուքալաց 'ի հարաւակողմն ամազունեաց գետոյն մերձ 'ի բերան համանուն գետոյ փոքր մի ը արևելս փաւքսիսայ . գտանի տու նովաւ և աւան փոքր շինել 'ի մնացունա ծոց գուբինամպարայ . բնակիչք նր գրեթէ բովանդակ իջանեն 'ի գաբինամպացւոց . որք երկու գարուք յըջ տիրէին պրասիլիոյ . ուր պահի լեզու նց մինչև ցայսօր . գտանի առ սոսա այն տեսակ կանացակոյն քարանց , անունանել քար ամազունեաց : որ յըջագոյն մեծարդի էր յոյժ սակս զօրուե , զոր ընծայէին նմը ըդէմքարանց որք գոյնան 'ի փամփուշտա մարդոյ և ընդդէմ վերնոտուե և կաթունտծոյ , յթ տամիայի . այս տեսակ քարի կարծը է յոյժ . յոր և երկաթի խարտոցք դժուարաւ ներգործեն . սակայն վայրէինի ամերիկացիք ձեւցուցանէին անտի պէսպս անասունս . գուցէ ունէին նք արունեստ ինչ , որ անծանօթ է առ մեզ :

Քահին : Ամրոց փորթուքալաց , և վտակ . զոր ոյլ նագիրք կոչեն և Արիոփանա . որ խառնի 'ի գետն ամազունեաց 'ի հարաւոյ : Առ սովորն վտակաւ գտանի աւան կոչեցեալ Դատուանա :

Կարսուբա : Քաղաք փոքր փորթուքալաց 'ի հարաւային կողմն ամազունեաց գետոյն 'ի գեղեցիկ և բարձրաւանդակ վայրի . ունի և ամրոց շինել 'ի հուշանտացւոց յորժամ տիրէին 'ի պրասիլիա . բոլոր ամերիկացիք որք անդ գտանին ևն գերիք փորթուքալաց : Քանի մի մզոնաւ հեռի 'ի քաղաքէ ասաի յարևելեան կողմն առաջքինչ ելեալ յամազունեաց գետոյն , գործէ կղզի մեծ , կոչեցեալ կղզի սըյն յովհաննու՝ կմ՝ մարայոն :

Փարս : Ե ամրոց փոքր փորթուքալաց մօտ առ փոքրիկ վտակ՝ որ մտանէ 'ի գետն ամազունեաց . ուր ունին փորթուքալք ստիւատիւ զօրականս կարգեալ 'ի պահպանուի ամրոցին , և հրազենս ինչ :

Մատուք : Ամրոց փոքրիկ փորթուքալաց 'ի հիւսիսակողմն գետոյն ամազունեաց մերձ 'ի բերան նր է 'ի կողմանս յայսոսիկ մերձաւ ամազունեաց Շն փոքր թու-

Թուքալոյ , գնեն ոմանք 'ի սովանիացւոց առ փարի
մէ լճիւ զըտրձակ տրութի , զոր կոչեն թդրութի
ոսկւոյ . քղի ասեն թէ գտանին անդ լերինք 'ի մա-
քուր ոսկւոյ և յարծաթոյ և 'ի պատուական քա-
րանց . նոյնպս և քղք մի մեծ մաւա կոչեցեալ բո-
վանդակ յօսկւոյ , և յականց պատուականաց . և ոյլ
սոցին նման իրք անլուրք . զոր նենդաւոր ամերի
կացիք հաւատացուցին սպանիացւոց առ ՚ի ձգել
զնտ ՚ի ներքին կողմանո երկրին անծանօթս , զի անդ
յանելանելի անտառա կորիցեն . սակայն սյժմ չիք
ոք որ հաւատ ընծայեսցէ այտպիսի յայանի ստայօդ
առասպելեաց . որք ինքնին ցուցանեն զստուն իւր
եանց . ոմանք և զփարիմէ լիձն առասպելական հա-
մարին . բայց այլք հաստատեն թէ գտանի իրօք .
զոր գնեն ՚ի ներքոյ այրեցած գօտւոյն քառակա-
սի իմն ձեռով . աւելի ք 600 մզոնս շրջապատ ու-
նելով :

Յօդ ա . կույանա :

Կահանդ ըարձակ յոյժ կմ ճ . որ յարևելից սահ-
մանի հիւսիսային ովկիանոսիւն . յարևմտից
սեաւ գեառին . ՚ի հրւոյ Շաւն ամազունեաց . իսկ
՚ի հիւսիսոյ օրէնոք գետով . թէսկէտ զհիւսիսային
սահման նր գնեն հարուսա մի ը հարաւ ք զորե,
նոք գետն . ոտք եգել կայ և 'ի մերում Շացուցի կե-
տանշն որոշել . քղի զայն մասն նր որ է ը տրուք
սպանիացւոց միացուցանեն ը ցամաքի իրը մասն
նր . և իրաւամբ՝ զի է 'ի ներքոյ փոխարքայի նր :
Զայս նհնկ յեւրոպացւոց զառաջինն եգիտ ալփոն-
սոս ոյետա սպանիացի , ը ամերիկոսի վեսրուչիոսի
և ը յովհաննու քողայ . որք տեսին վեր 'ի վերոյ զե-
րեւելի մասն ինչ նր , այլ ոչ կարացին ստանալ զճշ-
դրիտ ծանօթուն ինչ զհանդամանաց երկրին . ապա
՚ի հնչել համբաւոյ եթէ անդ է նախայիշատակեալ
Շն՝ կմ թդրութին ոսկւոյ , ամ ծովեղերեայ աղինք
եւրոպիոյ սկսան գիմել անդր , առ ՚ի լինել բաժա-
նորդ այնր բազմագանձ Շի : Նախ ք զայլս վալդէ-
րոս բալայկ անդզիացի աճապարեաց եհաս անդր ՚ի
1595 . այլ ինչ ոչ գտել՝ յորոց ակնուներ , դարձաւ
ունոյն . սակայն ՚ի գառնալն իւրամ յանդզիա
ինք .

Հրատարակեաց զպատմութե իմն բոլորովին առաջ
պելական . որ շարժեաց զբովոր եւրոպիա : Եւ մինչ
դեռ անդզիացիք զհետ պնդէին 'ի գիւտ այնր տևաս-
ողելական ուկիալից Շի ը մուտս օրէնոք գետոյ ,
գաղղիացիք զնոյն փորձ փորձէին ը մարակնոն , հիմ
ընդ գետն ամազունեաց . այլ իբրև սառւդիւ 'ի վը
հասին եթէ խարեցան , ստիպեցան զտեղի առնուլ
'ի քաեննա կզզի 'ի 1635 . և անդ հաստատել զբնա-
կունի . ուր յետոյ առաքեցան և այլ զնդն գաղթա-
կանք գաղղիացւոց նաև 'ի նոյն իսկ փարէդ քզբէ ,
և յայլ աեղեաց . որոց մեծ մասն կորեաւ . 'ի պէտք
պատահարաց , սակայն կոլան հարուստ մի տարա-
ծուի երկրի 'ի կույանա . մոին անգ և հոլանտացիք ,
հանել անտի զանգղիացին . և յուջ ք զնու սպանիա-
ցիք , և փորթուքալք : Վշյ մարթէ և այժմ զհա-
մօրէն կույանա բաժանել 'ի հինգ մասունս , յի՞ն
կույանա սպանիացւոց , փորթուքալաց , գաղղիաց-
ւոց , հոլանտացւոց , և բռն բնակչաց նր : Կույա-
նա փորթուքալաց ը մասին անկանի յՇն տմազուն-
եաց , զորմէ խօսեցաք 'ի վերոյ , և ը մասին 'ի պրա-
սիլիա : Վշյ աստ ունիմք իսոսիլ միայն զկույանայէ
տուպանիացւոց , գաղղիացւոց . և հոլանտացւոց . զի այն
մեսն՝ որ դեռևս է 'ի ձեռոս բնիկ ամերիկացւոց ,
ամենելին անծանօթ է :

Արտյանա սպանիացւոց :

Արտյանա սպանիացւոց կմլաւ ևս տսել կույանա
հնդկաց ձգի 'ի հարաւակողմն օրէնոք գետոյն ,
տւնելով իւր սահման յայն կողմն զվիճակս քարոզու-
թեց քրիստոնէական հաւատոց օրէնոքայ որ 'ի նոր
կունադա . յարեելից զկույանա 'հոլանտացւոց . 'ի
հիւսիսոյ՝ զբարիս և զքումանա դւռս . իսկ յարեմը-
տից հասանէ մինչև 'ի ծովն ադլանդեան 'ի ձեռոն օ-
րէնոք գետոյն . որ է մի 'ի մեծադայն գետոց այսր
հի . ելել 'ի կողմանց հարկածին ընթանոյ ը արևե-
տան հիւսիս , և մերձ 'ի լիճն Քասիթբայ ամֆատիի
'ի ձոր անձուկ ը մեջ երկուց լերանց , ուր անհնա-
րին սաստկանայ ընթացք նր . ապա ելեալ անտի ը
դաշտ հարթածաւալ , ըարձակի յոյժ ձոր նր , յոր-
մէ յաճախ զեղեւալ արտաքս ծաւալի գրեթէ ը բո-
լոր դւռն գործելով 'ի նմա ճախինս աղտաղտուկս
ժահահոս . ապա գնայ անկանի 'ի ծովն ը ինն բե-
կէ

բանս . յորոց մի միայն է ը որ հնար և նաւարկել ,
ունելով բաւական խորուն և լայնուն . որ և յայն
սակս կոչք մեծ բերան օրէնոքայ : Երկիր գաւառուն
ցած է և ձախճախուտ , վոկ և օդ նր յոռի և վրա
սակար կենաց . ուր ոչ կարեն տոկալ եւրոպացիք ,
ոնց և բնիկ ամերիկացիք ոչ սակաւ տառապին . ո-
րոց չգտեալ պտտկանաւոր տեղի բնակուն , բռնա-
գատին 'ի վր ծառոց շինել խրճիթո 'ի բնակուն ը
օրինակի թռչոց :

Այս մասն այժմ պիտակաբար կոչք կույանա սպա-
նիացւոց . զի թէպէտ 'ի սկզբանն հիմնել էին անդ
սպանիացիք գաղթական և ամրոց կույանա կոչե-
ցեալ 'ի կզզւոջ գործել յօրէնոք գետոյն , այլ յե-
տոյ երկոքին տեղիքն ևս լքան անբնակ . իսկ այժմ
'ի համբէն դէռոն բնակին զննէն ցեղք բնիկ ամերի-
կացւոց . յորոց ոմանք գրձլ 'ի քո 'ի ձեռն քարոզուն
ֆրանչսկեանց և յտեանց՝ բնակին յերկու աւանս
որք կոչին Սբ բանա . որ է 'ի տեղըոջ հին կույա-
նայ . և Սբ անդռն . աւան ամերիկացւոց հաւատացե-
լոց քարոզուն ֆրանչսկեանց :

Կույանա Գաղղիայոց . և Վրահնաւ :

Առօք սա և գաղղիա ը գիշերահաւառարիւ , սկար-
փակի 'ի մէջ մարտն և փինդոն գետոց , ը որում
հաստատեցաւ 'ի զննէն գաշնագրուն . ունելով իւր
սահման 'ի հիւսիսոյ՝ զկույանա հոլանտացւոց . իսկ
'ի հարաւոյ՝ զէռոս փորթուքալաց : Տարածութիւնը
'ի ծովեզերս է իրը 300 մղոն . այլ թիւ բնակչաց
նր 'ի ներքին կողմանս անյայտ է . իսկ 'ի ծովեզերս
որ ծանօթ է , ը հաւանական հաշօճի ոմանց հա-
սանէ գրեթէ ցինն հաղք . որք բաժանեալ են յայլե-
այլ ցեղզո և ժողվրդս . յորս առաւել զօրաւոր են կա-
լիպեցիք : Ումանք 'ի նախամնայոյդ ժրանան քարոզաց
համարձակեցան մաին 'ի մէջ այնց վայրենի ժղվեցոց .
յանձն առել զնմմ վիշտո , այլէ զվատենդ կենաց . և
սքանչելի երկայնմառուք զոմանու 'ի ժղվեցոց անօթ
ընաելացուցել . ետուն նց շինել գեօդս , և աւանս ,
և բնակիլ 'ի միամին . և հաշտեցուցին զնոն ը գաղ-
ղիացւոց՝ զորս մահուշափ ատէին : Յորժամ կորու-
սին գաղղիացիք զքանատա , առաքեցին գաղթական
12 հաղք բնակել 'ի կույանա . այլ առ անհմտուն և
անկարգուն կառավարչաց իւրեանց կորեան ամբ

յաղքատութէ՝ 'ի սովէ 'ի հիշանդուեց, և շտափ և ս
ջրահեղձոյց եզեն՝ 'ի յորդել ջուրցն. քզի ծովեղելք
նր ը ամ տեղիս ցած են. վշյ 'ի բարձրանալն ծո
վու, ծանկին՝ 'ի ջուրց նր հարուստ մի տարածու
թք. նոյնպս 'ի գալ անձրևային եղանակի՝ յորում
գրեթէ անընհատ տեղան անձրեք յորդահոսք, դաշտք
և ձորք նր առ հորկ ծովանան, ուստի և հարկ է
յայնժամ գիմել 'ի բարձրագոյն տեղիս՝ որք զերծ
են 'ի ջուրցն հեղեղաց. վշկ ըհանրապէս խօսելով
բոլոր երկիրն լճային է և գէճ. ստկայն և այնպս
ող նր չէ այնչափ ինչ յոռի և լիտասակար կենաց,
որչափ կարծի. այն զի այն յորդահոս անձրեք հար-
կաւոր իսկ են 'ի մեղմել զտապ այրեցած գոտոյ,
ը որով անկել կայ այս գւու. Ունի և գեաս բղմա
և մեծամեծս, սյլ չէ մարթ նաւարկել 'ի նա. քզի
'ի ծոցս նց դտանին ուրեք ուրեք ժայոք մեծամեծք
որք խափանեն ղնաւարկութի: 'Նոյնպս դժուարին
է յոյժ և վահնդաւոր նաւել 'ի ծովեղերս նր՝ ոչ
միայն սակս սրբնթաց հոսման ջուրց ծովու, այլ և
վու անհամար փոքրիկ կղզեաց, որք են յեղերս նր.
և աւազուտ տեղեաց և ցամաքաց, որք իբր 4. 5 մինու-
ժդին 'ի ծովն: Այս կւու բովանդակ կայ մնայ ան-
դործ և անդարման. քզի չունին այժմ գաղղիացիք
անդ բնակութի, այլ միայն 'ի քաեննա կղզին. զոր

յառաջիկայդ ստորագրեսցուք:

Քահնեա, կմ' Քահնեա: Եշ հանդէպ կույանայի գաղ-
ղիացւոց. շրջապատ նր է իբր 48 մղոն. իսկ հող
երկրի նր 'ի վերին երեսու՝ իբր 2 ոտնաշափ թանձ-
բուք է խառնեալ ը սեաւ աւաղոյ, ուստի և կա-
կուզ և քաջայարմար 'ի մշակութի. իսկ 'ի ներքոյ է
կաւ կարմիր, յորմէ մարթ է գործել աղիւս, և ա-
նօթս կաւեղենս. այլ ներքին կողմանք կղզւոյն՝ բո-
վանդակ լճային են և ձախճախուտ և խոռվան. միայն
ծովեղերեայ կողմանք՝ որք բարձրացել են 'ի փռքրիկ
բլուրս, են մշակեալ, որք բերեն շաքար, խահվէ,
գագառվ, լեզակ, բամբակ, և րօքիւ, զոր սողանիա-
ցիք կոչեն Աբիօգէ. որ է կարմիր ներկ ինչ, զոր
կաղմեն 'ի պաղոյ մասնաւոր ինչ ծառոյ, որ է սե-
փակտն բերք այսր կղզւոյ. ունի և արօտս, և ըն-
աանի անասունս մեծամեծս և մանունս. զք արջառ-
մի և ովսար, ևն. նոյնպ և փայտ 'ի պէտս շինուա-
ծոց: Ասի թէ 'ի 1752 հանին գաղղիացիք 'ի կղզւոյ
աստի 260541 լիալրէ բօքիւ. 80363 շաքար. 17919
բամբակ. 26881 խահվէ. 91916 գագառվ. նոյնպս

և տախտակ . և այլ փայտա 'ի պէտս շինունածոց . իսկ Եթէ ցամաքեցուցանէին զլիճս և զնահիճս , և մշակէին զբոլոր կղղին , լինէր մի յառաւել բազմարդ իւն կղղեաց գաղղիացւոց . ը նմին և օդ նր լաւ ևս լինէր , ք զոր է այժմ . ոող և այժմ լաւ ևս է , ք 'ի սկզբան անդ , յորժամ հասին նք անդր : Բնակիչք նր 'ի 1769 էին 9338 · յորոց 1291 ազատք էին . կմ գաղղիացիք . իսկ 8047 գերիք . որոց գլխաւոր տեղիք են հետագայք :

Քանակ : Գաղցիք և գլխաւոր տեղիք բոլոր կղղւոյն . փոքր՝ այլ բարեշն պարսպապտտ և ամսուր և աթուա իշխանի կղղւոյն . կառուցել յարեմանան հիսուսային ծագ նր . ունի տունս աւելի քան զերկեր իւրս . յորոց ոմանք կրկնայարկ են , իսկ այլք միայնրի . և երկու կմ երիս եկեղեցիս . հրապարտկ մի գեղեցիկ . անկեշանոց մեծ . և այլ հորկց շինունածս գեղեցիկս . յորս երեւելի են ապարանք իշխանին , և նւհնդիմտ պատուական . և բերդ 'ի պաշտպանուի քղքին և նւհնդիմտի նր . ուր գտանի միշտ գունդ մի 300 քաջակիրթ զինունորաց՝ կարգել 'ի պաշտպանութիւնն քղքին և համօրէն կղղւոյն . այլ 'ի լինել հարկի՝ պարտապան են ոչ միսյն քղքացիք , այլ և որք արտաքոյ բնակին՝ զէն առնուլ 'ի հրամանյելն իշխանին . է անդ և առեւմն գերատոյն , որ գատէ զնամդատաստանս բնակչաց , յորմէ չիք բոլոքունն առ այլ ատեան :

Բէմբ : Աւան և ժողովրդապետութիւն յարեւելեան կողմն կղղւոյն 'ի հարաւոյ արեւելից քաէննայ :

Մահարի : Գեօղ նոյնող յարեւելեան կողմն առ բերանով ույայ գետոյն :

Մարտորի : Աւան կմ գեօղ առ համանուն լերամբ յարեւելեան կողմն կղղւոյն :

Կույսական հուանփայտաց :

Ղավյարեմանան հիւսիսային կողմն գաղղիացւոց . 'ի հարաւոյ արեւելից սպանիացւոց . տարածութիւնը 'ի ծովեզերս է իրը 210 մլոն . ունի գետութիւմս մեծամեծս և նաւարկելիս . օդ նր ջերմ է և խոնաւ . 'ի պահանու յանախուե անձրեաց , ուստի և թանձր և իշխասակար կենաց . իսկ երկիրն ըհանրապետաց է , և ըստ մեծի մասին հեղեղել 'ի ջուրց . բայց 'ի տեղիս տեղիս առ գետափամբունի ըարձակ գաշտաբարձ .

բարձրացեալս և զերծս 'ի չուրցն հեղեղաց, և քա-
ջաբերս . որք բերեն խահվէ, գաղառվ, վանիլվա,
բամբակ, շաքար, ծխախոտ աղնիւ, փայտ պրասի-
լիոյ, մամ վայրի, պէսող խէժս պատուականս . ևն :
'ի 1768 միայն վիճակն սուրբինամ գետոյն պաղարեր-
եաց 100 հզը լիսպրէ բամբակ . 200 հզը գաղառվ . 14
միլիոն խահվէ . 28 միլիոն և 600 հզը լիսպրէ շաքար .
թող զբերս այլոց վիճակաց՝ զորս չէ մարթ այսոնս
որոշակի նշանակել : Այլ տո. սաստիկ խոնաւութե-
երկրին և օդոյն՝ անհարինս յաճախիւ. ևն անդ պէտ-
պէտ ճանձք, և զեռունք մնասակարք աղականիչք
տրտորէից . վեց առ 'ի պաշտպանել զբերս երկրի յա-
պականագործ զեռնոց անտի, հարկ է բնակչաց նր
անբաւ պառապանս յանձն առնուլ . յորմէ բաշմ ան-
դամ անկանին 'ի ծանր ծանր հիւանդութիս երկա-
րատես և վտանգաւորս :

Վաճառականութե նր ծաղկել է և բարգաւաճ, զոր-
տունէ ը հոլանտիոյ . յորմէ այլ ինչ ոչ գնայ անդը
բայց միայն աւաջին հարկաւորք մարդկային կենաց .
իր կերակուր, և հանգերձ, և զնդն դործիք . քզի
մեծ մասն մեծատուն վաճառականաց հոլանտացւոց,
ուրք ունին 'ի կույանա կալունս: Ես ըստ-
նակին անդ առ յուսութե օդոյն, այլ յեւրոպիա .
ուստի միայն արք ստորին կարդի' և գործակալք
մեծատանց՝ գաանին անդ . որք սակաւուց պէտո-
ունին, զի շատանսան հարկաւորքն . իսկ յարաւաքնոց
միայն անգղիացիք նոր ինկիլդեռուայի, և ժի՞նէ՞ց
միացելոց առնեն առեւտրութս ը հոլանտացւոց կույ-
անայի . բայց նաւք նց պարտական են տանիլ անդ
բաց յայլոց վաճառաց իւրեանց և երիվարս գոնէ
նոյնափ, որչափ արք են 'ի նաւի անդ . ապա թէ
ոչ ոչ լունին զնո՛ 'ի նւհնդիստս իւրեանց . իսկ ե-
թէ ոմանք յերիվարտց անտի սատակեսցին 'ի ճնպհի,
պարտական են ցուցանել զդլուսս նց : Եւ ը հկնկն
'ի վը հոլանտացւոց կույանայի եղել կայ պարտա-
ւորութե շտալ փոխարէն վաճառաց անգղիացւոց այլ
ինչ, բայց միայն օղի, և շաքար : Բայց անգղիացիք
'ի վերջին ժմկս պարտաւորեցին զնո՛ վճարել առ-
ձեռն դրամն յեւրոպիա վշ ամշ վաճառաց, զօր նախ-
տացեալ դւռքն առաքեն անդ . զօր ակամոյ կու-
մօք յանձն առին հոլանտացիք, երկուցել 'ի բուռն
դրբուէ անգղիացւոց : Այլ գգիտեմք, թէ արդեօք
և այժմ զկնի բաժանելոյ ժգ նհզց 'ի արուեն անդ-
ղիոյ, կոսցէ այս օրէնք, թէ ոչ :

Սկիզբն հիմնարկութե հոլանտացւոց 'ի կույանա եղեւ
 'ի 1640. զի 'ի նմին ամի հանել անափի զանդղիացիս,
 որք բնակէին առ սուրբնամ գետով, (ուր յուջոյն
 հիմնել էին գաղղիացիք բնակուիս՝ ետպատ ինքնա-
 կամ 'ի բաց թողել,) կալան զերկիբն՝ և նոյնժա-
 մայն հաստատեցին ՚ի հոլանտայ ընկերութե վաճա-
 ռականաց վու մշակելոյ զերկիբն, և առնելոյ անդ
 առետրուիս. զոր և սկսան վզվակի 'ի դործ գնել.
 և առ սակաւ սակաւ ըարձակեցին զտահմտնս իւր
 եանց 'ի խոպանացեալ ՚ի անդ ըունելով ուստեղ
 երկիւղ. զի բուն բնակիցք նր սակաւաթիւ. էին և
 երկտու. որոց երկուցել յերեսաց հոլանտացւոց:
 Փա: խեան յանմատոյց լերինս և յանտառս, և հոլան-
 տացիք անաշխատ ժառանդեցին զերկիր նց. 'ի 1762
 էին 'ի կույանա հոլանտացւոց 4000 սպիտակիք կմ
 եւրոպացիք որոց մեծ մասն հոլանտացի էր. իսկ
 այլք գաղղիացիք փախստականիք և խառնելք ը հո-
 լանտացիս. ոմանք եկեղեցականիք կարդուրացք, և
 բազմուն հրէից, որոց չնորհել է մամ ազատութի,
 մինչև կարօղ լինել մտանել և 'ի կարգ իշխանաց և
 կառավարչաց երկրին. և ունեին անդ յոյնժամ' հո-
 լանտացիք 425 վիճակս մշակեալս. յորս գործէին
 84500 խափշիկք աֆրիկեցիք արծաթադին գերիք.
